

ՊԵՏՐՈՍ
ԱԴԱՄՅԱՆ

Հայկական համալսարան



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ



ПЕТРОС АДАМЯН



СОЧИНЕНИЯ



Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН • 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԿԻՄՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ



891.99

Ա-19

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ



Ե Ր Կ Ե Ր



Հանրակրթական ԱՄՆ ԳՆՀ Հրապարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Կազմեց, տեխնոլ. անձնակազմների բաժանելը և բաժանելը պատրաստեց
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆԺԻ

Խմբագրությամբ
ԹՈՒԹԵՆ ԶԱՐԳԱՆԻ





ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

1936-ի հուլիսի 4-ին լրացավ հայ մեծագույն արախտ Պետրոս Աղամյանի մահվան 45-ամյակը: Այդ առթիվ հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ազգեստների պատմության և տեսության սեկտորն ընթերցող հասարակայնության ուղղությամբ է հանձնում հրա երկերի միահատարյալը:

Աղամյանի զրահան ժողանդությունն է մի բերելու անդրանիկ փորձն է այս: Հանձնարեղ արախտի զրահան ստեղծագործություններ, հետազայում հան համակներ, ինչպես և հրա հկարած պատկերներ, պետ է հրադարակվեն, որպեսզի մատչելի լինեն ամենալայն ընդհանրության: Ներկա ժողովածուով մեր մեծ դերասանն ընթերցողին է ներկայանում որպես բազմաշնորհ մի դեմք — բանաստեղծ, բարդմանիչ, արձակագիր և վերջապես բնագրատ: Այս ժողովածուն, Պետրոս Աղամյանի հիշատակի հավերժացման փորձերից մեկը լինելուց բացի, ունի հան շատ կարևոր պատմական-ուսումնասիրական նշանակություն մեծանուն արվեստագետի կյանքով, գործունեությամբ և ստեղծագործությամբ մոտիկից հետաքրքրվողների համար:

ԱՌԱՋԱՐԱՆ

Հայ գերասաններից շատերն են գրականությունը զբաղվել, գրամատիկական արվեստն են գրել, պիեսներ են թարգմանել, հոգովածներով են հանդես եկել, հիշատակարան են պահել, ուղեգրություններ են ուղարկել, գրի են առել իրենց կյանքի պատմությունը, իսկ մի քանիսը, եույնիսկ ստանալորենք են գրել:

Այդ տեսակետից բացառություն չի կազմում նաև Հայ քեմի մեծագույն գեմքը՝ Պետրոս Աղամյանը: Նրա գործունեությունը, շնորհակառակը, շատ ավելի թաղմակողմանի բնույթ է կրել, քան ուրիշներինը: Աղամյանը, հանձարեղ գերասան լինելուց բացի, բանաստեղծ էր, արձակագիր, թարգմանիչ և եկարիչ: Ի միջի ալլոց եկատներ նաև, որ ըստ մեծուարային գրականության մեջ նշան մի ոչ այնքան էլ հաստատուն տվայի, Աղամյանը նաև շուրթակառ էր: Ըստ սրտի բոլոր բնագավառներում էլ գերասանը հանդես է բերել մեր և սօսմածություն, գիտելիք և խմբություն, սեր և համասություն:

Ինչ մասնագություն է թողել Աղամյանը, բանաստեղծությունների և թարգմանությունների մի գիրք, որ լույս է առել հնգյնակի կենդանության օրով: Իսկ մահից հետո գերասանի թղթերի մեջ հայտարարելով քաղական մեծ քանակություն շափած ստեղծագործություններ, նրա բարեկամները ժողովել են, նկատի են առել նաև պարբերական մամուլում լույս ածածները և այդ ամենը հրատարակել առանձին գրքով: Աղամյանի գրական մասնագության անբաժանելի մասն է կազմում նաև գեղարվեստական արձակի մի հմուտ, ինչպես և «Համայն» աղբյուրների և նրանց քննադատության նվիրված աշխատությունը, որի նման ուսումնասիրություն նա մտադրել էր գրել նաև Չաչկու և Ենգեանրապետի իր մարմնագործած աշխի բնկենդ կերպարների մասին: Զբաղվելով կերպարվեստով, Աղամյանը թողել է քաղական մեծ թվով յուզաների պատկերներ և ճեպանկարներ:

Աղամյանն իր բանաստեղծությունների առաջին գիրքը բնորոշել է որպես իր «Հույսով» սրտին զանազան ալեմուսի զգացման նախահանգիստ: Ուրիշներն էլ այդպես են բնկայել, տանելով, թի Աղամյանի ստանալորենքը՝ «միանգամայն կենդանի և կենսական գործվածներով, զանազան փայներով և քաղմաշխուղ հոգեկան շարժվածներով ի, ազատ աղբյուրից բխած մարգկային և բնության արձագանք են հնչում»:

Այսօր մեզ հետաքրքրողը ոչ այնքան մեծ արտիստի գրական ստեղծագործության գեղարվեստական արժեքն է, — շոտանանք, որ տասնյակ տարիներ են

անցել այդ գործերի գրույթան արերից և իր մասնաւորին ջիւ բանաստեղծներ չեն եղել, որ վաղուց արդեն կորցրել են իրենց նրբեմնի նշանակութիւնը, — որքան տնտեսաշրջական աշխարհ, ա՛յն, ինչ այսօր կարող է մեզ պնդել հասկանալու համար հանձնարել գերաստեղծին Բախապետ, Աղամյանի բանաստեղծութիւններն աւագին նշուի կարող են առաջ նրա հոգեկան աշխարհը և արամազորութիւնները հասկանալու համար: Գափաժնոց գործերը եւս մեծ մասամբ գրել է, ինչպէս երեւում է, երբ մի խոր հուզմունք է պաշարել նրան, հոգեկան անկոծումների պահին, բայց առանձնապէս հոգ չի աւարել մշակելու, կատարելու գործնելու համար: Որքան էլ գրական հմտութիւնից զուրկ լինեն այս ստանալորները, ինչպիսի թնայնութիւն է նշմարներ, միեւնոյն է, եւսնիսկ անկատար տողերի հետեւից էլ մեզ հետ խոսում է մի կենդանի սիրտ: Այլեւս անկարող զսպելու հոգում ամբարձած աղբյուրների պոռթկումը՝ եւս գուցէ չի էլ նկատել, թէ ինչպէս մարերին և հուշերին լափածո ևն է ափել: Գրել է, որովհետեւ չէր կարող լզրել, չէր կարող այլեւ լուել: Պետք է խոսեր իր աղբյուրների մասին, նման այն երջանիկ մարդուն, որ զուրկ է գայիս փողոց այն հուսով, թէ ուր որ է կհանգիտի բնկերոյ կամ մի որեւէ փանթի, կպատմի ամեն ինչ, իսկ իմի լզատաւոր, պատրաստ է բարձր և ամբողջ մտնել խոսելու, թէ ինչ է կատարվում իր հոգում, որ բուրքը, ամբողջ աշխարհն իմանա:

Աղամյան-բանաստեղծը, մանավանդ իր անգրանիկ գրքով, նախորդել է Հովհաննէս Հովհաննիսյանի հետեւն զայնու: Ինչ խոսք, գերաստեղծ լուներ վերջինիս պոետական շունչն ու կորովը, զուրկ էր զնգարգիտական մասնագիտութեան ինքնուրուշութեան այն աստիճանից, որի վրա էր դանդում նա, ոչ էլ իր խոսքով ու սեղծ էր նրա նման խորապէս կապված մոլորաշրջական ստեղծագործութեան ակունքների հետ, բայց նշուի, որ աւաւայտած արամազորութեամբ եւս մտն է անվանի քնարերգուին:

Եթէ Աղամյանը չկարողացաւ, ասենք, պոետիայի զարգացման հանք փոխել, մի պահեղ, որի անհրաժեշտութիւնը եւս զգում և գիտակցում էր խորապէս, բայց լուներ այդ անելու համար բովանդակաւ ու, ապա գոնէ նախապատրաստեց զայնուան այն բանաստեղծների, որոնց ապահովեցին նորի անվերացարժեք հաղթանակն այդ քնարագիտութեամբ:

Նույնը կարելի է ասել նաեւ Աղամյանի միակ արեւակ երկի մասին, որի համար քնարոյն են 80-ական թվականների հայ արեւակագրութեան այն թիւի ունեկան առանձնահատկութիւնները, որ, Հաղթահարելով ուսմանարկական հոսանքի ուժեղ ազդեցութիւնը, հետագայում է որոնում զեպի կյանքի ուսախոսական պատկերներ: Այդ քնարիս ունեն նաեւ նար-Դոսի ստեղծագործութեան վաղ շրջանի գործերը: Եւսմիտիւն և կիրոված աշխատութիւնը հայ շեքսպիրադիտական մարի մի որոշ աստիճանն է, նոր և անպայման բարձր՝ անցյալի համեմատութեամբ, Հետեւապէս, հիշող չի լինի, պատմական մտնելումից շնչվելով՝ թերաղեւահատել այն գիտական մարի արդի դիրքերից: Արդեն հնացած գրույթների կողքին, կան մրտեր և գիտողութիւններ, որ հիշող ու հետաքրքիր են նաեւ այսօր: Օրինակ՝ շեքսպիրյան ուսալիզմի համոզված պաշտպանութիւնն ընդդէմ այն մարի, թէ Համեմատելով քնարականութիւնը խախտող բացառիկութիւն է, եր այժմեականութիւն է պահպանել նաեւ գերաստեղծ նշանաւոր վեհը Տուրգենեւի հետ և այլն:

Այդ ամենը, լինեն գրանք նկարներ, թէ, մանավանդ, գրական ստեղծագործութիւն, այսօր գերազանցապէս պատմական հետաքրքրութիւն են ներկայացնում:

Ազգամյանին նվիրված մեծուարեներում այն հարցն է արծարծել, թե ինչով պետք է բացատրել, որ փառքի գազաթնակեան հասած զերտասնը զրազվել է նաև գրականութիւնը և նկարչութիւնը: Եվ, մեր կարծիքով, այդ հարցին արդել է միակողմանի լուսաբանութիւնս:

Պետքս Ազգամյանին, ինչպես վկայում է Երզմեղագին, հաճախ կարելի էր տեսնել վրոնիք ձևերին նկարելիս կամ գրասեղանի ջով հասած գրելիս: Նա իր բարեկամներէջ չէր թաքցնում, որ կովում է մոռացութեան զեմ: Գովայն, ալգ-պիտով, գրելու այն թուան տենչը, որով համակված էր զերտասան իր ողջ կյանքում, ինչպես և նկարչութեան հանգեղ ունեցած անկեղծ հերն ու նկարագրութիւնը, բացատրել միայն երանով, թե բեղնում է գրականութեան կամ նկարչութեան մեջ հա տեղ ունենալս, հաղիվ թե հիշտ լինի, թե, իհարկե, դա հա իր գերն էր խաղացել:

Պետքս Ազգամյանը, ինչպես բոլոր զերտասանները, ապրում էր լուրջ ողորդութեան: Եվ դա հասկանալի է. բնական արմատն անշեղորհակալ արմատ է, որովհետև այն գոյութիւն ունի միայն ստեղծագործութեան պահին, վարագույրի փակվելուն հետ լցանում է և զերտասանի արգիտոր: Տրանսիական նշանավոր ողորդակ Տրանսուս Թայման այսպես է անկերպել իր ապրումը. «Ժողովրդայնայն» նոր եկած սերունդ իր աչքերով չի տեսի իմ բնական աշխատանքը, չի կարող ստուգել, հաստատել իմ մամանակակիցների գատողութիւնները: Ես ցանկալագործի պես բրտեղ կամ մարմար լուծեմ իմ միայն հավերժացնելու համար: Բանաստեղծի կամ նկարչի նման հա ապարան կամ կտավ լուծեմ՝ իմ զգացմունքների, իմ կերպարների մնուկը հիմնավորելու համար: Ինչպե՞ս եմ ես երանք նախահաւում: Այն մի հասարակ թերթ թուղթը, որի վրա մշտապես պահպանված են մի քանի լավ բանաստեղծութիւն, մի քանի խոր մտքեր, հա զերտասանում եմ թատրոնից, որտեղ հա գրում եմ լուրսբանայնոր երկիւ և որտեղ ամեն ինչ նույն մամին խել շնչվում էս:

Ի՞նչ է զերտասանից մնում. լավագույն գեպրում՝ մամուլի արեղակները, մամանակակիցների կեցուտը վկայութիւններ և մի քանի լուսանկար, բայց ոչ ստեղծագործութիւնը, որի հետ գալիք սերունդները հա կարողանալին ծանաթանալ ոչ թե մի ուրիշի լավ կամ վատ նկարագրութեամբ, այլ անմիշտաբար, ինչպես որ ալտոր, մենք, որինակ, կարդում ենք Տերյանի բանաստեղծութիւնները, հիանում ենք Սիբուրի նկարներով կամ հափշտակվում լիտի երաժշտութեամբ, թեև զրանց հեղինակները վաղուց լիան: Եվ, իսկուպես, որքան գունատ կլինի մեր ազգագրութիւնը, եթե մենք ինքներս Պարավորութիւն լուսնայինք Տալտոյի վեպերը կարգալու և երանք մասին գաղափար կազմենք մի ուրիշի պատմածով: Նույնը և Թեմրազակի նկարները կամ Բեթովների երաժշտութիւնը:

Դրութիւնն այժմ, համեմատաբար, ավելի միջթարակն է. որովհետև կարելի է գտնել իր որոշ կողմերով զերտասանի խաղը պահպանել կիկն մազավենի միջոցով, մի հնարավորութիւն, որից, զթախտաբար, հարկ եղած լավով լենք օգտվում: Դրանով պետք է բացատրել, որ նոր սերունդը և ազգայում մարդիկ լեն կարողանա տեսնել Արիլյանի նշանավոր էլիգրաբյանը, Արուս Ոսկանյանի նարան, թեկուզ և ամենակարեւոր հատվածները երանց զերտաստարման: Եվ արդյոր նույն նախաազրին լենք ենթարկում Փափաղյանի Օթիլլոն և այլ աննախընթաց կատարումներ:

Որքան մեծ էր Ազամյանի հաշտութիւնը բռնում՝ այնքան ավելի խորն էր նրա վիրտը։ Նա հողեկան դրամա էր ապրում, որ իր մահման հետ տեղահա-
նայու է և իր հանճարը, որ Համլետը, Ուրիելը, Լիրը, Քինը, որոնց նա տեղահանում
էր իր հոգու թանկագին զավակներ, թաղվելու են իր հետ միասին տամիշտ ու
անգարան։

Ազամյանի ասածը, թե նա եղտում է աղաղակ սերունդներին գեթ որպէս
նկարիչ կամ բանաստեղծ ներկայանալու՝ ավելի շուտ պարզում է, թե ինչ ող-
բերգութիւն է աղբիչ գիրքասանը, բան բացատրում կողմնակի գրադասներէ բուն
պատմաւորները։

Մեզ թվում է, որ գրելու և նկարելու եղտումը ոչ թե կողմնակի, այնպէս
ասած՝ արտաքին պատճառներ ունեւ, այլ Ազամյանի համար խորագրաւ ներքին
պահանջ էր։

Կա մի քնազավառ, ուր մտքը կտրող է իրեն առավել շարժող գրեւորելու, եթե
մտնազանց սմալած է և գրադմանքն էլ նիշա որոշված։ Ազամյանի համար աղ-
պիսի տաղարեզ էր բռնը։ Եվ, այնուամենայնիվ, մի քնազավառն իր բոլոր հե-
րաբանութիւններով՝ անձուկ և սահմանափակ է մարդու հողեկան բոլոր հարքս-
տութիւնները ապառնելու համար։ Որքան մեծ է սմալածութիւնը, այնքան ավելի
է մարդն իրեն նեղված զգում գործունեութիւն մի քնազավառում, պահանջ է զգում
գոյրա գալու նրա սահմաններից, ձգտում արտահայտելու իրեն և այլ կերպ։

Որքան էլ Ազամյանը իրեն գրեւորում էր բռնում Համլետ կամ Ուրիել խո-
ղալիս, այնուամենայնիվ, մի որոշ իմաստով նա կաշկանդված էր, որովհետեւ են-
թարկված էր գրամատուրգի տեքստին։ Միշտ է, նա իր սեփական ապրումներին էր
զննում խաղի մէջ, իր մեկնաբանութիւնը տալիս կենդանի, սակայն փաստ է,
որ զրկված էր իր սեփական խոհերը, իր բոլոր և բազմաառնակ հույզերը տե-
միջախոտորեն արտահայտելու։ Հերաբանութիւնը, ետքն այն մասին է, որ
նկարիչը կտավի վրա պատկերում է հենց այն, ինչ ինքն է տեմիջախոտորեն գի-
տել է կյանքում, իր սեփական ցանկութեամբ քնարելով գեղարվեստական քննա-
նալման առարկան։ Նույնը և գրողը։ Այդ վիճակում չէ, սակայն, գերասանը
Վերջինս ազատ է դեր քնարելիս և միանգամայն ինքնուրույն կերպարի լուսա-
բանութիւն մեջ, բայց նա պարտադրված է մարմնավորելու գրամատուրգի քնա-
րած իրականութիւնը, որի շրջանակներից դուրս գալ կամ այն փոփոխութիւն
ենթարկել՝ նա չի կարող։ Սա նոր միտք չէ և զրա մասին հաճախ է խոսվել գրա-
կանութիւն մեր։ Եվ եթե այժմ կրկնում ենք արդեն սաղմոթը, ապա այն պատ-
ճառով միայն, որ նա մեզ ոգնում է բացատրելու, թե այլևայլ պատճառների
հետ միասին, հողեբանորեն ինչով է պայմանավորված բուն գրադմանքից շեղ-
վելու՝ գրականութիւնը նա նվիրվելու այնքան հաճախակի արտահայտվող երեսու-
թը գերասանների միջավայրում։

Այս պահանջն զգում են շատերը, մեկը՝ թուրք, մյուսը՝ ավելի բուռն լու-
սիւնով, սակայն այն տարբերութեամբ, որ մեկը և՛ զգում է, և՛ փորձում է իր
ունեւը, մյուսը՝ զգում է, բայց մարտն էլ չի տեսնում գործի տեղեկ, մի եր-
րորդն էլ տեսնում է, բայց առանց լույս աշխարհ հանելու, այնպէս, իր համար, իր
հողեկան բազմաբանութիւն համար միայն, ուրիշների աշխից տեսնա, ինչպէս,
որինակ, Միքանույլը, որ բանաստեղծութիւններ է հորինել, գրել է, բայց չի
հրապարակել և միայն շատ ուշ, կյանքի մայրամուտին, երբ Միքանույլն այլևս
Միքանույլ չէր, այսինքն տարիքն առած լինելով՝ չէր կարողանում բնւ բար-
-

բանալ, բայց հոգեպես առույգ էր և պահանջ էր դրում արտահայտվելու, լույս աշխարհ են գալիս նրա շափածո ստեղծագործության նշխարները:

Ընդ ալ լինի, իհարկն, Աղամյանի բազմակողմանի գործունեությունը բացատրել լավ ալն աշագին հասկնողով, որ ամփոփված լինելով՝ նրա հանձնարք մեջ, գոյութ գալու արտահայտվելու անդիմադրելի պահանջ անկր: Պատմական ճանաչումը յոգետք է ժողացության արվի և եթն Աղամյանի արածը գնահատվի նրա գործած ընտղավառների ալն ժամանակվա տիրող վիճակի համեմատությամբ, ապա կնկատներ մի առողջ ձգտում, որ հասարակական պահանջի հետևանք էր՝ պայմանավորված արդիականության զգացումով: Բուն և կրակաւ խոտնվածքը թույլ չէր տալիս Աղամյանին հանգիստ և անտարբեր մնալ գեղի բարոյցում ու լնացումը: Հասկանալով, թն ինչ է պահանջում ժամանակը, եւ առաջիններից էր հետվում արվեստի հետ միացող ընտղավառը և, իր ումերի շափով, միջամտում նրա ընթացքին: Նրա թափած շաների արգամբը թերնա լի գանվում հետապնդած նպատակի բարձրության վրա, բայց որ Աղամյանի խաղացած պատմական գերն անուրանալի է, ալզ արգեն ամեն կասկածից վեր է: Հետևապես, ալզ տեսակետից պետք է գնահատվի նրա գրական ժառանգությունը:



Ինչ արժեք էլ ներկայացնելու լինեն Աղամյանի բանաստեղծությունները, նկարները, նրա կատարած հետազոտությունը Ենթադիրի մասին, մի բան անշուշալ է — գերասանի բարձր կուլուրան, նրա զարգացումն ու պատրաստությունը: Ոթն անգամ, շատ խստապահանջ լինելով, համաձայնենք, որ եւ առանձնապես կոչված չէր ալզ ընտղավառների համար, ապա, անկասկած է գիտելիքների ալն հսկա պաշարը, հետաքրքրությունների ալն բազմակողմանիությունը, որով հագնյած ընթացք է մեր մեծ արտիստի կյանքը: Ավ գա չէր կարող իր գրական նշանակությունը լուանել նրա բուն զբաղմունքի՝ յեմական ստեղծագործության համար: Ահա այստեղից էլ յխում է մի շատ էական ձեղակացություն: Աղամյանի օրինակով մեկ անգամ եւ հաստատվում է ալն կշմարտությունը, թն ընտղան օժտվածությունը բավական չէ, և մեծ ու նշանակալի արդյունքի կարելի է հասնել ալն զեղքում, երբ միքքը մշակվում և հղվում է բարձր կուլուրայի հակադրության ներքու Դնեա Քելինակին և հկատել, որ լավ և հարուստ ընտղան օմյալները, որքան էլ նրանք հակալական լինեն, առանց հղման և գիտության, միայն ժամանակավոր հաղթանակներ են ընրում և մարդ հաճախ զրկվում է նրանցից՝ իր կյանքի ալն շրջանում, երբ թվում է, թն նրանք պետք է գանվին իրենց լիակատար զարգացման մեջ: Իհարկն, զեղքեր կան, երբ գերասանը, մի առանձին կրթություն չունենալով, գարնյալ հաշտության է հասնել: Որպես օրինակ կարելի է հիշել մի գերասանուհու, որ Բիր ազգանունը ստորագրում էր առաջին պատրաստականի աշակերտի ձեռագրով, իսկ Բհայուրին հանող թվերը չէր կարողանում հիշտ գրել, և, ալնումենայնիվ, անզուպական Եուրան էր, լավագույն եսիտ և փայլուն եսնում: Ալզ, իհարկն, ալզպես է, բայց նրա մարմնավորած Եուրանը իրական պատկեր լինելով, չէր բարձրանում էմպրիկ ջերանման մակարդակից: Ուրեմն՝ որքան լայն կլինի գերասանուհու ընդգրկումը և հաշտությանը մեծ՝ թնկուղ հենց ալզ գերբում, եթն եւ հիմնավոր կրթություն ստացած լինի, զարգացում և գիտելիքներ ունենար: Ինչ խոսք, որ գն-

բառանունին կդառնար ավելի շրջաճառաց և իր մասնագությամբ ու հոգեբանությամբ ավելի քարծր, համեմալն զեկա իր հերոսունիներին:

Եթե գերասանն անկիրք է, իհարկե, ոչ մի զարգացում նրան մերժող չի տալի, բայց, եթե նա տալիս է, ապա ինչ խոսք, որ կուսության ընդունակ է նրա արդյունքը կրկնապատկելու: Դեռևս Քաջման է տեսլ, որ եթե գերասանը թնությունից կոչված չ'է՝ նրան չեն կարող պահել աշխարհի լավագույն ուսուցիչներն անգամ: Գերասանական ապառնիքի անբաժանելի տարրը, Քաջմանի կարծիքով, բացի արտասովոր զգայնությունից, խոր միտքն է: Բնիկանկին էլ այն համազման էր, թե գերասանն իր խաղով լրացնում է հեղինակի գաղափարը և դա է նրա ստեղծագործությունը, դրա մեջ է նրա ինքնությունը գիրքը գրամատուրգի նկատմամբ: Եվ այդ ինքնությունության շափք, զգուշացնում էր նա, պայմանավորված է գերասանի ոչ միայն ապառնիքի մեծությամբ, այլև այդ նույն ապառնիքի զարգացման աստիճանով: Վեպանց ներքնյանքի լինա արվեստ,— հաստատում է նա,— բայց միայն ներքնյանքը, միայն անմիջական զգացմանը բնության մի ներքնիկ պարզեմ է, հարուստ մասնագություն՝ առանց աշխատանքի և վատտակի: Միայն ուսումնասիրությունը, գիտությունը, աշխատանքն են մարդուն դարձնում հանախ պատահական այդ մասնագության արժանավոր և արինական տերը,— և դրանք էլ հաստատում են նրա իրական ուժը: Իսկ առանց դրանց նա կ'կորչում է, կ'վառնվում: Այստեղից պարզ է, որ միայն այս հակադրությունների միացմամբ է ստեղծվում իսկական արվեստագետը...:

Մենք չգիտենք, և ոչ ոք էլ չի կարող տեսլ, թե Աղաձյանի քիմիական արվեստի մեջ, որ ներգործության այդպիսի հզոր ուժ է ունեցել, ի՞նչ մաս էր կազմում քիմիան և ինչ տեղ գրավում ստացականը նրա համեմատությամբ: Գիտենք, որ թնությունն այստեղ ահռելի լավերով է գործ տեսել, բայց նվազ չէր և գիտությունը դերը, որ հզոր է ու մշակել էր թնության ավանդը: Չենք կասկածում, որ առանց կուսության միջամտության էլ Աղաձյանը կհասներ փայլի և հաղթության, գուցե և ոչ անհաղթ, բայց ա՛յն լավով արդյոք, որին նա հասած, լինելով ամենալայն հետաքրքրությունների, խոր իմացությունների տեր մի արվեստագետ: Հազիվ թե Անճառք է համարել խաղալ (և այն էլ ինչպես) առանց ինտելիկետալ հերոսաւ կարողությունների:

Նույնը կարելի է տեսլ նաև մեր մյուս անվանի գերասանների մասին: Չենք կարող, որինակ, մի առանձին բավականություն մը չհիշել այստեղ, որ Պողոս Ռըշտանին իրավարան էր, Սեդրակ և Ամիրան Մանգրեյանները կրթությամբ մանկավարժներ էին, ինչպես և Գեղեճն Միրադյանը, Գևորգ Չմշկյանը փիլիսոփայական հիմնադրո պատրաստություն ուներ, Պողոս Արաքսյանը կոմպոզիտոր էր, Լաթան՝ փաղարանկարիչ, իսկ Արամ Վրույրը մի մասնագետի լավ հնադրական պատրաստություն ուներ, մի հանգամանք, որ թույլ էր տալիս նրան Մառի պես գիտնականի աչ թեղ լինել Անիի պեղելիս:

Չէր կարող այս ամենը լանդրապանաւ գերասանների արվեստի վրա, չհաղորդել նրան այնպիսի ջունչ, որ հակառակ դեպքում գուցե և չլինեց: Բարձր կուսաստան ոչ միայն բազմակողմանի և ավելի խոր մտածման հնարավորություն է բնկեռում, այլև հզորում է խողը, նուրբ հաղակի հակադրության ենթարկում այն, լավի զգացում ներշնչում, ընդհանրապես ուղեվաճնում գերասանի տալանդը:

Գերասանական արվեստը, անկախ նրանից, թե ինչպես է կյանքում իսկա-

պէս, ենթադրում է լայն և քաղաքացիական պատրաստութիւն, որովհետեւ ար-
ժեանքի ոչ մի այլ առաքարեղում ստեղծագործողի երեսակայութիւնը թերեւ պար-
տադրված չէ աշխարհի մեծ թափանքի կատարելու միշտվարից միշտվար, մի
զարադրանից մյուսը, ինչպէս զերասանները (ազ և ասել Ստանիսլավսկին, թե
րեմը, լեռայած մի քանի քառակուսի մետր է ընդամենը, բայց իր մեջ տեղադ-
րում է գլորուսի վրա եղված և շնչված բոլոր երկրներն աշխարհի նվ եւս զգու-
շացնում էր ետրեկ գերասաններին, որ երանք պետք է պատրաստ լինեն և կա-
րողանան հանապարհորդել այդ քուրք երկրներով և բոլոր մամանակներում՝
անցյալ, ներկա և ապագա:

Դրա համար տեղափոխել է կարգալ, հետաքրքրվել, լսել, տեսնել, իմանալ,
մի խոսքով՝ կուտակել, միշտ, անընդհատ կուտակելու կարող եւս ժողովուրդ կար-
գացածը վնդի ֆարուսան, չիշէլ համըրում լսածը երգի եղանակը, պատկերա-
սրահում տեսած նկարի մանրամասնութիւնները, բայց երանք թողած զորեղ
ապագորութիւնը, եթե ինչպէս ցնցել է, չի կարող անհետանք անցնելու Եթե
զրքի վերջին էջը փակում եւս, լկամենալով բաժանվել վնդի սրբելի հերոսներից,
համըրգի դաշիթից հեռանում եւս հոգեպէս հոխացած, թողնում եւս ցուցահան-
գնաի սրաշը նոր, ումեղ ապագորութիւնը գոտեպնդված, ապա ուրեմն՝ ոչ մի
գույն, ոչ մի շարժում, ոչ մի հնչյուն զուր չի անցնի, երանք չի կորչի, մի որ,
որեւէ առիթով, մի տեղ կարտահայտվի:

Անկախ երանից, թե Ազամյանի երկերը՝ բանաստեղծութիւններն ու թարգ-
մանութիւնները, պատմվածքն ու նկարները ինչ աստիճան են աշար պահպա-
նել իրենց գեղարվեստական համակման կարողութիւնը, անկախ երանց պատ-
մական արժեքից, ինչպէս և անկախ այն հետաքրքրութիւնից, որ երանք որդեւ
Նյութ ներկայացնում են արաիստի կերպարն ազնելի խոր և ամբողջական ըմբո-
նելու տեսակետից, այս ժողովածուն թերթող նրտասարգը, եթե վնդել է իրեն
նվիրել թարսնին կամ նվիրվել է արգին, ապա ուրեմն պետք է ամենալարչ հե-
տնութիւնն անի և աշխատի լենթարկել իրեն պրոֆեսիոնալ սահմանափակու-
թիւն վտանգին:

Մեր ասածն անշուշտ միայն գերասաններին չի վերաբերում, այլ բոլորին,
ով ընդհանրապէս գործունեութիւնն առաքարեղ է օտք գնում, ամենքին անխտիր,
անկախ քնագաղաից, անկախ շնորհքի աստիճանից:

Այս չի նշանակում, հարկավ, թե այս ժողովածուն ծանոթանալուց հետո,
երթասարգ գերասանը պետք է գրիչը ձեռքն տանի և անպայման օտանազարներ
գրի Գուցե և նման պարզամիտ նախազգուշացումն անելու հարկը չզգայինք,
եթե մեծուարային գրականութիւն մեջ արեանազրված չլինել մի գեղեց, թե ինչ-
պէս մեկը, որին կատարվով ասել էին, թե սերկրորդ Ազամյանն է լինելու հա-
րեմի վրա՝ սկսել է օտանազարներ խեղծել, միշէն անգամ նկարչութիւնը զրազ-
վել. ոչ մի ավյալ չունենալով զրա համար:

Ազամյանի սրիեակն ընդհանուր կողմորոշող նշանակութիւն օմի և երան
սարկորեն ենթարկվելը, որդեւ կուր հետեղութիւն, մի պարզ անխոհմութիւն
կլինի և, ինչպէս միշտ, բացի ծիծաղելի լինելուց, հակառակ նշանակութիւնը կու-
նենա և լուրջ ազերումներ կուտ:

Անքստեղք Բլոկը բանաստեղծին համեմատել է մշտագալար ծառի հետ,
ասելով, թե երա հոգին ծառի ախ արժանն է, որ շարունակ աճում է, աս-
րածվում, էլի ու էլի, ազնելի հաստատ քույն գնում մայր հողի մեջ: Դա վերա-

բերում է նաև գերասանին: Ըմբ, իրոք, ինչպե՞ս որ մշտադաշար ծառը զգում է հողի մշտական անսպասե պահանջ, այն նյութերի խմորման պահանջ, որոնցով սնվում են նրա արմատները, այնպես էլ գերասանն իր ներքին աշխարհը կարող է հարստացնել, եթե միայն միտքը կուսակուսում ուղղելով՝ դառնի զարգացման կենդանի ընթացքի մեջ: Ինչպես որ մշտադաշար ծառը հողից նյութ չստանալով՝ հետզհետե խամրում է և, ի վերջո, կործանվում, այդպես էլ գերասանը, ինչպես ամեն մի արվեստագետ, կխամրի, եթե անընդհատ չհյուսվածությամբ նրա ներքինը:

Մեր մեծագույն նախարգի օրինակը պետք է հրապարակաթյան մեջ կրթի ու դաստիարակի՝ ոչ միայն սեր և նվիրվածության իր ընտանավանդի նկատմամբ, այլև ընդհանուր կույտության բարձրացնելու առաջը ձգում, լայն և բազմակողմանի հետաքրքրություններով ուղղելու ներքին պահանջ:

Ազամյանի օրինակը կյանքի բազմակողմանի հագեցումը լինելով, միաժամանակ հոգեկան եռանդի շահեկամ կենսաբուսացումն էր, լարված, նպատակաշույթ գործունեություն մի ուղղությամբ:

• • •

Ազամյանը չկա, և չի պահպանվել նրա բնական արվեստը: Ազամյանը չկա, բայց պահպանվել են նրա բանաստեղծություններն ու նկարները: Ըմբ, այնուամենայնիվ, չառ քչերին է հայտնի, որ Ազամյանը, գերասան լինելուց բացի, նաեւ է նաև նկարիչ, բանաստեղծ, թարգմանիչ, արձակագիր և հեռագրագետ քննադատ: Ամենքն էլ գիտակցում են նրան, որպես բնիկ մեծագույն ժողովանի, որն այժմ միայն նվիրական տնուն չէ, այլև ուղեւորի հղատություն՝ յուրաքանչյուր հայի համար, լինի նա հայրենի երկրում գաղղա՜նի մոտ կանգնած բազմաժանոց բանվոր, մեծ համրավի հասած գիտնական, թե պարզ արհեստավոր Բեյրութում կամ էլ հեռավոր Բուենոս-Այրեսում:

Ազամյան-բանաստեղծը գիշում է Ազամյան-նկարչին և այս՝ երկու բնագավառներում նրա ունեցած նույնիսկ տնկատեղծ Հայազունություններն անգամ ոչ մի կերպ չեն կարող համեմատության մեջ դրվել Ազամյան-գերասանի, նրա բնական ստեղծագործության հետ, մի առաջարկ, որ նա տեղավառարելի մեծություն էր: Քննեա, նրա՝ արական-գեղարվեստական ժառանգությունն ի մի չէր բերվի աշուր, կրկին՝ առաջարկ չէր հանվի, եթե այս նկարները Ազամյանը վրձնած չլինե՞ր, և բանաստեղծություններն էլ հանձարե՞զ գերասանի գրչի տակից դուրս եկած չլինե՞ին:

Իսկապես, այս ժողովածուն հազիվ թե այժմ այնպիսի ընթերցողներ ունենա, որ նրա հեղինակին՝ Ազամյանին տեսած լինեն բնում: Եթե պատահեն էլ, ապա այդպիսի երջանիկների թիվն անազաման սակավ կլինի, երբեք հազիվ տեսնես, որ կարելի լինի սոսկ մասների վրա հուշվել: Բայց զժժար թե գրքի ընթերցողների մեջ գտնվի մի այնպիսին, որ լուսն չլինի Պետրոս Ազամյանի տնունը, խմբած չլինի, թե նա ժամանակին ինչ հաղթանակներով է իշել բնից՝ միշտ ծափերի որոտի տակ, միշտ հրացական բացառանշտություններով շրջադառնված: Ըմբ ոչ միայն մեր բնում, քանի-քանի անգամ, լինի դա Մոսկվայում, Պետերբուրգում կամ Օդեսայում՝ նա փառահեղ հաղատամարտեր է շահել: Նա իր խաղով փառք ու պատիվ է բերել հայ բնին, հայրենի կույտության և այդպիսով համայն աշխարհի առաջ վկայել, թե հոգեկան ինչ տեսանունով Հարստությունների տեր է հայ ժողովուրդը:

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԳՐՈՂ

(Ակեառ)

Արեւիաշաշ քնարերգութեան ռազմիրայի՝ Հովհաննէս Հովհաննիսյանի առաջին գրքից լսթ տարի առաջ՝ 1880 թվականին, Բիթլիսում, Հայտնի Հասարակական գործիչ Աննիքերիմ Արծրունու խմբագրութեամբ և հրատարակութեամբ լույս է տեսնում հայ թատրոնի ամենապայծառ առաջի՝ Պետրոս Աղամյանի բանաստեղծութեանների նրախալրերը՝ «Քննքված» և թարգմանութեանք խորագրով։ Աղամյանին քաջալերող հրատարակիչ Ս. Արծրունին իր առաջաբանում գրում է.

«Էլիշայ Բանաստեղծութեանների ունը և ստիլը մի նոր երևույթ է մեր գրականութեան մէջ։ Ինքնուրույն, բայց միանգամայն կենդանի և կենսական գարեջմաներով, զանազան դրոշմներով և բազմաշուրջ հոգնկան շարժվածներով լի, ազատ ազրյութից բխած մարդկային և արտաքին բնութեան արձագանք են հրելում այդ ստանալորները...»։

Էրազմի, Աղամյանի բանաստեղծութեանների այդ գրքուկը, որ ողջունվեց ո՛չ միայն հրատարակիչ Ս. Արծրունու, այլև գրական լայն Հասարակայնութեան և քննադատութեան կողմից, մի նորութեան էր հայ քնարերգական բանաստեղծութեան մէջ քնդհանրապես։

Աղամյանը, հակառակ գրականութեան մէջ տիրող տրագիքիոն հոսանքին, որ գերազանցապես քարոզչական էր և միտումնավոր (Յ. Փաթիպա, Ս. Եւհաղիզ, և այլք) հանդես ձեռնով որպէս մարդկային ներաշխարհը բացահայտող, զառնալով քաղաք ազրյութից բխած մարդկային և արտաքին բնութեան արձագանքը...»։

Աղամյանը, որպէս բանաստեղծ. իր առաջին գործերով սերում է Վննիտիկյան դպրոցից, այսինքն ա՛յն դպրոցից, որ արեւմտահայ գրականութեան մէջ ստեղծեց ստանալումը և արժեքատեղի առանձնորէ Հայտնի է որ Մխիթարյան միաբնութեան բանաստեղծ վարդապետներից ոմոնք գրում էին բացառապես կեղծ կրտսերական ազգեցեցութեան ներքո։ Բազմական է հիշատակել մի նրկուսին միայն,— Էդուարդ Եպիսկոպոս Հլուրմյալին և Քամայանին, որոնք կեղծ կրտսերական բանաստեղծութեան խնկական նմուշներ են տվել մեզ։

Աղամյանի բանաստեղծութեանների երկրորդ գրքի հրատարակիչ Հայտնի բանասեր-դիտական հայր Վարդան Հաջունին իր ընդարձակ ներածականում, ազգեցեցութեանների առնչութեամբ, ի թիվս վեր հիշած Մխիթարյան բանաստեղծների, շնչում է հան Ղեվոնդ Ալիշանի մասին, որի ազգեցեցութեան, առնչւա,

անմիտելի է: Բայց Հայաստանի մոտենում է, որ Ալիշանի մերթ հախուռն, մերթ քրթառն ջնարի ազդեցությունն ազնի մեծ է ու քարերաբ, ջան վերհիշած կեղծ կտառի բանաստեղծներին: Ալիշանը հիմնականում տարբերվում է Միխիթարյան և մի շարք աշխարհիկ իր ժամանակի բանաստեղծներից նրանով, որ նրա բանաստեղծությունների ոգին կենսաբար է և հուզիչ: Ալիշանը նրպում էր հայրենիք, հայրենի բնություն, մեր պատմական անցյալը՝ սգոտելով ժամանակակից սև-բունգրին: Եվ Աղամյանն էլ, մասամբ տուրք տալով կեղծ կյանիկական բանաստեղծությանը, զգայալիս գտնվում է Ալիշանի քարերաբ ազդեցության տակ, հոր գրի է վերցնում հրդեհու հայ մաղովրդի հերոսական անցյալը, իր ժամանակի որոշոյն կայսությունը, և սակայն իր ուսույցի նման նրբոր լի՝ հուսադառնում, որովհետև, նրա կարծիքով, անմասնություն է գործել անցյալով և մոռանալ ներկան: Այս խնդրում ես նախորդն է մեր մեծագույն բանաստեղծ Հովհաննես Բաժանյանի, որ մեղադրում էր ժամանակի հայ բանաստեղծներին, որոնք նրպում էին Արարատի էյունն ու աժպը, բայց մոռանում էին նրա սատրոսում տառապող գյուղացուն:

Երբ Աղամյանի բանաստեղծությունների առաջին գիրքը լույս տեսավ, ես 21 տարեկան էր, ասել է թե՛ հասուն մարդ էր ուստի և աշխարհայացքով կազմակերպված: Խորազնին ուսումնասիրողը կնկատի, որ մեր մեծագույն արտիստը շնորհունակ բանաստեղծ է միամեծանակ, և ոչ թե մի սոսկական է նպիտան, ինչպես միամտարեն կարծում է դերասան Արամ Վրույրը և նրան հայտնիցում է Վ. Հաջոսին: Սթե նրանք ազնի մանրագնին կերպով խորամուխ լինելին Աղամյանի բանաստեղծությունների ուսումնասիրության մեջ, կնկատենին ա՛յն ազդեցությունը, որ ձևական է, որ հնդկականի գրաբարախառն լեզուն է միայն նրան միացնում վենետիկյի բանաստեղծներին, և ուրիշ ոչինչ: Հնդհակառակը, Աղամյանի թե՛ գրական մաներները և թե՛ բանաստեղծական պատկերավորման սխառնք ինքնուրույն է. հիշա ախպես, ինչպես Հ. Հովհաննիսյանին, որ թեև մերթ մերթ գործածում է գրաբարախառն ձևեր, բայց հիմնավորապես տարբերվում է իր նախորդներից՝ Գ. Փաթիպալից և Ս. Մահազիզից:

Աղամյանի գրական տաղարիկ ինքնուր ժամանակաշրջանը հայ անցյալ գրականության հետաքրքիր խաղներից մեկն է: 19-րդ դարի 80-ական թվականներին հրապարակ էր իշխում հայ բուրժուազիան: Փոխվում էին հասարակական հարաբերությունները թաղաքում և գյուղում: Տեղի էր տեսնում սերնդափոխություն ծանր, բայց զնապան պրոցես: Հին սերունդը տեղի էր տալիս նորին: Եվ բնական է, որ նոր սերունդի գրական պահանջը ա՛յլ պիտի լիներ: Մարդկանց աչքն ընկն հուշում եկող ազդարանական մոտիվները, անցյալի խնկահատ փառաբանումը, հին սովերների ոգեկոչումը: Մարդը իր ներաշխարհով գտնվում էր գրականության հիմնական թեման: Պարբառ հող էր ստեղծվում ջնարերգության և հին ռոմանտիկի փյտակների վրա բարձրանում էր սեռայնության արեակի կոսկիտուն լենքը:

Պետրոս Աղամյան-բանաստեղծը օրինալափոքն բռնեց նոր սերնդի կողմը, գրական տաղարիկ ինքնուր որպես ջնարերգու: Ճիշտ է, ես մեկ մեկ անգրագատնում է պատմական անցյալի վերհանման, բայց հիմնականում նրա լայն-մոտիվը մոտ է մարդը պղնապառն գույններով և բազմաշաղղ գարնվաններով լի...:

Որպես ջնարերգու՝ հեշուն ու բազմաշաղղ է Պետրոս Աղամյանը՝ արևա-

գանձներով մանր հուլզին և մուսլլ, արյունախանձ կրքին կյանքը իր լուսավոր և հոռի կողմերով գառնում է նրա քնարի առարկան։ Այն՝ թեև կյանքի մեջ շատ կան հոռի և գանձի կողմեր, բայց նա երբեք չի մոռանում, որ՝

Այնք անդ ասնն. «զուր էլ մեղ եման՝
Ը՛օղկյանն սիրո կոհար անբաման՝,
Լինիք իրարու նեցուկ անմեկնն,
Մրցիլ ընդ մրրիկ, ժպտիլ ընդ լուսին»

Եթե կա մուսլլ մրրիկ, կա՝ և ժպտացող լուսին, այդպես է խորհրդածում քանաստեղծը, որ ասել է թե՛ նա կյանքը վերջնում է իր հակադրության մեջ և, որպես համադրություն, հույսի լուսավոր փեշեր սփռում անբախտ ձկնորսի, աղքատ մանկան, անկեղծ սիրահարի, անսուն գերասանի, մուսայարևակ քերթողի, լքված կնոջ, անկար ժերուսու, անշապիկ հավի և քնդհանրապես բոլոր նրանց հոգիների մեջ, հակադրելով հարուստներին, որոնց թղզացմունքը մեացել են լուկ սարերը...»

Ինչպես նշվեց՝ մանր անձնական տրամադրությունների երգիչ չէ Ազամյանը. ընդհանրառախը, նա ուրիշի վիշտն ու առաքականքը, ցավն ու արցունքը, ուրախությունն ու ցնձությանը դարձնում է իր քնարի առարկան։ Նրա ապրումների և հույզների շրջագիծը շատ լայն է։ Նրա խոհերն ու հույզերը գառնում են հասարակական կյանքի այս կամ այն երևույթի շուրջը, հանդես բերելով ակտիվ վերաբերմունք։

Լինելով գերազանցապես աշխարհիկ մարդ՝ Ազամյանի քաղաքային քանաստեղծությունների մեջ շատ քիչ են երևում նեղ անձնական հույզն ու խոհը։ Ազամյանը սիրել է կոռլը բուռն սիրով, սիրվել և երկրպագվել շատ, կնոջը համարել է «հոգեղեն հրեշտակ», բայց վերջ ի վերջո խորապես գառնացել է նրանից, ու սակայն չի՝ ողբացել, չի՝ հուսահատվել ամենադուռն րոպեներին անգամ։ Նա ա՛յն քանաստեղծներից է, որոնք անձնականը մերում՝ են հասարակականի հետ, առաջնությունը վերջինիս առաջ։ Նրա մի քանի սիրային քանաստեղծությունները ցույց են տալիս, թե Ազամյանը սիրո զգացմունքը ներարկում է հայնեյան բոցկտուն սարկազմով, նույն այդ «հոգեղեն հրեշտակի» մեջ տեսնելով բիրյիական Եվային՝ իր գայթակղիչ պոտուզով։

Հումանիստ և հայրենասեր քանաստեղծ է Ազամյանը։ Նախ նկատենք, որ, նրա ողջ աստեղծագործության մեջ չկա առնչություն կամ հակադրության մի շնչու, մի թիֆլուսի գիծ՝ ուրիշ տղաների նկատմամբ։ Եվ հենց դա՝ է հիմքը նրա հումանիզմի և հայրենասիրության՝ պայմանավորված մեկը մյուսով։ Լինել հումանիստ՝ նշանակում է լինել հայրենասեր, գործոն, հղմարի՛տ հայրենասեր։ Նա նշաճակում է հայ հարուստին ու գլուղական զոփողին, որոնք միայն դատարկ խոսքի, բայց ո՛չ գործնական հայրենասերներ են, և որովհետև միայն խոսքով են հայրենասեր, հետևապես և հայրենասեր չե՛ն։ Ազամյանը խարաղանում է բուրժուազիայի կողմից առաջադրված մորթապաշտ երեսփոխանին, ասելով՝

Ջի աշ ու Լախ տալով կաշա՛ն՝
Կրսնն՝ հղար երեսփոխան,
Որ քու անձիզ օգտին համար՝

Ազգին շահերն ընեա հոխան:

Ջի միշտ պատիվ փնտռես, փառ, շահ,

Գործերդ լավ են ի՛մանչեսիր,

Սակայն կրկին շահու համար՝

Ազգային սեր կը հաշես գետ:

Այսպես է հազիւս Պետրոս Աղամյանը բոլոր կեղծ հայրենասերներին, հար-
կադրելով նրանց իր բարեր, ազնիվ զգացմունքներով համոզված հայրենասիրու-
թյունը: Լսե՛նք բանաստեղծին:

Աշխարհ մի կա, երկիր արևուր,

Սգազդեցիկ և ավերակ,

Անկյալ մահուս հար առաքուր՝

Մածկի յուր փառքն սկիերայ տակ:

Այլ լի՝ արևուր բնավ ինձ համար,

Ջի կը սիրեմ ես այնտեղմանր,

Այն սև հողին հեց սիրահար,

Հան կըգարծեմ գտնել հույս՝ կյանք:

Այսպես՝ Աղամյանը ժառլլ գուշերով է նկարագրում հայրենիքի գրու-
թյունը, և արտաքնապես նրա տանը մի պահ վնասեցուցիչ է թվում, սակայն չի
հանգում այն թեկված հուսահատությանը, որ հասուկ է կյանքի խառնարանում
գլուխը կորցրած, կոճակ չունեցող բանաստեղծին: Աղամյանը կոճակն սննի, այդ՝
ժողովրդի ազագան է, հույսը, որին ամուր կառչում է իր ամենատիրուր հուզի
և խորհրդածության ժամին:—

Գերությունն է կյանքի դազազ,

Ազատությա՛ն հոն կա վսեմ...:

Մի ալլ բանաստեղծության մեջ, որ ռճերգենք, ալլ գործենք զերնագիրն
ունի՝ Աղամյանն ավելի է խորացնում իր հայրենասիրությունը: Նա տնար-
գանքի սյունին է դամում բոլոր նրանց, ովքեր հայ ծնված լինելը ստորություն
են համարում և պատասխանում է.

Հայ ծնվելու ինձի համար

Կը համարիմ պարծանք ու բախա...

Ոհ, ինչ եզրատ սիրելի երգերն,

Կամ Մասիսը էլունակաւար,

Մինչ շատ հայեր սրտներու մեջ՝

Կը կրեն անոր ձմեռն ու սառ,

Ջի պազած է օւրն հայրենյաց,

Լեզուն ստար, իրենք ստար:

Օ՛ն, ժամանակ է եզրայրք, ալ շերզենք,
Միքենք ազգերնիս, միարան գործենք:

Աս պատասխանը չի՞ արդոյց բոլոր այն հայ բանաստեղծներն, որոնք իդէալականացնում էին Մատիսն ու Նրա էլանը, հայ պատմական անցյալը, սակայն, ինչպէս Թումանյանն է ասել, Ազամյանից շատ տարիներ հետո, Նրանք, այդ բանաստեղծները, չէին տեսնում, չէին զգում հայ գլուղացուն ու Նրա հագեկան աշխարհը:

Եւ այն ինչ բնորոշ է 80-ական թվականների հայ եւր գրողների մեծամասնությանը, բնորոշ է և Ազամյանի համար՝ տեսնել հասարակական կյանքը իր ներհան կացութիւնում: Ազամյանը տեսնում և խորապէս զգում է հեռացեալ լայնացող անշնորհաբէ՛ր կյանքի երկու բևեռների՝ Հարուստների և ընկալութիւնների միջև: Ո՛ւմ կողմն է Ազամյանը, այդ լուսավոր զգացողն ու բանիբուն խորհողը: Կարո՞ղ է մարդ մի պահ անբակուսել այդ մասին: Խճարկի, ո՛չ, Ազամյանը, սրպէս բանաստեղծ, հասարակական կյանքի հետ կապված է այնպէս, ինչպէս միջուկն ու կեղևը, որոնք տերաժան են միմյանցից և մեկը առանց մյուսի գոյութիւն ունենալ չեն կարող: Ժամանակը հոսում է և բանաստեղծը նկատում է ախրութիւն՝

Հարստին համար ստատիկ արագ,
Այլ ազքատին թվի զանդադ,
Եւ համբարալլ սրպէս զազալ:

Ահա Նրա ռեալից սղորմութիւնն զերևագրով բանաստեղծութիւնը, որտեղ նկարագրված է հայ գիշակեր ու ալլանգակ, ալպան կոչված բզիւրի գառը, որի կյանքն ընկղմված է անտառկութիւն, զննութիւն, պարի և հանգիստների միջև: Ի՞նչ հոգ այդ դասին, թե դրսում աղքատների խմբեր են թափառում, թե ցուրտ պատերի տակ սառնում են անտուն որդերը: Այդ՝ նրանց գործը և հոգաց չէ՛. սրամտորեն ասում է Ազամյանը, քանի որ այդ բազմառաքալլ տիկնայք, Վեֆենդիք և աղայք, իրենց լայնապարտ փորերի համար, թղթախաղով և այլ քառ գործերով՝ սակու ցեղեր են շինում: Հայնչյան սարկաղմով հագեցած այս բանաստեղծութիւնը հանգում է այն եզրակացութիւն, որ այդ բզիւրի գառին ամբողջ գարշնի հաճատամբը ո՛ւ թե նրանց սրտի, այլ ոտքերի մէջն է միայն:

Այս մտածել սղնի խորացած ենք գտնում Նրա Վեհացած հինգ կողմնի պատմութիւնը և բժայկեր բանաստեղծութիւնների մէջ: Անաշխն հնդկնակը հոշիւ է ալլարանութիւն, բայց իրոք՝ ալլարանութիւն չէ, այլ հասարակական կյանքի տարրեր խափերի վերադարձումը: Գեպի դրամն ընդհանրապէս: Հասարակ պղնձի կտորը հանքից փողերանոց, փողերանոցից՝ կյանքի շրջապտույտում՝ անվերջ մանապարհորդում է, հանդիպելով տարրեր վերադարձումների: Հարուստն այն համարում է իր միակ աստվածը՝ Մամոնան, աղքատը, որի մեղքից շատ շուտ է փախում հինգ կողմնակնոցը, հասկանալի պատճառով, զարմանում և ոգում է իր տերախտութիւնը, որ անգամ հինգ կողմն է կարող պահել իր մեղքում: Ուժեղ սարկաղմով է հագեցած այս բանաստեղծութիւնը: Ընթերցելիս զգում ես խորը կակի՛ք ու զայրույթ՝ բոլոր տեսակի մարդ գիշաափիւնների նկատմամբ, և անհուն գորովով ես լցվում բոլոր ընկալութիւնների հանգեպ, որնք արարվում են կյանքի անողոց գարշապարի տակ:

«Գայլեր»-ը շփման որոշ կետեր ունի վերհիշած բանաստեղծութիւն Հեա-
թին Հեղինակը ալլաբանութիւն չի՝ կոչել այն: Ազամյանք գալլ է համարում շա-
հազորեղներին՝ լինեն նրանք քաղաքում թէ գյուղում: Իրական գալլի և մարդ
գալլի միջև մեծ տարբերութիւն կա, ա՛յն, որ ինչպէս Հեղինակն է առում՝ «գի-
շատիչն անրան է և անխորհուրդ և քնազգամք ապրի իրքն անասուն»:

Այլ քաղքի մեշ միթն քի՛ւ կան վայրենի
Անգութ գազան՝ որք մարդու կրեն կերպարան,
Օրք դեռ ևազ են՝ հաճախում են կրթարան,
Ունենալով դաստիարակ առն հայրենի:
Բայց այդ բուրն արմատախիչ չեն աննր
Գոցա խալթիւ Երսանն, ակուն ու որկոր,
Նման իրենց կը հաշտուն մինչ հոսկոր,
Հարկով կեղծ սիրտ մզաի գարաններ:
Ո՛հ, զոցանից, պարտինք փախիլ շատ հեռու,
Գալլն հայտնվի միմիայն և՛մեռ ժամանակ,
Այլ քաղքիներն շունին որոշ եղանակ,
Ամառ և և՛մեռ գիշատիչ են սրանքու:

Եվ ահա ի լրումն մեր առածի՝ Ազամյանք նկարագրում է մի թշուա
գյուղացու՝ Գիկոյին: Ո՛վ է Գիկոն, որին ախրան չերմութլամք վեր է հա-
նում հեղինակը: Գիկոն գյուղացի է, որ քառասուն տարի սերմանում է և աճեն
անգամ՝

Օրեկային խրեթի՛ գառնա այցերն հեղինէս հաւայիք՝
Որ մի անէրն տերն իր քրտանց հեա խառն է:

Բաց ահա խեղճ Կիկոն, շնայած իր ազաւանքներին և արցունքներին, մեռւմ
է հուսաւառ, ափն ի երես, որովհետեւ նրա շտակե՛տով արտին արդյունքք խում
են իշխանութիւնն ու շահագործողը, և նա, տեսնել ու անգոր, սիրտը արցունքի
մեղ, մութացկանութիւն է անում, բնկերների Հեա մտաբերելով ցովայի հիշա-
տակներ:

«Գուշն ու վարդ» ալլաբանական՝ բանաստեղծութիւն մեղ Ազամյանը
գիժում է խաղաղանութիւն, փիլիսոփայութիւն: Անհասարակ նրա խաղական
բնույթի բանաստեղծութիւնների մեղ հաւաթի ենք հանդիպում հետաքրքրի մա-
քերի: Միշտ է, այդ մտքերից շատերը նորույթ չեն և լաված են հազարամյակ-
ներ առաջ, սակայն նա, այս գեղարքում Գուշյանի նման, հուշիկ ու խաճ միացնե-
լով՝ ցանցնում է մտքեր, որանք տեքաթի ընդհանրութիւն մեղ ստանում են թաղ-
մութիւն և նպատակաւարցութիւն:

Խորեղասն Հենց իսկ համն է վայելչին,
Առանց նորան՝ ո՛հ, քաղցրութիւն լիա:

Մի ալլա բանաստեղծութիւն՝ «Փշրված հույսեր»-ի մեղ փիլիսոփայում է
մահվան և անդրաշխարհի մասին:—

Այն սուրբ նվիրական տեղովույն երևայի՞
Պատկառանք ուզո՞ւնք, որո լուսւթյուն
Չեն վրդովեր ընավ ոչ ազոթքն և ոչ
Մեռելոց կառքին միանց ոտից զոփուեն.
Ուր նշնցելոց վերջին Հոռաշանք
Կարծես ծառաց մեջ դարձել սոսափյուն:

Եռնական քանաստեղծությունների մեջ Աղամյանը հանդես է գալիս որպես կազմակերպված մարդ՝ իրականության ամենալայն ըմբռնումով Կյանքը ընկճում է նրա ներաշխարհում որպես միտք և հույզ, որոնք հանդես են գալիս գույ-գակցաբար, անցակալի միասնությամբ, լսփի զգացումով և քանաստեղծական ունի պատկերներով:

Աղամյանի նրա Երեսասերք քանաստեղծությունը, որ իր կառուցիկությամբ, գիպուկ պատկերներով, մեծ և բովանդակության կառարայ ներգաշնա-կությամբ մի գեղեցիկ գործ է: Հայտնի է անցյալում հայ գերասանի սրայի և անհույս վիճակը և, վերջապես, նրա հիշատակի մեախության խնդիրը, որ այն-քան ներքնված ու ապրված գուրս է ցայտել Աղամյանի գրչից: Փառքի գեներ-թին հասած հանճարեզ գերասանը կարծես իրեն է նկատի ունեցել: Նա թախու-թյամբ խարբրված է՝ գրողը թողնում է իր գրվածքը, նկարչի՝ իր կապը, իսկ գերասան՝ նրա Ոյի՛նչ Գրեթե՛՝ այնչեւ Կարագույրը փակվեց, ծափաշարու-թյունները գազարեցին՝ ախուհեան լուսիթն... և գերասանը կարող է հիշվել միայն ուղազայում, այն է՝ եթե պատմությունը բարեհաճի հիշել...:

Աղամյանը գիտե հմտությամբ կառուցել այլո՞ւմովոր գործեր, որոնց մեծ մասը թեև էպիկական ըստ երևույթին, բայց շաղաղված են լիրիզմով անկեղծ և քանաստեղծ որդիքն, անհասած հինգ կապկանացի պատմություններ, ծերյանկին շաղիկը, Բուսանոցք, ԲՊաշն և վարդ, և այլ գործեր՝ վեր են հանում նրա պարզ, համակրելի պատմելու եղանակը: Հենց միայն ծերյանկին շաղիկը, որի նյութը վերցված է ժողովրդական գրույցներից, ապացույց է ալի բունի, որ Աղամյանը սիրել ու գեանատել է ժողովրդական ասքն ու ասույթը, բառն ու բանը:

Սյուժետավոր գործերից հետաքրքիր է Բուսանոցք-ը, որպես սոցիալական մոճենալը ընդգծող գործ: Ուսանող Հովակիմը սովորում է Մոսկվայում՝ Հետա-գայում հարց օգնելու միտի հույսով: Բայց ահա ընտանեկան մի ծանր վիշտ (ծրոյ մահը) մահացու հարված է հասցնում Հովակիմին, որի մեռնելուց հետո, վշտից խելագարվում և անհետ կորչում է նաև նրա ընկեր Պաղսար: Թեև պատ-Հոռաքանությունները թույլ են և անբնական, հետևապես և գեղարվեստական անսակեմից ըստամենայնի ո՛ւ արգարացված, բայց Հետաքրքիր է իր ժամանա-կի Մոսկվայի կենդանի նկարագրությամբ, ուսանողական կենցաղի և թիֆլիսի սոցիալական կյանքի ճշգրիտ բացահայտությամբ: Զգում են հնգլեակի խորը և չիրմ համակրանքը ուսանողների և նրանց մեղքերի նկատմամբ, սրվճեան նրանց կորուստով հայ միջավայրը զրկվում է ապագա երկու լուսավորիչներից:

Ընդունելով Աղամյանի քանաստեղծական արժանիքները, այնուամենայնիվ, պետք է նկատ, որ նա գերծ լի թիրություններից: Ամենախոտիկ թիրությունը նախ և առաջ նրա քանաստեղծական լեզուն է, որ մի տեսակ խառնուրդ է գրաբարի, արևելահայ և արևմտահայ բարբառների: Այդ անսակեմից զմար է նրան

մեր պոեզիայի մի հաստատ հասկացում ղեկավարելու Վենետիկյան անկենդան գրադարը զրկել է նրա լիզուս պաթոսից: Արևելաեայ բարբառը խառնում է արևմտաեայ բարբառին՝ զրկելով լիզուս միասնությունից, նկունությունից և նրբությունից: Իհարկե, կյանքի վերջին շրջանում, Ազամյանը մասամբ զանց այդ խառնուրդը և անհամեմատ ավելի բյուրեղացավ, բայց լիզվական խառնուրդի հետքերը մնացին: Եվ հիմն լինեին նրա բանաստեղծության անմիջականությունն ու պարզությունը, թափն ու կիբքը, նրա սանավորը կմնար արվեստակալ և ցուրտ: Բարբառիտարար նրա՝ ալիշահ-գուրյանական ներշնչումն ու տարերքը՝ փրկում են նրա ողջ մասնագությունը, կտակելով այն սերունդների անաչառ գնահատության:

Որկորոյ թերությունը՝ նրա երկարաբանությունն է— Մի փոքր զգացմունք զնկելով իրար հրող տների սյունակների մեջ՝ ձեկում է հաճախ տետղի գառուղություններով և անհարկի պատկերներով, ես՝ այն այդ զգացմունքը ենթարկելով ցավագին կաթվածի: Բարբառիտարար նման դործերը քիչ են:

Սրբորդ թերությունը, որ աչքի է զարնում, այդ՝ բանաստեղծական էպիտետների, մետաֆորների՝ ընդհանրապես պատկերների մաշված ու կրկնված լինելու հանգամանքն է: Ենթագիտակցարար նրա որոշ գործերում սղրդիկ են պատկերներ, որոնք արգին դործածել են բանաստեղծի հեռավոր ու մոտավոր նախորդները:

Ուշագրավ է Ազամյանի արձակը: Նրա բնկու է չուրքը, վիպակը մեր ոնալիստական սկզբնավորվող արձակի հաշող նմուշներից մեկը պիտի համարել: Եկնկու է չուրքը վիպակը հայկական նորածագ բուրժուազիայի մի ներկայացուցիչ՝ Անդրեաս Փողթունու կյանքի հայելին և: Իրական ու վառ զույներով է ներկայացված այդ ազաւ և կեղծ բարերարի համբավ վայելող բուրժուալի տիրալը:

Փողթունին կեղտոտ անցյալ ունի: Ստորությունը և խորագրությունը դարձել է գործարանատեր, հեռակապն և նենգող ու շահագործող: Կինը, տրորվելով այդ դարհուրելի մարգուս թանության տակ, մեռել է: Փղկելով մի ղեղեցիկ աղչիկ, նրանուհուն, որին, հայրը, ավելի հարստանալու միտումով, թոնությունը ուղում է ամուսնացնել հարուստ, թայց գառարկապուրտ իշխան Զարեհի հետ: Երանուհին ընդդիմունում է, բայց հոր և հասարակական միշավայրի նշման ներքո՝ տեղի է առել: Սկսում են հարսանեկան հանգեսի պատրաստությունները, սակայն հանկարծ ամեն ինչ խափանվում է՝ Միքրից Թիֆլիս փախած՝ Փողթունու նախկին պորձակից Արաաշի շնորհիվ, որին նույն Փողթունին ղրղել էր ժամանակին զրազվել գրամանենգությունը: Ամեն ինչ լուցվում է: Երանուհին մեռնում է ամսթի կսկիծից, Փողթունին թանկ է նետվում:

Վիպակում գործում են հինգ հոգի՝ Փողթունին, Երանուհին, պառավ խնամակալուհին, Զարեհը և ղրամանեկ Արաաշը, որոնք, սրպես գործող աններ, վեր են հանված տիպականորեն, մանավանդ Փողթունին և Երանուհին: Բնորոշ գեներով է արված հոր և աղչիկու հոգիբանությունը: Կապիտ, թունակալ, ու մի միշցի առաջ կանգ շառնող Փողթունին՝ կենդանի կանգնում է մեր առաջ, որ ամեն մի քալափոխին, ի սեր Մամոնայի, ուղում է ճղմել ղյուրարանի ծաղիկ աղչիկան՝ Երանուհուն: Աղչիկը հոր հակապատկերն է, աղնիվ և մարդասեր, առատամեռն և արղար, ինքն իր պաալանի մեջ քաշված մի իղեալխտուռի, որ, որոշ գեներով, կարծես Երվանդաղի Մարգարիտի նախատիպն է:

Աղաժյանի լեզուն արձակի մեջ տեհամեմատ ավելի հյութեղ է և հասակը Որպես արձակի առաջին փորձ, անկասկած, կան մասնակի թերութիւններ, որոնք կորուսւմ են ա՛յն ընդհանուր լավի մեջ, որ բերել է մեր գրականութիւնը իր այս նախափորձով: Միշտվայրի սեղմ և բացահայտիչ նկարագրութիւն, հոգեքանական անցումների բնականութիւն, բնորոշ դիալոգների հակիրճութիւն, ահա՛ Հասակա-նիշներ, որոնք ցույց են տալիս, թե Աղաժյանը որքան ունակ է բանաստեղծու-թյան, նույնքան ընդունակ է նաև արձակագրութեան մեջ:

Աղաժյանի ստեղծագործութեան դիալոգները լայն է: Այդ են ապացուցում նրա մի քանի թարգմանական հաջող փորձերը, որ կատարել է Ն. Նեկրասովից, Վիկտոր Հյուգոյից, Ֆրանսուա Կոպպից և ուրիշներից: Թարգմանել մի հնդկա-կի, նշանակում է նախասիրութիւն և համակրանք ունենալ նրա նկատմամբ: Դիքս սիրահար լինելով առաւելան և եվրոպական գրականութեան, ես ձեռք է դարձել թարգմանել այնպիսի գրողների, որոնք իրենց ժամանակի առաջվոր գաղափարներով են տոգորված եղել: Ահա, որինակ, Ֆր. Կոպպի ԲՊարթենիերի գործադուլը: Նշանավոր բանաստեղծութիւնը, որ Թարգմանի գրի տակից գուրս է եկել հնչել ու ներգաշնակ: Մեր դարերը դատավորին պատմում է գործադու-լի բռնկման պատճառների, ընթացքի և անհաշու շփոթման մասին: Եվ այս էպի-կական մանրապատմը թարգմանված է հաջողութեամբ: Նույն հնդկականի Բեն-ցորգը՝ գրամատիկական էությունը, ինչպես և Հյուգոյից կատարված մի շարք բանաստեղծութիւնների թարգմանութիւնները, հաջող պիտի համարել:

Աղաժյանը գրական ասպարեղ իշով այն ժամանակ, երբ մեր գրականու-թիւնն ավարտել էր իր կազմավորման և նախապատրաստական շրջանը: Հին և նոր սերնդի գրական պայքարը վերջացել էր նորի հաղթանակով, որը մի ողե-պնդիլ թարմութիւն էր բերել, ինչպես արեւելահայ, նույնպես և արևմտահայ գրական հասովածներին: Լինելով իր էպոխայի առաջավորներից մեկը, բանա-ստեղծ-արձակագիր Պ. Աղաժյանը հանդիսացավ 80—90-ական թվականների հայ պոռնասի նախակարապետ գրողներից մեկը՝ արժանի ամենայն գուրգուրանքի, հարգանքի և զնահատութեան:

ՍՈՂՈՄՈՆ ՅԱՐՈՆՅԱՆ



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ







ԱՌ ԵՐԴ-Բ ԽՄ

Թշվա՛ռ բեկորք, քնարիս ազատ,
Արատունք, ժըպիտք և հառաչանք,
Որ վհատյալ և հուսահատ
Կը պահենի զձեզ ի փականք:

Ձինչ արեգակն ի շողն այգում
Հոգի ծաղկանց տա կիսամեռ,
Ձեր ալ տկար նշխարներուն
Կյանք տվա՛մ Օտյան պաշտպանս ու տեր:

Գնացեք ուրեմն, ընդ հօ՛ղս ի թռիչ,
Մանկտիք ոգվոյն հեղ՝ քերթողին,
Համբուրել ձեռքն այն աղատիչ՝
Ինչպես թոռունքն իրենց պապին:

Եղ շանացե՛ք՝ որքան կրնաք՝
Ի հանգստյան, լուռ պարապո,
Ըլլալ զբոսանքն յուր ներդաշնակ,
Հայնժամ ինձ էլ լինիք հաճո:

Ծթե որ զձեզ տկար դատին
Իմ անաշառ ընթերցողներ,
Բանդեն նո՛ր եք ելած, ներե՛ն,
Լավ ես, թե տան ձեզ քաշալեր:

1878 թվա. 20

ՀԱՅՐԵՆԻՔ...

Աշխարհ մի կտ, երկիր տըխուր,
Սպազգեցիկ և ավերակ,
Անկյալ մահուն հար առաթուր,
Մածկի յուր վառքն՝ ոսկերաց տակ:

Դորա երկինքն է միշտ ամառոտ,
Ձյունակատար վերա լեռանց.
Անդ շի բուսնիր դալար մի խոտ,
է գերեզման նա դյուցազանց:

Թե դիպվածով այդ կողմերիդ
Հայ ուղևորն անցնի մուրը,
Խույս է տալիս, սիրտն ի թախիժ՝
Նովադյալ աշոք՝ արտասովաթոր:

Տրտում ամեն մի լուսթյուն՝
Ձիք բնավ ծաղիկ, ոչ մի ճնճղուկ,
Յուր վեհ քաջաց ոսկերք, առյուծ,
Են լոկ զարդերն մահաշշուկ:

Այլ չէ տխուր բնավ ինձ համար՝
Ջի կը սիրեմ հույժ այդ տեղվանք.
Այն սև հողին հեզ սիրահար՝
Հոն կը կարծեմ գտնել հույս, կյանք:

Այն լռություն սեր խոտեր է
Իմ սրտիս հետ, շատ լեզվանի,

Հողիս էլ հոն մշակեր է
Հիշատակի դրախտ գեղանի:

Թե լինեի մի փոքր ծաղիկ՝
Արտասուքի ցողոյ՝ դեռ թաց,
Կամենայի հոն՝ ձլիլ մենիկ,
Շիրմի մը վրա մեռնիլ թառամած:

Թե ծիծեռնակ դարնանավետ՝
Թռչրանի շուրջն այն տեղին,
Ավերակաց մնալ ի դետ՝
Ու երգ ասել ողբ դառնագին:

Այլ թե սարեկ, երգիչ սոխակ,
Մեկ փոսի մեջ շինեի բուռ,
Հավատարիմ մնալ խոսնակ՝
Արձագանքաց այն լեռներուն:

Սափոր շիրմին փեթակ արած,
Սրտես սիրտ հյութ քաղեի.
Մեղս շինեի կարոտամած՝
Թե ժիր մեղու ես լինեի:

Գերաթյունն է կլանքի դազադ,
Աղատություն հոն կա վառմ,
Կարոտ սրտիս հույս տա խաղաղ,
Մերթ վհատյալ կը հառաչեմ:

.
.
.
.

Ծրգա այս գրեց դողդոջ իմ ձեռք,
Փնարս էլ՝ հոգվույս առած թելեր,
Հյուանց ցավոց այս եղերերգ.
Ում նվագն է հառաչանքներ:

Այլ դուք սեռակն Հայոց աղջկունք,
Թե դայա նրբամն երգեք զողորիկ,
Գեթ հոսեցեք մարգրիտ արցունք,
Ու հիշեցեք ձեր հայրենիք...

Ոհ, է՛ր սիրեմ ես այն երկիր,
Չի դարձանա իմ ընթերցող,
Թե կը սիրե յուր վերնագիր,
Հայրենիքն այն է իմ բնիկ հող:

ՈՐԴԵԿՈՐՈՒՑՍ ՄՈՐ ՈՂԲ

Et rose elle a reçu ce que vivant les roses
l'espace d'un matin

Եվ վարդ, աղբյուրով, որքան վարդի աղբյուր
պահ մ' առաջադին:

F. Malherbe

Լեռնե՛ր, լեռնե՛ր տան ողբերու առձագանք,

Ջի կորուսի իմ մեկ հատիկ սփռվանք,

Դեռ նորատի, շիրիմն եղավ յուր օրրան.

Քնքույշ զավկես ժառանգեցի ցուրտ դամբան:

Լեռնե՛ր, լեռնե՛ր տան արձագանք իմ ողբին,

Ջի կորուսի իմ որդին՝

Իմ սիրտ, իմ կեսն, իմ հողին:

Որքան կին մը լինի անգութ, անզգա,

Ցուր սրտին մեջ միշտ սրբազան կայծ մը կա.

Ո՛հ, մայրական սերն է այդ հուր անմեկին,

Որ արդ փոխի հիս ի տաջանս մահադին:

Լեռնե՛ր, լեռնե՛ր տան արձագանք իմ ողբին,

Ջի կորուսի իմ որդին՝

Իմ սիրտ, իմ կեսն, իմ հողին:

Մարդն այր կնոջ պես չզգար կորուստն յուր որդույն.

Ջի նա հանույթըն մերթ վայլի յուր սիրույն,

Իսկ ինչ հոգեւ մայր մը կրե... Եվ ի՛նչ դող...

Երբ նորածին ղենն զավակն ի սև հող:

Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Երկրագունդս էր, փեծադաստվեր այն գլուխ,

Ո՛հ թե գիտնաք, որքան ցավով ղենցի սուղ.

Այլ սիրաշերտ գրկիս մեջ երբ սեղմեի,
Թըվեր՝ թե մարց երջանկագույնն ես էի՝
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Առավոտուն՝ իմ գեղգեղուն էր թռչնիկ,
Հույսն ավետեր, փայփայելով դիս գողտրիկ,
Ի գիշերի կապույտ աշքերն չի փակած,
Չէի դիտեր թ' արև յուր մայրն է մտած:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Թըվեր Երոս, թե կը սըրն յուր նետեր,
Մինչ ռաջալս բառը վարդի բերնով կը հնչեր,
Ոհ, մեղրակաթ համբուրեի այդ շրթունք,
Մոր մը սիրտ մատենին թերթի սիրասունք:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Անոր վրա տեսնեի լոկ դ' անցելույս
Գողտրիկ մնացորդ, իմ կուսության սիրահույս
Նվ կամ սիրույս հրեշտակն էր նա երկնառաք
Համուսնություն, պարծանք եղավ և պտակ:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Մացեկիս մեջ քներ՝ իբրև վարդ անփուշ,
Սամույր մաղերս՝ վերմակ մարմնույն էր քնքույշ:
Քաղցրարուրիկ շերմութենեն յուր շնչին,
Բազմապատկեր բախյունքն ուրախ իմ սրտին:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Թե բնության մեջ ամենն արքայն յուր ունի,
Իմ հրեշտակա ալ մանկանց մեջ էր արքունի:
Ջի ճակտին վրա բնիկ իրեն թափ ունեի,
Համբույրներես խոնավ ոսկյա յուր մաղեր:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Երբ սպիտակ տեսնեմ դ' ամպիկ երկնից վրա,
Որ քամիեն երկչուտ փութով խույս կուտա,
Որդիս յուր ֆոց կարծեմ բերե, այլ ջրվի...
Նվ քայքայալ յուր գիակին նրմանի:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Այժմ թե իսեմ երգն երաժիշտ սոխակին,
Այլու՞մ քաղցրիկ, այլ ինձ թըվի լալադին,
Բն՝ մշտալաց սոսմույն վրա ալ թառի,
Վա՛յ քեզ, վա՛յ քեզ, մայրիկ, դռն ու թրուի:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Դեռ մայրական չի վայլած սերն ու ճաշակ՝
Յամաքնցան աշացս աղի ալ բաժակք,
Հո՛ս յուր շիրմին անտաշ քարը ցողեցի,
Հոն մեկ քանի մեռյալ խոտեր մշակեցի:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Աստվա՛ծ իմ, զի թողուցիր զիս անզավակ,
Յավոցս հետ՝ մեացի յերկիր այս դարաւակ,
Ո՛հ, երկնից մեշ հրեշտակ պակսեր քեզ համար,
Որ իմինս ալ ինձմե տոբր դու ի սպառ:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր...

Ո՛հ, մա՛հ խնդրեմ, սակայն ունիմ ես մայրիկ,
Նեցուկ, խնամող, միակ սիրող յուր դստրիկ,
Բա՛վ, թե լերինք ըլլան հեգին ողբակից,
Թող իմ մահվամբ չլինի մայրս ինձ բախտակից:
 Լեռնե՛ր, լեռնե՛ր տան արձագանք իմ ողբին,
 Ձի կորուսի իմ որդին՝
 Իմ սիրտ, իմ կեան, իմ հոգին:

ՀՐԵՏԱՆ ՍԻՐՈ

Մենն աղեկից դրախտեն դալիս է.
Որ էնքան լուսով աչքիս երևում է.
Հրեշտակաց քնարեն ծայն փոխ առել է.
Տա մեզ ավետիս սիրո և մահվան,
Ու հոգի ճան կուզն զուրպան:

«Երկնքնն ի ձեր երկիր իջնալի,
«Իմ ստեղծողին թագեն փոխ առի
«Մի չախա աղամանդ՝ աչիցս բիր արի»
Ասաց, «որ էսպես այլևս սիրաք մարդկան,
«Ինձ հոգի ճան, անեմ զուրպան:

«Լուսնյակն է իմ թագ, մազերս են փայլուն,
«Աստեղք լալիս են, զի չգնամ հեռուն,
«Արեգական եմ հարս կրթականուն.
«Նորա հետ կյանք, սեր տալիս՝ եմ մարդկան.
«Հոգի ու ճան են ինձ զուրպան:

«Եվ արեգական նաշխուն ու ճերմակ
«Ամպոց են նմանում իմ ծոց, իմ ստյանք.
«Հոն եմ թաք պահել իմ սիրո կայծակ,
«Որո հարվածից գերեզմանք բանան,
«Հոգիներ ճան կընեմ զուրպան:

«Ինձ էլ» ասացի, «սպանել ուզում ես,
«Միրո խալի վրեն դու զիս քամում ես.
«Մեկ որ ուզենաս, իմ արև կյանք ես,
«Տուր ինձ ծոցիդ մեջ դարդիս բուժարան,
«Քեզ ճանս, հոգիս լինին զուրպան:

«Ան աշերուդ մեջ պատկերս եմ տեսնում,
«Դուրսը լաց կըլնիմ, իսկ էնտեղ ժպտում,
«Ջահերն են հոգվույս, երբեք չեմ կարծում
«Որ մոտ իմ շիրմին սև լույս ցուանան,
«Երբ ճանս, հոգիս է նրանց զուրպանս:

«Անկ հեղ որ յ'երկիր կամեցել ես գալ,
«Էլ չէ կարելի քեզ վերադառնալ.
«Հեշտ չէ քեզ կորցնել ու կենդան մնալ,
«Բն ինձ թողում ես, ցույց իմ մահի դամբան,
«Իմ հոգի ճան, միշտ քեզ զուրպանս:

Գողտրիկ զվարթունս մնչիկ ժպտեցալ,
Կապառուկի թևերն հենց լայն բաց արալ,
Ցուր ոտն էլ հողից մեկ քիչ վերացալ,
Ուզում էր սլանալ երկնից ի խորան,
Նրբ ճանս, հոգիս տալի զուրպանս:

Էլի ես նրան ասացի նորից.
«Բն քչիկ խառնես լուսույդ իմ մթից,
Արշալույս լինի սուրբ սիրո անբիծ,
«Սիրո աստված է արև սիրակա՛ն,
«Ում որ աշխարհ լինի զուրպանս:

Հսպես խնդրեի, մինչ նա օտարին
Թևոց մեջ առած բարձրացալ չերկին.
Անգուժն զիս մենակ թողեց առանձին.
Արդ բոլոր աշխարհն է իմ գերեզման.
Կյանքս էլ ամբողջ ներա զուրպանս:

ՈՐՐՈՒՀԻՆ

Տեսա կուսիկ մը՝ որ տըղեկ,
 Զուներ հայր, մայր՝ կենաց յուր զեկ,
 Այս աշխարհիս մեջ էլ անփութ,
 Զէր գիտեր շարն, ինչ և աղեկ:

Կը տեսնեի դ'էն ամեն օր,
 Մերթ սլալ ի տիղմ ծածկյալ սղտոր
 Կամ քաղթին մեջ թափառակաւ
 Մեծ ճամբուն վրա շրջամոյրօ:

Առավոտուն ընդ արշալույս
 Կուգայր մաղթել ինձ քարի՜ լույս:
 Ու մեկ ժպտիս իմ մտերիմ,
 Ամենօրյա էր յուր խրախույս:

Գեղեցիկ էր երկնքի պես,
 Որով գիշերն մընալ ի տես,
 Այդուն վճիտ աստղին նման
 Պարզ էր, շուներ պանծույճ պեսպես:

Պայծառ ճակատ, սև խոպոտլիք,
 Կապույտ աշեր, սամույր հոնիկ,
 Պատառոտուն դգեստներով,
 Գլուխ դվարթետ, ոտքեր բորիկ:

Տիկնայք կարմիր՝ ճերմակ քաված,
 Մազերնին բարձր, բարձրնին ցած
 Դրսվանց սիրուն մերթ երևին,
 Այլ ներքինը ճանշնա աստված:

Երիտասարդք, լսեք իմ խոսքին,
Պատիվ տվեք անդարդ կուսին.
Մի նմանիք աքաղաղին,
Զի ճանշնա գին մարգարտին:

Ինչ որ զրազանց զարգարանք է,
Սառած սրտի մերթ փռկանք է.
Չգուշացի՛ր, երիտասարդ,
Գուցն օրերդ, կյանքդ վառնդ:

Իմ սրբունիս մաւրացիկ մ՝ էր,
Այլ տղազու հրեշտակ մ՝ ի սիր,
Բերանն ունէր սիրո ժպիտ,
Յնցասլացն հետ հակադատկեր:

Ո՛հ անզգամ այս աշխարհի
Գողթականն էր անմեղ վայրի,
Դիմաց ժպիտն անհայտ կըլլար,
Ողջովելով արտօսք աղի:

Ինչ ես մտառդ ունէր սրտիկ,
Սիրո հարմար օթնանիկ,
Որո սնուն շէր համարձակէր
Տակավին տալ վերք մը զաղարիկ:

Փուշերու մեջ ծնած թշվառ,
Տնանկության նշած տվար,
Պատառ մը հաց ի ձեռին
Արցունքներովն ուտեր՝ թանար:

Օր մ՝ալ փողոցն, ավա՛ղ, տեսա
Խեղճ որրիկս արյունըղմ.
Մեծատան մը կառք շքադիր
Ջախջախեր էր հեզն անխնայ:

Խեղ մը մարդիկ հոն ժողվեցան,
Անհոգ, անփութ վրան նայեցան,
Արհամարհանք դիմքերնուն վրա.
«Մուրացկան մ՝ է՞ս ըսին անցան:

* * * * *
 * * * * *
 * * * * *
 * * * * *

Այլ մինչ գիշերն էի ի քուն,
 Լուսապատկեր տեսի զվարժում,
 Հեգ որբուն հիւսիս հողին ի գիրկ,
 Վերամբարանար հասանդատուն:

ՊՈՒԼՊՈՒԼՆ ԴԻՄԻՏԻՆ

Ի ԳԵՐԵՋՄԱՆՍ ԼԱՅՈՑ

Լո՛ւր ինձ թռչնիկ, մի՛ թռաիր հոս, անց ու գնա,
Այս տեղյաց մեջ ցամաք արյուն, արցունք կա:
Թողյալ դրախտին զհույլ ծաղկանց մշտաբույր,
Մի՛ կենար հոն, ուր երգողն պիտի լա:

Մի՛, պուպուկիկ, թողուր դաշտերն ու մարգեր,
Մնալ թափառ աստ առանձին, անընկեր,
Մի՛ հեռանար այդ ամիսներն խաղաղիկ,
Ուր ման կուգան մեր վիհ նախնյաց ողբիներ:

Արշալուստ հոն չեն պակսիր շառավիղք,
Յորս ծածկին անմահ սիրո սուրբ շավիղք,
Լինք արծաթյա, ծառոց տերևքն են ոսկի,
Հո՛ն շինե բույնդ, հո՛ն լսին երգք և տավիղք:

Գուցե այս վայրն լինի երգող տպերախտ,
Ամենն է սուգ, մի փնտրուեր հոս դրրախտ,
Հոս ծիծաղին վարձատրությունն արցունք է,
Ուր կենաց դեմ ծանր մահն եղալ մշտահաղթ:

Հոս երգերուդ կուտան միայն արձագանք
Սև նոճիներ, ավերակք ու դերեզմանք:
Զփյուռին տեղ ուրվականք լոկ կը հեծեն,
Գուցե քնարիդ թելերն պատհ մահուն ժանդ:

Մահավայրիս չէ քեզ համար օթևան.
Ջի աստ ներկայն ընդ անցելույն է կործան.

Հոս բուն միայն թաղավոր է քառմնալաց,
Յոսկերց շիրմին շինած յուր պսակ, գավազան:

Կիսակործան եթե սյունի մը վերև
Բույն հարդարես, առյալ նոճյաց բզախերև,
Հառաչանաց հոս փոթորիկ կա մահու,
Տունդ քանդե յուր ավերիչ ու ժանտ թև:

Ավերակաց հեղ պահապան գեղուհի
Որ բնակի յառանձնություն տխրալի,
Նոճյաց սոսյուն առյալ նվագ յուր ողբոց՝
Հայաստանյայց մայրն է թշվառ՝ այն ողբ:

Ծարավի է, չի կալ աղբյուր ավազան,
Ինչպես վերքերն արցունքներովն յուր թանան,
Ի նույն՝ ծարավն մեղմե դալուկ յուր շրթանց,
Զարերն յուր բարձ՝ փռշին, հողն է ննջարան:

Ե՛րթ պուպուկդ իմ, ե՛րթ, այլ երբեմն այս շիրմաց
Ա՛յց ել, դի հոս կարոտ մը կա ակոփանաց,
Այս մոռյալ տեղաց փարատե զսև լոռթյուն,
Ի ձայն հեղիկ, միտիթարիչ քո նվագաց:

Գևա՛, օ՛ն, սլացիր գեղգեղելով թևարախ,
Մտիր ի դրախտ, վարդ՝ մը քաղե սիրաշաղ,
Բեր ու ձգե դրկացը մեջ Հայուհուն,
Որո բուրմամբ պաղշկի սիրտն անխաղաղ:

Գրված ըլլա թերթերուն վրա այդ վարդին՝
Թե Անին ավեր, և կամ դրախտն Ծղեմին,
Հայաստան են, միանգամայն Հայուն հող,
Թե օր մ'Անին պիտի նմանի Ծղեմին:

Հայնժամ ըստ իս դու չես պուպուկն սիրերդակ,
Որ խանդավար երգե ծաղկանցն ի պուրակ,
Ավետարեր դու իմ անբախտ Հայրենյաց,
Սիրո հուսո զվարթունն ես երկնառաք:

ՅՈՐԶԻԴԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհս ունայն ու շատ զեշ է,
Ուր մարդուս կյանքն հալ ու մաշ է,
Գերեզմանին մեջ կու հանգչի,
Այլ մինչև հոն ինչ ցաւ քաշեւ

Ինչո՞ւ ծնիս, դո՛ւ, ո՞վ խեղճ մարդ,
Ի դառն վշտաց մտնես թակարդ,
Անշուշտ չի ծնած, չէիր դիտեր՝
Թե երկրիս վրա փուշերն են վարդ:

Ինչ բան է մեր ծնեղյան պատճառ,
Արդոք տիրո՞ջ կամքն է արդար,
Թե տփանաց ունակութիւն,
Դուռ մօր ուսկից մտնենք հաշխարհ:

Գոնյա ցաւոց սա հովտին մեջ
Ճմա՛հ հաճույք մ'ըլլար անվերջ.
Տևողական բան մի չի կա.
Ամեն ունի դուր ելեէջ:

Սերն է միայն, որ մեր կենաց՝
Միշտ խռովահույզ ի ծով ալլաց.
Իբրև լուսին կը շողա, բայց...
Եստ ու շատ կան ամաթ սևամած:

Երկնաբուսիկ ծաղիկ սիրույն,
Այգուն ի ցող վարդին հանգույն
Վախճանազուրկ, անհույս մեռնիս,
Սկիզբդ ինչո՞ւ մղտ է վերջույն:



Տոփանաց հուրն քերևս կիզե,
Խոնավ բաժակդ թե լափլիզե,
Կը թառամիս դու գլխակոր,
Զի ծոցիդ մեջ արցունք դիզե:

Մարդի՛կ, մարդի՛կ, տամ ձեզ խորհուրդ-
Մի տոփանաց առք սերն հագուրդ.
Սիրտը սիրույն թե վառարան՝
Զերս տափանքը շիրիմն է ցուրտ:

Առաջագրեմ այսուհետև
Պաշտել զէնի հողվույս զարե,
Միշտ ի հեռուստ կամ ոտից տակ,
Որ իմ սերն ալ չըլլա անան:

Զի սիրելին իմ ոսկահեր,
Եղն է երկնից՝ ինձ կենսաբեր,
Զուլեմ իրեն շատ մերձենալ,
Որ սերս լիանան յուր հաճանչներ:

Թե գետնաքարչ ոտքերն ինկնամ,
Հո՛ն է իմ տեղս, հո՛ն աի մնամ,
Գրկեն ինկնալ շատ դյուրին է,
Գետնեն, հույս կա որ բարձրանամ:

ԼՈՒՍՈՒՆ ԵՎ ՍԻՐԱՀԱՐՔ

Նվեր առ սիրելին իմ քնույր և մտերիմ
Գ. Փետրվրի Քաշյան

Հ'եղերս ծովուն գիշերվան ատեն
Ծեմեինք, բնությունն երբ ննջեր յամեն.
Լուսինն արծաթյա բաժակեն յ'երկիր
Բյուր կայծեր ու շող սփռեր ցանուցիր:

Գիշեր անմուսաց, չորում այն զվարթուն,
Ժպտովն՝ քու հոգույդ տար հրճանս անհուն.
Նրա քեզ որոշելն էր անկարելի,
Լուսինն էր, թե նէ, որ լույս տայր երկրի:

Ձեր հառաչանքներն խոսեին մինչ սեր,
Ջնույն հնչեին այիք ոսկեհեր.
Յաչա էլ ձեր խոսնավ պլպլար լուսին՝
Զերթ ի ծոց ալյաց սիրո լճակին:

Մովակն արծաթծուփ, անկողին աստեղց,
Գայր երջանկավետ փշրիլ ձեզ 'ի մերձ.
Տայր սիրս ողջույն, զխոստմունս բարյաց
Այն երկրին, ուր սերն է միշտ անմուսաց:

Այլք ձեզ ասեն. չգուք էլ մեզ նրման
«Յովկյան սիրո կոհակք անբաժան՝
Վինիք իւրաքու նեցուկ անմեկին,
«Մրցիլ ընդ մրրիկ, ժպտիլ ընդ լուսին»:

Լուսինն է զողորիկ սիրողաց կանթեղ,
Սիրտն իրենց պատրույզ, արցունքներն տան եղ.

Աղչելունք մազերենն հյուանք են շղթա,
Կախեր են երկինք, որ իրենց լույս տա:

Կամ երկնից կապույտ կամարն են ծակեր,
Ուակից ներս տեսնվին լուսո աշխարհներ.
Նայեցեք, կարծես ալդ ծակեն կը որ
Մեզ գիտն աստված՝ աշոք լուսավոր:

Արդ ձեր ալ կենաց, ձմռան մութ ամպեր,
Դեռ շմթագնած ըզսեր կենտարեր,
Լուսնկայն դինչ ակն վեհին ձեզ վկա,
Ցաստեղց միության ձեզ պսակ գոյանա:

ՁԿՆՈՐՄՆ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԻ ՈՐԴԻՆ

Ա

Ձկնորս մը կար, ծեր՝ աղքատ,
Այլ չէր բնավ հոգաւ հատ,
Զի անդադար աշխատել,
Մարմնով առողջ ու գոհ էր:

Տնակ մ'ուներ, կիսափուլ,
Նավակ ձյութոտ ու խարխուլ,
Որ ղեկյուտեն իսկ ծովում,
Զգուշանար միշտ արթուն:

Այլ նախախնամ ձեռք մը կա,
Որ խեղճերն այս կը հոգա.
Քսան աարի շարունակ
Դիմացան տերն ու նավակ:

Փոթորիկներ տեսան շատ,
Անձրև ու ձյուն հորդառատ,
Այլ միշտ ուսկան ձկնորսին,
Օրհնություն կար Պետրոսին:

Այնքան կանուխ նա կերթար
Որսալ ձկնէր արծաթվառ,
Որ խեղճերն շատերը՝
Զէին տեսներ զարեւր:

Ետքն ի շուկա փութար փուլթ,
Հոն վաճառքին ղիղեր կույտ.

Ձայնը մարեր պողպատով,
Ու ծախեր, դո՛հ քիչ շահով:

Գինեւումն մեջ ցերեկին,
Որպեսզի փայլ տա ձայնին,
Քիչ մը պանրով, չոր՝ աղի,
Կը խմեր շորս հինգ գինի:

Տունն աղքատիկ ի սեզան՝
Ուտեր լուրիայն, ըմպեր զթան.
Վերջեն մտած խոր ի քուն,
Խոկար մինչև իրիկուն:

Մարդն այս տղետ, բարեսիրտ,
Արդար, այլ կոշտ, բռնաթլամբ բիրտ,
Հորիզոնեն յուր անդին
Կարծեր չի կար այլ երկին:

Բ

Ջովակ մ'ուներ անըման,
Կամ գեղեցիկ զվարթնո նման,
Որ տնակի մը մեջ տըխեղծ
Մտեր էր հոգւով բանաստեղծ:

Իր հոր դեմքին հետ սեցած,
Կաշեկազմ և կնճռոպած,
Կարելի չէր բաղդատել
Գլուխ պատանվույն ոսկեթել:

Սրբոր վերենք տեսներն՝
Հայր և որդին միասին,
Ջարմանք ազդեր, կարծելով
Վարդ մը բռաած ժայռին քով:

Հայրը, փայտի մը նման,
Ահարոնին գավազան,

Որնոր հրաշքով մը հանկարծ՝
Մաղիկ տըվալ ոլորդարարէ:

Նիհար զգայուն պատանին,
Տաղանդ ուներ քերթողին,
Այլ հյուղին մեջ չուկ, մենակ՝
Սիրո երգեր զնւագ:

4

Սրտի տե՞ր ես, կամ քերթո՞ղ,
Ի սեր մաշի կյանքդ ի դող-
Երջանկութիւն կա անփուշ՝
Անսիրտ մարդուն և ասուշ:

Կատակ ու խաղ մ'է այս կյանք,
Վալլողին լոկ յուր հրէմանք-
Ողորդութիւն ձեռնա՝
Եթե խորհիս անխնա:

Նա ձկնորսի էր որդի,
Սակայն ուներ հուր սրտի,
Ջի ստեղծողին ձեռք միայն
Կարող է հոն վառել զայն:

Այդ կրակին սրբազան
Նլին որդիք զանազան.
Դիցիան, Մոզար, և Տանթե,
Շեքսպիր, Հյուկո, և Կեթե:

Այլ պատանին սիրովառ
Հլուծեր մարմնով, և տկար.
Ահա՛ ինչո՞ւ հուր և խառն
Փշրեցին յուր մարմնույն բանդ:

Մտացա աշոք զայն դեռ տեսնեմ դաւկադին,
Ի տնանկութիւն, հորենական հարկին տակ.
Ժարձատափալ լուսովն հողի կանթեղին,
Խոկալ, խորհել, ապագային հեղինակ:

Յուր դաւկահար, յուր մահադրոշմ դիմաց վրա՝
Կյանքն ընդ մահու, ողին ի սեր մաքառի.
Հեզ բույսին պետ, որո զլուսն տկամա՝
Սպառնալից հողմոց առջև խոնարհի:

Կարոտութիւն մեշ նա հեծն միայնակ,
Ձի կը սիրե... քերթողավառ տրփանք.
Այլ մերթ ի քուն երազի սերն յուր կուսիկ,
Ու ձեռն ի կուրծք՝ կարծե գրկել զայն բաղկոք:

Շշնկոց մը վանե ըզքունն աչքերեն,
Որոշ լսե, թե կոշեն զինքն հանվանն,
Դուռը բանա... եղ սիրելիւն յուր տեսքեն
Մնա հիացած, կարծելով դեռ երազ է:

b

Հայրն ալ տնփութ իր յուր որդւոյն զերթ փուռ մարդ:
Ձի շատ անգամ խրատած էր զինքն՝ որ թողու
Թուղթ, գիրքն ու գրիչ, ու ձկնորսին առնու կարթ,
Յուր հին միջոց պատառ մը հաց նարելու:

Այլ տեսնելով ցավերն հեգին մահավատանդ,
Ազատ թողուր յուր վշտացն հետ, դրճերուն.
Ու թափելով քանի մարցունք, հայհոյանք,
Երթար լըճիկ նստիլ մոտ յուր ձկնորսու:

Սակայն փութով շիջավ դարուն քերթողին,
Որո ծաղկունք քալացուց մահն յուր ձմռան.
Անմահ երգոց գիրքն՝ ի հարդած մանգաղին
Դեռ շավարտած գոցեց, բացավ գերեզման:

Կամ թե ստեղծողն, ստեղծելուն սիրահար՝
Յուր մանկլալիկ ընտրեց հրեշտակ թևաղզլաց.
Կամ թերկից մեշ՝ եվել քնար մը թերևս կար՝
Կամ դուցե հոն պակսեր քերթող մ'օրհնեղզլաց:

2

Ցնցոսլաց մեշ՝ անմահացավ, մահացավ.
Խաբխուլ մահճի մը վրա դրին յուր մարմին.
Աղքատության օվկիտնին մեշ գտավ
Երկինք՝ առավ, դերթ մարգարիտ սուրբ հոգին:

Հեզ կենդանվուն կանթեղին բոց պլպլար
Դեռ ճրագին վրա՝ բարեբաստիկ մեռելուն.
Երբ ծեր հայրը սենյակ մտավ՝ ու շանթահար
Գամված, անմռունչ, մնաց դիական մոտ որդւնւն:

Պատին գամած, պատկեր մը կար Տիրամօր,
Հին, ցեցակեր, հաղիվ ստվերքն որոշվեր,
Դեպ այն ուղղեց նայվածք մը լուռ ու խոժոռ՝
Հետո զավկին համբուրեց պաղ շրթունքներու

Ոչ գանգառեցավ, և ոչ արցունք մը թափեց,
Այլ հաստատուն քալելով՝ զնաց բացավ դուռն,
Որ ներս մտնե յուր քահանայն տաներեց,
Մեռելն օրհնե ու սրակն վրան օրհնած չուրն:

է

Այս կենաց մեշ շիք վայելք.
Իմաստունն է միշտ անխելք,
Այլ անգամ մը որ մեռար,
Աշխարհ չարժե քեզ բուրվառ:

Իմ քերթողիս ծանոթներ
Էին իրեն անտարբեր.

Աշխարհս այսպէս շինված է,
Գնա մեռիր, որ սիրես:

Զի դրանց առջև տեսիլին,
Բազմութիւն մը ահագին,
Հուղարկավոր պատրաստվեր,
Որ դադարէր ընկերեր:

Ձկնորս հայրը հուսահատ,
Քսակով, մտքով էլ աղքատ,
Զէր ըմբռնէր տակավին
Պատճառն այդ խուռն ամբոխին:

Սակայն հանգեան երբ դանդաղ
Հաննց տնակէն զդադարդ,
Ձեռքերով յուր գողգոշուն՝
Սրբեր արցունքն աչքերուն:

Հեծեր ձայնով մը խապոտ,
Կարծքը ծեծեր սև, մաղոտ,
Այլ խուժանն որ հետ տեսավ,
Կարծես աչքերն շլացավ:

Բազմութիւնն մինչ գերեզման
Հետ գալը որդւոյն յուր թաղման,
Զէր հասկանար եղկելին,
Թե կորսնցուց դանձ մ'անգին:

Ականակուռ զգեստներ,
Եպիփորոնք, դարդք, խաշեր,
Որք ավելի փայլելին,
Քան ձկունքն յուր ուռկանին:

Բաւ ձեռքերովն խորդ ու բորդ,
Շփեց ճակատին կնճառձ մորթ,
Եվ գեթ պահ մ'ի դարմանաց,
Մոռցավ յուր ցաւն անմոռաց:

ԱՌ ՄԱՅԻՍ

Վաղուց է որ իմ խեղճ քնար,
Անձայն, ժանգոտ, գիրկըս մընար.
Զի վեհ Մուսայն իմ երգերու,
Դատապարտած էր դիս լալու

Հառաչելու համար միայն
Կը շնչերի, այլ ընդունայն,
Սիրտս էր անմոռան ի սեր և երգ,
Սիրտ ցավոց դարձած մթերք:

Սակայն մի օր, օր մայիսի,
Քաշված էի լուռ, մեկուսի,
Ի գիրկ մարգաց ծաղկածիծաղ,
Ի լուր թռչնոց, դառանց մատաղ:

Զիսեմ ուստի հով մանուշիկ
Վառ ճակատս դգվեց հուշիկ,
Զայն մը հասավ ուղիղ սրտին,
Զայն Մուսայիս հնչեր Վայիս:

Հանկարծ հոգիս զվարթացավ,
Տըխրությունըս սիրատեցավ,
Դողդուշ մատունքս կիթառիս վրա
Թռթռացուցին երգ՝ օվսաննա:

Ըսի, բռավ չէ՞ քեզ ո՛վ Մայիս,
Ենդ Սոխակին, ծաղկյա թագեր
Եջմայլերդ, քեզ մայլիս,
Եկվելորդ չե՞ն իմ խեղճ երգեր:

Եւսեմ քերթված վեհ տարւոյն,
ամրոտ երգաց՝ բնությունն է քնար,
Երես հարսն ես այն Համաստեղծին,
Ամս պսակն է աստեղաց պար:

Եթե ինձմն ալ դուվեստ մ'ուղես,
Եթնարս ահա ծառին վրա կախ,
Երողարիկ երգեր քեզ հորինես՝
Եթե դայն շնչովդ օրրես խաղաղ:



Voulez-vous plaire aux femmes, flattez-les.
Chamfort

Կուզե՞ք հաճելի ըլլալ կանանց, շողորթեցէ՛ք զիրենք:

Ա

Վարպետ նկարիչ մը, որ ունէր համբալ
Աշխարհիս առջև, տաղանդովն անհուն,
Թագուհւոյն կողմէն պատմով կանչվեցաւ,
Որ դիմք նկարե, նման և նաշխում:

Գնաց և թագուհւոյն ներկայացուցին,
Որ նոխահարգար մենակ իր խրցիկ
Պառկած, հովահար բռնէր էր ձեռքին,
Մյուսովն ալ շոյեւ յուր որսի շնիկ:

«Հա՛ որդամբ եկիր» ըսավ զպատրաստ եմ,
«Տարազովն Աստղիկան օ՛ն դիս նկարե,
«Դիր շուրջըս ծաղկունք, հնշտությանց զնգնմ,
«Միայն իմ գեղս զանոնք թող գերազանցեմ»:

Մտտն անցուց վարպետն յուր ներկապընակ
Նվ կտալն իսկույն ծեփնց մութ գույնով.
Ու ճարտարաշարժ, դիտուն վրձնույն տակ
Դուրս ցատկեց պուխ մը, գողար երանգներով:

Քանի որ կտավին զարներ ըզվրրձին,
Հոն կենաց հետք մը, շուշան մը թողուր,
Տայր նմանութիւն, դշխույն պերճ անձին,
Մինչ եւ արվեստներն դիտեւ մունջուլուս:

Հինգ նիստին վերջը, երբ օր մը մենակ,
Վարպետը պատկերն խնամաք ավարտեր,
Բացվեցավ դուռը, և դշխույն նվիրակ
Ծանուց յուր գալը հետն յուր բամբիշներ:

Մտալ Թագուհին, ու նկարին առջև՝
Կանգ առավ լոթիկ, ակնոցով դիտեց
Պատկերն՝ և ըսավ. «շուքերն են շատ սև»:
Հետս դառնալով յուր տիկնանց, հարեց.

«Դո՛ւք ըսեք, խնդրեմ, սա ինձ կ'նմանի՞»,
«Էտեք, իմ գույնը այսպես մթի՛ն է.
«Տեսե՛ք սա աչքերս, որ աշխարհս հավնի,
«Ե՛ւրթ ստվերաց մեջ ծածկեր պահեր է:

«Վարդ կարմիր այտերս այսպես նկարյալ,
«Ոչ փայլ մի ունին և ոչ ալ հրապույր.
«Կարծես պառավի դեմք է զառամյալ,
«Որ ի գերեզման հայի մահաթույր:

«Ո՛ւ, ո՛ւ, ամրեցե՛ք» հարեց, «խնդրեմ շուտ.
«Հասկացա, դուք մարդ չեք կարող նկարել.
«Գծեցեք լեռներ, ձորք ապառաժուտ,
«Ու կոշիկեն վեր չանացեք շելնել»:

Այսպես այս գորտրիկ դշխույն, այլ կամշոտ,
Անհամբեր ոտքով ծեծեր ըզգեսին,
Բազմոցի մը վրա, դիրքով վավաշոտ,
Փոված սևեռեր աչքն առաստաղին:

Այլ այսուհանդերձ, նկարն էր նման
Եվ հրաշալի, պարծանք վարպետին.
Ջի աշխատեր էր ուճով ֆըլաման,
Ուր որ կը մրցի լսյան ընդ ստվերին:

Քաշ պատկերհանը՝ սրտեն վիրավոր,
Հոն իրրն քարն կոթող մը կենար:
Ջայրացած սրտին բախմունքն ահա՛վոր՝
Ջանար խափանն է աշովն՝ որ դողար:

Այլ նույն պահուն իսկ ձայն մը բզզանաց
Տաղտկալի լռութունն ընդհատեց մեկին.
Մեղու մ'ըն էր այն, որ խոտորագնաց՝
Ներս էր մոտիւ անփույթ, բաց լուսամուտեն:

Իբրև թե նոր լուր մ' ուղեր հաղորդել,
Ամենուն զատ զատ ականջին բզզաց,
Հետո քշիկ մ' ալ խաղաց քնարին թել,
Եվ լռեց մեկեն նվագերգուն ծաղկանց:

Գ

Նկարին այտերուն վրա հանդարտիկ,
Թառած էր, վարդին կարծելով նման,
Եվ հոն կթափեր փրփուրն օսկեղենիկ,
Որ ի շուրջ ծնունդ տրվին Աստղական:

Նկարիչն ուրախ, գուչեց. «թագուհի»,
«Տեսե՛ք, մեղուն իսկ ճանչցավ ձեր այտեր.
«Ահա՛, հոն նստած, նյութ քաղե մեղրի,
«Մինչ գուց կըսե՛իք՝ թե ձեզ չէր նմաներս:

Պչրող թագուհին մնչեց, «վերջապահ»
Եվ մոտ կանչելով՝ նկարչին ըսավ.
«Ե՛ր խոստովանի՛ս որ վարդն իմ այտին
«Տեսնելով՝ մեղուն նույնիսկ խաբվեցավ:

«Զի այսքան օր է, որ քեզ կուտամ նիստ,
«Գովեստ մը նա իս չի լսեցի բերնեդ.
«Վրէ՛ինը ձեռքըդ կաշխատիս հանգիստ,
«Անտարբեր կերպով, հայվածքդ անհեթեթ:

«Փորձառության ալ ունեցիր արվեստ,
«Եվ այս դիպվածքը քեզ լավ դաս մ'ըլլա.
«Գիտցիր որ կիներ կը սիրե գովեստ,
«Դշխո, սպասուհի, ինչ կուզե ըլլա:

«Եղիր նորատի, ունեցիր հանճար,
«Գեղեցիկ արվեստ, ոսկի, ամեն բան,
«Արժեք մը շուկա բնավ կանանց համար,
«Թե բերանդ իրենց ըլլա գովարան:

Այս ըսավ Դշխոյն, և ձեռն փափով
Կարկառեց նկարչին, զոր պագաւ խոնարհ:
Հետո ժպտելով՝ մըմնչեց. «մանս՝մկ,
«Օ՛ն ինչ հետ եկուր, պատկերն ալ հետ առա:

ՄԱՀ ԿՈՒՄԵԿՒՆ

Որքան սիրասուն, փափիկ, քնքույշ էր,
Կարծես թե յերկնից մոռցված հրեշտակ մ' էր.
Անմեղ դեմքին վրա զարմանք նրկատվեր.
Ո՛հ ինքն էլ ըզգար թե այս երկրին շէր.
Ժայռի մը վրա հասնիկն ու շուշան
Չեն կարող ծաղկիլ ու մնալ կենդան:

Միքել Անճելո, և ոչ Ռաֆայել՝
Կրցին այդպիսի կույս մը նկարել.
Անոնք ջանացին բնության հետեւել,
Այլ կոտիկս անմահ էր երկնավայել.
Ինչպե՞ս Փիդյասի լըպիրշ Աստղեկա
Սրբասուն կույս մը օրինակ ըլլա:

Հոնքերն մեշ տեղեն վեր վեր բարձրացած,
Սամույր կամար մ' էր վերա յուր աշաց,
Որոնք սեւեռեր երկնից աստեղաց.
Յորս նկատեի, որ դրեր էր աստված՝
Կնիքըն սիրո սուրբ և երկնային՝
Որով գուշակվեր՝ թե չէ երկրային:

Հրճվանաց սիրո զույգ մը արտասուք
Ձևակերպիին ստիւքն յուր փափուկ.
Երկնագունդ էին ձյունափայլ, երկուք,
Որոց վրա պըճներ մեկ մեկ վարդ աստղունք.
Կարծեի թ' երկնից հրեշտակք նորածին
Այդ կրծոց կաթամբ սնունդ առնեին:

Ա՛հ, սիրամիմունք երբ նէ կու խոսեր,
Թըվեր՝ թե երկնից սիրո տավիղն էր,
Ուղղակի սրտիս յուր զաշնակն ազդեր,

Հոգույս տար անդորր, ի ցամ տարուրիբ.
Այլ ո՛հ, վախճանի նայել շատ իրեն,
Որ նախանձելով երկինք չի գրավին:

Քույրս էր՝ կամ զավակ, ծաղիկ կենդանի,
Ջի չէ մահացվին անմահն հոմանի.
Յերկիր այս վշտաց՝ տիպար դեղանի
էր երկնից դրախտին, և աստվածայնի
Երբ յաստեղատուն լըվիլը տեսա,
Հայնժամ առավել արժեն իմացա:

Ասացի իրեն թե՛ դու աստ եկար՝
Ջանմահին տալու վրսեմ գողափար.
Գոնե զնացիցդ երկնից ի կամար,
Տուր ինձ գրկիդ մեչ տեղ սիրահարդար.
Որ ես ալ քեզ հետ յերկինս վերանամ,
Ջի քենե զրկված՝ հոս կը մահանամ:

Հավասք ունեցիր, ըսավ, հանդարտե,
Իմ կարողության դու միշտ վստահե,
Հուսա՛ անձանձիր, սիրե, ողորմե,
Գիտցիր, որ աշխարհս արտասվաց վայր է.
Եվ ես խոստանամ ի վերուստ օգնել,
Նրբեմըն աչքիդ արցունքը սրբել:

Այսպես խոսելով՝ աշխարհես նըսեմ
Վերացավ. այլ ո՛չ մահվամբ դալկադեմ,
Այլ աստված յերկնից ձայնով մը վըսեմ:
«Ե՛կ հարսդ իմ» գոչեց. «ե՛կ, քեզ սպասեմ:
Ե՛րու անմեղության լուսափայլ շուշան,
«Ե՛կ բուրել երկնից լուսո ի խորան»:

Մովթ գիշեր մըն էր, անթափանց և սյալ,
Տեսա հորիզոնն ամպերով սեցավ,
Ու սենեկիս մեչ լույս մը փայլեցավ.
Ջի ամպոց մեշեն կայծ մը սլացավ,
Ամբարձավ յերկինս անմեղին հոգին,
Բողոլով դիս թշվառ ի վիշտ ցավադին:

ԼՔՅԱԼ ՀԱՐՍՆ

ԱՅԼԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Մաղիկ մ' էի
Ի դիրկ դաշտի,
Միշտ ժպտեի.
Ոսկեխոպուպ պատանիներ,
Զմայլեին յիս և կույսեր:

Արեգակին,
Իմ մտերմին,
Ճառագայթին
Ապաստանած՝ դո՛ւ ասորեի,
Մահկանացու՝ մահ չղգայի:

Օր մ'ալ հանկարծ,
Մին զիս կորույաց,
Սիրով դռչաց,
Ո՛վ իմ ծաղիկ դու աննման,
Սիրո իմ ըլլա քեզ ծաղկաման:

Այլ համբուն զրա,
Ո՛հ, անխնա,
Զիս թողուց նա.
Եվ այն արև իմ կենսատու
Ցամաքեցուց հեքս իմ հողու:

ԿԱՆԹԵՂ ԳԻՇԵՐՈՒՑՍ

Վառե՛, վառե, պլպլիկ,
Կանթեղդ իմ սև գիշերին,
Դու լուռ վրկա միայնիկ՝
Տառապանաց իմ սրտին:

Շամանդադներ քո աղոտ,
Ո՛հ քանիցս փայլեցան
Աչքերուս մեշ արցունքոտ,
Ուրպես պատանք ի դամբան:

Բայց քո լույսն էլ կը բավեր
Ցույց առլ կուտիս հրաշագեղ,
Տըխուր սրտիս, սիրավեր
Ցավն՝ ու աչաց իմ հեղեղ:

Վառե դու դեռ, պլպլիկ,
Ո՛վ գիշերույս իմ արև,
Արշալույսն ոսկեղնիկ,
Ոհ, տի մարե գքնդ տիվ:

Հա՛ ճարճատմամբ սպառի
Հեգ կանթեղիս նշույլներ,
Այդպես կլանքս ալ թե մարի՝
Էրնե՛կ կըլլար ինձ, ո՛վ տե՛ր:

Խորհրդավոր լուր ի լույս
Չի ժպտեցա դեռ, ա՛վա՛ղ.
Նա տի ժպտի, այլ անհույս,
Մահուն պողպատ ի մանգաղ:

Պլպլա դու տխրագին,
Աղքատ շիրմին իմ վերա,
Լեր ուղեցույցն իմ կուտին,
Թե արցունք մ՝ ինձ տալու գա:

ԱՐԿԱՍՏ ՍԻՐՈ ԵՎ ԿԱՄ ՍԵՐ ՄԱՀԱՐԵՐ

Երևաասարդ մ' անփորձ՝ ունայն աշխարհի,
Եամբա ելալ, թողալ ըզհարկն հալոհնի,
Կույր աչքերեն խև բախտին
Փնտռել նշույլ յուր կլանքին:

Անցալ լեռներ, ձորեր, դաշտեր ժաղկամած,
Սլացալ ժողեր, մերթ հանդարտիկ, մերթ կատղած,
Մաշեց ժայռեր սալաւաւոր,
Գնաց հեռի, և այլուր:

Ահա՛ անանք քաղքի մը ստվերն ի հեռուստ,
Ջապագային կարծեր հանդիստ ի մոտուստ.
Բախտախնդրին ապաստան,
Խև երազույն օթևան:

Դեռ կես մըղոն մընայր ճամբաւ այն քաղքին.
Արգեն արևն մտներ հանգարտ յիւ մարին,
Ծառոց, ոստոց և թռչնոց
Տալով զերանգս սսկեզօծ:

Հոգնած, դադրած, գետնին վրա ծարավի,
Զուր կը խնդրեր, գեթ ամպերեն երկնքի,
Հանգակի մը մոտ գտնչուն
Նորեց իրեն զորութուն:

Նա մեղմաքայլ դիմեր ձայնին ուղղութիւն,
Մինչ ծառոց մէջ նշմարեց գողտր օթևան,
Հանգսկատամբն յուր ողորկ,
Յոր ճգնեին երկնից քորք:

Գնաց ուղիդ և հուսալիր, անվհատ,
Բախել ըզդուռ մենարանին ցանկապատ,
Խնդրել սնունդ և անկողին,
Պիտուք, խոնջյալ ճամբորդին:

Հսկումներն մատերն վրախառ ու նիհար,
Ձեռք մ' ապխտակ՝ դռներն իրեն կը բանար.
Ձայն մ' երկնային, արտակեղ,
Հարցուց սեղրայր, ի՞նչ խնդրես:

Տղան հանկարծ վերցուց աչքերն ու տեսավ
Շուշան պատկեր, մահիկ հոնքեր, աչքեր սյավ.
Պելվետերի իրր արձան՝
Ապշյալ մնաց հոն անձայն:

Կապա հագած, կույս մըն էր այն, քույր երկնից,
Որ մրմնչեց շրթունքներովն յուր անբիծ.
«Արդյոք ճամբորդ մ' եք հոգնած,
«Որ գալք խնդրել հանգիստ, հաց:

«Ո՛հ ոչ, գոչեց երիտասարդն. «Քաղցած չեմ,
«Թող պահիկ մը հիանամ դիմոքդ այդ վրսեմ.
«Ձեմ զգար քաղցն ալ մարմնույս,
«Մարավ տըվիր իմ հոգույս:

Անմեղ կուսիկն հարեց, զնալով իրեն մերձ,
«Լռե՛ խնդրեմ, հայս ապաստան երկնից քերց,
«Խաղաղության մեջ զըվարթ
«Մի՛ խղճովեր սիրտս հանգարած:

«Բերկրանք երկրի, հարստություն, նաև սեր,
«Գիացի, եղբայր, ունայն են միշտ, անվավեր.
«Ջի քեզ սիրող մահացու,
«Մահը կրլլա տարփածու:

Այլ պատանին ալրեր սիրով, կույսն արդեն
Ջգայր թեև սեր մը սրտին խորերեն,

Այլ նա իրեն ռճիր մ' էր.
Ջի առ աստված ուխտայալ էր:

Տղայն հուսահատ, փարեի աղչկան ոտքերուն,
Ինչպէս բաղնդն ցողնին վրա վարգենվույն.
Գռչեմ, ակենացս իմ աստղիկ,
«Ըրե՛ք՝ թշուառ երջանիկս:

Կույսն այլ տրտում, աչքերն երկինք սևեռած,
Կը հոսեր ջինջ վրտակ սիրո մարգարտաց,
Ու ելնէջն յուր կրծոց,
Մասներ սրտին, սիրո խոց:

Ձանգակն հանկարծ դանդաղ հրավերն հնչեց
Քերց հանգստյան, զերթ ձայն մահու սրտահերձ,
Կամ հրաժեշտի ձայնարկու,
Երկու սիրող սրտերու:

Հեզ պատանի մարած ձայնով և խեղդուկ,
«Մնաս բարկավ՛ք գռչեց թղի կյանքս իմ ի սուգ,
«Գերեզմանին է ամար,
«Ի՛նչ քեզ թողում հոգիս վառ»:

Ըսելով, թռավ լեռներեն վեր ցավագին,
Մինչդեռ ոսկւա ամրոց մեջնն, դեռ լուսին
Շարունակեւ ըզտեսիլ
Կուսին դիմաց երկնածիլ:

Հառաչանք մը սլացավ կուրծքեն սիրագրով,
Վերջին հառաչք, հետո գետին գլորեցավ,
Ջի շեշտակի սիրույն նետ,
Խոցեր էր սիրտն, հագույն հետ:

Այրեր ճակատն երբ աչքերը միգապատ
Բացավ... տեսավ պատկեր կուսին յուր գունատ,
Որ մերձ ցավոց յուր մահէին,
Հսկեր երման հրեշտակին:

Զի հղկելին տանջվեք տենդով մահազույժ,
Մարմինն ի ցավ, ալլ սիրտն ի սեր... ո՛հ անբույժ,
Ծածկեցին սուգ սև հողեր,
Քողով ըզկույսն կիսամեռ:

Եթե երբեմն անցնիս, ճամբորդ, ալդ տեղեն,
Հեղ սիրելյաց այց ել շիրմին վիմեղեն.
Սերինայի՜ ժիրառա,
Արցո՛ւնք մը տուր, անց ու գնա՛:

ԳԵՐԵՋՄԱՆ ՍԻՐԵԼՅԱՑ

Տե՛ս խորգութորդ քարերու մեջ,
Ուր կու ծլին վայրի բույսեր,
Ի գիրկ ձորին, լեռանցամեջ,
Ծերմակ, անտաշ, քար մ'են դրնր.
Անպաճույճ է տեսքով,
Լի հարուստ նշխարով:

Երկու անբախտ սիրելւաց է
Այդ մամուսաւառ, լուռ տապանիկ,
Որոց հոգին դ՛երկինս վալլե.
Կան սիրախառն աստ սակերտիք.
Ձի այնտեղ քովն քով՝
Թաղեցին արցունքով:

Միահոգի և երկմարմին,
Ի սեր միակամ, էին ուրախ,
Այլ արշալույսն իրենց կյանքին,
Ո՛հ, անարեւ շիշաւ, աւա՛ղ...
Արդ ննչեն ի գորով,
Ընդ վիճաւն անվրդով:

Թե այս աշխարհ շրլլար ունայն,
Կամ անարդար սիրելւաց դեմ,
Գուցն այժմիկ վիճակն անձայն
Չէր աստ հուշիկ, մահու դժբեմ.
Այլ անվարդ յուր տեսքով
Թանգարան է սիրով:

Արեւմտյան կարմիր ամպեր,
Հորիզոնին վրա լուսամած,
Երբ սքողեն արփվույն շողեր,
Հոն աղոթեն խումբ գլուխացյալ,
Հարգանք ու սիրով,
Ծողեն քարն արցունքով:

Իրենց անունն ի մի անկյուն
Փորած էր աղքատիկ քարին.
Այլ հորդառատ անձրենն ու ձյուն
Ձալդ այլ ի սղառ ավերեցին,
Այլ միակ յուր տեսքով,
Շարժե սիրտն ի դորով:

ԼԵՐԱՆՑ ՎԱՅՐԻ
ԿԱՄ ԲԱՐՄԱՅԻ ՄԱՆՈՒՇԱԿԸ

Լեռնաբլուզակ,
Մնի մենակ,
Իմ մանկշակ՝
Միրագուշակ:

Նա մանկության
Նորեկ դարնան,
Է նախնական
Ժպտին օրրան:

«Գարնան վրանմ»,
Կլսե, «ծաղրն եմ».
«Ծուրա ձմռան դեմ»
«Կյանք ավետեմ»:

Ընդ տերևոք,
Փշոտ ի գոգ,
Փթթին անհոգ
Ջերթ համեստ քորթ:

Եվ սիրահոծ
Ցուրյանց ի ծոց,
Թրվի կա բոց,
Մերթ սիրո խոց:

Հետ վարդենվույն,
Ծաղիկ սիրույն,
Է սիրաբույն,
Խոսնակ կուռույն:

Զինքը քաղեն
Ձեռք ձուներդեն,
Դաշտավայրեն՝
Կամ անտառեն:

Զի իմ ծաղիկ
է շատ հեղիկ,
Յամեն վայրիկ
Բուսնի լրբիկ:

Նա կուտոթյան
է ծիածան,
Նվ լուրջ նշան
Անմեղամյան:

Նա երկնաբույր
Սիրս համբույր
Տա սևաթույր
Հերաց սամույր:

Փափկիկ թերթեր,
Ուր շատ սրտեր
Ընթեռնուն սեր՝
Նրչանկաբեր:

Այլ ինձ նման է,
Զի տխուր է,
Լոկ գեփյուն է,
Որ զինք զգլի:

Ոմանք գինձով,
Կամ կընոջ քով,
Հարբին սիրով,
Ծա, լուր հոտով:

Արդ փունջ կազմեն
Մանիշակեն,
Թող մոտեւ գնեն՝
Որ սեր բուրեն:

Կուպիտոնին
Սիրո նեաին՝
Ջարդ է անգին,
Փունչն իմ ծաղկին:

Թե հայն փնջիկ
Մածիկ հուսիկ
Անգութ սրտիկ,
Սեր վաղանցիկ,

Այդ փաղաքուշ
Փունչն ըլլա փուշ,
Տա վերք ա՛ն անրում՝
Շրթանցն անուշ:

Ի ՆԻՆՁ ՄԱՆԿԱՆ

Սիրատաւան հօրորոցի հանդարտիկ,
Ոսկեզանգուր ննջեր զվարթունքն մանկիկ.
Այտից վրա քրտինքն իբրև մարգարիտ՝
Փայլէր, ինչպես ծաղկին ի թերթ ցողին շիթ:

Եվ ընդ թևոք ծածկլալ դուխորն, զերթ թռչնիկ,
Ստլանց մորկան ծաւալ շրթունք բացխըրիկ.
Ցողարարձիկ նման վարդի ժպտալիք,
Ծորս դեռ շողալը կաթիլ կաթին լուսածիր:

Մինչ անկասկած նիրհեր մնջիկ զըվարթուն,
Գողտրիկ ներկա, ում ապագայն սիրասուն
Արձանագրեր թերևս երկնից ի մատլան,
Աստվածայինն արդարության վեհ հատլան:

Զի տարաժամ չվաց մայր յուր ի յերկին,
Լքլալ մանկիկն հօրորոցի առանձին.
Արդ պահապան յուր հրեշտակին ընդ թևք,
Լըվիցն՝ նա յերկնից ճիշ յուր և բողոք:

Ո՛հ մի՛ կական, որդյակ, ո՛հ մի՛ բառնար ճիշ,
Անմայր ես դու, այլ հայր քո մնա քեզ աւածիշ.
Եվ արարիշն այլ տա խնամա մանկավուշն,
Փոքրիկ թռչնոց, և մինչև առ հատն ցորենույն:

Ճամաքեցան թեպետ լանջքն մայրենի,
Այլ փոխարեն կաթիլք քրտանց հայրենի,
Մարգարտահեռ պարանոցիդ են շղթա,
Կենաց փականք են քեզ դոքա, հաւատա՛:

Այլ հորժամ դու լինիցիս դուստր նաղաքայլ,
Հիշեսցե՞ս դեթ ըզլանը մորկան սիրափայլ,
Որ քանիցս կաթամբ յուրով կենսատու,
Ճողկաց զարմատըն վարդենվույդ սիրարկու

Թն լինիցիս կին սիրարույր, գեղանի,
Հիշեսցե՞ս դու զալնոր հայրն օնրունի,
Որ ի սեր քո հսկեր խոնջյալ, քրտնամած,
Արդյոք հուշիկն մնասցե՞ ի քեզ անմոռաց:

ԵՐԿ ՎԱՎԱՇՈՏ ԿՆՈՋ

Դեռ նորաստի էի կուսիկ,
Երազեի սեր խաբրուսիկ,
Ապագայն ինձ, ես ալ անոր՝
Կը ժպտեիք հուամսուր.
Խաչ մ'ոսկի միակ՝
Էր զարդա ու մանյակ:

Պարանոցիս հատ մ'ալիլի
Մանյակ եղալ ինձ գլխիլի.
Սիրելիւ մը կտրիճ թևեր,
Որ միշտ անույծ ինձ կը թվեր.
Առաւ ալդ մանյակ,
Խոցեց իմ հոգյակ:

Անօրենքն, որ այն օրեն՝
Ամոթահար իմ ողբերեն,
Հալածեցաւ, զնաց ալուր,
Տալով ցավեր աղեկութիւր.
Մորկանս հիշատակ,
Ծախեցի զմանյակ:

Կրեցի քաղց, տաղնաւ, ու ցաւ,
Որոց փոխան երկինք տըվաւ
Իմ ցավերուն անմեղ ընկեր,
Քնքուլը մանկիկ մը ոսկեհեր.
Ոյր ճիշն վազաղակ,
Ողբույս էր նըվաղ:

Մարավաշուրթն արտասվելու նա,
Գլուխն հենած կրծոցըս վրա.
Առատ էին աշաքս արցունք,
Քան իմ սալանց ազրերակունք.
Ոյց կաթին բաժակ
Զոր էր և ցամաք:

Լանջք մայրենի կյանքն ին զավկին,
Մինչդեռ իմ ծոց, ցամաք ցրտին,
Շիրիմ նզաժ սառած մարմնույն,
Մարավամահ իմ խեղճ որդույն,
Որ գեթ վշտառաք
Հրճվանքս էր միակ:

Կը հուսայի թանհուն ցավելու
Համառոտեն իմ սլավ օրեր,
Սակայն բախտըս վատ, անողոր,
Միշտ հալածեր թշվառս անոր:
Զերթ տերև ցամաք,
Հողմոց խաղ ծանակ:

Խնչպես աստված, մարդիկ նուրնպես
Նրբ դարձուցին ինձմե երես,
Սառեցավ սիրտս ու քարացա,
Նվ այն պահուն ալ ըզգեցա
Իմ արտասավակ
Միծաղկոտ դիմակ:

Հախժամ անոնք, որ անգթարար
Կը նայեին կնոջ թշվառ,
Շինծու ժպտեն յուր խաբովելով,
Մարմինն ավար ըրին սիրով,
Նվ գլուր անառակ
Պաշտեցին զդիմակ:

Մարդիկ քաղեն իմ համբույրներ,
Մեղադրելով վայլեն զ'իմ սեր.
Վշտաանունդ սիրո եմ ծառն,

Ու տոհմանաց պստուղ տամ դառն:
Ունիմ անառակ
Ժպտերես գիմակ:

Կիսաթառամ ճակտիս ծաղկունք,
Զորս ցողեցին աչքիս արցունք,
Դեղնած այտիցս վարդն ու հասմիկ:
Ժպիտ շրթանցն իմ բացխըրիկ.
Ո՛հ մի՛ հավատաք,
Դիմա՛կ են, դիմա՛կ:

Համեստության քողով ծածկած
Միթե՞ կանայք շն՝ տեսնելած.
Անգութ դալլեր, որ սլաարին
Անմեղ գիմաց տակ ծածկվին.
Այլ մի՛ հավատաք,
Դիմա՛կ են, դիմա՛կ:

Սիրող սրտին բարոյական,
Անբուժելի ժանտախտ կուտան,
Ու շվալտարար ծածկեն ի ծոց
Մաղու ժպիտ, և մահու խոց.
Մինչ աչացս առվակ
Մածկե զ՛իմ գիմակ:

Արհամարհեն եթե սիրվին,
Արյամբ ջուր տան սիրո նետին,
Ես սիրեցի, հալածվեցա.
Մեր կյանք արվի, վիշտ ստացա.
Անտե՞ր, անզավակ,
Մնացի խեղճ մենակ:

Մանիծելու զիս, համեստ կուտիկ,
Ես ալ մոր մը էի դատրիկ.
Արցո՛ւնք մը տուր գեթ թշվառիս,
Որ չբլլա ինձ վիճակակցիս:
Զի դու նշավակ
Զես կրեր գիմակ:

ՀԻՇԵՄ ԶՔԵԶ

Կը հիշեմ զքեզ, երբ ծաղիկ ծաղկին
Համբույր տա քնքույշ.
Հիշեմ ես զքեզ մինչ թևք զեփյուռին
Գգվեն զիս անուշ:

Յաշնան լի ձմռան ես միշտ դեռափթիթ.
Հոգվույս իմ բուսիկ
Հիշեմ ես զքեզ, մինչ աշերս վրճիտ
Յողեն քեզ ցողիկ:

Հիշեմ ես զիմ սեր, երբ դալով մահու.
Շուրթիս վրա բաղմի.
Կը հիշեմ զքեզ արտասովոր ազու.
Հետին վայրկենի:

Թերևս գնւ հիշեմ քեզ մինչ գերեզման,
Այլ ցուրտ շիրմիս քար
Իմ հառաչանաց է հովետ խափան,
Անդ մնա միշտ հար:

ԿՅՈՔ ՍՈՒՑՈՒ

Ո՛ր ձայն մը կար և ոչ շշուկ ի կոթ սու,
 Լոկ դայլայլիկ լավեր թռչնոցն դասու,
 Ուր մայրն յուր ձագ հրավիրեր հապաատան,
 Հանգչիլ ի բույն, թողլով դաշտն ու ծառաստան:

Ոսկեհեղու լեռանց ժայռից ի կատար
 Ոսկեժպիտ արևն վերջին ողջույն տար,
 Ամպոց ի գիրկ, որք նոր հարսանց պես պատրաստ,
 Կարմրելով դրկեն զփեսայն հառադաստ:

Հովի՛տք և բլ՛ւրք, նկարք Հաստի՛ն երփներանգ,
 Ի՛նչ սրտերու արդյոք տրվիք արձագանք.
 Սիրահարաց ունայն երգմանց դուք վկա,
 Որք անցնելով թողին, ծաղկունք ձեր վրա:

Որքան ծիծաղք, համբույրներ ու շշնկոց
 Ընդ սոսափյուն դաշնակեցան այս ծանոց.
 Քանիցս իրենց լայնատարած ստվերներ
 Ժամատեղին եղին սրտից՝ վառ ի սեր:

Անդ գյուղական հաճոյից հետ հեղ, հանդարտ,
 Հակապատկեր կանգնի կայսեր Քյոշկն հպարտ.
 Զյուղից մեջեն, յուր սպիտակ քանդակներ
 Ունայնությանց տան զշիրմին լուրջ պատկեր:

Այլ կապուտակ ծովակն անգամ Վասփորի,
 Որ զեփյուտին դեմ իսկ ցաակոտ կը փրփրի,

Պատկառանք հասի հ'այն դաշտ սիրածոց,
Ընթում հային աղջիկ, ծաղիկ՝ սիրահոծ:

Կարծեի թե հրեշտակի մը հառաչանք
Բլուրըն քանդեր և բացեր է այդ հոսանք,
Ուրկից ի ներս, սիրելուս հետ նավակով,
Ո՛հ ես տենչամ դիմել ի սեր անվրդով:

ԼՈՒՍԻՆՆ ԵՎ ՓՈԹՈՐՈՒՆ

Խուլ մոնյամբ գոռա բնություն,
Ի տարերաց կատաղություն.
Որոտընդոսա՝ հոյս երկնացույ,
Սպառնալիաց սփռն նշույլ:

Մովըն թըվի արտ մը շրեղեն,
Բյուր ակոսյուք արծաթեղեն,
Հ'որա աստված ինք սփռն առաս՝
Շիթք անձրեին, սերմ կենսակաթ:

Ոսկեքողանց ի սլալ ամպոց
Պարզե լուսին դյուր գեման ի բոց,
Որ ի մրցում ընդ կայծական՝
Լուսավորե զայդ տեսարան:

Կամ զինչ կանթեղ մեռելազգյաց,
Խղճատանջի մահճին ի քղանց,
Որ գեհենին լույսն արձկն,
Մինչ եղկելին մոնչե, հեծն:

Թեպետ նա հույսն է նավորդին,
Կամ արեգակ յուր գիշերին,
Այլ անդ, զերթ շահ լանդանդս ալյաց,
Լուսավորե զմահ գրկարաց:

ՕՐՈՐ ՍԻՐՈ

Օրոր, օրոր, երբ դա Ավրոր
Նոր կյանք բնության ամենուն,
Երկրիս՝ կենաց համբույր տալու,
Քու լույս՝ զհամբիդ հետ մրցելու
Հայնժամ և դու սրտիս Ավրոր
Զարթնուա, մեղեա, երթանք հ'օրոր

Կըսեմ սերդ իմ, նախ դիրկս եկուր,
Սիրանորոգ համբույր մ'իմ առուր,
Փարե դիմ լանջք քնքույշ թևք,
Հետո երթանք օրվիլ անհոգ.
Թող մեզ օրրե ոսկին Ավրոր,
Սոխակն ի վարդ երգե զօրոր

Թռչունք իրենց թևց վստահ,
Ետիսեն ուրախ արվվույն ի շահ.
Նվ ցողաքիրտ տերվոց մեղին՝
Արեվազայն մեզ ավետեն.
Գեղգեղելով, զողջույն, Ավրոր,
Պարգևեցիր մեզի նոր օրո:

Մեզ ալ սիրո թև շարժական
Կախաղանիս ըլլա տախտակ,
Որո վերա զերթ զույգ տառակ
Մերթ խոնարհինք, մերթ խորանանք.
Շուրթն ի շուրթն սիրատառան,
Ու միասին երգենք զօրոր՝
Ողջունելով Դշխույն Ավրոր

Եռնանակին այս խեղճ փայտիկ
Օրորոցին էր մեկ կտոր,
Հորում ի նինչ կայի անգորր,
Դյուքյալ երգոք քաղցրիկ իմ մոր.
Այժմ սիրույս է օրինակ,
Որով քեզ հետ, Հողմւյս երկվոր,
Կը տատանինք յօրոր, յօրոր:

Միակ փափաղ մ'ունիմ, լսե՛,
Քն սիրամաշ, քննե առաջ՝
Հողմւյս վերջին տամ ըզհառաշ,
Ճեղքե տախտակն, ու շինե խաշ,
Հանգչած փոսին վրա տնկե.
Հոն մեռելոց երգե զօրոր,
Դու որ կենացս եղար Ավրոր:

ԱՌ...

Եթե ըլլայի վարդերու փնջիկ,
Կուղիի ծածկել քեզ տերեւաթափ,
Այլ եթե հրաւար՝ նետ սիրո գողտրիկ,
Յանկայի սիրտըդ խոցել սիրաառաւ:

Ձի աստվածային ալդ վնհ աշքերնդ,
Թափանցեց ինձ սեր, կայծակի նրժան.
Քեզ աղվի սիրտըս, կյանքս ալ կոտամ՝ դեթ՝
Որ ոտիցըդ տակ ըլլամ պատվանդան:

ԱՆԴՈՒՆԻ ՍԻՐՈ

Ա

Ես ալ եղա երիտասարդ սիրահար,
Ու արտփեր սիրտս. եթե աչաց մեջ կուտին
Նշմարեի հուսալիր՝ և սրտավառ
Միտ խոստումն, աշխարհս թրվեր ինձ երկին:

Վաղաթառամ եղավ դարունս սիրաբծարծ,
Ջիշուտ հասավ դեղնաղգեցիկն այն աշուն,
Ծանշցա կորուստս, ալ հեռացավ նա անդարձ.
Հասավ ձմեռն, տրվավ համբույր պաղպաղուն:

Բ

Այլ ի՞նչ անուշ վայրկյան մէր այն, շեմ մոռնար,
Երբ առաջին անգամ տեսի յուր պատկեր.
Ապշած, սառած, մեացի հոն իբրեւ քար,
Մինչ ձեռք մ'անտես ներքուստ կուրծքիս կրտսիւր:

Ավա՛ղ, ավա՛ղ, ըսե՛մ թե ի՞նչ շահեցա,
Երեք տարի անդնդի մեջ խենթի նման,
Մերթ ի կասկած կամ ի նախանձ մաշեցա.
Կարծես յուր դիրկն մահու եղավ վեհ օրրան:

Բարեբաւտիկ օրերուս մեջ վախճալի
Որ չլլա թե շուտով անցնին խաբուսիկ.
Ապերշտիկ ժամերուս մեջ տվելի
Կը սիրեի երբեմն ի հույս խաղաղիկ:

Եվ արամութեան վայրկյաններու մեջ ստեպ
կը խորհի, թե մեծատունն բազմահաց
Սեղանին վրա՝ չգտար ախորժն այն անվրեպ,
Որքան աղքատն՝ ունի անկալ փշրանաց:

Միշտ թշվառին սփոփանք է, երբ խորհի՝
Թե ի բարին կրնա վիճակն յուր փոխվիլ.
Կամ է ուրեմն ըլլալ թշվառ հուսալի,
Քան թե քանիկ, ապագայն երկնիլ:

Ինչպես որ աղն կերակուրին համեմն է,
Արգելքն է որ համ տա սիրո շատ անգամ:
Այլ անարգել՝ մտերիմ սերն ալ տեսող չէ.
Ձի շատ հեղ վերջն՝ է մատնութիւն անզգամ:

Գ

Այն որ ունի սիրտ մը սիրող և փափուկ,
Որն որ հեշտիվ վիրավորի և դադատուկ
Խարույկ դնե հոն հրապուրիչ կայծն աչաց,
Ձգուշանա. այն մահուն է գողոր հարված:

Նյութը միայն սպանե մահուն դառն մանգաղ,
Այլ նեղք սիրո՝ բարոյապես և դանդաղ
Մահ պատճառեն մեր մտաց և մեր հոգվույն.
Ուտի նետերն՝ են քան զմանգաղ դառնագույն:

Ուտից տակ այդ հոմանվույն պաշտելի,
Սիրասքողիւլ անդունդ մը կա ցավալի:
Երբ ծնրագրենք՝ չի գլորիւր հոն մեր մարմին,
Ձի սրտերնիս փականք ենք դրած վիրապին:

Այլ երբ ահեղ իսկութեանն ականքեւ,
Սպառնալից, կանգնի գլխույն մեր վերեւ,
Հետեւ գոշնք սիրտըն յեզերց անդնդին,
Սակայն ի վիշտ մաշած գտնենք մահագին:

Յայնժամ զգանք, թ'այն գրկաց մեջ գտանք մահ,
Հոր սիրտն հոգվույն գերեզմանին եղամբ բահ.
Որո բերան կը ժպտի մեզ ահռելի,
Այլ շատ տարրեր կնոջ ժպտեն սիրելի:

ՄԻՍՄՈՌՆԱՐԻՆ

Myozotis անուն ծաղիկը

Վերջին խնդիրքս այս է քեզի,
Սիրելի.

Միս մոռանար, քո մտերիմ
Վաղեմի:

Ո՛հ լավագնայն թե դու քան զիս
Հանդիպիս,

Մի քնդ օտարն մոռնար վշտերն
Իմ սրտիս:

Զէ կարելի, որ կենսահույս
Իմ սիրույս,

Աստղի մ' ազոտ շողն սքողի
Զվերջալույս:

Հիշատակն իմ հարգե դու միշտ,
Եվ անվիշտ

Անցնին օրերդ, երջանկությունն
Քեզ նաժիշտ:

Մեռյալ սրտիս տխուր պատկեր,
Անավեր

Համենայնի տեսնե՛ն թափառ
Քու աչքեր:

Աչացդ մեջ սիրո կար գահ,
Ա՛հ ու վահ,

Գոնե սիրալու հիշատակիս
Զտեսնե մահ:

Վաղուց, զիրար երբ սիրենք,
Կժալտենք.

Այսօր անցյալն հիշելով լանք
Ու տրտմինք:

Թե ատեն մը պսակդ էր վարդ
Սիրարարդ,

Միամոռնարիկն այսօր ըրե
Սրտիդ զարդ:

Միտ անցիցն հուշկածադիկ
է հոգքիկ.

Վշտադնելույն սփռվանքն է
Միայնիկ:

Կուտին կապույտ աշացն հանգույն
Երկնադույն,

Հոր դեռ կարծես վառի անցյալ
Կայծ սիրույն:

Թե սիրտդ ի սեր է քարացած
Ու սառած,

Հոն քանդակե դեթ հիշատակս
Անմոռաց:

Հ'այն՝ ծաղկաման պեղեն ի սուգ
Արտասուք,

Որ մնա թարմ Միամոռնարիկն
Վաղանցուկ:

ԵՐԳՅԱԼ Ի ՀԱՍԱՐԱԿԱՑ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

Հնչե՛ն նըվազք, օ՛ն պարեցե՛ք, ազնիվ տիկնայք, պարեցե՛ք-
Ձեր ընկերոջ թէն ձեզ նեցուկ, լավ մը իրեն փարեցեք.
Ամենքեիդ ալ՝ սիրուն տիկնայք, բնությամբ նման իրարու,
Արտաքուտ ալ շատ նմանիք, երբ խառն ելլեք պարերու:

Ջի բոլորն ալ նույն կերպն ունին, աղչիկ, տիկին, նշանած
կամ ամուսին հավատարիմ, որ ուրիշ մը է գրկած.

Մայր է դուցե, որո մանկիկ կուլա ծաղկած մոր կաթին,
Մինչդեռ մորը կուրծքերն հնչի լանջացը վրա պարակցին:

Համեստ կինն իսկ, կաքավասեր, և քրտնաթոր սիրտն ի դող,
Հոն կը վազե, սասանայեն սև դիմակ մը առած փոխ.

Հոն ի ձայն բլուր նվազաց, երգոց, կայթին սահին յուր ոտքեր,
Տեղափոխին սրտին նման, որ փոփոխի միշտ ի սեր:

Պարն՝ Աստղղկան մեղկ հանդիսից հիշատակն է ի նախնյաց.

Ասունք բոլոր մերկ պարեին ըզմիմյանս ընդգրկած.

Եվ այսպեսով կը պատվեին, մեղկ տոփանաց դիցուհին.

Դուք ալ սիրո աստվածն պատվեք, միայն ծածկած է ձեր մարմին:

Դո՛ւք աղախինք, այդպես անկարգ ոստնըլով,

Ձեր արժեքը կը կոխոտեք, այդ դողալը քնքույշ ոտքերով,

Եթե հիններն ձենն առաջ մարմնով միայն էին մերկ,

Ավա՛ղ... դուք ալ բարոյապես պատվով կըլլաք մերկ ու լերկ:

Տարփավորաց հիշեմ քզպար, որ Տանթիի դժոխքին մեջ,

Ուր որ կըսե, դիրար գրկած, դառնան ողբովք հ՛ելնէջ:

Գուցե, տիկնա՛յք, այս աշխարհես կուղեք առնուկ զայդ ճաշակ.

Այլ ձեր պարը տարբեր է շատ, զի ողբոց տեղ հնչեն նվագ:

ՎԱՆՑ ՔԵՂԻ

Վա՛յ, քեզ, թե անփորձ և դեռ պատանի,
 Մի անգամի՜ ոգվո, թեպետ գեղանի,
 Սերն քո սրտիդ մեջ ապաստանի,
 Ցավոց ալլաց մեջ կյանքդ տատանի,
 Մեղք չըլլա՛ր քեզի:

Թեև ունենաս սիրտ մ' անկեղծ է՝ արդար,
 Հեղու մը՝ թարգման հոգվուդ սիրավառ,
 Վեհ ճակատիդ վրրա սև մազեր դալար
 Վեհանձն սրտիդ թե տան ըզտիպար,
 Ի՞նչ օգուտ քեզի:

Ի՞նչ օգուտ քեզի շրթանցըդ մրմունջ՝
 Որ վարդ կը բուրն, ունի սիրո շունչ:
 Թ' ամեն մեկ բառերն կազմեն սիրո փունջ,
 Այլ քեզ խոսակից սրտերն մընան մունջ,
 Ի՞նչ շահ է քեզի:

Թե կյանքըդ ուզես զո՛ւ մը տալ ի սեր,
 Երբ անհոգ նային քեզ կուսին աչքեր,
 Խեղճ մուրացկանին պես՝ թողուն քեզ անտեր,
 Երբ համբույրով մ'իսկ՝ կրակդ շնն մեղմեր,
 Կակի՞ծ չէ՞ քեզի:

Դաշտաց ծաղիկն որ մենակ կու ծլլի,
 Արևուն երեսն ի վեր դմայլի,
 Փոխարեն առնու գույներ կենդանի:
 Վա՛յ, զի սերդ այդքան արժեք մ' ալ չունի:
 Ի՞նչ վա՛յ է քեզի:

Թեպետ անապատ տեղյաց ծաղիկն է,
Լերանց հարազատ՝ վայրի բուսիկն է,
Երկնից հոմանույշ զեփյուսին քույրն է,
Կուսիկն զայն գգվի, նա երջանիկ է.
Իսկ բյուր վայ քեզի:

Մահվան գրկին մեջ քեզ զոնաւտ տեսնեն
Քեզ, ո՛վ պատանյակ, երես կը դարձնեն.
Քու սրտեզ օտար՝ շարիք բյուր ամեն
Սև հողերուն հետ վրագ կը դիզեն,
Ի՞նչ վա՛յ է քեզի:

Քե օր մ'ոգեսպառ, վերջին շնչով մը,
Սլանա կուրծքեզ արյունոտ բառ մը,
Սիրույդ վերքերուն մեռյալ գանգատը
Նախանի ձայնըդ, անգույն ծիծաղ մը
Կըսեն՝ վա՛յ քեզի:

ԱՐՍՈՐԵԼՈՒՅՆ ՆՐԿ

Ձեռն ի նակատ և մտասույզ,
Լքյալ, պանդուխտ մնամ աստ անհույս.
Ի հորիզոն լայնատարած
Կը թափառին աչքերս ցամքած:

Կարծեմ թե անդ, հայնկույս լերանց,
Կա նոր երկիր մ'երջանկությանց.
Հոն այլ երկինք, որոտ արփին
Չը տա տեղի մութ գիշերին:

Ի վերջալույս զերանգս առնու
Հաղար ու բյուր ծաղկներու.
Մինչ սև ժայռից խավար զոտի
Մեզ բաժանե հավետ անտի:

Աստեղք իսկ մերձ հորիզոնին
Կը դալկանան, ու փայլ շունին.
Ձի լույսըն որ հոնկից բխե,
Մեր աստղերը կը մթազնե:

Չունի հոն սերն հակառակորդ.
Բյուր հաճոյից՝ բյուրք են հազորգ.
Չիք անդ արտօսը, և ո՛չ դամբան.
Ամեն սիրո են սուրբ խորան:

Հոն թագապսակ չիք նենդավոր,
Որ խռովե զերկիրն անդորր.
Ճշմարտությունն անդ միապետ՝
Իշխե ի սեր, բարվույն ի պետ:

Հոն են գուցե իմ սիրելիք.

Մայր վշտահար, ծերուկ հայրիկ.

Հոն է կյանքիս զոհարն անդին,

Սիրելի վիշտ հեզ պանդխտին:

Հոնկից ելլե արևն այգուն,

Որ նախ ամեն՝ ինքն է արթուն.

Կուտիս հաշաց փոխ առնե լույս,

Գա շողափել հակատա անհույս:

Այսպես՝ ինձ հետ միշտ խոսակից

է հորիզոնն այդ վառ անրիծ.

Երբեմն հուսո հառաչանքներ

Կորզե հոգովոջ իմ սիրավեր:

Թե մահն այլոց թըվի դահիճ

Ինքն է իմ լոկ պաշտպան փրկիչ.

Խաղար թևոցն ապավինած՝

Վերջ տալ հուսամ կարոտանաց:

ՔԵՐԹՈՂՆ

Նվեր առ Մանրիմն իմ բերթոյ
Գ. Անճեղյան

Ո՛վ երգեցիկըդ հովիվ Մուսայարնակ ի Պառնաս,
Հոգիդ քնար երգերու, սիրտըդ ի սեր բոցատենչ.
Միշտ գեղեցկին սիրահար. և՛ ճշմարտին ոչ նրվադ,
Որ տանչանք տան ու պարծանք քեզ այս-ցավոց հովտին մեջ:

Վրսեմ քնարիդ թևոց վրա միշտ բարձրերեն թռչտիս.
Նյութականը քեզ համար չունի հաճույք ու հորդոր.
Հ՛ոչնչի դու ստեղծես, իբր հեղինակ բանահյուս,
Քաղցրիկ ժամեր հայթհայթես մեզ երգերովդ ոգեմոր:

Ինչ որ տըխուր հայս ի վայր տա մեր սրտիցը հրապույր,
Ինչ որ ժպիտ մեր բերնեն կամ արցունքնիս է գրաված,
Ծանոթ են քեզ խոսակից, հոգվույդ իբրև բռնիկ քույր.
Քեզի համար են ստեղծված, հանճարույդ են ընծայված:

Մաղիկ, շուշանն ու մարգեր, և սիրարույր վարդենին,
Հուլյն աստեղաց և արև, անհունությունն անպարփակ,
Կամ կապտերանդ վառ ակունք սիրաբարբառ կուսեկին,
Քերթողին են ընտանի, նյութք յուր տաղից քնարերգակ:

Բանաստեղծին այլ՝ թշվառ կյանքը գլորի միշտ ի ցավ,
Յուր մեծ հոգվույն հանդիման աշխարհս տըխեղծ երես,
Մահկանացու մարմնույն մեջ, հոգին անմահ, զերթ ի նավ,
Տառապանաց ընդ ալիս՝ միշտ տատանի ծփծփա:

Իսկ այդ նավուն նավապետ յուր հոգին է սիրահար.
Հայնստարած թևերով, երկնայինն նավաստի,

Հանդդնարար նաւարկն փրփրող ալլաց ի կատար.
Միբո հ'ափունս նա դիմն, թողլով ժայռերն միշտ հեռի:

Այլ հեզն հանկարծ շփոթի, զի այդ ծովուց խորերեն
Ցցվի ժայռ մը ծածկաղղաց՝ սակալն ներքուստ ահարկու.
Աչք քերթողին ի պատրանս՝ սիրո կղզի մ'այն կարծեն,
Դիմն, փշրի անդ յուր նավ, սուղլալ հ'անդունդս ծովու:

Անմե՛ղ քերթող կլանքդ է այս. իսկ ժայռն է սիրտ այդ կնոջ,
Որ արտաքուստ հրապուրիչ, դրավն սիրադ ու հողիդ.
Մինչև որ զնէ նյութ դողարիկ ընես քնարիդ սիրապոչ,
Հետո շիրմիդ պեղն հոս, ի մատնություն մահառիթ:

Հողիդ միայն հանճարույդ ոսկեպնատւր թևոց վրա,
Թողու զմարմին յուր ցաւոց, ի ծով սիրո նավարկ,
Ի ճեմարան վեհ ոգւոց յերկինս ի վեր ամբառնա,
Իրեն առած առաջնորդ զերկնայինքն քերովրեք:

Քերթողն է նման թիթեռնկին, որ ախորժի թռչտիւ,
Նրբ կը անան կանթեղին զրոցն ու հուր որ պլպլա.
Ի՛նչ պետք ոգւոյդ այդ բոցին այդքան մատչիլ և հարիլ,
Թենքդ արգեն լուսավոր ինչո՞ւ խանձել անխնա:

ՈՒՌԵՆԻ

Մենակ էի վրտերուս հետ,
Լճի մ' աղետ նստած մոտիկ,
Մեռելաշուք ուռնվույն տակ,
Որոտ արտոտ է տերեւիկ:

Գլուխս առած ձեռքերուս մեջ՝
Կը խորհեի, և իմ աչաց
Ճամբեր արցունք, որ Պալասամ
է սրտերուն վիրավորված:

Գունյա սփռվանք մ' էր ուռնին
Ինձ, որ իմ տեղս լուռ արտասովեր.
Աչացս այսօր կրե պաշտոն,
Անշուշտ վաղն ալ... շիրմիս է ստվեր:

ՀՐԱՅԵՇՏ ԱՌ ԻՄ ԽՅԻԿ

Բարյա՛վ մնա՛ք, իմ սիրասուն առարկայք,
Տխուր կամ զվարթ վայրկյաններու լուռ վկայք.
Մնաա բարյակ, աղքատաշեն իմ խցիկ,
Դու, սիրազուրկ Թոշուլս համեստ վանդակիկ:

Յողում հավետ մրաշաղախ ձեր որմունք,
Ընդ որս երբեմն գծեր դողդոջ իմ մատունք,
Դուք արձագանք տայիք դիշերն իմ ողբոց,
Նրբ՝ գեւ անթուն հաշս իմ շողար այգուն բոց:

Հապա խարխուլ Աղամական իմ մահիճ,
Արտասվահոծ երազներուն իմ ճահիճ,
Առազատիս սիրո շեղև անկողին,
Զի տարաբախտ սիրո զոհին էր բազին:

Հոս միայնիկ, ճիշդ հինգ տարի ապրեցա՛:
Մերթ ժպտելով, ալլ հույժ լացի տրտմեցա,
Ինձ խոսակից էին լըոիկ անկյուններ,
Հորս ի տեսիլ ինձ հրեշտակիս գայր պատկեր:

Պետք է երթալ և հրաժարիլ, ճար չի կա.
Զգամ, աստվա՛ծ... վիս հալածող ձեռք մը կա.
Ձեռքն այն, որ ինձ երդանկության հուռ բանար,
Դրունք սննեկիս փակե ներքուստ, ո՛հ, ի սղառ:

Մի դու քույրիկ, սիրելիք իմ, այդ դրան
Բախեք, դի հոն չեմ ալ, որ տամ ձեզի ձան.
Մարմարիտեն ձեռք մը փակեց այն դաներ,
Որոնք փականք սառած լեզուս է դրեր:

Գերեզմանի պէս համբ է լուռ իմ խցիկ.
Իսկ յուր կմախք բացակայիս է հուշիկ.
Ջայն բանալու շրջա բնավ աշխատիք,
Ձի յուր տեսքեն դուցն հիշեք դիս, տրտմիք:

Միայն երբեմն ականջ դրեք այդ դրանց.
Ու թն լքսեք խուզ մոնլլում հեծծանաց,
Հաշտատարիմ են իմ որմունք սենեկին,
Ուր գեռ կրկնեն հառաչանքներն իմ նախկին:

Ի ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՆ

Աչք կիսաբաց, դեմքը դունատ,
Մահափճուոյն զերթ մագաղաթ,
Վաղամեռիկ մանկան մարմին
Դրբին փայտյա ի դագաղին:

Պարանոցն էր այնքան նիհար,
Յողուն ծաղկին խորշակահար,
Որ թեթև իսկ ցնցումներեն
Տարուբերեր գլուխն ոսկեղեն:

Գետակի նման ի ձեռք մահուն
Խաղալիք մը եղած խաղաւն.
Նվ կամ կոկոն, որ բաժնված
Վարդեն, մորմենկ, մեռնի ցամքած:

Մեկ քանի խեղճ բանվորք միայն
Դագաղին հետ գնային անձայն.
Ու շահասեր աերակր մ'աղքատ
Աղոթք մրմռար լոկ հատ ընդ հատ:

Ի հող իջավ մանուկն անպարտ,
Փայտն աուփովն պարզ և անդարդ.
Հարդարանք մ'ալ եթն ունիւր,
Յուր հրաժեշտի վերջին ժպիտն էր:

Այդ մահաստվեր մունջ ժպտին տակ,
Քանի խորհուրդք ծածկին, որդյա՜կ.

Երկրիս զգվա՛նք, թ' երկնից հրճվանք,
Թողին շրթանցդ ժպտին նշանք:

Այլ նա դարդ մ'ալ ունի անդին,
Ոսկեխոպուկ վերա նակատին,
Որ շողշողա հանդույն աստղի,
Իբր ատաշնորդ շավղին երկնի:

Խփնակալն իսկ յուր թագին վրա,
Ի ծիրանին ճոխ, բեհեզյա,
Զունի ալն զարդն, ալն ջինջ գոհար,
Այդ շիթ մ'արցունք է մոր թշվառ:

Ահա ինչո՞ւ, երբ արդ տեսնեմ
Զաստեղս անթիվ, չերկինս ի նեմ,
Ո՛հ ձեր մեջեն, կըսեմ, շատե՛ր...
Որդեզուրկ մարց են արցունքներ:

ԵՐԳ Ի ԴԱՇԵՆԱԿ ՆՈՐԱՏԻ ԱՂՋԿԱՆ

Միրաս է լեցուն, հայր իմ, առ քեզ երախտոք,
Վառե հաւատաւ որդիական սիրուն հուր.
Միրո լուծեր լեզուս կապեն անողոք,
Մինչ բյուր մաղթանս ցանկամ ձենել սիրալուր:
Առ քեզ, Հա՛յր իմ և պաշտպան,
Մաղիկ հոգվոյս նախնական:

Ահա այսպես երբ անստույգ խորհի,
Գաի հանկարծ լեզվիս թարգմանն ու Մենտոր,
Հրեշտակաձայն տարած դիւ-մոտ դաշնակի,
Վարժեց մատաղ մատունքս ի նվագ անմուր.
Ուստի երգեմ քեզ Հա՛յրիկ,
Մաղթանք կենաց երջանիկ:

Ինչպես շուշանն սիրատարիկ արևուն,
Եվ հեզ քամին թռթռուն ծաղկանց սիրահար,
Կամ օրհնեղու պուպուլին նման ՚ի դարուն,
Միրեմ ըզքեզ, օրհնեմ կյանքիս բարերար.
Հայրիկ, կենաց իմ լապտեր,
Հաստչիս վրսեմ դու պատկեր:

Երախտագետ և որդեսեր սրտերու,
Աշխարհիս մեջ, ո՛հ ընտանի չիք բարբառ.
Մատնատեղիք լոկ դաշնակիս սիրարկու,
Կամ քնարից թելն են խոսուն և հարմար՝
Անոնց, որք միշտ կը սիրեն,
Եվ սիրածնին ալ օրհնեն:

Թեև որքան ճակատդ ըլլա ձյունահեր,
Ազնիվ սիրտդ հոն պիտի փալկն անկնճիւ,
Որչափ քալիւրդ դողդոջ, տարլոք ծանրաբեռ,
Երախտաժիլ եմ թեզ նեցուկ սիրալիւ:

Մարմինս ծերույդ դավադան,
Շրթունքս առ հայր օրհնաբան:

ԱՌՎԱԿՆ ՈՒ ԼՃԱԿ

Ա

Լեռներին, բլուրներին
Առվակն պարծենկոտ
Իջե՛հ սիգալով՝
Ի դաշտ ծաղկահոտ:

Նվ խորխոր մրմնջե՛.
«Սա եմ կենսավետ
«Ծաղկանց, մարգերու,
«Գարնան՝ կարապետ:

«Սա կուտամ ծաղկանց
«Կյանք, և դույն, բուրբ,
«Առանց ինձ տնոնք
«Բոռմին գլխակար:

«Կենաց հեռք թողում
«Միշտ օձապտույտ,
«Ի գիրկ պարտիզաց,
«Քարանց իսկ ի կույտ:

«Նման խանդակաթ
«Մայր մը՝ կը փնտռեմ
«Բույսերն, իմ որդիք,
«Ջրովս կերակրեմ:

«Հոն կերթամ, ուր որ
«Չոր խոտ տեսնվի,

«Ու ծածուկ կը ջրեմ,
«Եվ կառնու հոգի:

«Այլ այսու հանգերձ
«Համենաւ եմ, գեանեն
«Միշտ կը սողնակիմ,
«Գոհ իմ վիճակն:

«Այլ ի՞նչ անօգուտ
«Զուր է սա լճակ,
«Որ լուռ՝ ծուլության
«Մնա ի վիճակ:

«Անշարժ ու դանդաղ՝
«Զերթ փուռ կենդանի,
«Հայնանիստ, հանգիստ,
«Ընդդիմը խորհի:

«Նա, ինձ բաղդատմամբ,
«Օվկիան է ջրոց,
«Այլ օգուտ չունի
«Յուր մերձ իսկ բուռց:

«Աստված կարծեմ թե
«Հավագույն կընեմ,
«Թ՛ անոր տեղ, պտղոց
«Մառ, ծաղիկ տնկեր:

Ք

Երբ այսպէս երկնից
Հայլի լճակին
Դեմ կը բողոքեմ՝
Առանձնաբար:

Հանկարծ վետ ի վետ
Պատռեցան ալիք

Լճակին արծաթ,
Որ կենար լըռիկ:

Ու կույս մը, հրեշտակ,
Ծրնցալ ի շուրջ.
Բուրել սկսաւ,
Ջերթ վարդերու խուրձ:

Պահ մը ապշեցաւ
Ինքն իսկ առվակ,
Ու շփոթեցաւ
Ճամփան խոտորնակ:

Այլ լճակն անդին
Գոչեր, բարեկամ,
ԵՄիթն քու բույսերդ
Մեծի՞ն կուտիս համ:

Մի՞ վ դաշտամուր
Ե՛րու իմ խեղճ ընկեր,
Ե՞նա թափառական,
Ե՞րեւ քու ծաղկներ:

Ե՛մ միշտ քուկինդ
Ե՛կնակս է տարբեր,
Ե՛րչե՛, մի մոռնար
Որ քենե եմ վեր:

Ե՛ս լուռ կը կենամ
Ե՛կո՛, իրաւ է.
Ե՛կլ իմ մեկ բոպեա
Ե՛կմբողջ կյանքդ արժե:

Ե՛ղաշտոն ունիս շրել
Ե՛րաշտերն ծաղկաբույս,
Ե՛կլ ես, կյանք կուտամ
Ե՛կուտին սիրահույս:

Ի ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՍԻՐԵԼՈՒՅՍ

Ո՛հ, մի՛, խնդրեմ, հոս դիտ մենակ մի՛ թողուր,
Հատոր հոգույս, սրտին իմ կայծ, դու հրեշտակ.
Թե դու մեկնիս, առանց քեզի մնամ տխուր,
Կատակերդուս՝ ցավոց կըլլամ ողբերգակ:

Ինձ ըսին թե, ծովով հեռու պիտ երթաս,
Այլ կես ճամբեն գուցե դառնալ կամք ընենս,
Զի ծովուն վրա հառաչանքներս փութալով
Տի փոթորկեն դայն՝ ալեկոծ, փրփրադեզ:

Ու պիտի գան արծաթ ալիք,
Նավիդ ի կող պիտի փչրին.
Գիտցիր արցունքս են իմ լրտիկ,
Որոց պատճառն ես աղբյուրին:

Թե արտասուքն այն անկարող
Ըլլան նավիդ խորտակելու,
Հորձանք կընեմ այս սիրտս ի դող,
Սիրասլուրս զայն կուլ տալու:

ՄԵՌՅԱԼ ՄԱՂԻՆ

Ժրկայնակայաց ինչպէս ծաղիկն այն աշնան,
Որ դեռ բուրմունքն ունի ժպիտ մը դարնան,
Այլ դա օր մը, որ գուցէն ու բույր թառամի,
Յուրս քամիներ կորզեն թերթերն մի առ մի:

Թերթք յուր ցամաք, ի շուշ հողմին տարուեր,
Լերկ դաշտաց մեջ, կամ լերտեց վրա ձյունահեր՝
Թափառելով, կարծես պատմեն հեգ ծաղիկին
Սիրատենչիկ պատմութիւնը յուր կյանքին:

Սակայն հունտերն, որ իրեն կյանք տան նորեն,
Երբ որ ձմեռն հրաժեշտ առնէ բնութենէն,
Օտար հովտաց, անապատաց մեջ մենակ՝
Փթթի, բուրե, դերթ Բարձային մանուշակ:

Դաշտամուր անշուշտ օր մ' ալ հովվուհին՝
Ալցեւելով առանձնաբնակ այդ տեղին,
Պիտի քաղէ խորհրդավոր այն բուսիկ,
Որ հոն լքյալ՝ կայր անպաշտպան իբր կուսիկ:

Առանձնակայաց յայնժամ ծաղիկն անընկեր,
Պիտի գտնէ հոն յուր նման ընկերներ,
Ատոնց այտերն են վարդ՝ տղչկան դաշտածին,
Որո ի ծոց բուրե թռամի սիրազին:

.

Իմ ալ տհա թուրաստանն սիրամշակ,
 Խղեց, խամբեց, նախանձն զվարդ անուշակ,
 Շունչ մը աարազ վանեց սերմն ալ շատ հեռուն.
 Այն ալ մեռավ, դի յուր վերջինն էր գարուն:

ԼՈՒՆՔ, ՍԻՐՏ

Լո՛ւնՔ, խեղճ սիրտ, բարախմանցդ ալ դադար տուր,
Զի անօրնն ի ձեռս սիրո՞ւ վշտագին,
Կուղեն խեղդել ու մահ մը տալ քեզ անլուր,
Սիրտ, որ սիրո՞ւ արշուձըմա էր բազին։
Բա՛վ է, սիրտ իմ, ալ լրո՛նՔ.
Մաղիկ կյանքիս խնայե։

Դբախտն էիր այն վարդենվույն սիրաթերթ
Արյանդ հոգուդ մեջ զայն սնուցիր գգվանոք.
Կենացդ էր շունչ, մտերմիդ էր միակ սիրտ.
Զառիր բուրումն, հապա խայթեց քեզ փշոք։
Վերա՛վո՛ր սիրտ, ալ լո՛ւնՔ.
Մաղիկ կյանքիս վերջ մոտ է։

Իրեն համար, իմ խեղճ սիրտըս մերկացալ
Ամեն օտար սեր, և հաճույքս և իղձեր,
Տուրաքանչյուր բարախմանց հետ մահացալ
Արյուն սրտես, վաղեց արտօսը իմ աչքեր.
Բա՛վ է, սիրտ իմ, ալ լո՛ւնՔ,
Դու ալ սիրույս հետ մարե։

Զմռան մեջ իսկ, դարուն բուրեր սեր սրտես.
Բա՛րե... որքան փուլթ շիշալ լույսն իմ արփույն,
Նվ նոր ի հույս բացված հոգվույս դռնեն ներս
Հուհատությունն հիս սլացալ սաստկագույն։
Դո՛ւ ալ, սիրտ իմ՝ ալ լրո՛նՔ,
Զմեռն եկալ, ալ սառե։

Օ՛ն... կարծրացիր ու ժալուացիր, և փութով
Կուրծքս պատռե, և օդուն մեջ ալացիր.
Գտիր զանգուսն, ու դիտույն վրա դռնալով՝
Քարկոծե դայն, արյամբ կարմրած՝ ե՛տ դարձիր:
Այլ ո՛չ, սի՛րտ իմ, հանդարտե.
Նա աստուծմե տի գտնե:

Խաղաղե՛ դեռ, մինչ որ լեզուս ալ կարկի,
Նվ անկարող ալ սիրտ բառն հնչելու,
Իմ սառնահալ շրթանց շիրմին մեջ փակի,
Թարդման սրտիս հազար ու բյուր ցավերու:
Հանդարտե՛, սի՛րտ ու լո՛ւն'.
Ժակատագիրն քո՝ այդ է:

Համբերե դեռ, այլ երբ անգուսն հերարձակ՝
Գա դիմ դամբան գերեզմանաց մեջ գտնե,
Ու զղջանոք ծնրադրե հոն միայնակ՝
Թե վառ ճակտով դիմ ցրտիկ վեմ շոշափե,
Ո՛հ հայն, ո՛, սի՛րտ, բաբախե,
Շիրիմս իր վրա տապալե՛:

ԱՌՒ ՏԻՎԻՆ՝ *

Ի պատասխանի յուր համակին

Le style c'est l'homme

[Ոճը ինքը մարդն է]

Բյուֆոն

Մարդն յուր ոճն

Ճանլցմի, կըսն

Մեծն Բյուֆոն,

Մաղիկն հոտեն:

Թուրումն անուշ

Ձեր նամակին,

Տըվա՛վ արտիս

Քերկրություն հույժ:

Այլ կարդացի,

Յայնժամ ոճն

Ճանլցա ըղկինն

Առաքինի:

Որ ի թղթյակ,

Բարև սիրո

Հաճեր էր գրել

Ձեռքն սպիտակ:

Այդ մտքն բխած նամակին բառեր,

Հուրշ համեստության կրեին ըզպատկեր:

Ո՛հ, այդ նամակ չէր, շուշանի թերթ մ' էր:

Բայց չեմ դարձանար, հոգիդ է ծաղկոց՝

Եվ այդ պաշտելի դուխըդ սիրահոծ,
Մաղիկ մ' է սիրո. բլուր երնեկ անոնց,
Որոք բուրումը վայլեր են շատոնց:

Այլ նամակին
Անուշ հոտն ալ .
Ինձ կը բաղնի
Խնդրեմ՝ կրկին
Խրկն, Տիկին,
Որում մնամ
Ակնկալու,
Հոտոտելու
Համբուրելու

Սպասե,
Սիրան ի դող,
Քույդ քերթող:

Բոլոր հոգւոյս թե քեզ սիրելն էր հանցանք,
Պատժեցիր զիս, պարգևելով բոլոր փորձանք.
Ուրախության մեկ ծիծաղին փոխարեն՝
Անթիվ արցունք իմ քաղցեցիր աչքերեն:

Սերն ի նախանձ սնուցանել կարծեցիր.
Սիրաս այդ կերպով ոտքերուդ տակ պահեցիր,
Հուսամ, ահա՛, կատարյալ է ամեն բան,
Խելքս ալ տիր, հիմարեցա իրր անբան:

Սակայն, ափսո՛ս, եղեռնավոր այդ միջոց,
Որո շուներ պեսք իմ սրտիս անհուն բոց,
Անտանելի պատճառեց ինձ վիշտ ու ցավ:

Այդ ցավերեն տկարացավ իմ մարմին.
Սիրտ... ալ շունի՛մ, ա՛ռ զայդ, ոճրո՛ւյդ է բաժին.
Սակայն զգամ, հոգիս քենե հեռացավ:

ԴԱՆԿԱՏ ԵՎ ՀՈՐԴՈՐ ՍԵՐՈ

Ո՛հ է՛ր ընդ իս անդուք վարվի,
Իրմով հոգիս մինչ կու հալի.
Իմ արտասովաց լճակն աղոտ,
Ծաղու մպտին ըրած հալլի:

Վազուց սիրտս էր դատարկ ունայն,
Զի չէր լսած բարբառն ու ձայն,
Ուր երկնային աշաց կայծեր
Դրին հոն սիրո կրակարան:

Ո՛հ, առփանաց անշեշ պատրույգ
էր յուր բերան՝ թերթք վարդի զույգ.
Ինչպե՛ս, չգիտն՛մ, ճակատիս ի՞նչ սյուք
Շնչեց, վառեց անանց խարույկ:

Վառեց կրակն և անդթացավ.
Երբ գանգառեցա, նէ ժպտեցավ.
Նդիբ, ըսի, բոցիս լապտեր,
Ետքը շքանա. թի՛նչ շուտ անցավ:

Նախտունն է՝ մուշ սիրո մրրիկ-
Ատելություն, մահ, յուր որդեք.
Որ սրտամաշ շնչովն իրեն,
Կը հալածեն սերն անմեղիկ:

Այ չի միտք հետք խարույկին.
Մոխիր նշխարքն անգամ ցրվին.

Սեցած կռճղ մ'ալ եթե գտնես,
Դա անկենդան է իմ մարմինս:

Այդ հուրն, ո՛վ դո՛ւ... հողով խնամե-
նյուր գգվանոք պատասխարե.
Թե հոգւոյս մեջ բորբոքեցիր,
Գողարիկ ծոցիդ մեջ մշակե:

Այն ալ թերեւ շիրանի... բայց...
Մոխրին ի խոր թե ելլես այց,
Մտեղմության աննյութ սիրտ՝
Պիտի գտնես հոն միշտ վառ կայծ:

ԱՆԱՄԱՁԱՅՆ ԱՄՈՒՍՒՐ

Ա

Դատաստանի մը ատենին առջև
 Կեղծ մարդ մը ելավ, նիհար ու փոքրիկ.
 Սասաիկ պոռպոլով, իրր թե ըլլար խն,
 Գռնեց. «Տյարք իմ օ՛ն, ինձ ըրեք մտիկ:
 «Դժարքն վիժած
 «Կին մը ունիմ.
 «Փրկեցնք զիս,
 «Թե չէ, մեռնիմ:
 «Եթե գիտնաք ինչ գորովով
 «Սիրեցի զինք բոլոր սրտով,
 «Այլ նէ սիրույս չէր հավատար,
 «—Ամուսնացիր հետս անպատճառ—
 «Կըսեր,— սիրույդ հաշնժամ հավատմ—
 «Ամուսնացա իրր անզգամ,
 «Այժմ ալ զոչամ,
 «Ո՛ն մեզ բաժնեցե՛ք,
 «Զիս աղատեցե՛ք:
 «Ըստ օրինի,
 «Անօրինի,
 «Իմ կնոջմն
 «Վրեժս առե՛ք:
 «Զի թույն ունի նման իժի,
 «Արժանի է բոլոր պատիժի:
 «Փողոց երբ ելլենք,
 «Ըրրեք մենակ չենք.
 «Ենթաասարզներ՝
 «Թեթևութիկներ,
 «Թիթերնին ակնոց՝
 «Կոշիկնին հոռց,

«Երկայն օձիք,
 «Պատի տոսիկ,
 «Մեզ ամեն դիեն
 «Կը շրջապատեն՝
 «Ու խոսին ցածեն։
 «Տեր տալիս, որքան ճանչնոր ալ ունի,
 «Ալ օր մ'անհամբեր իրեն հարցուցի.
 «Ո՞վ էն, ըսի, այս պարուններ,
 «Կեր վերցուց ընծվին,
 «Բնապառ ծաղրագին,
 «Ըսաւ.— Մորեղորս որդիքներն են—
 «Յոհ, տասը հատի՛կ
 «Մորեղորս որդի՛ք,
 «Որ ընտանեւար
 «Եւ մտերմաբար
 «Կը գառնան շորսդին
 «Ու կը կոտորովին։
 «Տասը հատը քիչ մը շատ չէ՞.
 «Ըսի իրեն.— այնպէս չէ՞—
 «Նա գլուխը թօթվեց
 «Ու պատասխանեց,
 «—Հինգ մօր կողմանե,
 «Քինգ հատ ալ հորմե.
 «Շատ բնական է,
 «Ու կարծեմ շատ չէ՞։—
 «Այո՛. սակայն իբր ազգական,
 «Ըսի, քիչ մը անբնական
 «Կերևան ինձ այն կերպերը,
 «Զբոսեր տեսնողն բնավ այս խումբը
 «Որդիք՝ տիկնոջ մորեղորսը,
 «Ջի ալեւի քան ազգական
 «Քեզ պատիվ տան ու գորդորան։
 «Պատասխանեց.— ա՛լ լըռե,
 «Հանդիստ թող դիս պապանձե՛.
 «Դիտողութիւնք չեմ ուզեր.
 «Այս ամենուն անտարբեր
 «Եթն ըլլալ բնավ չ'ուզես,
 «Լաւ է հիմկուց դիս արձկես։

«Այո՛.

«Լավագոյն է բաժնորժինք,
«Միմյանց հետի, գո՛հ ապրինք»
«Զի նախանձոտ ես,
«Զի կասկածոտ ես,
«Հետս ով որ տեսնես՝
«Սիրահար կարծես—

Բ

«Ո՛հ սակայն օր մը, օր աղետալի,
«Երբոր սենեկին յուր դուռը բացի
«Ե՛նչ եղավ ցամբս, զարմանքս՝ երբ տեսա
«Մեկը կնոջըս մոտ, ու ծնկան վրա:

«Զիս որ տեսան՝
«Շատ շփարեցան:
«Կնկանս թե՛նք բռնեցի,
«Նախ՝ աղեկ մը ցնցեցի,
«Հետո բռի.

«Տո՛ւր ինձի շուտ պատասխան.

«Ո՛վ է այս մարդն, որ ոտքիդ տակ բռնեցի:
«—Կոչկակարս է — ըսավ — ապո՛ւշ, չե՞ս տեսնիր
«Ո՛ր գետնին վրա, հոս, ոտքերուս շափն առնելու—
«Զայնով մը խեղդուկ,
«Երբեք փախուկ,
«Պոռացի.

«Միտքդ դարձյալ զիս խաբե՛լ է.

«Անցյալ օր ալ կրտսիր թի

«Մորեղորորս որդին է,

«Միթե այս ալ նույնը չէ՞:

«—Այո՛,— ըսավ հանդարտաբար,

«Ըսածըս բնավ չեմ ուրանար.

«Մորեղորորս որդին է այս,

«Այլ արվեստով կոչկակարս—

«Ո՛հ, այս անգամ ալ կոկորդիս նեղնար,

«Սուտը՝ կլկուռ ծակին խոշոր գար,

«Ու ճիշդ խենդի պես վազեցի փողոց,

«Կատղած, շնչասպառ, աչքերըս ի բոց,

Անաշին դիմաց հանդիպող խեղճին
«Վիզը ցատկեցի, պոռալով ուժգին.

«Կրա՛կ կա, կրա՛կ,

«Տունս անդս այրեց

«Կնիկս անառակ:

«Մարդն ինձ գթալով հոս առաջնորդեց.

«Հիմա դուք, այսքա իմ,

«Արդար և ուշիմ

«Կերպով մը դիս դատեցեք,

«Ու կնշմես բաժնեցեք:

Նախագահը, եղունդները դիտելով

Սի գլխիս քանի մը հեղ շարժելով,

Բացավ բերանն և ըսավ.

«Երբուր այնքան սիրեիր,

«Որ քեզի կին ընտրեցիր.

«Պեսք է սերըդ նորոգես,

«Գուցե ընթացքն յուր ուղղես:

«Կինըն՝ գողտրիկ և անուշ,

«Վարդ մ'է, որ շատ ունի փուշ.

«Ո՞վ որ բուրմունքն յուր վայլե,

«Ետայթվածքին փշոց համբերես:

Սակայն թշվառ էրիկն իսկույն

Պատասխանեց. «Նա օձի թույն

«Ունի, տեր իմ, և հրեշ մըն է.

«Հետեւ տարիլն ինձ անհնար է:

«Եթե անփուշ վարդ ալ լինի,

«Ալ չէ ինձ բնավ ընդունելի.

«Թե հրեշաակի ունենա թե,

«Ներքուտ կը կրն գծխք ու գե:

«Անցյալ դիշեր՝ քնույս մեջ տեսա ես որոշ,

«Որ պոչ մ'ունենր, ու կրակավառ զույգ կոտորշ.

«Այո՛, տեր իմ, նա պոչ մ'ունի,

«Ենձ նսրելուկ ու գեղանի.

«Հանդերձից տակ ծածկն դադարեա:

Դատավորն նյա որ լսեց,

Հազիվ ծիծաղն յուր դուպեց:

Ըսավ իրեն. «պոչն զգեստով ծածկեցիր,

«Պատասխանն՝ եղջուրներն ո՛ւր պահեցիր

Պատասխանեց անտարբեր.

«Զանոնք ալ ինձ է հանձնեիր:

ՕՐԻՈՐԴ ԱՏԵԼ

Քեթն քայլերով, նման եղջերուին,
Վերջին մոդայով հազվեր թանկ շորեր.
Կապույտ զգեստուց վրա իրրե ծիր կաթին,
Յոթը կարգ ճերմակ դանթել է շարեր:

Հովահար կապույտ, հանդերձիցն հանգույն,
Կը շարժե դանդաղ, անդուգ թնկ նման.
Մերթ անով նշան կընէ սիրելիույն,
Իրրե թե սիրո ըլլար բառարան:

Ինչպես կապուտակ հերկնից օվկիան,
Կը փայլին պայծառ աստեղաց հուլներ,
Նույնպես այդ կապույտ հանդերձանաց վրան՝
Գլուխըն սիրաձույլ ցուար լուսահեր:

Կամ դինչ մոլորակ լուսնին դրացի,
Սրտեր մոլորե, իրեն պես վառե՝
Թե հուրն ալքերուն անոնց թափ անցնի,
Հնոցք սիրավառք, շաղված կայծերի:

Ուղեցի հետը լավ ծանոթանալ.
Ըսի. «անուննիդ կրնա՞ք ինձ շնորհել».
«Ատեղ է», ըսավ, «թե կուզեք գիտնալ.
«Այլ արվեստս է միշտ սիրել, ոչ ատել»:

«Վարդ մըն եք գրեր գլխարկնուդ ետե,
«Վարդը՝ որ սիրո է առհավատւա».

Երեսնաք էր որ, ըսի, կուրծքերնուդ վերև
Երեսնաք. ամենքը տեսնեին գոնյա:

Նէ պատասխանեց. ալդ շինծու վարդ է.
Երեսնաք զույգ մը վարդ ունիմ գեղեցիկ,
Երեսնաք ձեռք սիրտ դրված թակարդ է,
Երեսնաք ալտերա են վարդանման գողտրիկ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ավագ ուրբաթ օր մըն էր,
Նկեղեցյաց կը հնչին զանգակներ.
Ամենուն գնմքն ուրախությամբ կը ցուար.
Հագված զուգված կնիկներ:

Թեպետ օր էր սգալու,
Սուրբ տաճարաց այցելութիւնն ընելու.
Այլ անկից դուրս ուրախ զվարթ երթային
Խմելու կամ խաղալու:

Իսկ շատ տիկնայք նորասեր.
Հագված էին վերջին մոգա զգեստներ.
Քսված ճերմակ, քիչ մ' ալ կարմիր, ու ծարիր.
Զեռքերնին կար սուրբ գրքեր:

Երբոր զարդերն այս տեսա,
Նախ կարծեցի թե մոտ տեղ մը հանդես կա.
Ենալ պազնելու կերթանք երբոր ինձ ըսին,
Եիտակը՝ շա՛տ զարմացա:

Մե՛ծ մեղք է այս անբնական,
Պարահանդես թե տա հագուստն յուր ի տան,
Շուտով նոր նոր զարդեր գտնենք, սուտ ծաղկներ,
Տանթելներն ճոխ ֆիստան:

Այլ աստուծուն մարդասեր,
Որ մեզ համար տանջըվիր է ու մեռեր,

Մահվան տոնին, եթե երթանք ի տաճար,
Սև զգեստ մ' իսկ շնք շինենք:

Թե մեքերնիս մին մեռնի,
Այցելութուն եթե ընենք, սրգալի
Կերպ մը կառնունք, ու սև լաթեր՝ կը հագնինք,
Աստված շա՞րժեր ավելի:

Գուցե շատերն ուրախ են,
Ու ժպտելով երթան տեսնել խաչին վրեն
Այն աստվածը, որ մեր մեղաց տայր պատիժ,
Արդյոք ավելի դամե՞ր են:

ՈՒՂԵՐԶ

ԱՌ ՎԵՐԱԳԱՏՎԵԼԻՆ Ե. Կ. Վ. ՍԻՊԻՏԱՆ

Մինչ հաժներակս հայիմ վրսեմ հայրենյաց,
Ի շտեմարան հայոց քաջացն ի փառաց,
Նըսեմ ի ստվեր տեանեմ զոգին հայկական,
Որ թափառի ակն հարտասուս ի կական:

Այն ոգին իսկ քեզ առաջնորդ առյալ, հայր,
Որ պահպանեիր ըզտխրամած շիրմավայր,
Ի մի ձեռին առեր ըզխաշ քեզ պաշտպան,
Մյուսըն դինյալ ջահիվ լուստ գիտության:

Անդ փոշեծածկ ի գերեզմանս, ի բագին,
Յուր օղնական հայաստանյայց էր ոգին.
Խշպես Վիրգիլ առաջնորդեր զՏաճթե
Ի տուն դժոխոց, հարքայություն ի բանդե:

Նշմարելով քերթողական հերազի
Ջսավերն ի լույս Միպիլյանի անդ տեսի,
Նարեկացին, Շնորհալի մ' ինձ թըվեր,
Որ կենսադարձ զՀայաստան այցելեր:

Նիհար բազկոք, ոգին Հայոց հայուհի,
Զկափարիչս առնույր շիրմաց մեկուսի.
Անդ ընթեռնույր ըզգրությունս արձանաց
Մութ, աննշմար ի Սադունա շոշափմանց:

Այնք՝ որ գյուրյանս ի լույս կարծեն գիտության,
Անդիտեին ըզհնությունս հայկական.

Դու ի խափար ավերակաց աստացուց
Ածեր առ այն հիմաստութիւն սիրալուց:

Ի մեռելոց քն մեր կենաց բերես լույս,
Կենդանւոց, և տաս ըստփականք՝ տնտնկին հույս,
Ոհ անձնուրաց առաքինին ալետր,
Բանտարկելոց է հայր, որոց սրգափոր:

Ըզմայլի՛մ քե, պատկանելի ծերունիդ,
Որ ճշմարտին, բարոյուն ի սեր կյա հոգիդ,
Ջի մինչ շրթունք քո բարրատին զգիտութիւն,
Սիրտ քո և ձեռք տեղան անբավ գթութիւն:

Երեքին կան ձիրք սուրբ ի քեզ, սխալլան,
Ո՛հ, չեն զոքա առասպելք քերք սիրիլան,
Մին երկնաշէնորհ է սերն անհաղթ ճշմարտին,
Սիրտ բարեպաշտ, երրորդըն՝ միտք լուսածին:

Դայցեն ավուրք, որ իմաստուն քո արդյանց
Փոխան կոթող կանգնեն որդիք հայկազանց.
Այլ վարձ անմահ առաքինիւդ մարդասեր,
Օրհնութիւնքն են տնտնկին՝ որ քեզ դիմեր:

ԿԼԵՐ ՀԱՐՍԱՆՑԱՑ

ՈՐ. Մ. Ս. ԸՆԴ. Ս. ԷՃԵՆԴԻ Փ.

Վերամբարձի՛ր, քնար քերթողին, ի թրոխշ,
Առյալ զերթ թե նվագերդուն ըզզըրիշ,
Եվ կուսության ըզհաղթանակ փառավոր
Երթ ավետել զվարթնոց դասուն երկնավոր:

Սուրբ հաղթանակ, հոր ըզմայլին և մարդիկ,
Զէ նա պատիվն, զոր ստանա քաշ մարտիկ
Հաղթարազուկ, կամ բռնավորն զինադավ,
Ազավինյալ զորաց՝ ընչից յուր անբավ:

Այս հաղթության օրինավոր իրավունք
Քե՛զ ընծայեն այսօր երկնից զվարթումք.
Քե՛զ, ո՛ր Մարի, շուշանդ կուտից ի դրախտ,
Տան աստղ հուսո, զՕհան հակտիդ բարեբախտ:

Ունայնությանց հաշխարհ ծաղիկ դու համեստ,
Տոկուն, զորեզ քան ըզմայրիս հաստարեստ,
Ընդդեմ հազար ու բյուրավոր փոթորկաց
Անդրզվելի, առաքինի՝ սա եկաց:

Շուշանդ անգին, որ ի սիրո պարտիզակ
Էր լոկ անխնամ, անծանոթ և անմըղակ,
Սիրտն յուր պարտեզ նըվիրե քեզ արդ Օհան,
Ազնիվ ծաղկիդ արժանավոր պարտիզական:

Արշալույս մ՝ էր Մարի մորկան յուր գիրկ,
Անմեղուքյուն լոկ ցուանայր հոգվույն էիրք.

Իսկ այժմ ահա սիրո կենաց իբր արփի,
Ի հորիզոն ցոլա ի թևս Օհանի:

Տեսե՞ք ինչպես կուսազդեցիկ
Ու քաղցրարույր իբրև հասմիկ,
Երդման դիմի սուրբ սեղանին,
Ուր միության ըմպեն զգինին:

Ի բաժակին նրման դինվույն
Ներկին այտերն բոսորագույն,
Եվ սպիտակ ծաղկո՞ւնք պսակին
Տան զսպառկեր մաքուր սրտին:

Հրեշտակք լինին երդման վրկայք,
Մինչ ձեր կենաց միանան շղթայք,
Ներկան ահա՛, և խոստանա
Սիրո, հուսո, գողտր ապագա:

Մարին քնքույշ կոկոն վարդի,
Արդ երկնաբույր ահա փթթի,
Բաժակն առ սեր բանա անփակ,
Համբույր անկնիք, սիրո նամակ:

Այդ գիրն, եղբայր, քեզ ուղղյալ է,
Հասալին ձեռոքն այդ գրյալ է.
Երդանկության տա զավետիս
Մերության խոյ մինչև ի տիս:

Այլ թե ամեն է անցավոր,
Ոներն և գուցե անցնի մեկ օր,
Սակայն ի ծառ մըտերմության
Փարյալ մնացե՞ք զերթ՝ բաղեղան:

Ձեր ապավին ըլլա այդ ծառ,
Որո յերկինս հայի կաթար.
Ընդ հովանյալ լուր սիրասունք,
Բարյոք աճին ձեր զավակունք:

Եվ սերո՞ւնդ ձեր նրմանին ձեզ,
Շողան, շատնան աստեղաց պես,
Վեհ՝ պարծանաց պըսակ բարի
Կազմեն ճակտիդ, ազնիվ Մարի:

ԱՌ ԶՎԱՐԹՈՒՆՆ ԽՄ, ՏԽԴԲԱՆ ԵՍԱՅԱՆ

Ո՞ւր կերթաս, իմ անուշիկ,
Ուրդդ շալկած հրացանիկ,
Քովնդ կախած դաշույն սուր,
Արդյոք փնտռես թշնամի՞ք:

Դեռ պզտիկ ու մատաղ,
Պատերազմին սիրեա խաղ.
Մինչ լուսափայլ երեսեդ,
Սիրո կաթին շիթք խաղաղ:

Դու հրեշտակ մեր կենահույս,
Հորըդ փափուկ աչքին լույս.
Հաստի՛ն քովին նոր հասար,
Ի մեզ թևք նորաբույս:

Համբերե դեռ, իմա Տիգրան,
Հորըդ սիրույն ի խորան,
Յուր անցելույն մնացորդ
Մարգարիտն ես աննրման:

Մնողացըդ հարկին տակ,
Եառազայթ մ'ես դու, որդյա՛կ,
Որոց դիմաց առա ժպիտ,
Զերթ ջահ անշեջ սիրաբակ:

Դու կենդանի ես քրնար,
Հորըդ վզին կախած վար,
Նվ ի համբույր՝ երգ ունին
Խոնավ շրթունքդ մեղրատար:

Բո՛ղ ուրեմն, իմ անուշիկ,
Հրացան, սուտեր, և թմբիկ,
Հաս ամենքս ալ քեզ պաշտենք,
Դու դեռ ըսնիս թշնամիք:

Ա՛ռ դու կապարճ, մեկ ալ նետ,
Լար մը շինե մաղերեղ,
Եվ այնպիսով քու սիրույդ
Տուր վերք անուշ քու ձեռքեդ:

Քու ազնիվ հորդ՝ միշտ անձայն
Հնազանդ եղիր, սիրե դայն.
Անուշ նիրհե, կեր, խմե,
Ու մի՛ խորհիր զվաղորդայն:

Նման մեղվաց խմբյակին,
Որ կը բզզան մերձ ծաղկին,
Մենք ալ երբեմն այտերեդ
Թող քաղենք մեղր համրույրին:

Սուր ի պայտյան, օ՛ն, թռչնիկ,
Խաղաղության զինվարիկ,
Քեզ համբուրել ուղողին
Չեն ընեն սրով սպառնալիք:

Որ պիտի դա՛, որ մեծնաս,
Կտրճանաս, զորանաս.
Ո՛հ, այն տառն սուրդ քաշե
Թշնամվույն դեմ ազգավնաս:

Հայնժամ անշուշտ քեզ նման,
Եվ քեզի հետ տի մեծնան
Փոքրիկ սուտերդ և դաշույն,
Խաղիդ թիթեղ հրացան:

Այլ այն պահուն, քաջ մարտիկ,
Դրկե ծերուկ քո հայրիկ,
Առ օրհնութունն յուր վահան,
Երթ պաշտպանել զհայրենիք:

Պիտի առնես դու պտակ
Եվ պատվանշան մրցանակ,
Եթե քեզմով քու բանակ
Կանգնե փառաց հաղթանակ:

Իսկ արդ՝ պահե քեզ սաստված
Անբաժան հորդ ի զրկաց,
Դուցն օր մը... ո՞ր գիտե...
Պարծանք լիլառ հայրենյաց:

ԿԼԵՐ

ԱՌ ՀՈՐԻՂՐՈՐ ԴՈՒՍՏՐՆ ԽՄ ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Ահա ձմռան շունչ պաղպաղում
Փշեց, վանեց երկրես զԱշուն.
Տերևաթափ եղած ծառեր,
Անապաստան մընաց թռչուն:

Ամենայն ինչ է ակաղղայաց,
Դաշտ և լեռինք բոլոր դեղնած,
Մեռյալ բնություն հառաչանքներ
Տխուր հեշեն մեր ականջաց:

Ո՛ւր այժմ արդյոք իմ երաժիշտ
Զըվեց սոխակա, հողմույս նաժիշտ,
Որո թրթռում թելից վրա
Ցուր նըվազներն հորինեն միշտ:

Սիրաթուղցիկ զույգ մը փետուր
Հանձնեց հողմին թևաց ի զուր.
Այն ալ վերջին յուր հիշատակ
Ո՛ւր մնաց արդյոք, ո՞ր քարին տակ:

Այլ սփռփանք մ՞ուռնիմ թռչնիկ,
Որ ողջ տարի երգե մեջիկ,
Նա ընտանյաց մեր պարտեզին
Անմահ սոխակն է նազենիկ:

Դաշնակն անոր կրնե անհետ
Ցավն, ու սրտիս է հուսավետ.
Հոն է սոխակ, հոն է դարուն,
Ուր որ երգե քույր իմ Աննեթ:

ՈՒՆԵՐՁ

ԱՅՆ ԵՌՄԱՏԻՆ ՕՐԻՈՐԴ ԹԱԿՈՒՆԻ ԼՈՒԹՅԱՆՍԱՆ

Համեստ կուտիկ, մարգարիտ մոր սրտեկին,
Երկնահաստուլց մըխիթարանք ծընողին,
Քան զդուցազն հրգոց հրգույն գեղունի
Գեղեցիկ ես, ո՛վ գեղեցկաց թագուհի:

Հոգվույդ գեղույն կրբն զտիպար և մարմին,
Յուր վեհ ձեռքերն դիմացդ վրա կը փայլին,
Հորո ի փայլ նախանձին իսկ զըմարթունք,
Մինչ աստ վալլենք առաքինի քո բուրմունք:

Երբ ձայնդ լսենք, ո՛հ, երկնային է տավիդ,
Կամ հրդ զվարթնոց համամահության ի շավիդ,
Այլ երբ ժպտիս այդ անթառամ այտերով,
Ատոնք շիկնին համեստության բոցերով:

Օր պիտի գա, որ երկնահուր այդ աշեր
Վառեն ո՛չ մեկ, դուցն մատաղ շատ սրտեր.
Դու հայնցանն ընտրն գոնն այնպիսին,
Որ նախ քան զսիրտ՝ նանչնա, հարգն քու հոգին:

Երջանկութիւն տի պարզեւս սրտակցիդ,
Ընելով յուր հոգին հայլի քու սրտիդ,
Հայնժամ զավակ, նեցուկ մը ևս կը լինի,
Գրկացը մեշ քո խանդակաթ ծընողի:

ԱՌ ԱՊՏՈՒԼԱԼՅԱՆ ԵՂՐՈՐՍ

Արեւոյնի լուսանրկարս

ՁԵՃ

Աստված ահաւոր արեւն երբ վառեց,
Եթերաց անհուն ի ծով գլորեց,
Որուն բարերար ոսկյա ճաճանչներ
Բարձրքեց զերկիր, ներկեց և դաշտեր:
Իսկ դուք, Կարայրք իմ, հանճարեղ մըտոք
Վերացյալ մինչև հաշխարհն հրաբորոք,
Առիք յուր լույսը ձեր մտաց գործիք:

Ապրի՛ք, ապրի՛ք,

Ո՛վ լուսորդիք:

Դյուցաբանութիւնն թե ստույգ ըլլար,
Թե Ապողոնն է արեւ հրաժառ,
Որ յուր եռակի կառքովն ընթանա
Նրկրին կապտերանդ կամարին վըրս:
Դուք ալ արժան եք այդ վըսեմ փառաց,
Սալառնիլ ի նույն ի մեշ աստեղաց:
Զի ձեր հաղթական կամարն է երկինք:

Ապրի՛ք, ապրի՛ք,

Ո՛վ լուսորդիք:

Ինչ որ դուք գործեք իրմով աստանոր,
Զէ կարող արեւ հրովն յուր բոլոր:
Նա ձեր հանճարուն երկնարծարծ բով մէ.
Ինչ որ հոն ձուլեք, հրաշալիք մեծ է.
Այլ ձեզ պիտանի չէ յուր բոցն ու հուր—

Շատանաք միայն լուսովն երկնատուր,
Նկարել ըզձիրս բնության ու մարդիկ.

Ապրի՛ք, ապրի՛ք,

Ո՛վ լուսորդիք:

Ձեր ճարտարության թե արինն է շահ,
Իրմով կը հիշենք զեղբարս Ապստուլահ,
Արքանյակք ուշիմ, յուր մոլորակներ,
Վառ փայլիք դուք աստ ի լուսապատկեր,
Ոյինչ իսկ, լուսով, գանկք ի խավար,
Իրք մեզ անծանոթ ցուց տաք լուսավառ
Ի վերա թեոց ձեր մըտաց ճարայիկ,

Ապրի՛ք, ապրի՛ք,

Ո՛վ լուսորդիք:

Ինչպես ասեն մը պարսիկք դիմեին
Պաշտել դարեդակն ի մեջ մեհենին,
Այսօր մենք փութանք ի ձեր գործատուն,
Ի ձեզ հիանալ զարդյունքն յուր անուն.
Ձի արվեստներին տաք մըտացը լույս,
Տաղանդից նեցուկ, տկարին խրախույս
Ձի լույսն ի պատկեր անմահացուցիք.

Անմահ եղի՛ք,

Ո՛վ լուսորդիք:

Ի ՄԱՀ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄՈՐԵՂԲՈՐՈՐԴՎՈՒՅՍ
ՏԻՐԱՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Նորեկ կենացն յուր արշալույս հուսովառ,
Ընդ հորիզոն սիրո հազիվ էր նշմար.
Նախաժպիտ արեգական ճառագայթ
Բերանշույլ անդրադառնալ շուրթն և հ'այտ:

Մրմնչեւ նա որպէս ծիծառն ալգաւիւտ,
Բոթովելով զանուն յուր հոր կենսապետ:
Համբույրք խոնավ սիրուն մորկան զեղանի,
Անմեղ ճակատին էին գոհարք կենդանի:

Քնքո՛ւյշ ծաղիկ, հոյր ի բաժակ մեղրալիւր
Երանություն քաղեր մայրն զերթ մեղու ժիւ.
Հուսո սիրո կազմեր ի սիրտ յուր փեթակ,
Որո գարան եղև զավկին ցուրտ վիմակ:

Այլ վա՛ս է հույժ մանգաղ մահուն դավաճան,
Ո՛հ, ծաղաւի է նա ամուրց իսկ մանկան,
Հեշտ է նըմա հնձել ծաղիկ թերաբույս,
Քան ըզխոսպան կյանք ծերունվոյն մահահուլստ

Բերևա աստված անմահության յուր թաղին
Զարդ մը ընտրեց զոհարն անմեղ թանկագին:
Անթիվ աստեղց դուցե զույգ մ' ալ կըպակսեր,
Գողարիկ մանկան անմեղանշույլ սլավ ալքեր:

Մխիթարվիլ այլ դու պարտիս, հեզ ծընող,
Տերկինս է նա, թողյալ նշխարս յուր ի հող.

Տեսնե յերկնից մայրն և յարտասր յուր փայլի,
Բն յուր խոնավ հայեցվածքն աստեղց սևեռի:

Ո՛հ, անդ ահին թեք անփետուր հրեշտակին,
Կորսվանան առնում զերանգս արեին.
Հայնժամ ի թռիչ այց ելլե մոր սրտեկին,
Որ յուր թևոց սփռփիչ է հեզ քամին:

Ի ՄԱՆ ԱՐՔՈՒՆԻ ԿԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ
ՀԱԿՈՐ ՊԵՏԻ ՊԱՆՅԱՆ

Չէ սա քերթված քնարերգակ,
Ոչ ալ սիրո հրդ խանդավառ.
Այլ իմ ցավոց է արձագանք,
Արցունքներու է իմ սև շար:

Յով մ' որ իմ սիրտ պատառտեց,
Ուսկից բխին դառն արցունքներ,
Երբ սիրելվոյն մեր կյանքն հնձեց
Մահու մանգաղն արտասվահեր:

Մեծ արվեստերն ճարտարապետ,
Հսին, մեռավ Հակոբ Պալյան,
Իմ հանճար մը եղավ անհետ
Աշխարհես այս մոռացության:

Բայց չէ, ո՛հ, չէ, նա չի մեռավ,
Մանավանդ թե հիմակ կապրի
Յուր հանճարին հիշատակով.
Անմահ, այլ ոչ մոռանալի:

Նա ոգի մ' էր, տաղանդ անհուն,
Չունեիր նրման սիրտն ալ բարի,
Նա Միքելանժոն էր մեր դարուն,
Թող հայությունն իրմով պարծի:

Մեծատուն մ' էր սրտով աղքատ,
Հեղահոգի, բարձրաստիճան.

Կարոտելույն կուտար առատ,
Մինչև իրեն հետին լուման:

Ո՛հ, այդպիսույն համար չիք մահ,
Երախտագետ մինչ կան սրտեր.
Ատոնց մեջ միշտ ունի զյուր գահ,
Ով անմոռաց հուշիկն ի սեր:

Գեղեցիկին միշտ սիրահար՝
Գեղեցկագույնն գընաց տեսնել.
Երկնից սիրույն միշտ կը տենչար,
Հասավ ըղձին յուր անարդել:

Ձի ապերախտ այս աշխարհին
Նստ էր Պալլան յուր հանճարով.
Հոս պակասեր գափնիք պտակին,
Երկինք պճնեց դայն աստղերով:

Կը հուսայի կարոտակեզ
Քե օր մ' անշուշտ վերադառնա.
Ավա՛ղ, արյուն վազեց սրտես,
Երբոր ըսին, ո՛հ մեռավ նա:

Ինչ որ բարի է աստանոր՝
Քշվառ ապրի, զաղ մեռանի.
Մարդիկ չգիտեն հարգն անոր,
Ձի յուր հաստչին է սիրելի:

ԱՊՐԻՄ ԵՍ...

Առաջին անգամ երբ զարև տեսա,
Մանկական ձեռամբ մորըս փարեցա,
Գզվանք առաջին՝ բազկաց նորընծա,
Այլ ձայն մը մեղմիկ մեղեր իմ սրտես,
Ինչո՞ւ ծընա ես:

Համբույր խանդակաթ ծիրանի շրթանց,
Անուշիկ մորկանս շոշափումն ստյանց,
Փակեցին բերնիս դռներ նորարաց,
Իսկ ձայն մը լրուիկ կրկներ իմ սրտես,
Ինչո՞ւ ծընա ես:

Դեռ նորափրթիթ տիոցըս զարնան
Մաղկանց իմ մորս զիրկն էր ծաղկաման.
Վա՛հ. մանգաղն անգութ, խորտակեց մահվան,
Հայնժամ խուլ ձայն մը զոռաց իմ սրտես.
Ինչո՞ւ ծընա ես:

Ընդհինս նայեցա, և հաստեղց ի պար,
Տեսա գյուր հոգին հաստված վերանար,
Ինք լողայր ի լույս, իսկ ես ի խավար,
Նրբ ձայն մը գաղտնի գոչեց իմ սրտես.
Ինչո՞ւ տպրիմ ես:

Կարծեցի ունայն աշխարհիս ցավոց
Սիրտս էր անծանոթ, ի մայր սիրահոծ.
Ո՛հ, կորուստն է նոր, էր նըմա բյո՛ւր խոց.
Մինչ ձայնն յուր գաղտնի գոչեր աղեկեզ.
Ինչո՞ւ կապրիմ ես:

Ճակատիս գիրն անգութ, ո՛հ, ինձ լը ներեց.
Որ զեթ մորս հայտնեմ հոգիս սիրահեղձ,
Հուսավառ հոգիս սև սուգ պաշարեց,
Ու ձայն մը գաղտնի կրկներ իմ սրտես,
Ինչո՞ւ ապրիմ ես:

Գլուխըս ցավալի, կը խնդրեր նեցուկ,
Ինչպես ատեն մը, մորկանս գիրկ փափուկ:
Ո՛հ, դի աշխարհիս բախտն է հեղճեղով.
Սիրտս ալ իրավամբ գոչեր աղեկեղ.
Ինչո՞ւ ապրիմ ես:

Յուր շիրիմն եղավ ինձ ուխտատեղի,
Կերթալի թափել հոն արցունքս աղի,
Պահ մը զգացի, թե սիրտս խաղաղի.
Սակայն նա կրկներ, ձայնով մ'աղեկեղ,
Ինչո՞ւ ապրիմ ես:

Խեղճ թափառական, ճակատըս քարին,
Անտարբեր այս սուտ, անցուկ աշխարհին,
Հավասար թրվեր ինձ շարն ու բարին,
Ու ցաված հոգիս գոչեր սրտիս պես.
Ինչո՞ւ ապրիմ ես:

Բայց օր մ'ալ հանկարծ, խեղճ հոգիս ցնծաց,
Հավերժահարս մ'էր, ոգի, թե աստված,
Հուր, սեր տեղալով հոգվույս յուր աչաց,
Սիրտս ըստիպեց գոչել սիրակեղ,
Ապրի՛մ, սիրե՛մ ես...

Իդե՞ք իմ և խորհուրդք, եղավ լոկ էնի,
Իմ ցամաք գարնան միակ վարդենի,
Որ կընիք սիրո, ծոցն երկինք ունի,
Սիրաչերմ կուրծքես ձայն մը սիրակեղ
Գոչեց. սիրե՛մ ես...

Յուր հրամանաց՝ կամքըս գերին էր.
Սուրբ զմայլմամբ մը դիս կը լեցըներ.

Կարծեսցի պա՛հ մը, թե մորս հոգին էր,
Որ ինձ ալցելեր, գոչեր սիրակեզ։

Պաշտե՛մ, սիրե՛մ քեզ...

Անցյալը մոռցա, ներկայս զգալով,
Առաջինն ըսփռվեր յուր յանհուն գորով,
Էի էր ապագաս ինձ համար հուսով,
Հոր ակնկալու սիրտն իմ սիրակեզ՝
Գոչեր, սիրե՛մ ես։

Բայց այս աշխարհիս օրինաց գերի,
Երջանկություն մը փութով ավերի,
Սիրտս թերաբույս, ի սեր անթերի,
Չի վալլած գլուր սեր, եղավ սիրակեզ,
Գոչեց, մեռնիմ ես...

Անհնար եղավ հիգիս մերձենալ,
Մնաց զվարթնույս փարիլ, միանալ,
Ջի ճակատագրիս պետք էր զո՛հ մը տալ,
Այն դոհն իմ սիրան էր, որ յայն սիրակեզ
Գոչեր. մեռնիմ ես—

Հ'այս պահուն, կարծես տիեզերք աչքիս
Մըթնցավ առչե, մութ պատեց շորս դիս։
Վերջ տալ ուղեցի դառնադետ կյանքիս,
Ի սիրտս թշվառ գոչեր սիրակեզ.
Մա՛հ կուղեմ, մա՛հ ես...

Զմահ խնդրի, բայց նա հեռանար,
Երբեմն երկնային ձայն մը մրխիթար,
Գոչեր, պատանի, ալ բավ է, մի լար.
Այլ սիրտս հուսահատ մնչեր սիրակեզ.
Պե՛տք է մեռնիմ ես...

Ջի կյանքս թըվեր բեռ մը ահագին,
Սիրեի թեպետ զայն իրր իմ հոգին,
Հուսահատարար, ո՛հ վկա՛ երկին,
Որուն կը գոչեր սիրտն իմ սիրակեզ,
Մա՛հ կուղեմ, մա՛հ ես...

Խղճիս ձայն կրսեր. դու պարտքորդ ճանչնաս,
Քու մահըդ գուցե տա շատին վրնաս.
Անձնասեր թե չես, այլոց համար կաս,
Հոգիդ պահանջն սրտեդ սիրակեզ,
Ապրիլ պահար է քեզ:

Բնական մըտք, հոգվույս իմ ձայնին
Ողա ուշադիր, և դուրի անգին
Իմ կլանքն՝ անպիտան գուցե դեռ շատին,
Հոգվով ու մըտք ըսի սիրակեզ
Սրտիս, կապրի՛մ ես...

Ուժ եթե ունիմ, արկարին օգնեմ,
Իսկ թե իմաստուն՝ մտքեր զարգացնեմ,
Հարուստ թե ըլլամ, պարտք մ'է ինձ վրսեմ՝
Օգնել աղքատին: Հայնժամ սիրակեզ
Կյանքս սիրե՛մ ես:

Անկարող ըլլամ թե այս ամենուն,
Աստանոր մարդու պարտքերն են անհուն
Թե բան մ'ալ չունի, գեթ լույսն աշքերուն
Շատ անգամ փոխ առ խեղճ կույրին անտես.
Պետք է ապրի՛մ ես

Թե յուր անստույգ քայլիցն առաջնորդ
Ըլլամ ես՝ նամբուն մութ ու խորդուրորդ,
Գոնե աղոթքին կընե զիս հաղորդ,
Աղսթք՝ որ յերկինս վառի աստղի պես.
Ուրեմն... ապրի՛մ ես:

ԱՐՏՈՍՐ Ի ՍԵՐ

Լաց, սիրելիս, արտասուք վկայք են սիրո,
 Զորացնե այն հիս սեր, հավաք, ծիլն հաւո.
 Ի գողտր այն ցոլ տեսնեմ սրտին քո սլատկեր,
 Եվ խավարին աչքիս աշխարհն ու փառքեր:

Ձի ճշմարիտ արտասուքներ, որ շերմ սրտն կըբխին,
 Տիեզերք ունայն մեղմե ծածկին, և լոկ հոգվույն աչք հային,
 Սիրտը զգա սեր, հոգյակն խոսի հաղբեր աչաց բարբառով,
 Տուրաքանչյուր շիթք սիրաշերմ այրենն այտեր մեր սիրով,
 Անցնին սլանան, բայց լուռ ու մունչ իրարու սեր կը մնին,
 Եվ անցնելով, իբր հետք թողուն դույն և նշանք վառդեղին:

Լաց, սիրելիս, քեզ ևս սիրեմ հարտասուա.
 Արտոսր ի սեր է ճարտասան քան զբարբառ,
 Բըվի թե սերն բազմի ի դեմսդ, ի գահույս,
 Մինչ արտասուք թանանն այտերդ վարդավառ,
 Միժաղն ըզսեր վանն արագ, օ՛ն, լըռիկ՝
 Եկ սուր սիրո հեղունք զարտոսր, ո՛ր կուսիկ:

ԲՈՒՑՍՆ ՄԱՀԱՀՈՏ

Կին մը տեսի հս սեահեր,
Աղամանդյա աշկունք ուներ.
Մարգարտաքիրան յուր ալանրով
Համբույր կը դրապեր:

Բոսոր շրթունքն համբույրներն,
Մորթը մաշած, սիրո բով մ' է,
Կարծեցի հս հիանալով.
Սիրախոս ի բնն:

«Ո՛հ, ո՛վ, ըսի, քեզ տեսնելով
Չայրիք ի սեր հոգվով մարմնով.
Դառն ի սիրուն ծարափն ու սով,
Աղետից հալա ծով:

Հետ ճաննալս քեզ, իմ զվարթուն,
Թե իմս չըլլաս, հս հմ մահուն
Անգութ ավար, դիցունգույզ զոհ.
Այլ հոգվով արթուն:

Պիտի հսկե հոգիս քու վրադ,
Պահել արթուն խղճին քո խայթ,
Որ ընդ ալում հերշանկութուն
Ըլլաս տահանդարտ:

Թե մոռանաս զիմ հիշատակ,
Եվ ծաղկասքող փոսիս վիմակ
Թե չի ցողեն քու արտասուքներ,
Ուր կամ սիրափակ:

Իմ ցեցաբնակ գանգին մեջ թող
Գերեզմանիս լեցվի սև հող.
Իցի՛վ ծաղիկ մ'իբ մեջ բուսնի
Հայգուն ի շինչ ցող:

Հայնժամ քաղե մահուն ծաղիկ,
Վըկա սիրույս, զանկարուսիկ,
Կուրժքիդ վրա զայն դատապարտե,
Թառամիլ լըռիկ:

Երբոր ծոցիդ մեջ նա թռամի,
Ո՛հ, հիշե զիս, անողորմ կին,
— Սիրույս ի ծոց — ցահ, — ալսակն
Մեռալ պատանին:—

ԶԳԱՅՈՒՆ ՍԻՐՏ

Դեռ նորաստի էի մանուկ,
 Կորուսի մայրս, շահեցա սուգ-
 Ջըվարթ անմեղ ճակատիս վրա,
 Անբախտութիւնս դըրված դռաւ
 Եկան անցան, ո՛հ, փութաքայլ,
 Ավուրք կենաց իմ հուսափայլ,
 Դարձա ինչպես ցամքած տերեւ,
 Հալածական հողմաց ի թև .
 Արփովուն երկնից էր սիրահար,
 Մեռավ ծաղիկն խորշակահար,
 Հաս մը բուրնց, օր մ'ապրեցավ,
 Կյանք, սեր խնդրեր, մահ ստացավ,
 Եվ թիթեռնկացուն երամակ
 էին զակատ հիւրում բաժակ,
 Սուտ մտերմաց պէս հեռացան,
 Երբոր տնհաց դտին սեղան:
 Այս է կյանքն ալ արտին զգայուն,
 Հաշիսարհ ցավով այս անկայուն,
 Երբեմն առ այն՝ սերն ու ժըպիտ
 Կեղծ են զիմակ մահուն վտիտ:

ՓԱՓԱՔ ԵՎ ՆԱԽԱՆՁ

Ոհ, է՛ր զքեզ այսքան սիրեմ, ո՛վ հրեշտակ,
Ինչո՞ւ արև կենացս եղար, դու լուսնակ,
Երբոր ուրիշ մ'արդեն ըզքեզ
Խամբեր, փետտեր ծաղկի մը պես:

Դու երկնային գավառաց մեշ վարդենի,
Ինչո՞ւ բնակիս ափանցը վրա գեհենի.
Արդյոք երբեք սիրաս ու հոգիս
Չեղեն պարտեզ քեզ սիրահյուս:

Ինչպե՞ս կրցամ քեզ, գիցուհիդ սիրածին,
Ըլլալ արժան անհոգ, անսեր պատանին.
Ըսի՛ն անոր պիղծ շրթունքներ,
Ինչ որ սիրաս քեզ տրամամբ խոսեր:

Սիրաթառամ վաս համբույրներն քու դահճիդ,
Զորս դրոշմեր շրթանցդ վրա սիրափթիթ,
Էի՛ն միթե այնքան խոսում,
Որքան արտասուք իմ աչքերուն:

Մինչդեռ բազկոքս պարանոցեդ վար կախված
Հույս խնդրեցի շրթունքներեդ սիրարաց,
Անօրենին գազան տրփանք,
Ըսե՛, ունե՞ր այդքան դժվանք:

Ո՛հ, վարդն անգամ, որ նշանակ է սիրո,
Բանա գյուղ ծոց արեգակին դարնայնո.

Եվ ցողատարի շողք արևուն
Համբուլը տեղան յուր թերթերուն:

Երեսկ կըլլար, վարդ մ'ըլլայի սիրաբուլը,
Ժպտեի մունջ մազերուդ մեջ սև սամուլը,
Ճակատդ ի վայր քեզ գիտեի,
Երեսդ ի վայր արտասվեի:

Այլ երբ հանկարծ հառաչանքիս սրտակեզ
Անուշ քամին բանալ ծոցիկդ ինձի պես,
Ճակտեդ իջլալ գահավեժ,
Հոն թողվեի ես հավերժ:

ԱՌ ԿԻՆ ՄԻ

Գեղեցիկ ես դերթ տատրակ,
Ձայնըդ սիրո է նըվագ,
Շրթանցըդ վրա անթառամ,
Սերն է դըրած գլուր պառպամ:

Ծոց քո սրտին սիրավառ՝
Ավազան է զովարար,
Կամ ծով անհուն գգվանաց,
Օրրան մահու, կամ կենաց:

Հոն կը բնակին սեր, տրփանք,
Զորոց հիգիս լիք փրկանք.
Անդ են պտուղքն Ադամա,
Զորս ուտելու արգելք կա:

Բայց այդ արգելքն է իսկ զին
Անուշ գանձիցդ քո, ո՞վ կին,
Զոր ինքն աստված որոշեց,
Երբ համնելով ստեղծեց:

Որքան կոշիմ ես Ազամ,
Ճաշակելու զայն վախնամ,
Զի մի գուցե զիս դրախտեն
Երկրորդ անգամ մ' ալ վճռտեն:

Դու արարչին հրաշագործ
Ձեռագործն ես սրտափորձ.

Չուզեմ բնավին քեզ մտա գալ,
Այլ ի հեռուստ հիանալ:

Պարտիմ ըլլալ միշտ զգույշ
Ի հեշտութիանց քո մեղույշ,
Զի հայն ի ծոց, սիրահոծ,
Դընե մերթ օձն լուր խայթոց:

Թե լոկ ծաղիկ մ' ալ լինիս,
Ի շունչ սիրո տառանիս.
Մտերմութիան բուրեւ բույր,
Մատնութիւնն մերթ քո քույր:

Միայն տեսքովդ կըլլամ դոհ,
Ինչ պետք ծաղկիդ ըլլալ զոհ.
Ողբույս հիացմանն իմ անբավ
Նվիրեմ այս երգս, իբր զգրավ:

Բարեկամիս, քերթողին հետ, քովի քով
 Մովսէս եղերքն նստած խողաղ խոստինք,
 Որո մեշ յուր շեկ մանիշակ ամպերով
 Ամբողջապէս անդրադառնար ջինշ երկինք:

Ավազանին վրա, հղկյալ, փայլուն և հրատապ,
 Գային հեռվին ալիք փշրիլ վետ ի վետ.
 Ճամբորդութեանն իրենց դնին փուլթ շտապ,
 Ծղերաց վրա փրփուրե թլուր վերջակետ:

Իրիկունն այն տարօրինակ սիրարկու,
 Գեղեցկութիւն մ'ունեին ջուրք ծփածայն,
 Հիանալով նկատեինք մենք լլուխկ:

Այլ քիչ տևեց մեր զարմանքը, երբ ծովու
 Բաղնիքն մը հանկարծ ելավ ժպտերես,
 Գողարիկ կին մը, մարմնով խոնավ գեղեցիկ:

ՄԱՂՁՈՏՈՒԹՅՈՒՆ

Երկինքն էր փակ սև ամպերով,
Գնում էին քափառ հողով,
Եվ մեղամաղձ կը տային շունչ
Ծառոց ճյուղից տխրաշունչ:

Թեպետ երկրորդ օր մայիսի,
Պաղ էր փշում հովն հյուսիսի,
Բնության կարծես սրտիս նըման
Ըզզեցել էր սրգո նըշան:

Աներևույթ թվեր մի ձեռք
Բաց էր անում սրտիս մթերք,
Յուր մեջ տրտում տեսի գրած
Սիրո ցավոց շարք անմոռաց:

Բաղդատելով ես նըրան հետ
Արդի վիճակն իմ անհեթեթ,
Ո՛հ, փշոտեր իմ խեղճ հոգին,
Հիշատակովդ, անողորմ կին:

Տխրամբմունք տերևոց մեջեն,
Կարծեցի թե ձեն մ' ոչնչեն,
Դուչեր. ավա՛ղ, դու խեղճ սրտիկ,
Սիրույդ փոխան, սաացար շարիք:

Երբ զով քամին գլուխդ էր գգվում,
Երգ ունեին թռչունք խնդում.

Այլ քո հոգին լի կարոտով՝
Ալեկոծե՛ր սիրո ի ծով:

Որքան անուշ ինձ է՛ն պահուն
Հիշատակը եկավ մահուն,
Թրվում էր ինձ թե իմ հոգին
Թողած զերկիր, ալանար յերկին:

Հավագույն է մեկ ծառի տակ,
Մարդերու մեջ ծաղկապրսակ,
Աչքերս հառով երկինք ուղղած,
Թողում զաշխարհ, դնալ առ աստված:

Քան թե ապրիլ անրանի պես,
Մեռյալ սրտով և աղեկեզ,
Անգութ մի կնոջ ոտքերի տակ
Գերեզմանին առնել ճաշակ:

ԳԱՆԳԱՏ

Ի՞նչ արի քեզ, ա՛յ անգութ,
 Որ լույս օրերս սլա՛վ ի մութ
 Տանջանքներու մատնեցիր,
 Ի ցավոց անդունդ:

Մի՞թե հանցա՞նք էր իմ սեր,
 Որ կյանք մ՞ ամբողջ քեզ զսփեր,
 Իմ սիրախոս հառաչանք
 Քեզ բավական չէ՞ր:

Ամենքն զքեզ հարգեին,
 Փափուկ ձիրքերդ պաշտեին,
 Պարծանքն էիր բնության
 Ու սեփդ անդին:

Մեկ նալվածքդ էր բավական
 Մինչ արքայից գավազան:
 Գանձերն ի քեզ զըրազել,
 Թագուն՛վույդ արժան:

Ոհ, ի՞նչ պակաս էր քեզի,
 Սրախ թնչե՛րն, որ խըղի,
 Անգութ սիրույդ ի ճիրան
 Կյանքս, որ նվաղի:

Գնդավդ էիր թագունհի,
 Կը տիրեիր աշխարհի,

Արդոք շա՞տ տեղ գրավեցի
Ի հողդ արքունի:

Հույժ փոքր էի եւ մարմնով,
Կըմախք դարձած հյուծվելով:
Հոգիս միայն էր հըսկա
Անդայտյալ սիրով:

Գեղեցկութունդ էր քու գանձ,
Այլ իմա՝ հոգի սիրապանծ,
Բայց առջինն էր մահացու,
Իսկ երկրորդն անանց:

Սակայն շատ հեղ մահացուն
Պատգամավորն է մահուն,
Անմահին՝ որ կը սիրե
Ի վիշտըս անհուն:

Բարոյապնա գեթ մեռնի,
Այն սիրահար պատանի,
Ցուր շիրիմին վրա սիրելին
Մահարձան կանգնի:

Ինձ կանգնեցիր գերեզման,
Աստվածուհիդ պատվանդան,
Շուրջը փուշեր բուսուցիր,
Հուսահատության:

ՆԱՐԶՈՒ ԿԱՏՈՒՆ

Նարքո, Նարքո, քծնող Նարքո,
Գեղեցիկ նա, իրբն մայր քո,
Ու թշնամին մկանց տան քո,
Նվ թաթիկներդ գիրկըս հանգո:

Ամիսն է մարտ, ուր կատուներ
Տանյաց վրրա հրճվին ի սեր.
Դու ալ գաիր էդ մը բնկեր,
Ծնկնե նման քեզ մկնկեր:

Գողտրիկ Նարքոն, նման կնաչ,
է մերթ լալկան ու վայրագոչ.
Այլ երբ շուխա, տնկն յուր պոչ.
Ցուր երախտյաց մազոտ բողբոջ:

Երբեմն ալ Նարքոն անգութ,
Խորշերու մեջ պահվի ի մութ,
Ցավոց չիլ մը արձըկն սուտ,
Խորաթկն առնու ու փախչի շուտ:

ՔՈՌՄԱՍ ԾԱՂԻԿ

ԱՌ ՕՐ. Ե. Յ.

Մաղիկդ անմեղ փափկացողուն,
Զարդ պարտեզից կամ լեռներուն,
Ո՛հ, է՛ր այսպէս վաղ կենազրա՛յ
Բախտը անդուք զքեզ ըրա՛յ:

Միթե չէի՞ր դու սիրելիս
Քույդ նմանյաց և երկնքին.
Ո՛ր անողորմ արդյոք զքեզ
Դեռ նորափթիթ՝ կորզեց այսպիսի:

Այլ թառամած և մահամերձ,
Անուշ բուրբա դեռ նման քո քերց,
Այս նսրանշան ինձ կը թըմի,
Պատճառն ըսե գեթ, սիրելի:

Է՛լույսի մը ձեռք ծաղիկն ըսա՛վ,
Եթաղեց ճակտին՝ դիս զարդ ըրա՛վ,
Եթուցն անկից ժառանգած եմ
Է՛լտն անուշիկ, որ դեռ բուրբեմ:

ԻՂՁԲ

Նոր անանձն նախկին շորերըն արփուլն,
Իրեն ծիրանի պատանք դիշերուլն,
Ում հուղարկավոր են երգեր թռչնոց,
Կրսեմ, սե՛րդ իմ, ե՛լ:

Նա, ինչպես բուսիկն ի ցող սիրառիթ,
Տաքով քրտանց մեջ զարթնու սիրափթիթ,
Լերեւն ընդ լուս մրցին աշվին բոց.
Փութամ համբուրել:

Անհագ և պակշուտ, շարժամբ տկամա,
Շապիկն բացվի ու ծոցն երևա,
Կուզեմ նորածին մանկան պես հայն ծոց
Կյանք ու սիր քաղել:

Կ'սե ահա բժամ է... շնչենք օդ ազատ,
Մազկանց գրկին մեջ, միմյանց միշտ անզատ,
Քաղենք կույս վարդ մը, որ բնպետ դեռ գոց,
Կուզե սիր բուրել:

«Այլ ո՛չ, դ՛իրիկվան բացվին յուր թերթեր,
Նա ընդ այն բանամ քեզի իմ թևեր.
Գիշերվան եմ վարդ, այլ ցնդեցին բոց,
Կոկոն փշարգել»:

Ըօի. Յանթեմաց քեզ հյուանձ պլսակ,
Կուզեմ ճակատիդ պննել բոլորակ.
Հետո խաղողին հյութըն ոսկեզած
Գրկացդ մեջ ըմպել:

Հայնժամ արեւցյալ, ի սեր ի գինի,
Համբուրով մը գրլուխս ծնդացլո՞ւ վրա գամվի,
Ի խաղ քանարյաց, ի ձայն քո երգոց
Կուգեմ հոն ննջել:

Այլ երբ, վարդ կատար լեռանը վերև,
Ողջուն հանդատյան տա մեզի արև,
Ես ալ բարի լույս մաղթեմ, ի քո ծոց,
Գամ գիտ հոն թաղել:

ԱՌ ՔԱՄԵԼԻԱԶԱՐԴ
ՏԻՒՆ... Ս... *...

Արդյոք ո՞ր ձեռք, ո՞ր մտերիմ,
Սիրահառաչ ուստի՞ զեփյուս:
Այդ քամեյան բերավ թողուց
Ձեր այտից վրա լռաապփյուս:

Չըլլա, տիկին, որ հավատաք,
Մանրմության շէ այդ նըշան.
Իբրեւ դարդ մը ընդունեցեք,
Կարմիրն վայլե ի շուշան:

Վաղաթառամ է այն ծաղիկ,
Անմեղ տիպարն է ձեր սիրույն.
Այլ հետ մահու թե մնա կարմիր,
Արյունաներկ ալտիս է դույն:

ԱՌ... *

Զի սիրեցի քո աւ մազեր,
Խնկարկելով վեհ աչքերուդ,
Փոխան մահու ավիր ստովեր՝
Սքողելով կյանքըս ի մութ:

Կուրծքդ նըման ըսպիտակ ձյուն,
Սիրտդ ալ ներքուստ սառն է ձյան պէս,
Ու ծծնցիր սրտիս արյուն,
Որպեսզի զայն ջերմացնես:

ՓԱՓԱՔ

Շթի օր մը բախտն անգութ
 Գթար մեկնն, ինձ շնորհեր
 Հարստություն՝ վճռակվոյ կույտ,
 Գիտես թէ սիրտս ի՞նչ կուզեր.
 Քնքույշ կուտիկ
 Սեր ի սրբտիկ
 Հլլար ընկեր
 Ինձ միայնիկ:
 Ոսկեղենի անույշ գինի
 Լընույր բաժակ
 Լուսազունակ:
 Ու թարմ խորտիկ,
 Եստ համեղիկ,
 Փորս լնվի,
 Ու նընչերի.
 Զայս փափաքիմ,
 Զի վերջապես,
 Օր մը անշուշտ մեռնիմ տի ես:
 Ինձ համար էր, որ տներն ըսեր,
 Արի՛, Պետրե՛, օ՛ն, զե՛ն և կե՛ր:

ՀՈՐԻՈՐ

Նվագ

Ժերմակ մազերով, պիտոք հոտակյուն,
Հայ եղբարք, նստած գինետան մ'անկյուն,
Իրարու հետ տաք կը խոսակցեին:
Ծալաասան դառնա հոն՝ խմողն օղին:

Քոնսուլիդ և այլն, ազգային խնդիր,
Շուտ մը դատվելով՝ կը տրվեր վճիռ.
Ու սասանային բորբոքիչ միզն
Կոնժեին անհագ, ուտելով մեզն:

Մին՝ խեղդուկ ձայնով, դարձավ ինձ հարցուց.
«Թ' ի՞նչ դարման հայուն վիճակին գծուծ
«Պարտիճ մենք ընել, որ բարեկամիս:

Ըսի, բամեն Հայ թող յուր պարտք ճանչնա.
«Օղի մ'ամեն օր թող պակաս կու տա,
«Գինն անոր շնորհն ազգին ծարավիս:

ԱՌ *

Բնություն համայն է սիրո խաղ,
Նա շունչ ունի հուսո խաղաղ,
Սիրտս ալ ծաղիկ լունի, ամա՛ղ:

Պարտեզ սրտիս էր սերդ անդին,
Ասոր վրա իբր ի բազին,
Զոհեցիր դու իմ խեղճ հոգին:

Եթե երբեք հանդիպիմ քեզ,
Սրտես ժալթքած իմ արյունես
Թքեմ, ներկեմ աի քու երես:

ՊՏՈՒՆ ԱՐԴԵԼՅԱԼ

Աղամն գուեց շատ անգութ ես, Եվայդ իմ,
«Պտուղն պահես, երբ ես անոր քաղցն ունիմ»:
Եվան ըսավ. «Համ տա պտղուն, ո՛վ Աղամ,
«Քե մերթ փափաքդ ես պսակել շի փութամ»:

«Արդեւքն էր որ պտուղն անուշ ինձ հցույց,
«Եվ երկուքս ալ հաշխարհ ցավոց հայս եմույծ,
«Ուստի՝ թող ինձ երբեմն արգելք դրնեմ քեզ,
«Հայնժամ գոնե անձըդ ի դրախտ դեռ կարծես»:

ՏՐՅՈՒՆՁ

Սիրտս ներսես վառեցիր,
Սիրտ խարույկ դիզեցիր,
Այլ երբ քեզի մոտեցա,
Ո՛հ, շա՛տ ցավեցա:

Լճյա առձան մ' ես եղեր,
Պաղ լ'անկենդան կիսամեռ.
Ո՛հ, բայց շա՛տ ուշ իմացա,
Ավա՛ղ սառեցա:

Ձմեռվան մեջ վարդենի
Գտնել դժվար կլինի.
Ջալն ձեռք ձգել տենչացա,
Ու շատ հոգնեցա:

Գրկացրդ մեջ գերնզման,
Պատանք՝ դրտա իմ մահվան.
Երիտասարդ, ծերացա.
Սրտով քարացա:

Իմ սերն ինձ դեմ ըրիր զենք,
Հոգիս ցավով վառ գեհենք,
Հայնժամ հաստոված դանդաղեցա.
Ձի շատ ապրեցա:

Շատ ողբացի ու լացի,
Սրտովս իմ փոս փորեցի,

Կյանքս ալ ահա տամ ընծա,
Ձի ա'լ ձանձրացա:

Գարունս ձմեռն սիրահար,
Կորուս տերեքն հողմավար.
Կըմախք էյողեր փուշ ընծա
Փոխարեն ստացա,
Հոսահատեցա:

ԶՈՀՆ ԱՆՄԵՂ

Ա

Անշուշտ դիտած եք գիշերն երկնից վրա,
Ուր անթիվ սիրո կայծեր շողշողան,
Աստղ մը լուսազիծ որ անհետանա
Անհունության մեջ, ի քթթել ական:

Դիտունք դայն Աստղ, Երկնաքար կոչեն.
Այլ ես ազատ եմ կարծել իբր քերթող,
Թափունք մտերիմ՝ լավ ոգիներ են,
Որ դան առ ի մեղ, գիշերույն ի քող:

Կամ հաշիարհ ունայն, աղքկան տարաբախտ՝
Ասաղիկն է բախտին, որ իր կյանքին հետ՝
Վաղանցուկ ի սեր շիրանի անախտ,
Վերաթռչն անցնի՝ իբրև սիրո նետ:

Մինչ աստ հեգ զոհին ալաղ գիակին վրա
Կը ծածկեն ճերմակ խաչով՝ սև ցող մը,
Ու մորն արտասվաց կաթիլք մարգարայա,
Օրհնած քրին տեղ, ցողեն ծածկոցը:

Ո՛հ, վաղաթառամ, նման զըվարթնույն,
Մաղկունք ցամաքյալ շորս դին են պատեր,
Ոյց յուրաքանչյուրն թրվի արտմագույն
Իրեն դշխոյին սուղըն է բռներ:

Ո՛հ, թույլ տուք հետին անգամ մ'ալ գոնն,
Բանալ ծածկոցն այն, մահվան վերաբերուն,

Որ տպագա մը կյանքին հետ ծածկն
Անմեղ կուսեկին, հրեշտակաց ի քուն:

Տեսն'ք, գեղեցիկ զոհին ողորմուկ,
Թեքերն խաշածն կուրծքին վրա ծալած,
Աւալանց ձյունին պես թափանցիկ փափուկ,
Որք ի շունչ մահու անշարժ մնան սառած:

Այլ, սիրո, ավա՛ղ, դառն ողբերգության
Դժբախտ նյութ մ'էր նա, որո նենգ, կապանք՝
Հետին արարի լուծին ի գամբան.
Հոն դուցադնունդույն շիշանի և կյանք:

Ջի նախ շակած խաղն անագորույն,
Թատրոնն սքողն ծաղկյա վարագույր,
Նետի մը հարված պատուս զայն խկույն,
Վերջեն՝ դրոշ մահվան ծածկի սևաթույր:

Բ

Ո՛վ տխուր ժեսիլ, ժածան յուր մաղեր,
Ոսկեղեն թիւր ցիր ու ցան շորս դին,
Նվ անոնց մեջ տեղ գլուխըն կը հանգներ,
Իբր ավուր սիրո ոսկյա ի բագին:

Սիրտն ալ լի բախեր սիրով ապարդյուն,
Ու կրծոց վրա՝ յուր մահկանացու,
Անմահ թրիստոսի կայր խաշելություն,
Յերկինս հարսնացյալ կուսին փեսացու:

Մերձ մահնին աղքտիկ՝ կանթեղ մը վառած,
Դերեզմանական տայր մոռլլ շամանդադ-
կամ բոց կենսապառ, յուր սրտին պաղած,
Որ հոն շիշաներ ճարճատմամբ, դանդաղ:

Քնքույլ աղեկ մը, հագած ու շապիկ,
Լուրջ դեմքով մըտալ սենեկին դռնեն,
Ու գործակատար մահուն, միայնիկ,
Քահանա մը՝ լուռ կուգար ետեմն:

Մանուկ տիրացուն կարծեսի զերոս,
Աստվածն սիրո զր սրտից տա վերք.
Գայր անդ ամբշկոտ՝ դնել յուր զոհն ի փոս,
Աղո շապիկով ծածկած մարմինն մերկ:

Իրեն օգնական առած զալևոր
Ծերունին մահու, ծպտյալ ի կապա,
Որ պահ մը թողլով մանգաղն դարևոր,
Զեռքը խաշ մ'առեր, աղոթք փսփսա:

Ո՛հ... սրտապատառ էր այդ տեսարան,
Երբոր ալ անփուլթ՝ մանուկն ու ծերուկ
Առին մնուելլ դռնն դուրս ելան,
Մայրը սառ կտրած՝ կը նայեր խեղճուկ:

Այլ ինչպես հանկարծ շանթերն ամպահերձ
Պատառն ենկինք, չուրց հեղեղ ժայթքին,
Մայրն ալ դռաց, արտասովոք հանդերձ,
Գռչեց. «Ո՛հ տանիք զավակս անդին»:

ԵԱԱԳ

Դո՛ւ ալ, երկինք, սա սրտիս պէս մեղամաղձ,
Որ կը կրե սիրո ծարավըն և քաղց,
Դո՛ւ ալ ալիպէս մթադնիս սև ամպերով,
Որք կը դիզվին զխառս վրա ի հոլով:

Կապույտ երկինք, բաց քո երես սիրական
Ինձ՝ որ սիրո դռներն հավետ գոցվեցան.
Օ՛հ մի՛ ժաժկեր զանհունությանդ ըզտեսիլ.
Թող հոն փնտռեն թափառ աչքերս հուսո ձիւ:

Ձի ալ աշխարհ շատ նեղ կուգա իմ հոգւոյն,
Ուր վարդն անգամ բաժակին մեջ ունի թույն,
Ջմա՛հ խնդրեմ, կյանքը թրվի ինձ անարդ:

Պիտի սլանա հոգիս հ՛երկնից ասպարեզ.
Եվ թող պատվար մըլլան ամպերն սևադեզ,
Բաժնելով միմյանց հոգիս և զաշխարհք:

ԵՐԵՎԱՆՅՈՒԹՅՈՒՆ

Այս երկրիս վերա շատ մը մարդիկ
Ջոհ են փառաց միշտ խաբուսիկ,
Կուղեն ըլլալ իշխան հրդոր,
Միահեծան մեծ թագավոր:

Միւսանին է կըսեն շրթեղ,
Ոսկի բեհեզ գոհար բյուրեղ,
Ու պատվանդան իրենց գահուն
Ոսկովուն ի դեզ ըլլա թաքուն:

Ո՛հ, ես ողբամ վիճակն անոնց,
Երջանկության հոն դուռն է գոց:
Չեմ փափաքիր այդ ճոխությանց,
Զի երբ սիրեմ՝ մեղր է շոր հաց:

Ունենայի խրճիթ մ' աղքատ,
Ուր սիրելիւնս հետ հոն հանգարտ
Անցներ օրերս մտերմաբար,
Երջանկութունն այն է արգար:

ՀՐԱՆՏ ԱՌ ԱՄԵ

Փափուկ մատունքըդ, զերթ թեք սոխակի,
Բախտին զգաշնակ, ի ձայն նըվազի,
Սո քովըդ լըռիկ, զմայլլալ ի սեր,
Աչքերս քնզ ի նկատ կային ուղղակի:

Ի խորոց սրտե ըսի. ո՛վ աստված,
Թե սիրտս ու հոգիս են դատապարտված
Բանտարկիլ ի սեր հավիտ նազելվույս,
Հո՛ն մեռնիմ օր մը, վերքերով մաշած:

Այլ եթե մատնեն դահճին սայրասուր
Սըրույն հարվածին գլուխս ըլլա կուր,
Կուզեմ որ անոր մահու պողոտատ
Ըլլա ճիշդ ձևով հոնիցըդ սամուր:

Այդ կոկոնաձև աչքիդ շրջանակ՝
Փոսըս փոքրոգին ըլլա օրինակ,
Թող իմ գերեզման այդ ձևով բանա,
Որ ի ձև աշացդ հանգչիմ սիրափակ:

ԵՂԵՐՍՐԳ

Իրիկուն էր, ամպք ի յերկինս շիկնեն,
 Երբ ճովողեր ճնճողուն ի մութ ծառաստան,
 Մարը մտնել արեն լեռան մը ետին,
 Ու տեղի տայր գիշերային մթության:

Տխրասանիւ պարտիզին մեջ ամայի,
 Ուր քանի մը հաղիվ մնային ճեմողներ,
 Ուր ծաւն ի լին աղօտ՝ պատկերն յուր հայի,
 Երբ հեղ քամին կը խռովե յուր տերևներ:

Մենակ, կոթնած պատշգամբի մերկաթյա,
 Սառած դուխըս ամպերու մեջ սեղմելով
 Կը դադրեի աշխատանքես առօրյա,
 Ու մտազբաղ կայի՝ զանցյալն հիշելով:

Այդ լուռ բնությունն որ հաղիվ թե ընդհատեր
 Շշնչունեն զետեաթափառ տերևոց,
 Շատ ճարտասան իմ սրտին հետ խոսակցել,
 Իրեւ բարբառն անցյալ սիրույս արկածոց:

Տեսա լուսինն որ ծառոց մեջ՝ ժպտելին
 Ողջունելի զիս, հին մտերիմ լուսաբույլ,
 Ու արվընջյան զարթնույր խորին յուր քունեն,
 Ելնել փութով ամպոց մահճեն ձյունաձուլ:

Հայնժամ հանկարծ ես հիշեցի դառնապես
 Թե միևնույն պարտիզի մեջ, գիշեր մը՝

Ճեմեհինք, երբ նէ ըստվ ասիրեմ քեզ»,
Ու դուղայի իրրե ցամաք տերն մը՝

Աներևույթ ձայն մ'ալ հեզներ ականջիս,
Բարբառն սիրույն, որ հայն մահուն էր վճիռ,
Մինչ նէ'նդ այլում դիտեմ ջանար մսունալ զիս,
Ու փալեցին ցավք իմ ճակատն ի կնճիռ։

ՍԵՐՆ ԱՆԱՆՑ

Ահա քամին կը սուրա,
Գեղեցիկ օդ մ'ազնտե,
Նազն առաջատուն յուր բանա,
Ըսե դու ինձ, սիրելիս,
Որ կողմ նրբալ փափաքիս:

Տար դիս, ըսա՛մ, ի համբունս,
Ուր մշտատե սեր կըլլա:
Ըսի իրեն. սիրասուն,
Դեռ բնավ այն տեղ չէ տեսնված,
Ուր սերն ըլլա միշտ անանց:

ՀՐԱՆՏ ԱՌ...

Թե թագավոր ես ըլլայի,
Գային ինձմէ խնդրել հրաման,
Թե ո՞ւր հարմար կը դատեի
Դնել իմ դահ արքունեական,
Գետնի վրա ոտքերուդ քով
Փափաքեի հանգչիլ սիրով:

Թե բյուր երգեր և նվագածուք
Օրորենին հեշտ իմ ժամեր,
Քնար քերթողին հնչեր փափուկ,
Հրաման ապի ձայներն դադրեր,
Եվ լսեի զմայլանոք
Հառաչանքներդ սիրարորոք:

Թե բերելով հոխ ծիրանի
Մարգարտահեռ՝ զիս ծածկեին,
Աղամանդյա և արքունի
Թագով մը զիս պսակեի,
Զանոնք ի հուր կը նետեի,
Քու թուխ մազոքս ծածկվեի:

Թե ծարավի, տային համեղ
Գինին ըմպել հոսկի բաժակ,
Թե սեղանըս առատագեղ՝
Ըլլար ընթրիս բազմատեսակ,
Բով էր ինձի քան ըզրյուր գանձ՝
Միակ համբույրըն քո շրթանց:

Արքայութիւնս իմ անսահման՝
Կենդրոն մը լոկ որոշիւ,
Եվ քեզի հետ հոն անբաժան
Պարզ գլուղով մ' ալ գոհ ըլլայի.
Թնակարան մեզ անձաւներ,
Եվ ապարանքս անտառներ:

Իսկ եթե դուք բոլորովին
Իմ ըլլայիր սիրո ընկեր,
Հայնժամ ես քո ծառայն, գերին,
Նը ծաղրելի երկրիս փառքեր.
Եվ քու շղթայն պարանոցիս
Գար ինձ անույշ քան պտակ ճակտիս:

ԱՌ... *

Սեպհայլ աչքերդ հայլի են սրտի.
Մինչ բոսոր շուրթերդ, ա՛հ, վարդ կը հոտի.
Բնություն դեմքեդ դադափար առնե,
Մազկրներ բուսնի, լեռներ զարդարե:

Սուրբ մտերմության սրբազան հրո
Մռայայդ երկնային, ես պաշտողն եմ քո,
Գիտեմ հանդուգն է սիրելն դքեդ,
Այլ ի՞նչ փույթ, մահ տաս, դարձյալ ինձ պետք ես:

Եթե հառաչանք սլանան կուրծքեդ՝
Ուր սևով մազերդ խոնին վետ ի վետ,
Սիրատապ գլուխս մեղմիկ հովահրեն,
Աչքերս ի համբույր քնո կը փակեն:

Այլ թե ժպտախառն հոսես արցունքներ,
Մեղաց օձին նման սողուն առվակներ,
Որոնք տրփանաց ձևացնեն զժող,
Թող կյանքս հոն անցնեմ, ի սեր լողալով:

ԼՐՈՒՄՆ ՍԻՐՈ

Ինչո՞ւ, սիրտ իմ, այնքան տկար բարախես,
Ինչո՞ւ, հոգիս, հօտար աշխարհ դու չբովես,
Հարցի սրտիս, հարցի հոգվույս ես այսպես.

Ըսին, քենե թուով սեր.

Ըսին, լրացավ պաշտոն մեր:

Ինչո՞ւ, նակաս, արծաթափայլ մազերով,
Ինչո՞ւ, այտեր, ծածկիք ստվար փուշերով,
Հարցի այտիս, նակտիս՝ ձեռք գգվելով.

Ըսին, ալ մեզ չիք համբույր.

Ըսին, մեռավ սրտիդ քույր:

Ինչո՞ւ շուրթեր, դիակնադույն դալկանք,
Ինչո՞ւ, աչիք, դուք բացիսրիկ լուսափակ,
Հարցի աչացս, հարցի շրթանցս այսգունակ.

Ըսին, մոռցանք սիրտ դբառ.

Ըսին, մեր բիրք չեն ալ վառ:

ԱՌԱԿ

Պատուհանիս շատ մօտիկ,
Այգածաղկին տերևոց տակ,
Զույգ մ' աղալնիք բնակեին.
Արուին գույներն կապույտ գորշ,
Թևերն կանաչ մուգ գույնով.
Էզը փափուկ խանդակաթ՝
Զյան պես ճերմակ, այլ ի դուխ՝
Ունեի դեղին ապարոշ:

Արու և էգ կերվար թե՛
Մեկզմեկ շատ սիրեին.
Կտուց կտցի թևափար,
Արուն կուկու մեղմ հնչեր,
Հետո էզըն հեռանար,
Եվ օդուն մեջ սավառներ,
Երեկոյին դար ի բույն՝
Զազուց սնունդ կը բերեր:

Արու մ' ուրիշ մոխրադույն՝
Սիրահարյալ էր իգին.
Բունին դիմաց ծառոց մեջ
Սպասեի որ տերն երթա,
Եվ սրաթուիչ կը մըտներ
Ի բնակարան հոմանույն,
Զերկնչելով նախանձին
Հետևանքեն՝ թ' արուն դա:

Փետրացցիկ օրն ի բուն
Արբենային ի տրփանս.

Իրիկունն երբ սիրելին
Քողոր զխշտին սիրելւոյն,
էզն սպիտակ՝ ուղեկից
Կերթար իրեն քիչ հեռուն,
Կուգար ետքնն կը սպասեր՝
Յուր ընկերին դարձն ի բույն:

Սակայն օր մ' ի պատուհան՝
Մազկընեբս երբ չրեի,
Յնրնկ ատնն ուր արև
Հնոցի պես հուր կը թափեր,
Ահա հանկարծ գարշ արուն՝
Աղալնեկին կողակից,
Կասկածելով վրա հասավ
Տեսավ ոճիրն վատշըվեր:

Կու կու երգերն դադրեցան՝
Կտուց կտցի մահացու,
Նրկութն արու և մին էզ՝
Կռիվ սկսան աղալնիք:
Կարմիր արյան կաթիլներ
Իբրև նշանք մատնության,
Շուտ ներկեցին սպիտակ,
Ձյունափայլ թևք խեղճ իգին:

Նրկու արութն առին վերք,
Ձազունք բոլոր ցրվեցան,
Ու փճացավ թևավոր
Բունին խոնարհ գերդաստան,
էզ աղալնին մահացու
Հարված մ' առած յուր կողին,
Բակը ինկավ ու խորտիկ
Նզավ քաղցած մեր կատվին:

«Ահա այսպես ապօրեն,
Կըսեր մայրըս սիրասուն,
«Սերը տունեք կը քանդե,
«Աղալնեկին մինչ զբույն»:

ՀՐԱՆՏ ԱՌ... *...

Պաշտելով քեզ չեմ կշտանար,
Հրեշտակ սիրո սիրապատար,
Մեռնեի ես անմխիթար,
Թե սիրադ ինձ անվույժ ըլլար:

Կյանքես ի դատ քեզ սիրելի,
Կուզեի տալ բան մ' աղելի,
Ջի երկրիս վրա այս ատելի,
Մեկ հատիկս ես իմ պաշտելի:

Սիրո մ' ունիմ լուկ, զայն քեզ հանձնեմ,
Օրերս ալ քու գիրկըդ անցնեմ,
Թե հոն ըսես, ես քու դանձն եմ,
Սիրտս ըսե քեզ, սիրույդ խանձն եմ:

...Կենացս հողվույս ես նրպատակ,
...Խորան սիրույդ է անապակ,
Ծա սիրելիդ եմ քու Հարմակ,
Դու իմս Աշխեն սիրապատկ:

Անմահ սիրո ջահ երկնալույս,
Երջանկություն դեռ նորաբույս,
Դու տի ըլլաս իմ սերն ու հույս,
Գերեզմանիս նաև հայնկույս:

Այո'... այո'... շիրմես անդին,
Դրոանցը մեջ կենաց բանտին,
Անմահության և իմ դրախտին
Միակ ծագիկն ես դու անդին:

ԻՎԱԳ

Տես գրկաց մեջ այդ լեռներուն լուսաթափտ,
 Լսի՛, ընկեր, գանձ մը ունեմ ես ծածկած,
 Որոց կատարքն երկնից դրացի են վճիտ,
 Վերջալուսուն ողջուններն շիկամած:

Հոն սահա՞նք մ'ունիս, ըսավ ինձ ընկերս,
 Կամ ծառի մը գաղտագողի շուքին տակ
 Թաղված պահեսս ոսկվո՛ւ ականց ըզմըթերս,
 Որոց հոգիդ հանե ի թունտ զհիշատակ:

Ո՛հ, կը խարվիս, հարեցի ես, ազատ եմ,
 Չունիմ ոսկի, հարստությունն ալ կատեմ.
 Երջանկություն լի տար մետաղն իմ սրտին:

Պարզ գեղանի կույս մը կա հոն միայնակ,
 Որո սրտին մեջ սեր վառի անապակ.
 Ահա այդ է լոկ քերթողին գանձքն անդին:

ԻՄԱՍՏԱԿՆ

Վա՛յ, անմիտ ապուշ,
կանուխ և կամ ուշ,
Խն ըլլալն
Ալ հասկըցուց,
Ո՛վ անըզգուշ:

Հսելու տրդետ,
Խոսքի ալ անպետ,
Ուժ ալ շունի,
Որ դեթ կըրն
Բեռ կամ համետ:

Սրտի զգացմանց,
Ամեն գիտությանց
Եվ արվեստից,
Հակապատկեր
Միտք անթափանց:

Բնավ շունի ճաշակ,
Գլուխն անմըշակ,
Փռքիկ հողմով,
Տափակ ճակտով,
Նվ ալլանդակ:

Մարդու մը ձիրքերն,
Կարողություններն,
Ցուր մարմնույն մեջ
Յուզ են կապեր,
Ճարպ են դարձեր:

Ձի կը ձեացնե
Թ' ամեն բան դիտե,
Էիշդ այդ ձեռով,
Յուր բուն մտաց
Խաղարն հայտնե:

Հուլիսն մ'երևար,
Մտիք ի խաղար,
Գնա տարրիդ մեջ.
Ձի հոն բնակիլ
է քեզ հարմար:

Երկայնամիտ չէ
Որ ուսմունք փնտռե,
Թող տա քաշեն
Թե ականջը
Երկընցրեն:

Այս ի՞նչ տեսիտան,
Արարած անբան,
Ամենքն ըսեն՝
Հոկ խոսիլը
Թե իմանան:

Այլ աշխարհըս վրա,
Անպետ բան չիկա
...Նա ալ պաշտոն
Ունի, գիտցիք,
Ամենօրյա:

Ջախն ճանլցողները
Պիտի զգան հարգը
Իմաստունին.
Ահա այս է,
Յուր պաշտոնը:

Իսկ անտանելի
Յալ կը տա գլխի,

Հիվանդութիւն
է ունկընդրաց,
Շատ տաղակալի:

«Որ քարն որ շարժեն,
«Ձիս տակեն վերցնեն».
Այսպէս կըսեր,
Պարծենալով
Անճըստորեն:

Այլ քար մը կա,
Քե գնեն յուր վրա,
Անոր տակեն,
Կաղաչենք որ,
Երբեք չելլա:

ԻՆՁՈՒ ԱՐՔԵՆԱՄ

Իմ փափկասուն սիրելին
 Երբ որ մ'արթած զիս տեսավ,
 Քիտ արբենար, զ'իմ սրտին
 Գոչեց զկուտաս շատ մեծ ցավը:

Ըսի, եթե գինովնամ,
 Դու ես պատճառ, նազելի՛ս,
 Վշտերս անով գեթ մոռնամ,
 Ոյց անտարբեր կը նայիս:

Ձի մեղկ գինին ինձ ի՞նչ պետք,
 Թե քո շրթանցդ համբույրներ
 Վանեն սրտես բյուր աղետք,
 Շուրջս պատեն դրախտներ:

Քեզ գզվելով, ի քո գիրկ
 Տենչամ ի սեր արբենալ
 Երջանկության իսկ պատիրք
 Կուգես ինձմե զլլանալ:

Անսղարմ ես միշտ ինձ հետ,
 Լեզվիդ սիրտդ հակառակ.
 Թե իմ կյանքս է քեզ անպիտ,
 Գեթ սերս մ'ընեի նըշավակ:

Հանցանքներդս հատկություն
 Անշուշտ քեզի թրվեին,
 Եթե սրտիդ մեջ ավյուն
 Ըլլար սիրո, թանկագին:

Չես գիտեր թե գերիդ եմ,
Սիրույդ շղթայն իմ մանյակ.
Սանրացնես դայն, ո՛ր դժխնամ,
Պատժապարտին դերթ կապանք:

Մի հանդիմաներ
Անփորձ պատանին,
Որ վառյալ ի սեր
Զվարթնույդ երկրածին,
Խայթի ի փռշոց,
Միայն վարդենվույն,
Հանրութելի խոց,
Որ սիրո է բույն:
Թ՛անոր դեզ լիկա՝
Ի շունչ հոմանվույդ,
Անշուշտ արբենա,
Ուրեմն, քեզ ի՞նչ փույթ:

Զէ դարմանալի,
Որ գինվով խարե
Վերքն արյունալի,
Պահ մը զովացնու
Սիրույդ այգիին
Որթն է անսլոտուդ
Թողուա տակառին
Մեշ, թշվառն ի լուդ:
Ո՛հ, անիրավ ես...
Անողորմ, անգութ.
Փրկել մեկն ուզես
Երմեն նաև մութ,
Բառ մը թող ելնե
Վարդածոց բերնեդ,
Մահն իսկ կը վանե,
Եվ կընես անհետ:

Զի ուր դու կաս, հոն սեր կա.
Եվ ուր որ սեր, անդ ևս կյանք.
Առաջինն է որ միշտ կուտա
Մյուսին երկնից բյուր հրճվանք:

Նձ երբ թշվառս արբենամ
Գինով րաժական ի ձեռին,
Գիտցիր, որ ես կբաղձամ
Վերջ առաւ անսեր իմ կյանքին:

Զի ի՞նչ հառաւ ինձ ապրիլ,
Երբ շր սիրովիմ ալ քնեւ,
Սրտիս բողբոջ, նորաժիր,
Կյանքս ալ խամբի լինքենեւ:

Նրբ գիրկըդ ինձ կը մերժեա,
Զիս միշտ սիրել երդնելով,
Հայնժամ սկստք է որ ներսս,
Թե հոն գլորիմ ես գինով:

ԱՄՆ

Ոհ ի՞նչ վեհ է յուր նայվածք,
Ծերմակ գունատ դեմք մ'ունի,
Գեղեցկածին և նըման
Անահտա հին արձանի:

Ծրր կու քայլի շի կարծվիր
Ք' արարած մ' է հողեղեն.
Հավերժահարս, որ կուգա
Դից Ծղիսյան դաշտերեն:

Ձևեր ունի նէ մարմրով.
Իբրև տառարակ թևարեկ՝
Հ'ալիս ծաղկանց կը լողա,
Սիրտ կապարճն ըրած զեկ:

Գուցե Աստղիկն է էնի,
Մայր տրտնաց չրածին,
Որ գա ի տես յուր զոհից,
Շիրմաց ի մութ հ'անկողին:

Պեաթրիսի պես մենակ,
Ցերկինս թողալ ըզ Տանթե,
Աշխարհիս մեր վաղանցով,
Դժոխքին ալ այց ելնե:

Սակայն պետք չէ դարմանաք,
Եթե յուր դեմքն ու ճակատ,
Տեսնեք գոնատ վշտահար,
Աչերն երկնից ի նըկատ:

Ձի սեր ունի նէ անհուն
Յուր արաին մեշ շիրմաշերմ.
Հառաչանքը սիրելովուն,
Փշեց բերավ հոն անոր սերմ:

Որո բոցը շի բազին
Խանժելու լսկ առանձին
Շրթանց, ալտիցն ալ կայծեր,
Խառներ է յուր կրակին:

Ահա ինչո՛ւ միշտ գունատ,
Դալկադեմ է և տխուր,
Այլ նորանշան փայլ մ՞ունին
Լանջք դիցուն՝ ունին գեղակուտ:

Հախճապակչա զինչ լապտեր,
Ջահիվ ի բոց թափանցիկ,
Սիրո խարույկն յուր կուրծքի
Կը մատնեն խաղաղիկ:

ՍԻՐՈՂ ԿՈՆ

Կին մը որ սիրե,
Պատկառանք ազգե
Այլ եթե ժրպտի,
Չէ բնավ ի սրտե:

Եթե ես ուզեմ,
Գաղափարն վրսեմ
Տեսնել աւարչին,
Յերկիր ալս նըսեմ:

Կը խնդրեմ կին մը,
Ոյր սեր կա սիրտը,
Որո լոկ հուշիկ
Թանսն աչքերը:

Պարտինք մենք բոլոր
Մեծարանք էնօր
Ընծայենք իրրե
Ողջ մ'երկնավոր:

ԲԱՐԿԱՅԻՆՏՔ

Բենիամինըն Ֆրանքլին
Կըսեմք թե շէնն նողկալի
«Անձինքըն դեր և ուժեղ,
«Որ վառողի պէս բռնեկին:

«Շիջանին և նմանապէս:
«Առողջ կըլլան, կարմրադեմ,
«Ու քիչ մըն ալ շատախոս:
Սրտով բարի, ժանտ երեսն:

Համակարծիք Ֆրանքլինի,
Համարձակիմ լոկ հարել,
Թե արեւիսին ինքն իրեն՝
Վնաս կուտա ցաւալի:

Ինչ որ ունի դաւըմանց,
Կրակ ու ծովս է դուրսաւառ.
Կը զայրանա, ալ ևրկչոտ՝
Ջգուշանա ի վտանգաց:

Բարկացկուտ արտաքուտ,
Որքան ըլլա քստմենելի,
Թե յուր անձին վնասակար,
Կամ ուրիշին ալ մատուտ:

Հովատարիմ կատաղի
Շունին ունի բղախալար,
Խոսքով մ'անուշ շատ անգամ,
Ջայլույթն փուլթ խաղաղի:

Կամ ամպին պէս շանթարեր,
Որ մթազնի, հուր ժայթքե,
Հետո իսկույն տնդի տա
Արեգական ի յեթեր:

Ո՛հ, աշտպիտին, հաղատա՛,
Վտանդավոր չէ այնքան,
Որքան անձն այն, որ ի կիրք՝
Հանդարտ ժպտի, դալկանա:

Թ՛ անտնկ մեկուն հանդիպիք,
Որ բարկանա կորագլուխ,
Վատն այքն ունի բորենվույն,
Խաճեն շուրթերն յուր մեղմիկ:

Փախեք անկից, հեռացեք,
Այն ժպտին տակ ճիրան կա,
Դեմքին վրա սառ, սիրտն ոճիր,
Աչքերուն մեջ ոխ գտնեք:

Ձի ռիտկալ օձ մըն է,
Ծաղկըներու տակ պահված,
Ավարին վրա հարձկեիւ՝
Հարմար առթի կը սպասե:

ՀԲԱՆՏ ԱՌ ԱՎՄԵ

Ո՛հ, որքան անուշ էս, նէ ինձ ասեր,
Երբ լուր Թափ վարսոք երեսըս շուրեր,
Ուր լուր Հյունափայլ ձեռացը մատներ
Դալուկ նակատըս սիրով փաշփայեր:

Դո՛ւ ես, գուցի, սրտին իմ հատոր,
Միակ քաղցրության՝ աղբյուր ու ծոր ծոր,
Սիրտըս հայելի դիմացդ անպզտոր,
Է միշտ բոցատենչ ու սիրահորդոր:

Ինձ նայն՝, կըսեր, աչքերդ դարձուր
Պահ մը իմ վրաս, ու կեցի՛ր դու լուռ.
Ու լուր ծիրանի շրթերն հատկըտուր,
Կրկներ ինձ սիրո զերդում սիրալուր:

Այդպէս դիրկընդիտոն և սիրազալար,
Փոխանակելինք համբույր անդադար.
Այտերուս վրա, արցունքիս պալար,
Իմ համբույրներուն էր քաղցրիկ ափար:

ԿԱՂԱՆԴ

Կաղանդ է, մարդիկ կաղանդչեքներով
Բեռքը ված, վխտան ի տիգմ ի փողոց,
Նոր տարին մաղթեն միմյանց սիրով,
Ամենուսա լրավի ուրախ շշեկոց:

Որք և անոթի աղեկ մը մուրացիկ,
Ողորմուկ կոնական պատին կրթնած,
Ոտքերն ցեխին մեջ, կը մուրա հացիկ,
Շրթունքը ցամքեր, այլ աչքերն են թաց:

Հարուստ մը կառքով անցներ այն ճամբն,
Գրկին մեջ առած մանկիկ մ' ոսկեհեր,
Ու դայն դգվելով, մնչեր ականջն,
Պիտի տա կաղանդն քեզ ճոխ ընծաներ:

Մուրացիկն անոնց ձեռքը կարկառեց,
Զուգեց կաղանդեք, այլ հացի մը գին.
Ողորմության տեղ, փոխարեն վալլեց՝
Կառքն սըրըսկված կաթիլներն ցեխին:

Ինչ հակապատկե՛ր. մին յերջանկություն,
Գլորեր յուր հորն հետ կառքին մեջ հանգիստ.
Այլ մյուսն անոթի... անկողինն յուր ձյուն,
Աշխարհ իրեն դեմ, անգութ է և խիստ:

Մեծաամս ուղին երբ մտնե ի տուն,
Կաղանդ մոմ ընծայք զայն դիմավորեն,
Մոողին խանդակաթ, համբույրք սիրասուն
Նոր տարվույն զըսանց բանալիներն են:

Մինչդեռ մըթին մեշ լքյալ երեխայն
կարխափե անտեր, սողամա՜ մեռնի.
Իբրև հին աարվույն պատկերն՝ լըռելյայն,
Շրջանեն դադրած հալկետ շիջանի:

Սակայն աշխարհիս հանույթն անցավոր
Յնդին դերթ շողի, մոմերը մարին.
Փշրին ընծաներ, և երկիրս կըլոր
Դառնա շարունակ դժգոհ, տխրադին:

Բայց այդ աղքատիկ մանուկըն քաղցած,
Երթա երջանիկ, յերկինս յուր հոր տուն,
Ուր որ լույսերը միշտ մընաւ վառած,
Ուր որ մշտատե կադանդ է գարուն:

ՁՆՐԳՆԵՔ, ԱՅԼ ԳՈՐԾՆԵՔ

Ո՛վ է անձն այն, որ չը սիրե,
Քանց ամենայն դարդերն երկրի,
Եվ առավել ընտանիքն,
Բնիկ յուր ազգ, հողն հայրենի,
Եվ ո՛ր քերթող շուշեր երգել,
Շիրչալ փառքերն մեր նախնի.
Սակայն այլ բով է. անցյալը շերտնք,
Հոգուտ ներկայիս, խորհինք և գործենք:

Մատենագիրք և քերթողներ
Գովեցին հայն ու զՀայաստան,
Ձյուր ավերակք, փառքերն համայն,
Շիրիմք, պալատ ու բուրաստան,
Ի հիշատակ մեր դուրսագանց,
Սիրաք մեր ուռին հպարտանան.
Այլ արդ փառավոր անցյալը թն գովենք,
Գոնե ներկայիս համար ալ գործենք:

Ամայի է վայրն արդ տխուր,
Ուր որ շիրիմք կան մեր նախնյաց,
Եթե այդ հարց դամբանի մոտ,
Զի կա դպրոց իրենց մանկան,
Որոնք ի լույս առաջագեմ,
Առնեն փութով ուսման ըզգանձ.
Ի փառս անցելույն, որո սեր տաժենք,
Հոգուտ ներկայիս դպրոցներ կանգնենք:

Երգը վայլե լոկ այն ազգին,
Ոյր փառքն ու բախտ դեռ չեն մարեր-

Հայոց քնարին երգեր կորան,
Ժանդատնցին զայն արցունքներ.
Գոնն լրվանք ցավոց հայն գետ,
Սա մեր սրտին մուրն ու վերքեր.
Ու մեր դիմաց վրա ժողիտ մը աննհնդ
Փայլի, քի նպաստ հայրենյաց դարձննք:

Ոհ, ի՞նչ օգուտ սիրել երգերն,
Կամ Մասիսը ձյունակատար,
Մինչ շատ հայեր սրտոններուն մեջ՝
Կը կրեն անոր ձմեռն ու սառ,
Ջի պաղած է սերն հայրենյաց,
Հեղուն օտար, իրենք օտար:
Օ՛ն ժամանակ է եղբարք, ալ շերդենք,
Սիրենք աղգերնիս, միաբա՛ն գործենք:

Հայ ժընելըս ինձի համար
Կը համարիմ պարծանք ու ըսիտ,
Ջի առաջին աղգն է յաղինս
Տաղանդավոր, թնայեա դժբախտ,
Սակայն ըլլա որ մոռնանք քնավ,
Թե՛ մեր օբրանն եղավ զըրախտ:
Ուստի եղբայրք իմ, աղգերնիս սիրենք,
Հօգուտ ներկայիս շերդենք, այլ գործենք:

Հիմիկվան զառն ողբոց հաղմով
Երգք անցելուն կը շիջանին,
Մեռյալ փառքերն մոռանանք ի տես՝
Կենդան մեռյալ թշվառ աղգին,
Որ ի խաղար տըգիտութեան՝
Ըար փնտրու խեղճ վիճակին:
Ուրեմն եղբարք իմ, լըռենք, ալ շերդենք,
Աղգիս հարութուն տալու չանք ընենք:

Հիմար բան է անցյալը լալ,
Ու ներկային ըլլալ անհոգ.
Թե այլ աղինք ունին հուր, գենք,
Թագ, Ժիրանի, արյունոտոգ,

Մենք ալ սամամբ հառաջ դիմենք
Հուսամբորինք, փայլինք մեր մտոք:
Այո՛, եղբարք իմ, շարտամբինք, շերդենք,
Հիմիկ, էլ ժամ է, պաղ արլամբ գործենք:

Ինչպես ցամոց, հայտ փորձավար,
Ամեն ունի բսկիզր ու վերջ.
Փառքն ու վշտերն ալ շուտ անցնին,
Ամեն ունի դյուր ելնէջ.
Օր մ' ալ գա որ թշնամին լա,
Մինչ Հայաստան զվարթ է յուր մեջ.
Մեր կարգն ալ տի գա, խնդալու սպասենք.
Արդ փոխան երգոց խորհինք ու գործենք:

Ուշ խնդացողն, լավ կը խնդա,
Փառքն աշխարհիս է մի սանդուխ,
Վարն են հայեր, վերն են օտարք,
Այլ շվհատինք, ուշ կամ կանուխ՝
Անոնք իշնեն, մենք աի ելլենք,
Օրենք մ' է այս, ատենն է սուղ:
Մինչ հայն, ո՛վ հայեր, պատրաստվինք գործենք.
Մեկ որ հոն ելլանք, հայնժամ լավ կերգենք:

ԱՌ ԿՈՒՅՐ ԵՐԱԺԻՇՏՆ
ՎԱՍՈՒՄԱՄԻԿՈՆՅԱՆ

(Գրուել ի տուն իմ բարեկամ
Գ. Մելիքբաշալանցի)

Հողիդ վրասմ, աշքերդ կույր,
Կլանքդ ի մութ սևաթույր.
Երդերդ ունիմ աջաթիգ բույր,
Այլ արվեստդ է երկնից քույր:

Լավ է՝ աշխարհս չի տեսնես,
Դա ցավոց է ասպարեզ.
Հողվովդ երկինք թե ելլես,
Պնաք է դայն մեզ ուղարկես:

Բազումք շունին այն լեզու՝
Այնքան անուշ խոսակու,
Որքան ծայր քո մատներու՝
Մեր սրբանբուն ազգելու:

Օ՛ն, դու մեզ հետ մնացիր միշտ,
Ո՛վ երկնայինդ երաժիշտ,
Որո ճաշակն տաա մեզ չիշդ.
Խույս տանք քննե ցավն ու վիշտ:

1879

ԱՌ ՎԱՆԻՉԿԱ ՇԱՏՈՒՆՅՅ

Երնձոր երես, վարդ շրթներով Վանիշկա
Վազե տան մեջ ուրախ զըվարթ՝ թըռչնո պես.
Երբոր ասեմ, ինչո՞ւ վազես, ո՞հ ի՞նչ կա.
Նա ավելի շուտ հեռանա իմ զըրկես:

Երբ ժըպտում է՝ գինվո բաժակն ի ձեռին,
Մենք ծիծաղից մեռնինք. երբոր կու խոսի,
Կարծես քընքույշ պուպուկն երգե պարտիզին.
Երբ ծըռելով ասե մընչիկ, օ՛ մեքսի:

Հորը միակ հըրեշտակն է Վանիշկան.
Այլ լըգիտեմ՝ թևերն ո՛ւր տեղ է թողած.
Երևի՝ նրանց կըտրել է մայրն սիրական,
Որ չի փախչի՝ թե տան զըռներն զըտնե բաց:

1880

ՔԵՐԹՈՂՆ ՄԱՀԱՄԵՐԶ

Ի՞նչ ես խորհում, ա՛վ քերթող,
Կարաքամակ և տըխուր.
Աչքերդ ուղղած ի սև հող,
Քնարդ էլ ի՞ սուդ քեզ պես լուռ:

Բանաք և թուղթ քո առաջին
Բուր անգործ կու հանդչին.
Բանաքին պես սիրտդ էլ սև.
Դեմքդ այլ ունի գույն թղթին.

Ի՞նչ որ դու մի ժամանակ
Նորա վերա գրում էիր.
Այժմ ի նակառ անգունակ
Երևում ես անխըտիր:

Դու անցյալն ես երազում,
Եվ ներկայից սարսափած՝
Ի զուր անդ ես ուրում
Ապագան մութ քողարկած:

Միայնության քեզ ընկեր,
Ավա՛ղ, շունիս ոչ ոքին,
Եվ ոչ շանքդ գանգրահեր,
Որ լիզե ոտդ խընդագին:

Միայնություն է օրրան
Սև ու մըռայլ խորհրդոց,
Որ գրվիդ վրա ծանրանան,
Զինչ վիմեղեն մի ծանրոց:

Հիշատակներն կեղեքիչ
Ի՞ր բաց վանիր, օ՛ն, մըտքից,
Որ դան իբրեւ հափշտակիչ՝
Գողնալ ժըպիտն քո դեմքից:

Դու հիշում ես անդադար
Հըրճվանաց այդ ապրիներ,
Որ ազետ, անհոգ, սիրահար
Վազում էիր դաշտն ու լեռ:

Եվ ի՞նչ է պետք այժմ հիշել
Այդ սիրահյուս օրերը,
Երբ սիրելիդ անարգել
Մեռելում էր քեզ յուր սիրտը:

Ինչո՞ւ այնքան պարզամիտ
Հավատացիր հալն պահուն.
Թոռմած ծաղիկն այդ սըրտիդ
Դառել է փուշ, ցալ անհուն:

Ջրգիտեիր որ կյանքում
Սեր, հըրճվանք և ցընծություն
Փաղցր են՝ դրամիլ ըսկըզքում,
Հետո մեզ տան տըխրություն:

Ամեն ունի մահ և կյանք,
Ճակատագրին է վըճիւ.
Վայլե սիրույն լոկ հըրճվանք,
Ցուր մահը դու մի գրավիր:

Երբ նա մեռնի, ապրիր դու.
Քաղե նրանից մեծ օգուտ.
Այն է՝ լինել փորձառու
Եվ կյանքի մեջ միշտ հըմուտ:...

Այլ ուշ հասավ իմ խըրատ,
Ջի մաշվել էր սիրելով.
Գերեզմանին խորխորատ
Փորել էր սերն յուր նետով:

ԼՈՒՍԱԼՈՐՈՒԹՅՈՒՆ

Ա

Մայրաքաղաքին ամեն կողմն էր դարդարված.

Օրն էր մի մեծ տարեդարձի, բերկրանաց.

Մութ երկնից տակ՝ քաղաքի մեջ բյուր ջահեր,
Հուրք պենկալյան թոթափեին լույս աստղեր:
Կարծես երկիրս վառած հրազներ անհամար՝

Ուղեր մըրցիլ երկրների հետ աստղավառ:

Ամեն փողոց և ամենայն պատուհան՝

Վառում էին կանթեղ, բուրմունք դանազան.

Այն շլացուցիլ լույսերի մեջ և ծխին՝

Լքավեր ուրախ շըշընկոցը ամբոխին:

Ամեն տեսակ դասակարգի ժողովուրդ,

Ռամիկ, աղքտի, սինլըքորաց մի խառնուրդ,

Կենդանամուռն զետի նրման՝ միմյանց

Հըրմըշտկելով կը ճղընեին գըտնել անց:

Նվազարանաց եղանակի քաղցր հընչյուն

Նվ մինչ հիշոցք արբեցողաց և գոլյուն՝

Խառնըվելով միմյանց հետ, մեծ աղմուկ

Կաղմում էին, որ պատճառեր շատ տաղատուկ-

Նվ մանավանդ այն կանթեղներն կիսավառ,

Սև պատրուկներ, որ կը ծըխին անզազար,

Գարշոտությամբ մըթնուորտը լըքցնեին.

Փըսակահատք և սրիկաներ գողունի

Հափշտակեին ժամացույցն ընդ շղթայի.

Արձակելով գինեատան կեղտ հիշոցներ,

Հարվածեին շատի համեստ աղանչներ:

Տարօրինակ էր այդ գիշեր. ըստուգիվ

Ով որ սիրեր գերդաստանին յուր պատիվ,

Նա դուրս չէր դար տմենեին, այլ ի՛ տան՝

Անցուդարձը կը դիտեր ի պատուհան:

Սակայն մի պահ թողնենք լուսերն այն պայծառ,
 Խուժողութն, ազմուկ փողոցների մեջ խաղար,

Մըտենք տեսնել, ուր հազիվ թն նըշմարվի
 Մի աընակին ազատ լույսը ճըրագի.

Ջի այն թաղի բընակիչներն չըքավոր
 Ունին միայն ստեղծու հաց մի կըտոր.

Ու վառելու՝ փոքրիկ ճարպոտ մի ճըրագ,
 Աղքատության պլպլումն և խեղճ նըշանակ,

Որ յուր տիրոջ միայն քիչ լույս կը շնորհն,
 Նրա խեղճության միշտ օրագարձն կը տոնեն:

Անդ կիսաստվեր սենեկին մեջ՝ ողորմուկ
 Մին կա նըստած, խորհի գըլուխն ի յ'արմուկ.

Քառասունին արդեն լինի նա հասած.

Նա հայր է խեղճ երեք անմայր զավակաց:

Երկու օր էլ չեն կերած դեռ մի պատառ.

Բոլորն ծախված, շունին ծածկույթ մի պատտառ.

Այժմ էլ չի կա ոչ ըզրազմանք՝ ոչ վըճար,

Որով երբեմն հացիկ գնելու գըտներ ճար.

Սենե աչքով նայի ի քուն յուր որդվոց,

Առաջ հաճույք և հոյս սըրտին, այսօր խոց:

Եվ հանդիսին էլ պատճառով փակված էր

Գործատուներ, գործավորք էլ ողջ ցըրվեր:

Նա խորհում է. գուցե որդիքս էլ չգարթին

Քաղցի քընից, ճիշտ և նըման սև մահին.

Սակայն պետք է, ո՛հ տեր աստված, այն ժամին
 Օգնել նոցա. սակայն մուրա՛ւ... չէ՛ դյուրին:

Բայց ո՛ւր գիմն, ո՛ւմ պատմն յուր վիճակը.

Ի՛նչպես հայտնի յուր տառապանքն ու քաղցը.

Ո՛վ ու զարձեն ողորմելի մուրացկին,

Եվ ո՛վ կը տա ողորմություն՝ հացի գին:

Ողջ քաղաքը յուր զբոսանոք ըզբաղված՝

Գիտնալ չուզն՝ որ կան մարդիկ դեռ քաղցած.

Գուցե արքայալ այժմ իրա նըմաններ,

Դեռ դեն ման դան. ինքըն ինչո՛վ է տարբեր:

Նա մի բողոք երկինք նայեց արտասովոր,
Գռչեց. աստված, դո՛ւ մի՛ թողնես ինձ անօր:

Տանից դուրս գնաց թույլ ու տարտամ ոտքերով.
Նրա նեցուկն էր լոկ որդվոց սերն ու գորով.

Այլ անոթի ծարավ, գլուխը պլտույտ դար.

Յուր շուրջն ամեն առարկաներ մըթըննար.

Ձի շահերի այդ լույսերը փայլի՝ փայլ՝

Արդիւնին որոշ տեսնել ոտից քայլ:

Գնաց ի խարխափ, կանգնեց մի տան հանդիման,

Ուր ածեին երգք և նըմադք զանազան.

Ծաղիկներով սարքած պըննած դռան միջից՝

Արբած, թըմրած սիրուց՝ դինուց՝ հաճույքից,

Գային ի տես տյարք և տիկնայք նազելի,

Խեղճ տընանկին հակապատկերք ծաղրելի.

Ուր շքեղ կառքեր ըսպասելն դռան առաջ՝

Ընդունելու յուրյաց հյուրեր բախտահաճ...

Այն բողոքին շրոց հեղեղներ ի տարափ

Իշան երկնից, շիջան լույսերն հըրատապ

Յուրաքանչյուրն խառնիճազանճ ըշտապեր՝

Ի գիշերի պատրաստարան որոներ:

Այլ այն թըշվառ հայրըն՝ որ թեթև

Ուներ ցընցոտ մի լաթի կտոր ուսին վերև

Անձրևին տակ իբրև ցամաք շյուղ հարդի՝

Կորած անհետ ի գիրկ անհուն մի դաշտի,

Գլորվեց շըրջեց գեալն գողգոթ յուր մարմին,

Ուր շոշափեր արգեն մահու գերանդին..

Ինկավ յ'առվակ այն անձրևի ցեխավար.

Եվ ամեն ինչ տիրեց կըրկին մութ խավար:

Լըռությունը թագավորեր ամեն կողմ.

Դեռ գիշեր էր. սակայն հանկարծ ցըրտիկ հողմ

Առավառյան ավետարեր իբրև շուն՝

Վանեց ամպերն, և երևցան աստեղց փունջ:

Արշալուստ թևերը բխեց ոսկեդույն

Չէր ավետած վերադարձը դեռ արսվույն,

Նրբ շորեքին հողիների մի խըմբյակ

Գնացին բաղխել երկնից հյուրընկալ սուրբ դրոնակ:

ՏՓՂԻՍ

Եթե ես գընամ մեկ օր Տըփղիսից՝
Պահելով նորա հիշատակն անբիծ,
Ուր որ էլ լինիմ՝ միշտ պիտի խոսեմ
Նորա գովեստը, ու կարոտ քաշեմ:

Շատ բաներ ունիմ գովելու համար,
Ո՞ր մեկըն ասեմ. անթիվ անհամար.
Ուրախացուցիչ գինին ոսկեփայլ,
Սաղանտարն ու պար, երգեր այլ և այլ,

Անուշ կըլիման, օդը և ջուրը,
Լուսնակին հայլի, փրփրացող կուտը,
Փառավոր ճաշեր, ուր տեղ թամատան՝
Օգնականին հետ գինվո մեջ կըողան:

Վերջապես, վառվռուն արևը պայծառ
(Զընայելով որ ինձ տըվալ Քաթառ,) |
Փակում է շուտով ձրմեռվա դըռներ,
Եվ հրավիրում է գարնան ծաղիկներ:

Հյուրասիրության հիշատակն աղնի՞մ
Զը պետք է չընշվի սրբափրցս վաղիվ.
Որ օտարականն այս տեղ գըտնում է,
Քաղաքն ու քաղքցին սիրում՝ մընում է:

Տըփղիսում մարդըս միշտ ուրախ կապրի
Բարեխոսությամբ սըրբույն Դավիթի.
Նա էլ՝ կարծում եմ, դեռ սուրբ լըղասված՝
Կավ թամատաւ էր, մեծ անուն հանած:

Ծով ինչո՞ւ չկարծել՝ որ Նոյ նահապետ
Այս տեղից տարավ տապանում յուր հետ
Լավ գինիք, որ երբ աշխարհ շուր լըքցվեց,
Ցուր ըմպելիքից նա չբզբրկելից:

Եստ քեֆ անելու Տրփդիս մի բանտ է.
Լեռանց շղթաներ մեզ կը կաշկանդե.
Միշի կողմը փոս՝ մի գինվո թաս է.
Լյաղաթով չի խմող՝ խելքից պակաս է:

Բայց ես ուռալիլ արժան գովեսին՝
Մոգական մի բառ կա շատ հիանալի.
Որ եթե մի դարդ կամ վիշտ ունենաս,
Կը մըխիթարվիս՝ թե ամեն, մախլաս:

ՈՒՂԵՐԶ
ԱՌ ՔԵՐԹՈՂՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏ

Եթե խարույկին ճարճատող բոցեր
Սըլանան յ'եթերս՝ կապուտակ ծըխով,
Թե դարնանային ծաղկաբաց դռներ
Հրավիրին ծիծառն՝ յուր փոքրիկներով.

Թե բնության ի՛ գիրկ՝ ամեն ինչ դիմե
Մի նըստատակի, նորանից զրավված,
Առվակըն ի՛ գետ, գետն ի՛ ծով վազե,
Սիրտն ի՛ խինգ՝ ի՛ սեր, հոգին առ աստված.

Ինչո՞ւ այժմ էլ ես սըրտովըս բոլոր՝
Հոգվով հափշտակված առ քեզ շրդիմեմ,
Երբ սիրահամբույր երգոք ծաղկույր
Ինձ գըրավում ես, ը՛վ ոգի՛դ վըսեմ:

Քու երգերուն մեջ գըտա երկնային
Այն կայծըն, որո հղա սիրահար.
Այդ՝ աստված կու տա միայն քերթողին.
Որ մարդիկ երկնից առնեն գաղափար:

Միմյանց անծանոթ՝ թեպետ հեռու ենք,
Բայց արդեն ըզգամ քեզ մըտերմություն.
Կարծեցի՛ վաղուց հոգվով եղբայր ենք՝
Երբ ինձ ազդեցիր քու խանդիդ ավյուն:

Հետո, դու քերթող, այլ ես դերասան,
Դու ունիս քընար, ես կըրից գիմակ.

Ճանշնալու ի՞նչ պետք քաղաքավարութիւն.
Միթե Ողիմպիա չե՞նք լեռնաբընակ:

Ասում են, հաղիվ քսանկտրս գարուն
Անցնելով դըլխիցդ՝ մաղերդ են կորզել.
Բայց մի՛ վըհատիր, գեթ մենք սիրուն՝
Անուշ՝ անթառամ ծաղկունք են թողել:

Թուրմամբ այդ ծաղկանց ես ըղձալլեցա.
Նազուկ մահը նրբոր կարգացի,
Աչքերըս լացին, հողմով տըրտմեցա
Նորա շիրմին վրա, ըզքեզ սիրեցի:

Ասաված թող պահե քո կենճ արեւ,
Երեք վըշտերդդ ցընծութիւն դառնան.
Այս՝ քեզ իմ մաղթանք և իմ բարեւ.
Մանաւանդ մի օր հարգըդ թող ճանշնան:

Եվ այն սև աչաց ամուխն՝ բոցն ու կրակ,
Որ անշուշտ խանդիդ աղբլուրքն են գողարկի,
Վառ պահե երկինք ի՛ սեր ներդաշնակ,
Որ կարեա նրգել սերն և գեղեցիկ:

Հառա՛ջ, բարեկամս, հառաջ ե՛կ ի՛ լույս,
Այդ խանդովդ աղնիվ մի մնալ դու ի սավեր.
Լույսը չէ կարող ծածկելիլ, տալ խույս.
Նորա պաշտոնն է հալածել զղիշեր:

Երգե՛, մի՛շտ երգե, քաղցրիկդ իմ սլովետ.
Աշխարհքն ու կյանքը ունայն է և փշոտ.
Գոնե դու վարդեր մեղ թափե քնարեդ,
Այլ քեզ գափնիներ, ո՛վ Տիգրան Աշոտ:

ԽԵՂՃ ՈՒՍԱՆՈՂ

Դեռ հազիվ կա տասն և ութը տարեկան.

Ըզգայուն սիրտ, դեմքըն աշխույժ՝ դուրեկան.

Տանյաց ներքև բնակարանն է մի անկյուն,

Ուր ձըմևաան լըսվի միայն մըռընչյուն:

Եթե հնացած մի զգեստ ունի, գիշերվա

Վերմակ լինի, որո ներքև կը դողա.

Այլ ցերեկին դրանով դուրս գալ ամառի,

Այդ պատճառով նա բոլորից կը փախչի:

Ձի զըպրոցի վերատեսուչն ասել էր՝

Որ այն շորով նորան զըպրոց լընդուներ.

Նա էլ սաստիկ հուսահատված հեռացավ՝

Քաղցած փորով, հոգին տըրտում, սիրտն ի՛նչ ցավ:

Մեկ նայեցե՛ք ուսանողին դեմք դունաս,

Որո ալտեր արցունք ծածկեն լոկ առատ.

Սառ սենեկին մեջ տակավին ապրում է.

Գուցե սըրտի կրակից դեռ փոխ առնում է:

Մինչդեռ անդին՝ քամակը տաք, փորը կուշտ,

Գըլուխին լիք քամիներով մի փամփուշտ,

Կով զարգարված քանիքը կան՝ որ ոսկին

Կասեն՝ փայլի առավել քան փայլ մըտքին:

Խեղճ ուսանողն պատրաստում է ապագա,

Մինչ ներկայում նեցուկ պատառ հաց լըկա.

Անցելույն մեջ նա որք մընաց լուր ծնողից,

Իսկ այժմ, ավա՛ղ, մոռացված է ողջ ազգից:

Տըվեք ուրեմն ուսանողին շնորհակտը,

Դուք որ առողջ և ուսյալ եք ունենոր.

Եւհո՛ւ՝ փառաց համար թե կտաք օտարին,

Նրան էլ տըվեք՝ գոնե ի շահ ձեր ազգին:

Մոռացութեան ժայռին ներքե բողբոջած

Նա մի բույս է, պարտիզներից արտաքսած.

Մի՛ կոխոտեք գեթ նորափթիթ այդ բուսիկ՝

Որ վայելեք ապագայում յուր բարիք:

Տըվեք, տըվեք յուրաքանչյուր մի մի բան՝

Ի՛ սեր ազգի, ի՛ սեր ազնիվ մարդկության.

Չարհամարհենք հասցրենին, որ ի հոգ

Մի օր ամբողջ դաշտ դառնալու է կարող:

Ներկային հետ մեր հույսերն էլ փրճացան,

Ապագային պետք է անել վարուցան.

Լավ է նրանից՝ որ անտարբեր ունի փող՝

Այն մարդասեր, խեղճ և քաղցած ուսանող:

ԱՌ ՄԱՅՐՆ

Ամենայն բան է անցաւոր
Այս աշխարհում հեշտ՝ վաղանցուկ.
Ուշ կամ վաղիվ հաճույք բոլոր
Վերջանում են ի՛նչ ցավ ի՛ սուգ:

Գարունն անցնի, ծաղիկներ թումին,
Լըռե թրռչնիկն անտառասեր.
Նույնպէս մարդն էլ ըզգա ցըրտին՝
Որ հասնում է կենաց ձրմհու:

Ամեն անցնին, չեն թողուլ հետք՝
Խնայես սիրո խաբուսիկ հետք.
Դեղեցկություն էլ մերկանա
Յուր ձիրք սիրո և մահանա:

Դուք էլ, տիկին միշտ նազենիկ,
Մի օր անշուշտ կը թառամիք.
Ժամանակին անգութ մանգաղ՝
Քանդե ավրե ողջ կաղ ընդ կաղ:

Թե փորձության այս խեղճ ձորում
Մըթազնին վաղ ժըպիտ՝ խընդում,
Հուշ լինի ձեզ որ դուք մայր եք,
Դեռ մի հրեշտակ՝ այլ թևերիկ:

Դուք հանձնած եք ձեր զավակաց՝
Այն թևերն որ ձեզ են տըրված,
Որ սըրբության շավղով սլանան՝
Երբոր նըրանց ցույց տաս ճամբան:

Գեղեցիկ է սիրել կընոջ՝
Իրբն սիրո տունկի բողբոջ.
Այլ պաշտելի և պըտղատու
Կենաց ծառ է մայր սիրարկու

Հալատացեք, բամբիշդ ազնիվ.
Ժամանակին անդուք անիվ
Երբեք աշուն՝ ձըմեռ չունի,
Մորկան փառաց դարնանայնի,

ՄԱՀԱՊԱՐՏԻՆ ԸՆԿԵՐԸ

Բանտարկված մի քառակուսի սենեկում,
Սև, անթափանց պարսպոք խոնավ ու տրբոտում,
Աղոտալույս պատուհանից երևի
Երկնից կապույտ, երբեմն աստեղք դիշերի:

Մահապարտին ոտիցը մոտ՝ լուսազուրկ
Կա մի բուսիկ, բանտն արած յուր խանձարուրդ.
Նա օրից օր աճեր քիչ քիչ բարձրանար,
Միայնության իրբև ընկեր վրշտահար:

Աքսորելույն թվեր կարեկից նա մենակ,
Ծաղկելով այն խոնավ փրտտած պատին տակ.
Կարծես թե մպիտ՝ լնդու ուներ խոտամշակից,
Թեպետ նրա սլեւ լըքյալ անհույս բոլորից:

Բանտարկելույն արցունքն էր ցող բուսեկին.
Գոմաստ՝ անբույր, այլ հուշ ամեր միշտ լըռին
Հիշատակը յուր անցելույն, սիրելյաց՝
Որոց այտեր յուր թերթիցն ավել էին թաց:

Թաց ու խոնավ՝ արտասուքից միշտ աղի,
Այն խեղճ տունկը օրից օր էլ նըվաղի.
Ջի երկուան էլ էին ի մահ դատապարտ,
Մինն հանցավոր, այլ ծաղիկըն էր անպարտ...

Բանտապանը մի օր գլտավ նրան մեռած.
Ձեռքին բըռնեք այդ բույսիկը չորացած,
Որ յուր ծոցում ծածկյալ թույնով աննըման
Փըրկել է զայն անարգանքից գըլխատման:

ՀՈՎԱՀԱՐ

Սատանա չէ՛, դի շունի պոչ ու կոտոշ.
Հրեշտակ էլ չէ, զի զույգ թևերն են պակաս.
Ուղիղն ասեմ, արարած մ'է անորոշ,
Ուր որ լինի՝ պատճառն միշտ մեծ վնաս:

Սատանայի աչքեր ունի մեղմ և կրակ՝
Ձրգողական մի զորությամբ անմրոտանշ.
Երթանց վերա մեղուների երամակ՝
Կարծես՝ գրել են մեղր և խայթոց, ծաղկանց փունջ:

Մի նայվածքով կարող է տալ մահ և կյանք,
Ձեռքն ընկնողը հեշտ և շուտով չ'աղատիր.
Գուցե ի հող կը դառն ևս զլուր փրկանք՝
Եթե սիրով պաշտե նորան ժընրագիր:

Նա մի հրեշտակ ըստեղծվեցավ նախապես,
Այնքան սիրուն, որ ստեղծողն իսկ ըզմայլվեց.
Փոփոխամիտ սակայն թևթև թռչնի պես՝
Բըռչեալով սիրտ էր մաշում իբրև ցեց:

Եվ աստուծո հըրամանացն անհնազանդ՝
Բացակա էր նա շատ անգամ երկընթից,
Ջի այն տեղ էլ անխղճարար աստ և անդ՝
Աղետ գործեր, սեր տեղալով աչքերից:

Արարիչն իսկ սըրամբուելով՝ ետ առավ
Հրեշտակի նորա թևոց գեթ մինը.
Եվ նա մնացած անզույգ թևով՝ զլորվեցավ
Իսկավ հաշխարհ, եղավ մեր մայրն ու կինը:

Սիրենք նորան՝ գեղեցկությամբն ըզմայլած.
Պաշտենք նորան՝ անցյալ վիճակն հիշելով.
Ուր որ հաճույք կամ աղետ կա անմոռաց՝
Նա է պատճառ, կը հայտնելի շատ շուտով:

Սուրով՝ կրակով բապանողին կա օրենք
Կախաղանի և կամ պատժո գրիտատման.
Բայց կինն որ մեզ կը տա թե մահ, թե գնհներ,
Դարձյալ սիրո, ներողության է արժան:

Որովհետեւ նա հրեշտակ է միաթև,
Եվ ավելորդ այդ թևն ունի միշտ ձեռին,
Կը գործածեն իբր հովահար մի թեթև.
Նորա զեփյուռն՝ արծաթոծն մեզ հուր գոխքին:

Ի ՄԱՆ ԱՌԱՔԻՆԱԶԱՐԴ ԶՈՐՆ
ՀԱԿՈՎՐԱ ՍՈՒՐԵՆՅԱՆ

Սառնամանիք սառ երկրումը հյուսիսի՝
Մածկեն նշրարքն առաքելուն Հիսուսի.
Անհաղթի հողուն եղավ նա ավար,
Նա՝ որ հայրն էր մեր ամենին հավասար
Բայց հիշատակ նորա երբեք չէ՝ մեռած.
Նա միշտ կ'ապրի մեր սրբոտերում տըխրամած:

Այն սառ երկրում օրինակով՝ սիրով ջերմ
Պըտղարերնց աղգալնության սիրո սերմ.
Օտարաց մեշ յուր կըղերի լոկ տիպար,
Հայ խմբյակին պաշտպանն էր և պատիվ տար:
Նա միշտ կապրի և կը մընա անմոռաց
Մեր սրբոտերում. ո՛հ, նա բընավ չէ՝ մեռած:

Փիլիսոփա՝ և մարդասեր աշակերտ
Այն աստուծուն, որո խաշի սիրակերտ
Ըստվերին տակ՝ կը հավաքեր յուր փարախ,
Բաղկատարած, անուշ ժպտով և ուրախ:
Նա նոցանում հոգվով կապրի, չէ՝ մեռած.
Գերեզմանը մարմինն է միայն զըրաված:

Այո՛, կ'ապրի սըրբակըրոն ծերունին:
Նվ յուր ըստվերն որմոցը վրա տաճարին
Կը սավառնի. և ոտքերուն յուր հետքեր՝
Սուրբ խորանին աստիճանաց զարդ են դեռ.
Ուր տեղ ալնքան հոգինեք է ըստփոփած,
Նա նոցանում, ո՛հ, բընավին չէ՝ մեռած:

Մարմին Տյառն սընունդ կը տար նա հոգվույն,
Իսկ յուր հացը՝ կյանք աղքատին և որրույն.

Տընով հոգովով աստուծո ին նա դրացի.

Խոսք Քրիստոսի տանը դընելը ի գործի.

Տար ապաստան, մըխիթարանք և կուշտ հաց.

Նա աղքատի սըրտումն անլրի, չէ՛ մեռած:

Ապրի նաև դրականական կրկեսում,

Յուր գեղահայտ և օգտավետ գրքերում.

Ապագային մի անաշուտ պատմություն

Պիտի գովե նորանում նախ մարդկություն:

Այլ ազգության շահին մեջը միշտ արծարծ,

Իբրև մի բոց պիտի փայլի, չէ՛ մեռած:

Միշտ սըրբությունը պիտի լինի հիշատակ

Այն արդարաց, որք յ'անթառամ ի՛ պըսակ

Բարի գործոց բողոքեցին իրենց օրեր՝

Մինչև անգամ տաղանդազն սերունդներ:

Յուր զավակաց հոգովում, գործում, չէ՛ մեռած.

Պիտի մընա միշտ նոցանում տողորված:

Պիտի ապրիս, պատկառելիք իմ հայրիկ,

Ամենայն տեղ՝ խըրճիթին մեջ աղքատիկ,

Խեղճ և անտեր ուսանողին իսկ հարկում,

Նամանավանդ իմ պանգըխտի այս սըրտում,

Որ թեպետ այժմ սուրբ շիրմեդ էլ հեռացած,

Համբույր արցունք տալով կասե՛ չէ՛ մեռած:

Ձի կենդան է ինձ համար քո հիշատակ.

Խնամքով պահե նրախաղետ քո զավակ.

Գերեզմանըդ լեզու ունի կենդանի,

Հիշատակըդ տա բարախյուն սըրտերի:

Այո՛, դու միշտ պիտի մընաս անմոռաց.

Քանի որ մեր սըրտին խըփես՝ չե՛ս մեռած:

Միայն այդ է վըշտահար և ցավալի՝

Որ տեսնելու չենք էլ պատկերդ սիրելի.

Եվ ոչ անուշ ձայնըդ հեզիկ լըսելու

Եթե նոքա ենթակա են կորչելու,

Ամենայն օր թող մեր հոգին քեզ օրրան,

Նորից այնտեղ ծընիր, կանգնիր քո խորան:

ԱՐԵՎԱԿԵՉ ՅՈՐՅԱՆ

Հանդարտ և առույգ, գերանդին շայկած,
Ուրախ դեպ ի դաշտ դիմե շինական.
Ուր ոսկյա հասկերն միմյանց ընդգրկած,
Այգուն հեզ շընչով շարժին և պար գան:

Հորիզոնըն շինչ, սառ, պայծառերդան,
Որ զեռ հըղի է շահովն արփենի,
Ո՛հ, ո՛րքան հույսեր, և որքա՛ն պատրանք,
Գույն, առատություն բերե աշխարհի:

Դեռ վերին մասը երկնից կամարին
Մութ է, խորհրդավոր վարդկապույտ գունով,
Նըման՝ շըրշափակն աչաց նոր հարսին,
Ույր սիրտ բարախե փեսին սպասելով:

Ահա երկրիս էլ խավար գոլորշին
Թըւումը թևերով մեղմիկ կը վանեն.
Լերինք ի՛ դաշտաց զատվին որոշին,
Բույսը և կենդանիք միմյանց ողջունեն:

Միծաղ է համալն հըրճվանք և խրեղում.
Համաձայն հավերն և ձագունք անգամ
Խաղ, ժըպիտ խառնեն իրենց երգերում,
Օվստենա հասույին երգեն միակամ:

Դեղջուկն հռապիր աղոթե մընչիկ,
Խաչակընքելով հակատն քըրտնաթոր.

Պատրաստե յուր սուր մանգաղն հանդարտիկ,
Հընձել յուր ճրգանց արդյունքը բոլոր:

Սակայն բլուր ավաղ... արևն կենսաբեր...
Խամրած է կիզած ցորյանքն յուր արախն.
Նորա շին տար կյանք աղի արցունքներ.
Յողը չի վայելի շորացած հասկին:

Այլ գեղչկին գրացի հարուստ մեծատուն
Ունի բարեբեր պղտղալից այգի.
Նա երբ դուրս ելլե տանից առփուտուն,
Նորան ամեն ինչ արտադրե ոսկի:

Սակայն դու մի՛ լար, եղբա՛յր ցավադար.
Թեպետ մեծարեմ արցունք քո աշաց.
Որք արդար՝ վըսեմ գանգատով են վառ,
Քան ժըպիտ դրացվույդ՝ ոսկույն պես գեղնած:

Ջանա՛ւ լուկ տեսնել յ'այս հակապատկեր
Դիմակ մարդկային վըշտաց խաբուսիկ.
Կու լաս՝ դի արտիդ այրեցան հասկեր,
Մինչ խըղճով տանջվողք ժըպտին հավասիկ:

Ջի ախեզնրաց փըրկիչըն հանուրց
Ասաց. «ամբարշտին հաջողի յ'երկրի».
Չեն կիզիր նորա ո՛չ այգին, ո՛չ խուրձ,
Նա որ խեղճությամբ աղքատին բերկրի:

Բայց ո՛հ, խե՛ղճ է նա տուավել քան դո՛ւ.
Նորա զվարթ օրերն վաղ տնցնին անհետ,
Ջինչ քո արցունքներ որ հոսին աղու.
Այլ դու տի ժըպտիս և հըրճվիս հավիտ:

Գիտցիր որ կյանքը նման պատերազմի
Պսակոք և շիրմով միայն վերջանա.
Գերեզմանին վրա հաշտություն բաղմի,
Եվ նա ամենի արժան վարձքը տա:

Արտասովենք ուրեմն, եղբայր իմ գեղջուկ.
Ձի լա՛ց է տալիս ժըպիտն անդըթին,
Որն որ կենացն հետ շիշանի ի՛ սուգ՝
Յուր արտաշըճեղ շիրմին մեշ մըթին:

Մի սանդուղ զբտնես գուցե շիրմին քով,
Ինչպես նահապետն Հակովք հրազեց.
Դեպի հալոննիք բարձրանաա հոգվով,
Անդ զբտնես քո դանձ՝ զոր շուտեր բնավ ցեց:

ԱՄՊՆ ԵՎ ԾԱՂԻՎ

Դեղնած են, շոր մարգագետին և լերինք.
Կիզե արե ջերմ հուլիսի.
Սարսափ՝ ծարավ պատե երկիր,
Ըսպառնալիքս և օրհասի:

Տըխրի բնություն, լրոս ճրպուսն իսկ սըրինդ.
Ավեր, կիզյալ, ցամաք դաշտում,
Կը տատանի խեղճ մի ծաղիկ,
Որ բույր ունի դեռ յուր ծոցում:

Սակայն օրհասն ըզզա արդեն մոտալուտ,
Ողորմագին երկինք նայի,
Ուր կա կըտոր մ'ամպի թափառ,
Զարդ կամարին այդ ամայի:

Ալեկոծյալ իբրև նավու կողոպուտ,
Առադաստի նըման սպիտակ,
Հողմահալած, հըպարտագին
Ման դար երկինս գալկագունակ:

Զայն տար ծաղիկն. «Ամպի՛կ, գըթա՛, պահ մի կա՛ց,
«Այդ շըրերից գեթ մի կաթիլ,
«Որով քո ծոցն է միշտ հըղի,
«Ճողե ցողնույս իմ նորածիլ:

«Ո՛հ, մի կաթիլ բավ է կարճիկ իմ կենաց,
«Փոխարեն տամ անուշ բուրում.
«Կա՛ց, մի՛ գընար, ո՛վ անողորմ,
«Էլսիր որքա՛ն քեզ եմ խընդրում»:

Յայց նա խորոխաւ, մինչև անդամ հոգեմէն
Յուր դրոշմով պատգակելուին,
Որ քիչ առ քիչ կորսողորում՝
Կը թառամեր մօալլ և անգույն:

Երբեմնայի տուններն տմեն միասին
Հրատաօւ, զեղնած և փոշեպատ,
Յամաք, նիհար, դոս շոտերով
Երջընչերն մօռնչ հուսահատ:

Անդուք ամպը գեւ հեռանալ արհամարհ,
Սիդանալով լայննար, ուռեր,
Ժանգի նըման կարմիր գեղին.
Մոհու լուսթյուն երկրում տիրեր:

Դանգատն ու ողբ՝ լրջալ ծաղկին հեղ խոնարհ՝
Լըսեց երկինք, և ի հարդանդ
Ամբարտաւան ամպին ի կող
Խրեց կայծակներ որոտաշանթ:



Օձադալար ամպրոպ շանթեր՝
Մեզ ամպիկը պատառ պատառ
Բաժանեցին, և յուր մասունք
Ըսքողեցին արեն հրավառ:

Եվ շերմաշերմ շիթք անձրևաց
Ջերդ արտասուք ընկճյալ ամպին,
Ոսոկեցին զերկիր ցամքած,
Եվ կյանք տըվին դաշտաց ծաղկին:

Նա որ առաջ բարձր էր՝ գոռոզ,
Կարծեր իրեն երկինք գար նեղ,
Հոտըս ծաղկին՝ առատահոտ
Ասկակ կազմեց ի՛ տիզմ ի՛ ցեխ:

ՀԱՍՏԱՄ ՀԻՆԳ ԿՈՊԵԿԱՆՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅԼԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժանգոտած կանանչ մի լրջյալ դըրամ
Մովեզերքի վրա մնացել էր անշարժ.
Ողբական ձայնով պատմօր յուր անցյալն
Այնտեղից անցնող զանազան անձանց.

Ծա մամանակով մի բարձր լերան ծոցումը խրված,
Մի մեծ պըղընձի բաղմանելու հանգի մասն էի կաղմում,
Տարերքիս խառնված, բնական դիրքիցըս գոհ և բավական.

Զըգիտեմ ո՞ր թըշվառական
Անգութն արդյոք մտածելով՝
Գըտավ մեր այս բընակարան.
Ծվ արդյոք ո՞ր շարանընկն
Պատուեց կողերն այդ կույս լերան.
Ու մեքենայք գնելով՝ գործիք,
Հարվածներով բըրլի՝ ուսան
Մեզ փըշրեցին և շարդեցին.
Հետո մեր կտուր փըշուրներըն,
Փայտյա արկղաց մեջ լեցըրին:

Որոց հետո նաև ես էլ դըրվեցա՝ սեղմված ու ոլընդված
Մի սայլի վերա, որն որ համրաքայլ ճալով, ճըշալով,
Զորս գոմեշ լըծած, տարավ մեզ հասցուց մի մայրաքաղաք.
Տեղավորեցին մեզ մի մեծ տան մեջ՝ լիքըն աղմուկով.
Ուր աստված միայն տեսավ վերևից մեր քաշած տանջանք:

Նախ շրով լըվացին.
Մաս մաս բաժնելով՝
Մեզ միմյանցից.
Դասակարգելով,

Հետո կաթնալուծ լեցուցին կրկին
Նվ հալեցուցին տալով վառ կըրակին.
Սառեցրենելով՝ դարձյալ փըշրեցին.
Միայն այս անգամ փոքր ինչ խընամքով.
Բայց նորից մըտանք հընոցին ի՞ բով,
Այլ այն տեղից դուրս՝ դեռ չէինք սառած՝
Որ մեղի տըվին բյուրավոր հարված
Արկըմն ծանրը մեծ ուռանների,
Ու փոխարկվեցանք տափակ թիթեղի.
Ա՛խ թե դիտնայիք՝ ի՛նչպես տանջվեի:

Տափակացած, ճըմրած, հըղկած
Սառանայի մեքենայով,
Փառակուսի նրկայն դիրքով,
Կլորիկ կլորիկ մեզ շարվեցին.
Ընկերներուս հետ քովն քով՝
Կը տեսնեի նոցա տանջանք.
Սո էլ նրանց հետ ինկա կողով
Նվ հընչեցի ինչպես դանդակ.
Այն մեր ցավոց ու տանջանաց
Բողոքըն էր և աղաղակ.
Սակայն նոքա լի հասկացան,
Շահու սիրով կուրցած անհագ:

Մի ամբողջ գիշեր մընացինք հանդարտ
Այն կողովին մեշ հըղկըված էինք
Բոլոր մարմինով, կլորած ու փայլուն.
Բայց ալլակերպած. լեզու լուսնինք
Որ մեր ցավն հայտնենք այն դահիճներուն:
Նվ առավոտյան լի ծաղած դեռ լույս,
Եկան խառն ի խուռն, ու դըմոխային
Անթիվ մեքենայք հայսկույս և հայնկույս,
Մըլնուլորաին մեշ անխլք դառնային:
Տե՛ր աստված. դարձյալ մեզ առին տարին.
Խումբ խումբ ածելով երկաթ դասի մեշ,
Ում մոտ մի ցուցանք գիվական գործի,
Ինձ էլ իմ կարգին առավ իրեն տակ.
Այնպես մեկ ճըմլեց, որ թե պոռացի,
Տունը քանդըվեր ողջ հիմն ի հատակ:

Այս փորձանքից հետո կրրկին
 Երբ գլորվեցա մեշ սընտովին,
 Ինչ ըզգացի մի դրամ ողորկ,
 Ինչպես բուր հղբայրքս ու քորք.
 Մեր վերա էլ տպագրել էին
 Քվանըշանը հինգ քարիկին.
 Իսկ մյուս կողմն էլ թագավորին
 Երկզուսն արծիվն զեղեցկագիծ,
 Որս շուրջը հզերքիս կից
 Պսակ էր կազմում դափնույն տերև
 Որ մի առնն լերան վերև
 Դրրացի էր մեզ հարատև,
 Հիմակ իմ վրա նորա պատկեր
 Քանդակեցին իբրև ընկեր.
 Գուցե այդ էր իմ տանջանաց
 Լրումըն վախճան, թիրևս պարզև

Աչ ու ձախ կողմերս, նույնպես մեքենայք շարչարում էին
 Զանազան մետաղք. և երբոր նոքա ինկնային արագ
 Կողովների մեշ, դեղին և սպիտակ, վառվռուն փայլերով,
 Նոցա վրա հանկարծ ես նշմարեցի ուրիշ նըշանակ,
 Տաս կամ տասն և հինգ, քըսան քաբիկի թվանշաններով,
 Հինգ ուրվինոցի. Մաստիկ նեղացա՝ իմ չընչին արժեք
 Բաղդատելով նրանց. սակայն ըզգալով անսակա ու գույներս
 Անարգ պըղընձի, խոնարհեցուցի գլուխըս վըշտարեկ,
 Նվ այդ մետաղաց շողշողմանց մեշ իսկ փընտուեցի բույներս
 Նախկին լեռնական, Քեպետ ունեի ես ինքս էլ մի փայլ,
 Շիկագույն կարմիր, բայց ավա՛ղ, ես չէր այնպես դիմացկուն,
 Ինչպես ռակվույնը. դիտեի որ շուտ կը սննամ մըռայլ.
 Իմ առաջ դըրված նըման հղբայրցըս հընացած անգույն,
 Որոնցից կրրկին նորեկ դըրամներ պիտի ծուլեն.
 Ո՛հ, քանի՛ցս արդյոք այն տանջանքները նոքա կրել էին,
 Դեզ դեզ բաժանված,
 Ու հաստ կըտավի տոպրակների մեշ մեզ դետեղեցին.
 Ու դուրս առնելով տանջարանից,
 Ուր լուկ սև երես
 Կային խումբք մարդկան,

Որք իբր ուրվական
Մեր շուրջը ման գան:

Արծաթ ու ասկի բնկերներն հեա
Փոխադրեցին մեզ մի նեղ խուցի մեջ,
Ուր տապալալից անանգլակ ալգետ,
Ինկանք գետնի վրա փռշտ, թաց ու գեճ:
Մի քանի օրից հանկարծ բաց արին
Մեզ պարունակող բերանը սլարկին,
Ու մի շոր պարոն նիհար՝ գեղներես՝
Այն տեղից ափով զուրա հանեց ըզմեզ.
Դոս դաս կարգադրեց ողջ իմ եղբայրներ,
Մեզից մեծ ու փոքր կազմեց զամարներ,
Ջանադան մարդկանց բաժնեց հավասար,
Որոնք առնելով զնացին աճապար.
Ոմանց ձեռքին մեջ, ոմանց էլ քսակում՝
Հեռացանք այն տնից՝ ուր տանջանք՝ սոսկում
Տեսած էին լուկ,
Հավետ անկարող
Անել մի բողոք:
Նվ հենց այն օրից
Տանջանաց մի կյանք
Ըսկրսանք նորից:

Չունեի գաղար ցերեկ ու գիշեր.
Խանութից խանութ, կըրպակից կըրպակ
Գլորվելով, քիչ քիչ զըրերս կը մաշեր.
Նվ այնպես անարգ ինձ գործածեին.
Երբեմն տեղանի դարնելով ուժգին,
Եսա հեղ նետվելով սոստիկ բարձրերից՝
Վերավորվեի ճամբու քարերից:
Ա՛խ, տե՛ր իմ աստված.
Եթե գիտնայիք՝
Բե ի՛նչ են մարդիկ
Ասիւրախտ, անգութ
Մետաղաց գերեք.
Որք կեղծիքով սուտ
Նըմաննին խաբեն

Քալանեն ըստեպ.
Ամեն բան շափեն
Շահերնուն ի դեպ,
Ո՞ր մեկն ասեմ, ո՞րը պատմեմ,
Մին քանիսը միայն հիշեմ.

Զոր օրինակ, շատ ման գալով վաճառանոց ես ինկա.
Օրական հաց, պարեն գնելու՝ ամբոխն այնտեղ միշտ կուգա.
Ուր դիպվածքով քսակը մըտա մի լավ հագված պարոնի,
Որ ինձ տարավ ուղիղ մի տուն մեծ, ընդարձակ, անվանի.
Այդ՝ քաղաքին պանդոկըն էր, ուր շատ ճամբորդք կը գային.
Այնտեղ դըրսվանց երևցած մաքրությանը՝ զարդերին
Համաձայն չէր ներքին վիճակն. խոհանոցը մանավանդ,
Ուր քըսանից տվիլ ծառայք և օգնականք աստ և անդ
Գնային գային, շոգիների ճենճի հոտում լողալով.
Ուր աղախինք սենյակներուն աղտն ու մուրը մաքրելով,
Գային այնտեղ պընակ լվանալ այդ կեղտոտած ձեռքերով.
Այլ խոհարարք երկու մատով քրթի կեղտերն մաքրեին,
Նույն մատներով ճաշերի վրա աղ ու համեմ սըփռեին.
Հոտած միսերն, աշխած համեմն՝ արտաքուստ լավ զարդարած
Տային իբրեւ թարմ կերակուր անդ հաճախորդ ճամբորդաց:

Այս տեսնելով, փառք տվի առ տեր՝
Որ ես չունեմ մարդկանց նըման
Մարմնո անթիվ՝ բյուր պահանջներ,
Ոչ կերակրոց ճաշակաման,
Ոչ ըստամոքս, ոչ որովայն,
Ոչ փոր, ոչ սեր, ոչ ակտորմակ,
Որով լափեն միշտ ամենայն,
Եվ կերածնուն են անգուշակ:
Ահա սեքա են լոկ պատճառ,
Որ նորութուն դարձան ձեր մեջ
Որովայնի ցավն ու քաթար:

Անդ խոհանոցի վարպետն ինձ դըրավ
Մոտիկ մի փոշոտ մութ պատուհանի.
Ուր անդից մի տղա գաղտով ինձ առավ
Նղբայրներիս հետ հինգ քաքիկանի,
Եվ փութով վազեց կիրակի օրով.
Ման գալ աչ ու ձախ քաղաքը հուով.
Մենք էլ ճեպին մեջ ուրախ հընչելով,

Ներս մասնք քաղաքի պարտիզին դռնով,
Ուր վիճակախաղ սարքած էին շատ
Հարուստ տղաներ, ի նըպաստ աղքատ
Կամ հիվանդ մարդկանց, և կանանց տղերք.
Ուր շրթնդ տիկնայք՝ ժողովով մարզավար՝
Վիճակախաղի ծախսին տոմսակ,
Նըստած զարդարուն ի՝ դահավորակ.
Ամեն մի տոմսակն արժեք քան քարիկ:

Ինձ զողացուզ պարոնիկ
Խոթեց յուր ձեռքն՝ մընտրոյիկ
Գըրպանին մեշ, ու հանեց
Մեղ շորս եղբայրս միացրեց.
Խաղատոմսի գինը կաղմեց.

Ու նետելով մեղ սեղանին վըրա թավշով քողարկված.
Որս գեմ նստեր մի արիսթուքրաթ տիկին դեղանի,
Առավ մի տոմսակ ու մըսավ ի՝ սրահ դռններիցը բաց,
Ուր տեղ բաղմոթյունն մի քանի քարիկ ի սեր առմասակի
Տալին ազրաաի. և շընորհիվ այդ խնդճ ողորմության
Տոմսակից էլ թանկ և լավ ընծաներ իրենք շահելն.
Զի կարողացա ես խելք հասցընել մարդկանց գըթության,
Աղքատտիրության, ուր ողորմողն ավելի շահեր քան ողորմելին:

Սեղանին վրա տիկնոջն առաջ
Անուշադիր ինձ թողուցին.
Նրխաասարդ սիրահտուշ,
Միշտ մեր շուրջը կը գտնուային.
Նա նոր ելած գործարանից,
Նախկին փայլս գեռ շէի կորցրեր.
Ծովվեի հին եղբայրներից.
Տիկինն էլ այդ նըշմարած էր,
Որ քսակն իսկույն դուրս հանելով՝
Տեղըս գըրավ մի հին եղբայր,
Այլ ինձ նրա տեղ ծածկեց խնամքով,
Անուշահոտ քսակին ի՝ ծալրու

Անքան սիրուն էր իմ ալն տիրուհի՝
Որ մեղուք նորան ծաղիկ կարծեին.
Մարդկեղեն մեղուք. որոց խումբ բըռնի

Միմյանց հըրելով մեզ մոտենային.
Նրանց մեջ երեք հատ ունեւր սիրահար.
Տիկինն էլ նորանց սիրեր փոխադարձ,
Եվ յուր ամուսնից դադարնի ծածկարար
Նրեքին էլ աւար հառաչանաց վարձ:
Խորամանկ տիկնոջ խաղալիկ դարձած,
Զորսն էլ միմյանցից լուսնին կասկած.
Զի զմայլեցուցիչ մի ժրպիտ ունեւր
Անմեղ հրեշտակի սուրբ և երկրավոր.
Բարեգործությանց տիրուհի բազմեր,
Մոտն արած մարդըն յուր կոտորավոր
Նրեք օր լինեւր որ կայի պահված
Այդ տիկնոջ քսակում՝ արծաթ ընկերոյ հետ,
Երբեք այսպիսի փափկալի կենաց
Վարժելած չէի. սակայն միշտ անպետ
Ու չընչին մետաղ մեղ կը համարի
Հարուստն ազնվական, ու մեծ տանուտեր
Արհամարհանոք մեր վրա կը նայի.
...Անդո՛ւթ, ապիրա՛խտ. ի՛նչ շուտ է մոռցեր՝
Որ մենք խեղճուկներս հիմնած ենք նորա
Այդ հարցատություն, միլիոն ուրբիներ,
Զորս նա հավաքեց, մինը մյուսին վրա
Դիզելով բոլոր քարիկանոցներ.
Նա խնամքով պահեր մեզ այն ժամանակ,
Ու մեկ հատն անգամ մեզանից չէր տար
Մուրացկին՝ որ գնե մի փոքր նրկանակ,
Եթե իսկ քաղցից մեռներ, հոգին տար...

Վերջապես մի օր պատահանին դեմ իմ տանտիրուհուն
Ծկավ մի աղքատ մուրացկան կանգնեց. և իմ տիրուհին
Հանեց քրտակը, ուր բաց ի՛ննձից՝ մի արժանագին
Պղինձ դրամ չի կար. ու շատ բարձրերից խեղճըս վայր գլորեց.
Անշուշտ ցանկալով ողորմություն տալ այն խեղճ մուրացկին.
Այլևս ինկնալով քարերի վերա, կողքս ճգմըվեց.
Եվ ոչ ոք չսեց ըզգացած ցավըս, երբ հընչեցի՝ ցի՛ն...
Աղքատն ինձանով այն օրը դընեց մի հատ նրկանակ.
Ու ես մընացի հացագործի մոտ վառ փուռի կողքին.
Ուր տեղ երթնեկն բանվոր տըղայոց, բոցերն ու վառ կրակ
Հիշեցուցին ինձ իմ անմոռանալի տանջանքս գործատան,

Որոշ շրնորհիվ այսպէս թափառիմ դանադան տեղեր.
Շալկաժ թվանշանս, շատ արժանագին, սաստիկ անպիտան,
Հազարավոր կերպ մարդկանց ձևերում եղած տարուբեր.
Ջա՛թ, այստեղ խրդին, բա՛թ, այնտեղ դարենն դետին ու գլորին -
Ինչ էր իմ մեղքս՝ որ ինձ էլ աստված ոսկի չի տանդեց.
Կամ զոնյա արծաթ, որ մարդիկ փոքր ինչ ինձ էլ հարգին.
Այլ երբ գանձվիմ այդ մարդկանց մոտը, որոնք մեծամեծ
Ունին կալվածներ և հարրստութուն, հայնժամ ես իսկույն
Ինձ զննահատեմ, ըղգալով անշուշտ իրբն պինդ մետաղ՝
Ջանազանութունս նոցա սրբտերից. որոնք կարծրագույն
Եվ սաստիկ ամուր՝ պինդ են ինձանից, որք չեն տար՝ ավա՛ղ.
Այն օգնութունը իրենց փողերով՝ քաղցած թըշվառին,
Որքան որ ես տամ քիչ քիչ՝ ամեն օր, եղբայրքս էլ նույնպէս.

Հանապազօրյա գոնե մի շոր հաց,

Կարոտ արնանկաց:

Ոսկին լավ օրվա ընկերն է մարդուն.

Նա կերթա այնտեղ՝ ուր կա լույս հանդես,

Բայց մենք կը հասնինք յուր նեղ օրերուն.

Որքան որ մեր վրա նային արհամարհ,

Երբեմն հասնի նեղության բուպն,

Ուր ոսկուց թանկ է պղդինձը խռնարհ:

Այսպէս դատելով՝ ես անհամեմատ

Վեր դասեմ ես ինձ, ու չեմ հուսահատ:

Բայց եթե իմ այս խոհեմ կարծիքով

Ինքըս մի իթարեմ, այլ բնավ չեմ կարող

Տանջանքս մեղմել, սաստիկ հոգնելով

Գիշեր ու ցերեկ... զոնե ինձ մի դող

Կամ մի ազահ մարդ հանկարծ գողանար...

Թերեւ հանդիւի փոքր ինչ նոցա մոտ:

Սակայն գողն ինձմով ի՛նչ շահ կունենար.

Նա թեպէս սրտովն ի՛ դող միշտ երկշոտ,

Որսա թանկագին արժող առարկան:

Գուցե ազահը՝ ժուժկալ դարչահոտ՝

Մինչ իսկ ինձանով լինի բավական,

Անհուն դանձին մոտ ինձ էլ պահպաներ,

Ձևանալով միշտ ազքատ մուրացկան:

Բայց ո՛չ, քա՛ղ լիցի. մի՛ արասցե տեր.

Այդ փորձանքին էլ մեկ հեղ հանգալեցա,

Մի ձեր ազահի ձեռքը խնկնալով,
 Գետնափորի մեջ մառան դըրվեցա
 Իբրև բանտարկյալ՝ մյուս ընկերաց մոտ:
 Մնացի այնտեղ անկենդան տեղարժ.
 Եվ ուրախացա, երբ նա մեռնելով՝
 Խեղճուկ դրամիկըս թափառելու վարժ՝
 Նորից սկսա մարզկանց մեջ հոլով՝
 Առաջվան կյանքին իմ աստանդական,
 Ի շնորհքս միակ յուր ժառանգ զավկին,
 Որ իբրև անխելք մի հիմար անբան՝
 Բոլոր ընկերներս մոզեց ամեն գին:
 Գոհ լինեի իմ վիճակից,
 Համբերելով հարվածների՝
 Կտանեի արատն ու բիծ,
 Եթե միայն չըջավորի
 Հընար լինեի ծառայել միշտ.
 Սակայն ամեն ըոպե վայրկյան
 Տեր փոխելը՝ է մեծ մի վիշտ.
 Գղրոց, սեղան, երբեմն անկյան
 Մութ խորշերում դըլորտըկիլ.
 Իմ պատճառով տեսնել կոխվ.
 Եվ անլեզու մունջ պաղանձվիլ.
 Մանավանդ երբ կաննն հաշիվ:
 Որքան խարդախ կեղծ խաբեբայք
 Կըրպակաց մեջ խաբում են մարդ.
 Վաճառականք՝ նաև ծառայք
 Մի ըոպեում և հակընթաց
 Գընողներին երգումով սուտ
 Իրենց ապրանք գովարանեն.
 Խեղճ աղքատաց՝ որք զան խանութ,
 Որ գինեբրից լավ տեղյակ չեն,
 Երգում տալով աստուծո վրա՝
 Նորանց ավել գյուրավ խաբեն
 Առանց խղճի և անխելա,
 Բավ է որ միշտ ծախեն շահվին,
 Նորանք կոչեն աչգ՝ առուստուր.
 Սակայն ես ինքս չեմ հասկացած.
 Աստանայի այդ խառն ապուր.

Որին մարդիկ են ընդունած,
Գողութիւնից շատ չէ տարրեր.
Միայն գրանում զանազանի,
Որ նրանք թալնեն բաց անտարրեր,
Այլ գողերը գողնան գաղտնի:

Հանգչում էի մտտ մի խանութպանի,
Որո՞ւ տեսաւրի առթիւ ինձ տըվին
Անտաղանդ տըղետ մի դերասանի.
Կարելի է կտրիկ նման տակաւին,
Այլ շատ համարձակ է հանդուգըն էր.
Վարքը անհամեստ և ապականված.
Առաջին կտրդի երբ դեր կատարեր՝
Գըցին ինձում մի կատու սատկած:
Թե ըստ յուր մըտաց ընդունակութիւն
Ընտրեր ասպարեզ, գուցէ մարդ գառնար՝
Արժանանալով պատվո հարգութիւն.
Բայց նա կարծում էր որ ունի հանճար
Լեռն ողորդական. ընկերքը բոլոր
Վերան խընդացին, նա չէր հասկանում.
Խելք չի կար խեղճին զըլխումը կըլոր.
Նախանձը միայն սիրտն էր կըտրատում,
Եվ անկարգ կյանքից դինուց ողորդ,
Դառնար օրից օր մի գեղնած զըզում:
Նա տարաւ հետը ինձ ինձ թատրոնին.
Ուր որ ննդ ու գալ ու խարզախութիւն,
Ջանազան տեսակն մարդկանց կըրքերին
Այնտեղ կը ապրին խոսք, ժամադրութիւն:
Շատ անպատվելի գործեր անդ տեսա,
Ու միանգամայն բզզացի զըզվանք.
Անհամեստութիւնց թիւ համար չի կա,
Այնտեղ մի օրում դե դառնան կուսանք:
Կալին դերասանք հազված վառաւոր,
Ձրոնք երեսին փոշած երբ դուրս գան,
Դառնում են այնպէս զբաւիշ դյուխովոր,
Որ թիք թիք դարնեն սըրտերն աղչըկան.
Որք պաշտպանութիւմը կանանց վաղաշուտ՝
Երբեմն հանճարի կունենան հըսակ,

Որոց թե երեսն լըվանաա փոշոտ,
 Տակից դուրս կելլա մի խեղճ իմաստակ:
 Դերասանուհիք կան նույնպես շատեր՝
 Որք չունին տաղանդ կամ սիր տրվեստի:
 Աչ ու ձախ կանեն անուշիկ աչքեր,
 Այնպեսով ճարեն միջոց ապրուստի:
 Իրենց կողմ շահին մեկն հարուստերից,
 Որ անմըտարար կը շռայլե ոսկին:
 Եթե վերջանա, դուրս կանեն առնից՝
 Որ գընա տեսնել հատակըն քսակին:
 Զինչ բացառություն գտնովին երս
 Լավ դերասաններ վարմունքով բարի,
 Դուցե տնվանի տաղանդներ թերեա,
 Որ փողը վատենն զերթ մի ափ գարի:
 Մեկ խոսքով, գրեթե չի տեսա այնտեղ
 Մի լավ բան, բացի լուր նըսլատակից՝
 Զոր տսեն՝ թատրոնն ըզրոտանք անմեղ
 Զընչն թերութունք վատթար բարքերից,
 Զի արվեստական հայլի է բարուց:
 Այնտեղ կը դիմեն մարդիկ խըմբովին՝
 Մաքրիլ հողեկան կեղտերը գըձուձ:
 Այլ թե կեղտոտ է ինքըն իսկ հայլին...
 Հայնժամ խեղճերը ինչի մեջ նային:

Այնտեղ լուկ տեսնեն
 Փոխանակ վըսեմ
 Առաքինություն՝
 Հաղթանակն՝ ու փառք
 Զըզվելի նըսեմ
 Վաճաշոտություն:
 Երգն ու պար անկարգ:
 Ուր ալը, կին, աղբիկ,
 Լիրբ և անպատկառ
 Խաղերի կը գան,
 Օրերս քոմիք,
 Ուր մարդն իսկ արդար՝
 Անբարոյական
 Կը դառնա ստատիկ:

Ինչպէս որ ասի, դերասանք մեզի պահել չըզիտեն.

Դուրս ելա կըրկին այդ մութ զըժոխքից՝

Որո հայելվուն ճառանչը բոցեղեն

Շատերին վըրա թողնում են մի բիծ:

Դրան մաս ուր որ միշտ տոմսակ կը ծախեն,

Կարծեմ միմիայն երկու օր մնացի.

Տեսա՝ հաշիվներն ինչպէս խաղախին.

Ու մեծ դարմանք լուռ ծիծաղեցի:

Դարձյալ ըսկըսա զըրպանից գըրպան,

Քրտակից քրտակ, ծոցն աղքատների

Իմ ամենօրյա կատարել շըրշան,

Երբ հանկարծ ինկա մաս մի տերտերի...

Տերտերի ծոցում քըրտինքից խաշված:

Օրերով մնացի. նաև մի քանին

Իմ ընկերներից ուներ նա պահած,

Ու չէր վըճարեր պարտքը մսագործին:

Եկեղեցնա մաս մի շնն գլուղի մեշ հասա վերջապես.

Աղքատիկ դեղչկանց ու հողագործաց ձեռքում շըրշի.

Ուղիղըն տասած՝ խաղաղ էր վիճակա, ու գոհ էի ես:

Ինձ նման՝ իմ գուշնով մարդկանց ծոցումը միշտ գտնըվին:

Որք իմ հարգա ալիւ կը ճանաչին քան թե քաղաքում.

Ուր առանց ոսկվո, թղթի տրծաթի մեղմով գոհ էին,

Ուր առանց դեղի, առանց բըժըշկի սղջ առողջ էին,

Ուր արվեստակցալ կեղծ դարդերի տեղ բնություն սիրին:

Բայց այդ հանդիստս էլ չի տեսց երկար.

Ձի մի խաբերա ձեռնածու տըլլոր

Այնտեղ դանաղան խաղեր կը խաղար.

Օրինակ, չվանում շըրշիլ անմորր,

Դընդակներ կուլ տալ, թըռցնել ու կորցնել,

Ծուլց տալ և մարմնս զորությունք ճարդիկ.

Ի թըթիւ ախան շուտ անհետացնել

Պըղընձն գրամներ, ու երանց կակուղիկ

Ձեռքում մի առ մի սեղմելով ժըռնլ:

Այս՝ վերջին խաղը սաստիկ դուր եկավ

Այնտեղ հալածված ամբոխին ապուշ.

Եվ մի գլուղացի խկուլն մոտեցավ

Պըղընձն մի դրամ ձեռքին մեշ վատուծ,

Նետեց խաբերա թըշվառականին...

Մըտածեցեք, որ ե՛ս էի այն հեղ
Դրամբն խըղճալի. և ի՛նչ ահագին
ծավեր քաշեցի, երբ ինձ կիսարեկ
Կորացրուց ուժով անգութ խաբեբայն.
Մեքքիցըս ծըռված տանջանքով անհուն,
Հիշեցի կըրկին իմ տանջանարան,
Անեծք կարգալուծ ողջ մարդկանց զըլխուն:

Եթե գիտնայիք՝

Թե որքա՛ն զըրկանք,

Նեղութուն, շարիք

Տըվին ինձ մարդիկ:

Էլ մի ժամ առաջ

Մըտածեի ճար

Միշտ վըշտահառաշ,

Այո կյանքից վատթար

Փրկվիլ, աղատվիլ,

Ու գըլորվելով

Երկրից շընշըվիլ:

Սակայն ո՛ւր գնայի.

Ուր որ էլ լինիմ,

Անշուշտ ինձ գըտնեն

Մարդիկ սխերիմ:

Ա՛խ, տեր իմ աստված,

Ողորմե՛հ ու տո՛ւր

Վերջ իմ տանջանաց:

Մանավանդ զըղվանքս ավել սաստկացավ,

Երբ մի գեղացվո խեղճ գերդաստանում,

Ուր ամեն օր գրեթե տիրեք քաղց ու ցավ,

Պառկած խըրճիթի մըթին անկյունում

Իմ մետաղաքարշ ուժովըս բնական,

Ջանայի ժողովել հղրարցս մի քանին

Որ նա կտրենա գեթ յուր օրական

Սընունդը ճարել յուր ընտանիքին:

Այլ կալվածատերն եկավ հանկարծուտ՝

Պահանջել պարտքը տարվա շըրջանին,

Որից չէր կարող խեղճը տալ փախուստ,

Որին անգթաբար անխեղճ թալնեցին:

Եթե այս աշխարհ
Խնչ որ ես տեսի
Կյանքումս բախտավար՝
Գրեի հարկ լինե՞ր,
Այնպիսի մի մեծ
Հասար կազմելն,
Որ գուցե երկրիս
Դառնար ժանրը բնու

Առաջին փուլըս կորած էր վազուց.
Հինգ թրվանը շանս ամրած, անըմար՝
Մարդկանց ձեռքերում տարւեր վեհուց.
Գուցե էլ փոխվեցաւ սկսած խավար:
Մեկ վախ էլ մըտաւ սրտումս հանկարծ՝
Որ չլինի թե ձուլվելու կըրկին
Գործարան տարվիմ... տըխո՞ւր վերադարձ.
Որից՝ վերջապես փլերկեց ինձ երկին:
Ջի այդ հափշտակող կալվածատերը
Մի ժովեղբյա տան մեջ բռնակեր.
Որի կաշտ ծառան գրեթե ողջ օրը

Հարրած դորտը կեր,
Մեկ օր էլ այնպես
Սաստիկ հարրած էր,
Երբոր սահելով
Գլխովեց ի՛ մով:
Այլ շուտ սթափելով,
Լողաց ազատվեց:
Մակայն եղբայրներս՝
Ես էլ նոցա հետ՝
Գրպանիցն ինկանք
Ու ծով թափվեցանք
Ու կորանք անհետ.
Խնչ ուրախութիւնս

Երբեք այդ ծառան մահից ազատված՝
Այնքան չէր ուրախ աշխարհ դառնալով,
Որքան ես խեղճովս տանջանքից զազրած,
Մովերի խորքում հանդիստ գրտնելով:
Երկար տարիներ նընչեցի այն տեղ ի խաղաղութիւն,
Երբոր փոթորկաց ահեղ մըռնչլուն

Մովբն հատակից արեկոծեցին,
Բարձրացան ակիք, հորձառեք փրփրածին,
Որք ինձ ծովեզերք հանկարծ զըցեցին:
Ա՛ռ ինձ, ա՛վ անցորդ, կըրկին ծո՛ւղ նետիր.
Ինձնից քեզ օգուտ՝ խընդրեմ մի՛ ոպասիր.

Տես ժանդոտեր հմ,

Մամուռ կապեր հմ,

Երկու քաբիկի արժեքս է մնացեր.
Դարձուր ինձ կըրկին ի՛ ծով իմ զըրախտ.
Գեթ դո՛ւ մի՛ լինիր անզուժ ասկերախտ
Քո նըմանյաց պես. որք թե իմանան
Իմ այստեղ լինելս, անկասկած կը գան
Առնել իրրե մի շատ թանկագին բան,
Խոթել ինձ նորից այդ տանջանաբան:
Ո՛հ, ազատի՛ր ինձ՝ խընդրեմ՝ այդ տեղից,

Այս դառն աշխարհից,

Որ տերն էլ հոգիդ փրկե զըժոխքից:

ՎԱՔԹՈՐ ՀՅՈՒԿՈՅԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Մտաց և սրբաթի արցունք հոսե տիեզեր,
Հազվո անմեռ շիշյալ ջահըն նա կ'ողբա.
Որ արդ անմահ հավիտենից ի եղեր՝
Երկրագրեղիս՝ թրվի ավել լույս կը տա:

Հիշատակն յուր մթագնե աչքեր մեր մարմնույն.
Նորա՝ որ մեր հոգվո աչաց լույս տըվա՛վ
Ոգույն շահով, որո խանդից միշտ անհուն
Տըղիտություն մըթության հետ խույս տըվա՛վ:

Հեղափոխյալ Գաղղիան երբ կը ճըղներ
Մերթ խուժանին կամ մերթ հոաց լուծին տակ,
Արյունաղանց հորիզոնում անվեհեր
Փայլեցավ նա իրր ըսփոփանք երկնառաք:

Խոնարհեցուց Վաթնույի արծիվն սեզ
Յուր մութ ճակատ, ընկճյալ ի՝ փառս հեղհեղով.
Կամ հորանշան ալզ տեսիլքից ահաբեկ,
Որո արդեն լըսվեր թևոց վեհ շըշով:

Իրոք ոգին սա՛վառնաթև դայր ի՝ կռիվ
Կուրծ ընդ կրթի Պոնաբարթյան թըռչնույն հետ.
Մարաբնչեցավ անգուլ, անխանջ գիշեր, ալվ,
Ըիրանքն ու շանթ՝ կորզեց փետուրքն յուր ի պետ.

Եվ պարտելույն փետրից շինեց ահեղ գըրիչ,
Որով երբեմն գերյաց շըղթան խորտակեր.

Տղգիսության խարխուլ շենքին մերթ բըրիշ
Երբեմն էլ քնար, որով պատիժ՝ սեր երգեր:

Յուր վեհ ոգին ողբաց սիրով զմարդկություն,
Վըսեմ թարգման նորա ժրպտին և վըշտաց.
Խանդ անըսպառ վեհ ըզգացմունք, սեր՝ ավյուն
Որրին, հարստին, ազքատին և հայրենյաց:

Կործանեցավ դիվաշներն կիլլոթին,
Դողաց Մառաթ յուր փոսին մեշ մահահոտ,
Երբ նորա տեղ հիմնեց սիրո սուրբ բազին
Նըշանկության, Հյուսկոնդ, Շապու և Շաւաթ:

Խնստւն երեք թըվին արյան հեղեղներ,
Կաթն՝ որ երկիր ծըծեց մահու ըստինքից,
Նորա խնամքով բըխեց սիրո տալաններ,
Մարբիւ, ջընջիւ հայրենյաց վերքն, ազատ, բիծ:

Անսահման է աշխարհի սուղն ու աղնս՝
Որն որ այսօր յուր շիրմին շուրջ բոլորի.
Ծերունի էր և խոթացյալ նա թնայնա,
Այսուհանդերձ ո՞վ համառար որ մեռնի...

Ամեն կողմից ցավո սըգո ձայն աըվին.
Թն մեզնից գուրս կան յարդարնակ աշխարհներ,
Դուցի անտի էլ մեզ սըգով լուր տային՝
Թն այժմ երկիրս կաթիւ մ՝ արցունք է դարձել:

ԱՌ ԱՅՎԱԶՈՎԱԹԻ

Լեռանց գետիներ
 Աղշամուղը գալնով
 Երբոր ծածկելին,
 Լաքի՝ քողարթի
 Երանգ խառնվելով
 Ամսիւր կը ձայլին.
 Մինչ թանձր փրփուրք
 Կը ծածկեն ըզձով,
 Լուռ է դեռ երկին,
 Խաւ ըսպառնալից
 Սպասե փոթորկի,
 Հանկարծ շունչ մ'աւժին
 Կը ցրեցե ղերկիւր,
 Ալիք ուժգնակի
 Փաղիին ժայռերու,
 Սըփռն փրփուրներ,
 Գոլորշիք ոսկի,
 Հալեժամ քեզ հիշեմ,
 Ո՛վ Ալվազովսքի,
 Երբ սե՛ կապտերանգ
 Ալիք խաղարին,
 Եվ հորիզոնում
 Եեկ գոլորշիաց մեջ՝
 Գըլխակոր լուսին
 Փալիլուն երկարե
 Պոչն յուր սիրաշող.
 Ի ղիբկ ծովակին
 Ալիս ի՛ ցընժում

Խայտան՝ կայծկածին,
 Գալուստն հարսնեկին
 Երկնից ողջունեն.
 Ըստվերաց մեշեն
 Կոպւլքն ու պիթում,
 Արծաթն ու ոսկի
 Ու բաց կանանչը՝
 Միմյանց հետ մըրցին.
 Երբ քեզ կը հիշեմ,
 Ո՞վ Այվազովսքի,
 Գոճափն կենսատու,
 Ում գիրկ կարմրախայտ
 Վարդգույն ամպերի
 Ըսպասն լըռիկ,
 Որ ի՛նձ առաջայթ՝
 Արքան լույսերի
 Հանդարտ յուր մահի՞ն
 Իշնն գայթ ի գայթ,
 Ուր զոտի անհայտ:
 Երբ ի մի մակույկ
 Սիրահարք շքվայտ՝
 Մտղթեն տան բարի
 Միմյանց երեկո
 Եվ համբույրք ի՛ հայտ:
 Չինարբն քատմիդւմ
 Ակնախափող ոսկի.
 Միլիոն ակն երկրում
 Սըփոռն ծիրանի,
 Քեզ միշտ կը հիշեմ,
 Ո՞վ Այվազովսքի,
 Ինչպես որ կնոջ գեղանի
 Հարկավոր է մի հայլի,
 Ուր յուր ձիւրքերն աննշման
 Մեջը տեսնե ու զմայլի,

Նույնպես բնությունն ուզեց զբանեւ
 Իրեն արժան շրջեղ հայլի.
 Ու քո հանճարն զբաւով առավ,

Քո ներկայեանի շոխ, լեզվանի:
 Եթե ալլաջըդ պակսին լոկ մորենյուն,
 Ջերմութիւն տրդիւն, սառնութիւն լուանի,
 Ուր որ քո հողին սլանա գեղավարժ,
 Բն նըկարներումդ իւրք մընան անշարժ,
 Բն անդ չէ լըսվում մըրմունչ ծովեզրի,
 Այդ պատճառով որ վըրձնովդ են դրոշմած
 Ու հոնեարովդ կըտավում դամբած,
 Որպէս զի մընան միշտ անմահացած:

ԵՐԶԱՆԿԻՆ ՇԱՊԻԿԸ

Ա

Մի խելացի փիլիսոփա պատմում է այս գողտր առած:
Կար մի արքա սաստիկ զորեղ և հարուստ.
Իշխեր խաղաղ, ժողովուրդը սիրեր նորան. թըշնամին
Սարսափահար՝ կը դիմեր փուլթ ի փախուստ,
Եթե միայն լըսեր փողերն յուր մարտին:

Ի՞նչ պակասեր իրեն. ուրախ՝ բախտավոր,
Որդիքն ու քաշեր շուրջն առած բոլոր,
Կինը գեղանի, քենքույշ ու տըւփոտ՝
Դըշխո էր ու զարդ շքեղ դահին մոտ:
Առատ գույնզգույն պըտուղք ու գինիք,
Սեղան մեծահաց, որսեր ու խորտիկ:
Ավել ի՞նչ է պետք. նա բախտավոր էր.
Բայց այսուհանդերձ միշտ կը գանգաւոր
Յուր հեշտ կյանքիցը, հույժ միօրինակ՝
Անդորր և խաղաղ իբրև մի լըճակ,
Ընդ կապույտ երկնից լուռ միադունակ:

Անդ, ուր լըրտնան ցանկությունք մարդկանց՝
Անդ և կըբացի դուռն թըշնառությանց:

Բ

Երջանկություն նա որոներ հանապաղ.
Այլ ալմա՛ղ, դի նըվաղ առ նըվաղ
Ժըպիտ խընդում անհայտացան,
Ճակատն՝ աչտեր կընճռտեցան,

Անողորմ տեղ
Փղնտո՛ւք մի դեղ:

Այս նորանշան տրխուր ախտին՝ մի տնուն
Չէին կարող առլ բըժիշկներն միարան,
Որք ամեն ցաւ վերարերն լոկ մարմնուն,
Ձի նոցանում շատ քիշերն են հոգերան:

Ամեն կողմից հրաժիրեցին փխտոփայք, կախարդներ,
Որք թափեին ամեն հընարք, ամեն միջոց ու ձիգեր,
Նրշանկութուն առլ արքային խոթացլալ ու կարենր.
Բըղթատեցին հին մատչաններ, ու փղնտոեցին խընամքով
Թե ոչ երկար կենաց նեկտար, երշանկության դեթ միջոց:

Վերշապես մինն ալդ իմաստնոց
Գլուտիցն ուրախ՝ աչքըն ի բոց,
Ասաց. «Ո՛վ արքա,
«Միակ մի հնարք կա
«Զո բըժշկության
«Բարեկալության.
«Հրաման տուր շուտով՝
«Որ երկիրս հոլով
«Գնան ու որոնեն
«Ծառայք դես ու դեն.
«Ու թե երշանիկ
«Գըտենն մի հատ մարդ
«Որ դո՛ւ և հանդարտ
«Ապրի յուր կյանքում,
«Ու չէ բնով տըրտում,
«Թող նրա քամակից
«Մարմնույն կիոյ և կից
«Ճար շապիկն հանեն,
«Ու փուլթ քեզ բերեն.
«Հազիր այն շապիկ,
«Լինիս երշանիկս:

Փխխոփային համաձայն վրճարուն
Արքայն էլ հրաման արձակեց խնկուն
Տուր հալատարմաց՝ գրանել ու բերել
Հրաշալի շապիկն, իրեն հագցընել.
Գնացին սպաստվորք ման եկան հաշխարհ,
Երբանկության իսկ շի գտան մի նըշմար
Մինը գանգատեր յուր ճակատագրից,

Մի ուրիշն բախտից,
Մինն էլ յուր կնոջից,
Պատահարներից,
Չար մարդիկներից.
Շատեր ապերախտ՝
Կը հեծնին չախտ,
Ի սեր հեշտությանց՝
Կորցնելով ըզգանձ
Ու կենաց վայելք,
Մեռնել՝ անխելք:

Հայնժամ հուակտուր ծառայք արքային,
Խոնջլալ՝ ապարդյուն, քաղաքաց հեռի
Գնացին քիչ հանգչիլ, շրնչիլ սյուք դաշտին,
Ուր մի գետ խայտար ի ծոց մարգերի.
Այնտեղ միահամուռ վերջ տալ վրճուցին
Այս խուզարկության գրեթե անտեղի,
Տեսան գետին մոտ նըստած մի հովիվ
Արևից այրած, մազերն խարտյաշ խոփվ.
Ձեռքումը բըռնել մի փայտիկ ծակված,
Ուր մի երգ փըշեր՝ առտուն շարագրած:
Նոցանից մինը գնալով նորա մոտ,
Հարցուց հեգնորեն ու ձայնով խըռպոտ.
«Է՛հ ինչպե՛ս, գո՛հ ես այդ քո վիճակից».
Գեղջուկը իրրե գարթած երազից,

Նայեցավ նորան
Մունջ՝ ափ ի բերան.

Ու մընչեց մեղմիկ՝
 Քն բարերաստիկ
 Է ինք լիովին.
 Այլ բն յուր կյանքին
 Հետ բնով չի փոխեր
 Աշխարհի գանձեր.
 Բեպետ աղքատիկ,
 Ապրի երջանիկ:

h

Զայտ որ լսեցին պալատան ծառայք,
 Զուզեցին հավաալ. բայց պետք էր իսկույն
 Տանիլ առ արքայն երջանկին հրամայք,
 Հրաշայի շապիկն աղքատիկ հովվույն,
 Զոր շուտ հանելու խիստ հրաման ավին:
 Հովիվը ապուշ նայեց երեսնին,
 Ծվ ահոտներն մարդարաաշար,
 Կոշտ խրեղալով նորանց ցույց տար.
 Հետո զըրաւ արինգն ի գետին,
 Երկար ցուպն էլ ի՛ մեշ ոտին,
 Ըսկսեց մեղմով քակել զ՝ շվան
 Հաստ ու մաշված, ու դառնա նման
 Աղղերց վրա միշտ ամբաղընդեր
 Յրնցոտ կապան, որի կտորենք
 Պատառատուն դային տատան՝
 Զինչ յուր դրոշակ երջանկաւթյան:
 Ու ժբաւելով, լուրջ, պարզամիտ
 Երբ մերկացավ յուր քրդամիդ,
 Ըսպտաւորք սիրտ ի՛ մորմոք
 Ձայն բարձրացրին մեծ դարմանոք...
 Զի միակ մարդն այն երջանիկ
 Մարմնույն վրա իսկ շուներ շապիկ:

ՋՌԱՎՈՐՆ ՄԱՀԱՄԻՐՁ

Ճանապարհին ցեխն ու վառոգի փռչին
Սևադիւծ հետքեր թողնեն ճակատում,
Ուր արևակեղ և դեղնած կաշին
Մահվան քրտինքն է արդեն արտադրում:

Վերաւոր ձընկներն փաթթած ցընցոտիվք,
Թել թել կախվում են զգեստին կըտորտանք
Չէ կարող կանգնիլ թշվառին ընդ ոստիվք,
Տկար է, գունատ՝ դինչ՝ մահու պատանք:

Շրթներն կիսաբաց, չէ կարող ասել
Թե ո՞ւր ըզզա ցաւ. խոնավ մի պատի
Քամակը տըված, կը սկըսի հեծել
Աղիողորմ զոհն անողոք բախտի:

Երբոր նա խույս տար՝ թըշնամահաւած,
Կորցրուց ընկերներն ու ձին ցիր ու ցան.
Օրեր, գիշերներ թափառեց անհաց,
Երկինք ու մարդիկ նրա շողորմեցան.

Այն մարդիկ. որ գոհ կապրեին ուրախ,
Երբ նա գոռ դաշտում մահվամբ մաքառեր.
Թողած ընտանիքն՝ ու կյանքը խաղաղ,
Մեզ ուղղված հարվածն կըրծքին ընդուներ:

Եվ ի՞նչ էր հույսը, մի շրջանըշան՝
Թե քաշ մարտընչի. կամ այնտեղ անտեր
Մեռնիլ անթաղ մնալ, մոռացված աննըշան.
Դիակն էլ սընունդ թըռչնոց գիշակեր:

Հայնժամ յուր որդւոց որր և շքամբ
Արդար ո՞վ կը տա արնունդ և խրնամք,
Անկար և հյուծյալ մոր, հորն ալետր,
Երբ նորա մարմին ծածկեն մարտին խրամք:

Այլ թե հաղթական դառնա կենդանի,
Մի վարձք չըստանար. հաղիվ թե մի կտոր
Հաց ունի ցամքած՝ որով արնանի.
Մարամն մեղմելու քիչ էլ շուր պըղտոր.

Նվ մի բնակարան, ուր յուր նըմաններ
Նընշեն խառնի ի խառն օդն ապականած.
Մինչ շիր, փափկասուն շատ մեծատուններ
Զըզվանք նային գլուցազն թըշվառաց:

Թաղքում նոցանից երբ դարձնեն երես,
Նոքա մեր պատիվն ու դույք պահպանեն.
Այլ ի պատերազմ թըշնամույն ի սեւ՝
Մեղ համար կյանք՝ հույս ապագա դռնն:

Նայեցե՛ք մեկ հեղ ղինվորին թըշվառ
Կիսամեւ, դալուկ, ընկած անկյունում.
Աչքերով խընդրեր մեղնից մի պատառ
Գոնե սե հացիկ իբրե հատուցում...

Բայց տեսեք մարդկանց հետաքրքրութուն.
Յուր լորս ղին խըռնված, հասկանալ անգամ
Չեն կարող երս վիշտ, որ թափեց արլուն՝
Փըրկելու համար եղբարցն անըզգամ:

Պայուսակն շալկին՝ հագած մի խեղճ քուրձ,
Մեղ համար դեմ դնաց մահու վրտանդի.
Նվ հաղիվ դաշտից փախա՞վ մաղապուրձ,
Մեր քաղքում, մեղ մոտ քաղցից կը մեռնի:

Հրացանին սվինով, որ մեղ պաշտպաներ.
Յուր ժանդարտ սըրով հողը փորեցին.
Փոքրիկ խաչարժաթ, որ կըրծքում կըրեր
Յուր միակ դույք պարծանք, հետը թաղեցին:

ՃԱՐ

Երբոր մանուկն հիվանդանա,
 Եւառով մի բժիշկ կը հրավիրեն.
 Տան մեջ ծնողաց դեմքի վերա
 Հոգ՝ տըխրութիւն՝ կասկած տիրեն:

Բժիշկը գա՝ տա գեղ մ'ազդու,
 Ասեն, ցըրտից ըզգույշ լինի.
 Դառն է դեղը. սակայն աղու՝
 Խնչպե՞ս խըմցենն այդ՝ փոքրիկին:

Բայց նախազգույշ մայրիկն հայնժամ
 Մեղրով պատեն բաժկին եզերք:
 Մի կտոր շաքար էլ քաղցրահամ,
 Որով խարվին շատ հեղ տըղերք:

Մեղրին համը մանուկն առնեն.
 Ու գեռ ցնորքը լըփարատած՝
 Մայրիկն իսկույն կը խըմացնեն
 Դառն ու լեղի ճարն մեղրամած:

Ու մանուկն երբ ըզգա լեղին,
 Քնպետ շաքարն տան՝ որ ծըծեն,
 Բայց լի կա վերջ լացին կոծին,
 Փոքրիկը շատ զայրացած է:

Մենք տըկարնծրա էլ երբ հիվանդանանք
 Սիրով սըրտի խոր,
 Կինն է մեր ճարը, որի բոլոր զըզվանք,
 Հրապույրը բոլոր,

Դեմքը վարդ՝ գրավիւն, շուրթք մեղրածորան՝
 Ուր մարդարտաշար
 Պատին առամունք, մի սիրարարառ
 Էնդու՝ սակայն շար,
 Բոլորն այս ժածկենն այն թայն մեղրատարք՝
 Որ կինը պահե
 Յուր համբուրաթաց մըստա մարմնույն տակ:
 Իսկ երբ մարդ քաղե
 Մեղրքն յուր շըրթանց, այն տեղ պարունակ
 Առնե համ թայնին,
 Բայց ավա՛ղ շտ՛տ ուշ. կարտասովե, կատգի,
 Անեծք տա բախտին,
 Հողում տարածվի դառն ու թույն աղի:
 Մահը կը խընդրե նա՝ կլանքից հուսահատ
 Խնդն ու ցավազար,
 Չնն օգնեք նորան՝ ոչ խոսք, ոչ էլ խրատ,
 Ոչ կըտոր շաքար:

ՀԻՇՈՒՄ ԵՍ

Հիշում ես երբ առավոտուն
Արծաթ ամպեր
Հորիզոնում կը փայլեին,
Դաշտաց ծաղկներ
Ցողի մարգրիտ քրտընելով
Կը բուրեին:

Գետեղերքում կիտվածանկար
Սրբաբարախ
Քեզ խընդրելով թափառեի,
Երբ սիրո տաղ
Թրչնիկն երգեր տերևաքող,
Ձայն տար քեզի:

Թեպետ արևն արդեն ջուլջ տար
Վառ բոլորակ
Առ մայր բնությունն հռապալածառ,
Ես դեռ մինակ
Քեզնից հեռի՝ լուսանալուն
Ձէի հավտար:

Քանի՞ցրս ո՛հ քեզ ասած եմ,
Դու ես իմ լո՛ւյս,
Երջանկություն իմ հրաշալի,
Պատրանք հոգվույս.
Մի վերք՝ որ միշտ ցանկանայի
Անբուժելի:

Ու վերջապէս երբ գըտնենի
Դետին մոտիկ
Քեզ՝ նորանշան ազաւնեկիս՝
Ոտքերդ բռալիկ
Եւ շրտթաթախ, տալի համբույր
Խելակորույս:

Հայնժամ ինձ թղեր որ բնության մէջ
Բարերաստիկ
Ես կալի լսկ, և գիրկ գըրկի
Ի՛ համբուրիկ՝
Դըլտըլեինք, զինչ զուգ տատրակ
Ի ծոց մարդի:

Եւ հիշո՛ւմ ես, որ շիններ
Սիրարորբոսք,
Հառաչանքն այն սիրաժըպիտ,
Նրբ անողոք
Եւ շընչասպառ կը ծըծնի
Տողն ալանրիդ:

Հիշե՛ս նաև, այն բողեն
Ինձ երգվեցար՝
Քե սերն շունի տատասկ ու փուշ.
Ու ժըպանցար՝
Երբ ասածիդ հալատացի
Իրեւ ապուշ:

ԱՌ ԳԱՆԳՆ

Ժամանակով ո՞ւմն էիր դու,
Աղքատի՞նք թե հարուստին.
Ի՞նչ խորհուրդներ ծընան քո մեջ՝
Որ բնակարան էր ուղեղին:

Այն ուսերը՝ որոց վերա
Տարիներով տատանեցար,
Արդյոք որի՞ պատկանեցան.
Խելո՞ք մարդու՝ թե ոչ ցանցառ:

Եվ այն ճակատ քոսոս ու փոս.
Դափնի՞ կրեց՝ թե թագ արքունի,
Ում վրա այժմ գոհարի տեղ
Փայլի կըպշում հյուժ սողունի:

Կամ իմաստնույն, բռնաւորին,
Մի ազա՞հի՝ որ կենդանւոյն
Չէր տարբերեր հիմակվանից,
Հլուծյալ գեղնած աշտեր տրժգույն:

Գուցե ոսկերքն այն աշտերին
Խոնավ հողից ծակծակոտած,
Գողա՞րը մի կնոջ պատկանեին՝
Ուր մի ատեն վարդ էր բացված:

Այդ դանդի վրա կային սիրուն
Մի զույգ շրթանց բոսոր թերթեր,
Որք զանազան ըզզացմունքներ
Բացատրեին, սըտություններ:

Հիմա միայն ժաղրն ու ժիծաղ
Մընացել են. շարք մ'ավերակ
Ակռաների՝ զերթ տաճարին
Սլուներն ու զարդ հիմնահատակ.

Կամ տունի նման մի հարկանի՝
Աչաց փոսերն զերթ պատուհան,
Քերանն մի դուռ, որ զնռուներ՝
Սողունք բնակին՝ մըտնեն նլլան:

Եվ այդ ոսկրի մակերեսից,
Որի վերա փափուկ կաշին
Քանիցս կրքեր պուրստած են բուռն
Ինչպես հողմերն ժողուց ալին:

Դեղնահատակ նակատումը
Այժմ այդ ամեն մըտքերն ու կիրք՝
Կեղտոտ, հողոտ հետք են թողած,
Ուր ձեռք մահուան գրել է. «պատիրք»:

Գուցե դանդին տերն այն թըշվառ
Շատ էր տանջված այս աշխարհում,
Փրտտուն մարմինն թողլով ի հող՝
Հիմիկ մեր վրա է ձիծաղում:

Որովհետև ինչպե՞ս մեկնել
Այն գիվական լայն ժիծաղը.
Ուրախությունն է դրա պատճառ՝
Կյանքից փրկված, թե ոչ ժաղրը:

Աստ՝ դուցե այդպես կու լան
Մեռյալք, շիրմից թե դնան անդին,
Կամ կենդանյաց ցամփն ու վըշտեր
Ծաղր ու ժիծաղ տան մեռյալին:

Ինչ էլ լինի, երբ մըտածեմ
Ու օր մ'էլ ես դուցե այդպես
Տի ձիծաղիմ, սիրալս ի դող՝
Գըրիչն խկույն ինկնի ձեռքես:

ԿԼԿԼ

Քառասուն տարի դուքանն առած՝ աշխատում է անընդհատ-
նիհար, սնցած արեղակից, ծեր արդին.

Այսուհանդերձ թնայեա հյուծյալ, շարունակե տակավին
եղնդրել յուր հաց երկրիս բերրի արդանդին,
Որն որ պատռե՝ յուր դուքանին լըծելով ձի, երբեմն եղ,
Ակոս տկոս բեղմնավորե՝ սերմանել:

Երեկոյն խըրճիթ դառնա, ալքերն երկինս հռաւիյր՝
Որ մի անձրև տերն յուր քրրտանց հետ խառնել:

Անձրեն էլ դա, արևն էլ տա յուր կենսալույս շերտաթյուն,
Ու Կիկոյի ճակտին վըրա միշտ խոնավ՝
Քըրտինքի մեջ, դընն մի փայլ՝ երբ նա ժըպտի սիրտը դոհ:
Գան շինականք՝ ձեռքերն դինյալ մանգաղով՝
Յորենն հընձել, որ դարձել է մի ահագին ոսկե ծով՝
Ուր ծածանն քամին փայլուն ալիքներ:
Լայնատարած դաշտում ահա լըավի մի մեղմ շըշընյուն,
Խորհըրդավոր իրրև կենաց մի հրավեր:

Հընձե՛ հընձե շընչակըսուր, ա՛վ բարեմիտ խեղճ Կիկո,
Բեր աղջըկերդդ ու լաճդ ի դաշտ՝
Մեծել ցորյան, պարարտ որայք ու խուրձ կապել ոսկեղնիկ:
Այն հացն առատ, որ իրավունքդ է, միակ ճաշդ,
Գուցե խըլեն քո ձեռքիցը, կամ գնեն շընչին մի դընով,
Իրրև մըրջյուն լեցնես ամբարքն օտարին.
Քո արդյունքից քեզի ոչինչ չեն տալ մարդիկ. և թերևս
Սերմն էլ շիտան հաշորդ տարվա ցորենին:

Իրրև թե այդ զըրկանքն անգութ չէ բավական, ցըրտագին
Ձմեռն էլ շուտով վըրա հասավ ու պատանք

Հաղցրուց երկրին. դաշտն ըսպիտակ՝ դերեղմանի նըման մերկ
Յուր սառ ժողից վիժեց հանկարծ մի ցուցանք,
Աղեղալար ճիրաններով, ոսկորալեզ, մարդակեր.
Ժիվադ սողին Հայաստանյայց ու Վանի.
Դաշտն ու ձոր յուր գիակութ քաղցածը մի կ մալքներով
Կամշոտ մահուն դարձան կըրկնա քրտամներով:

Իսկ երեխան, երբ առաջին անգամ սկսեց դուրս գալ տանից, հայրն ասաց վարպետ միմոսին.

— Ի՞նչ կերպով կարող եմ հայտնել ձեզ իմ երախտիքը. վերջիվերջո՞ հս ձեզ շատ եմ պարտական:

Միմոսը իր Հերցոգյան ձեռքերը ծնողին երկարացնելով ասաց.


— Նախ՝ բարեկամական ձեռն կառկառել ինձ. — և փոքրիկի այսերու վերա, որոնց վարդազույն երանդն սկսել էր վերադառնալ, երկու խաչար համբույր զետեղելուց հետո, հարեց ծիծաղելով. — և հետո՝ իրրև վարձատրություն թույլ տվե՞ք ինձ ապել այցատոմսիս վրա, Բուժ-բուժ՝ գիտնական արքորատ, անձնական և մասնավոր բժիշկը փոքրիկ Ֆրանսուայի:





ԱՐՁԱԿ ԷՋԵՐ







ԱՆԿՈՋ ՀՅՈՒՐԸ

I

Ոգոստոսի վերջերում Կովկասի մայրաքաղաք լեռնապատ Տփլիսը ծածկված էր մի թանձր ու խոնավ մառախուղով, և երկու օրվա տեղացող փոշնման անձրևն արդեն լճակներ և առվակներ էր ձևացրած զառիվայրերի և քարահատակ փողոցների փոսերի մեջ:

Այնքան խտացած էր օդը, որ միջօրեի թնդանոթին հարվածն անգամ խուլ էր հնչում, և վառողի սպիտակ ծուխը գոնե մի վայրկյան սքողում էր Աղեքսանդրյան այգիի վանդակապատ մուտքը, ուր ուրիշ օրերի նման չէր երևում շրջագայողների համրագնաց շարժումները, հաղիվ մի քանի գործադրադ մարդիկ կամ կանայք կանցնեին շտապ, ցեխի և ջրերի մեջ ոստոստելով:

Այդ ծանր ու խոնավ մթնոլորտը որ հանկարծ կը հաշորդե անտանելի շոգերին, վատառողջ է ամեն կարգի և կազմվածքի տեր անձանց և բարոյապես տխուր կերպով կ'ազդե հիվանդ չղոտների վերա: Մանավանդ Քուռ գետի մոայլ երևույթը, որի դեղնած և պղտոր ջուրը սպունդի նման փրփուրի պղպղակներով ծածկված, վազում է վազում, աչ ու ձախ գետեզերքի վերա թողնելով իր մակերևույթում լողացող մարմինները. փայտի կամ գործարանաց ածուխի փշուրն ու կտորտանք, ցնցոտիք, մամռապատ եղեգներ. այս վերջինները ջրեղեն բաղեղների նման գալարվելով՝ կը փաթաթվեին ցիցերի, լաստերի և Միքայելյան կամրջի ստորոտին թմրոցը, ուր ջուրը՝ քմահաճ և խելապտույտ շրջաններ տնելով, փրփրալով, ֆշալով, կ'եռա ու կը դառնա և կը շարունակե իր ճանապարհը:

Կամրջի երկու կողման հեռաձիգ տեսարանները ծածկված են գոլորշիով, և լին երեկո այն անհողողոգ ժայռերի ու բլրակաց վրա հիմնարկված պատշգամավոր տները, ցան ու ցիր եզերքում սփռո-

ված տնակ, խրճիթ և գործարան։ Այլ մյուս կողմից տեղ-տեղ կեր-
ևին ծառեր, ձխող ծխելույզք, որոնց ետեխը՝ երկնից պարզության
ժամանակ, մի կապտագույն մշուշով պատած կընշմարվին սրա-
ծայր լեռանց գագաթները, մերթ վարդակարմիր և մանիշակագույն,
երբեմն էլ սպիտակ, արեգական ընթացքին համեմատ։

Կամրջի տակից անցնող շրի նման մարդկային մի հոսանք էլ
նորա վրայից միշտ անց ու դարձ կանե, որի կարծես բարեկարգու-
թյունը անվրդով պահպանելու համար կըհրամայե հակել Վարան-
ցովի խստահայեաց և շքեղադիր օլոնձյա պատկերը՝ իր լայնանիստ
պատվանդանին վրա արթուն և կանգուն։

Գիշերն ավելի քսամենելի է այդ գետին երևույթը, այդ բաղ-
մամարդ, գողտրիկ և ծաղկյալ քաղաքի կենտրոնում վազող ու
փրփրացող սարսափելի գաղտնյաց նեղ և ընթացիկ օվկիանոսը,
որի տափարակ և պռտտուն ալիքները աղոտ կերպով կանդու-
ղարձենե՞ն եզերքի վառված լույսերը, որ իր լուսյան մեջ անգամ
ուշի մի խորհրդավոր մրմունջ և իր հասակում թաղված հույսերն
ու գաղտնիքները կը պատկերացնեն երբեմն մահասարսուռ ժպի-
տով՝ իր պապղուն ալիքները մակերևույթում։

Այլ երբեմն արշալույսո խաղաղ և փայփայող լուսավր կը
հանգարտի, կը կանոնավորե իր ընթացքը, գրավիչ մի պատկեր կը
ստանա ու կը հանե իր ծոցիցը կապուտակ գոլորշիներ, որք մերթ
կը պատեն եզերքը մառախուղի քողով, հետո ծանր առ ծանր արե-
գակին հետ բարձրանալով՝ ամպ կը կազմեն երկնքում։

Սակայն երբ ամառվա շոգերն կը սկսին, և քաղաքը կը ծածկ-
վի ծանրակշիռ մթնոլորտով, երբ գերդաստանց շոգից պատսպա-
րան կորոնեն շրջակա դյուղերում, այն ժամանակ քաղաքում մնա-
ցող գործատեարց համար գետնեզերքի մոտ շատ անգամ կարելի է
շունչ քաշել, լողանալ։ Արդեն շատերն իրենց գործերի բերմամբ
էլ այնտեղ են հաստատած բնակարան, գործատուն և գրասենյակ,
որոց մեջ նշանավորներից մինն է Գողթղունու ալյուրի գործարա-
նը, որի կից է նաև գրասենյակը մի հարկի վրա՝ անմիջապես շրին
մոտ, ուր աղան երբեմն գիշերները կանցնեն իր գործի շահերից
ստիպելով, ու կը պահե մի երկաթե արկղի մեջ իր փողն ու թղթերը
և թանկագին առարկայք... Արկղին աչ կողմն է գրասենյակը կա-
նաչ լուխայով և զանազան գրելու պիտանի առարկաներով ծածկը-
ված. մեծ հաշվաքրքեր, հաշվաշար, փոքր քսակների մեջ ցորենի
օրինակներ։ Պատին մեջ հաստատված մի ճանկից կախվում են

մեծ ու փոքր թղթերի և հաշիվների թերթեր, նոցա մաս մի օրացույց դարձյալ պատից կախ. այլ աչ կողմի պատում կա մի կրակարան նոր ձևով ծեփած, նորա կողքին մի կլոր սեղան ու վերան թիչի մի բաժակ լուր արծաթե բաժակակալովը, որով տներն երբեմն թիչ կը խմեն, կրակարանին մեջ փայտ նետելով՝ օդին և գետի խոնավ զովությունը մեղմելու համար, որից շատ էլ զգուշանալու տեղի չունեն, նայելով լուր քաշառող կազմվածքին, որով կարող էր մրցել տակավին լուր 55 տարեկան հասակում շատ երիտասարդների հետ։ Սակայն լուր առատ մազերն ու բնները բավականին սպիտակ էին արդեն. այլ աչքերը արտասովոր կերպով կը փայլին այն թխագույն պաակներին վրա, նեղ և բարձր ճակատով ու գեղեցկաձև քթով, իսկ կարմրաշուրթ բերանը մեծ էր, և երկու անկյուններում լայն կնճիռները կը կորչեին բնների մազերի մեջ։ Դեմքի վրաի մասը վերևից ավելի ընդարձակ էր, այտերը փոքր ինչ ծավլած ականջների մոտ. նույնպես մի խորին ծավը երկու հոնքերի մեջտեղ, որ սպառնալից նիզակի նման կը ցցվեր բարկացած ատեն։ Այսուհանդերձ այս ամբողջությունը իսկապես մի տգեղ երևույթ չունեիր, միայն թե լավ ազդեցություն չէր գործում ընդհանրապես առաջին նորա հանդիպող անձին։ Բայց նա դիտեիր դրավել բոլորին փաղաքուշ ժպիտով և ձևերով, ուներ ևս գրավիչ և համոզող մի ձայն, որ ուղած ատեն կարող էր շատ կատաղի և խրոխտ կերպով հնչեցնել, Բայց այդ մեղույշ ձևերը կարող էին և կեղծիք լինել. սակայն միթե կարելի՞ է դատել մարդկանց նոցա արտաքին երևույթի վերա հիմնվելով. չէ՞ որ միայն արտաքինը երբեմն խաբահական կարող է լինել. միայն կարելի է մարդս լուր գործերից դատել, և շատ անգամ մեր վերա գործած տպավորությամբ, որով քիչ կը պատահի՝ որ խաբվինք. և այդ բանը կարող է զգալ դիտող և զգայուն մարդը, և կամ ըմբռնել Լաֆատների և Գալի դրությունը ուսումնասիրած անձինք, որոնք դարձյալ իբրև դիմագետք կամ գանգարանք պատահի որ սխալվին։ Ահա այդ պատճառով դիմադիտությունը տակավին հաստատուն դիտությանց կարգը անցած չէ։ Անհրաժեշտ ուսումն, որ մեծ ծառայություն պիտի մատուցաներ մարդկության. դի մեծամեծ շարքաց առաջն պիտի կարողանայիք առնել, եթե հնարավոր լինել մեզ զանազանել կեղծ մարդասեր ազնիվ մարդասպանից։ Առայժմ դատում են մարդուն լուր հրապարակական գործունեությունից, բարձրահնչյուն անունից և նորա հարստության տեսակետիցը, մանավանդ եթե նորա այդ առավելություններով մեզ օգուտ և ջահ ծագի, եթե նորա դրու-

Քյան շնորհիվ կարողանանք մենք ևս բարվոքել մերը. մնացյալը ո՞ւմ հոգն է:

Ահա ձեզ մի անձնավորություն, որ բոլորից սիրված է և հարգված, շնայելով, որ խոսել են նորա համար էլ շար լեզուներ ոչ նպաստավոր, բայց ո՞վ կը հավատա, թե նա Պետերբուրգում ունեցել է մի գայթակղեցուցիչ դիպված. զրպարաություններ, որովհետև ահա վեց տարի կը լինի որ Գողթունի հաստատված է Տիգլիսում իր գործերն և բնակությունը. այս վեց տարվա ընթացքում բարեգործությունից ի դատ ոչ ոք ոչինչ չէ տեսել նորանից: Ամենքին իրեն դրաված՝ այնքան բարձր է ընդհանուրի կարծիքը նորա մասին, որ քաղաքում փոխանակ անվանելու յուր Գողթունի ազգանունով, կոչում են «բարերար տեր» կամ «աղա»:

Չնայելով, որ մի մեծ հարստություն էլ չունի և յուր այլուրի գործարանից դեն մի շահ չէ կարողացել ստանալ, այսուհանդերձ ճոխ կապրիւ Ուր որ լինի, առանձին ճարտարություններ կը խոսի առաքինական հատկությանց վերա, անիրավությանց թշնամի է կամ լինել կը ձեռնցն, տարօրինակ գաղափարներ կը հայտնի: Օրինակի համար, երբ հարցնելին թե ինչո՞ւ հրաժարվեցավ փաստաբանությունից, ինչո՞ւ առանց ավարտելու իրավաբանի ուսումը՝ թողուց համալսարանը և վաճառականության գործերով պարապեց, նա կը պատասխաներ՝ թե ատում է այն արվեստը, ուր հարկադրված է փող վառտակելու համար մարդասպանին, գողին և առաքինվույն հավասար եռանդյամբ պաշտպանել. երեք չկարողանալ ասել յուր սեպհական կարծիքը. սկը սպիտակ հանդիսացնել և սպիտակը սև. իրեն համար Կալեբու նպատակավ՝ այլոց համար խորհիլ և խոսել, մարդկությունից հրաժարված, մի խոսուն մեքենա դառնալ, որին կարելի է լարել տրվելիք գումարին համեմատ, և այլն: Սորա նման գաղափարներ կարտահայտի, որպեսզի ուրիշներից չոկվի և բարձր կարծիք ունենան յուր վերա:

Առիթ բաց չէր թողնում ձեռքից յուր առաքինասեր կողմը ևս ցույց տալու. օրինակ. փաստաբաններ վարձելով, պաշտպանեց յուր երկու գործավորաց դատը և նոցա փրկեց դատապարտությունից: Երեք ազգատ աղչիկներ օժտեց և հարսնացուց՝ նոցա միայն կնքահայր դառնալով, որոց երկուքը աղախնո պաշտոն վարած էին յուր տան մեջ: Այսպիսի գործեր. ավելացրեք սորա վերա մի քանի ազգասիրական ճառեր, որ արտասանեց տարբեր առիթներով. բարեգործական ընկերության գանձանակին նույնպես տված օգուտները, այս բոլորը այնքան բարձրացրին յուր անունը ժողո-

վերջյան մեջ, որ ուայալ և տգետ, գործավոր և ռամիկ, բարեբարի մակդիրը դրոշմեցին նորա ճակատին. իսկ աղքատներն իրենց պահապան հրեշտակն էին անվանում:

Առավոտից մինչև երեկո պարապում էր զրասենյակի մեջ գործատան հաշիվներով և կարգադրություններով: Կեսօրվա նախաճաշիկի կը դար տու՛ն, հետո նորից զրասենյակը վերադառնալով՝ մինչև երեկո կը զբաղեւր. կը պատահեւր, որ մինչև հետեւալ օրը ստիպված գիշերն այնտեղ մնա, այլ ընդհանրապես սովորություն ունեւր երեկոները տու՛ն վերադառնալ թնյի ժամանակ, եթե չի գնար այցելության մի տիկնոջ, որին հետ շատ սերտ հարաբերությամբ կապված էր:

Տանը յուր վերադարձին կը սպասեին տասնևիննամյա աղջիկը՝ պառավ խնամակալուհու հետ. այս վերջինը՝ զուլօր ձեռքում հյուսած գուլպային վերա խոնարհեցնելով, ծնկան վերա նստած կատուին հետ կը մրափեին: Պառավը միայն զուլօր բարձրացնելով, նիհար ձեռքով ինքնահեղ կը շոշափեւր, նայելու համար՝ որ շուրջ սառած չլինի. և եթե աղան հանկարծ գալու լինի, թելը ժամանակին պատրաստ չգտնե և բարկանա:

Որովհետև արտաքին անձանց հետ հեղաբարո և քաղցր վարվող աղան նույնը չէր դժբախտաբար յուր տանը մեջ, — մանավանդ մի քանի օրից ի վեր զգալի կերպով փոխված էին թե յուր սովորական վարմունքը և թե երեսի արտահայտությունը, առանց դուրան էլ մեծավ մասամբ վատ կը վարվեւր յուր աղջկա հետ, — խեղճ Ծրանուհին շատ էր տառապում այդ վարմունքից: Հեշտ չէ մի երիտասարդ օրիորդի՝ յուր մատաղ հասակում տեսնել յուր մորը, մանավանդ յուր միակ բարեկամուհու մահը, որի գովանքն ու խանդադատանքը պաշարած ու օրորած էին յուր մատուց աւարիքը, որք յուր սրտին անհրաժեշտ մի պետք և սնունդ դարձել էին: Հանկարծ կորցնել այդ բոլորը, զգալ ինքն իրեն մի ցավալի դատարկության մեջ, ուր միայն նշմարելի էր հորը դաժան և խստահայաց պատկերը, ցամաք խոսքերը... Վշտալի՜ փոփոխություն: Սակայն Ծրանուհի իբրև արդարակորով, սովորականից դուրս խելացի և առաքինի մի աղջիկ, տանում էր այդ հրեշտակային համբերությամբ. քիչ առ քիչ վարժվում էր այդ առանձնություն և մաշող կյանքին, թեպետ ցավելով՝ այլ առանց երկյուղի տեսնում էր հորը վարմունքը. սակայն ընդհակառակն երկյուղ կը զգար այն ատեն, երբ հայրը ծիծաղեւր և ձայնը հրամայողական

կերպով շնչանալ... որ երբեմն սաստիկ քարկուծյան և աղետից հետևանք կամ ավերարար սուրհանդակ համարեին:

Անմայր, բոլորովին անընկեր, միայն մի պառավ խնամակալուհու հսկողությամբ աակ՝ օրերը կանցնեին, որից իբրև վավակ սիրված էր արդեն, բայց կարելի՞ է միթե սրեկ մի ուրիշ սիրով մոռացնել նրան յուր վաղամեծիկ մոր հիշատակը: Այսուհանգերձ Երանուհի սիրում էր յուր խնամակալուհուն, յուր միակ՝ բայց տկար պաշտպանը՝ խիստ հոր հարձակմանց դեմ, որով կնճռագիծ պառավի ճակատը վաղուց արդեն ծածկում էին արծաթափայլ մազեր, այդ տաղտկալի կենաց փոթորկալից վնճերը տանելով ի սեր որբ աղչկան. ներկա լինելով նույնպես հանգուցյալ մոր կրած տառապանքին ու վշպաց, որից միայն մահը կարողացավ փրկել, և որին նա քույր էր անվանում:

Սակայն տարիներն ու հոգսերը չէին կարողացել շնչել նորա դեմքի ազնվական և բարի արտահայտությունը՝ խոր աչքերով և արծուանգն քիթով, որ բոլոր տեսողաց պատկառանք կ'ազդեր:

Տխրագին լուսյամբ կը նայեր Երանուհու երեսին, որո գեղեցկությունը դեռ չէին կարողացեր մթաղել արտասուք և տառապանք: Այո՛, գեղեցիկ էր Երանուհի այն գեղեցկությամբ, որ շատ անգամ կը գոյանա հոգվու աղնվությանց դեմքին վերա անդրադառնալով. համակրելի է, քաղցր ու գրավիչ, առանց ունենալու կլասիկական արվեստապահանջ գծերը. գեղեցկաց գեղեցիկն է նա յուր դուռնատ պատկերով, մոտ շրթունքներով և աչքերով, որոց կապույտ երանգն ու լայնահաս շրջանակը պարունակեին մի անհողդողդ նայվածք, ուր կարելի էր նշմարել առաքինություն, խելքի և անձնվիրության նշույնները: Հասակը միջին՝ նուրբ և դուրակուր, համեստաքայլ. ոտից ցզուփս կռաական շնորհաց մի կենդանի ծաղիկ:

Բոլոր օրը կը զրազվեր տան գործերով, երբեմն էլ ընթերցմամբ՝ անշուշտ ավուր մտածությունքն ու ձանձրույթը վառելու համար: Շատ քիչ անգամ դուրս կ'ելեր տանից, այն էլ աչգիում շրջագայելու երեկոները խնամակալուհուն հետ. կամ երբեմն հորը հրամանով կ'երթան այցելել մեկ երկու բարեկամուհյաց, դպրոցական դասակիցք, որոց շափահաս եղբայր կամ ամուսին չունենալուն նախապես տեղյակ էր հայրը. ապա թե ոչ՝ նոցա հետ էլ տեսնվիլը տնհնարին կը դառնար, որովհետև հայրը մտադիր էր մի հարուստ և մեծ անվան տեր փեսի տալ յուր աղչիկը... որովհետև Գողթունի դեռ չէր բավական յուր վայելած

հարգանքիցը. նա ավելի հեռուներ էր ակնարկում: Նա մեծամեծ նպատակներ ուներ, որին հասնելու միակ միջոցն էր առատ փող և բարձրաստիճան անձանց ազդեցականությունը, կամ լավ ևս ասել, խնամությունը, առայժմ կարող էր գոնյա մինը այդ նպատակաց իրագործել, և Երանուհի թերևս գործիք դառնար: Թշվառ զոհ... է՛հ, ի՛նչ փուլթ. բավական էր, որ ինքը բարձրանա, ո՛վ է փնտրում և թննում, թե արձանին պատվանդանը ինչի՞ց է շինած կամ ինչով է հորինված...

Դժբախտ էր Երանուհի. անապատաց լքյալ բուսեկին նման՝ յուր վառ երեսակայության մեջ տպավորված էին ցավալի հիշատակաց սևագույն պատկերներ, որոց մեջ առաջին տեղը կը բռներ յուր մոր մահը. այն օրից՝ որ նորան կորցրուց, յուր շուրջը ամեն բան սուգ զգացավ, աշխարհս շունկեր ալ յուր հրապույրն իրեն համար: Այն սիրտը, որի մեջ ինքն ապրում էր, երբ սառեցավ մահի ճիրանների տակ, յուր կյանքն էլ կիսով շափ սառեցուց. կարծես մի բան պակասում էր իրանից, որին մայրը հետը գերեզման էր տալիս: Բոլոր յուր հույսերը, անխառն ծիծաղը, անմեղ զրոսանքները, ամենը միով բանիմ, կորած էին, մինչև անգամ թերթիկաց ընթերցումը. սիրելի Լեմոնաուվը, որն որ շատ գիշերներ ձեռքումը անկողնին մեջ կարդալով կը ննչեր, ու երբ կիսաբաց գիրքը ձեռքերիցը ինկնար... Նա արդեն երազումը սկսել էր Թամարա դառնալ. դեի գրկացը մեջ սավառնել երկնից անհուն և ընդարձակ կամարին վերա, ուր յուրաքանչյուր երկնային մարմինք մի նոր, հրաշալի տեսարաններ կը ներկայացնեին յուր զմայլած հոգվույն աշացը: Ըվ այդ բոլոր ներհմանց հափշտակիչ ցնորքն ու պատիրքը առավոտյան լուսով կը սրբագործվեին մոր համբույրների քաղցրությամբ, երբ նա անկողնին մոտ նստած՝ մայր և աղջիկ գրկախառն համբույրներով բարի լույս կը մաղթեին միմյանց:

Իրականություն և երազ, ամեն ինչ անհետացան խափանվեցան գերեզմանի քարի տակ, և նա ապրում է այժմ, ինչպես յուր բնիկ կլիմայից և սովորական սնունդիցը զրկված մի թռչնիկ, շաբաթը լճիկ կամ երկու անգամ գնում էր այդի ման գալու խոնամակայուհուն ընկերակցությամբ. յուրաքանչյուր ծառուղիք, հովանիք կամ նստարանք հիշեցնում են տեղյալը: Տեսնում է օտար աղջրկանց իրենց մայրերի հետ ման գալը ու արտասովում է լուսյայն, ծածկելով աչքերը սգավորի գլխարկի սև ու թանձր քողովը:

Մի երեկո ընդունելով հոր առաջարկությունը, խնամակալուհին էլ առած՝ երեքը միասին պարտեզ գնացին, ուր մի երիտա-

սարդ, որ վաղուց նշմարած էր Երանուհուն, հորը՝ երեխ՝ ծանոթ լինելով արդեն ու առիթ քաղելով նորա աղչկան մոտ գտնվելուց, գնաց ողջունեց Գողթունուն, որին այս վերջինը իսկույն աղչկանը հետ ծանոթացուց։ Այն երեկոյից հետո երկու անգամ ևս գնացին այգի և ամեն անգամ էլ հանդիպեցան Զարեհ իշխանին, որո ընկերության պատճառած ձանձրույթը դրեթե անմարսելի էր Երանուհու համար. այն աստիճան, որ վերջերումս տկարություն կամ դիտի ցավ պատճառ բերելով՝ այլևս այգի չէր ուզում գնալ. և երբ հայրը բարկացած կը պնդեր՝ որ ընկերե իրեն, Երանուհի երեկոների զովությունը յուր առողջության վնասակար լինելը հայտնելով կը մերժեր։

Մինչև անգամ մի երեկո յուր խուցը քաշված էր, երբ իշխանը իրենց մոտ եկավ հոր հետ առաջին անգամ, այլ Երանուհին շերտ-վեց։ Այս բանից սաստիկ զայրացել էր հայրը. ուղեց խոսիլ աղբը-կանը հետ. բայց տեսնելով որ բարկությունը շարժի կարողանա զսպել, որովհետև շատ վատ միջոց էր Երանուհուն միտքը բացատրելու համար, տանից դուրս գալով իշխանի հետ՝ գնացին կլուբ, ուր աշխատեց լուս և մտադրադ վիստի կամ գինձո մեջ մոտանալ աղչկան հանդուգն վարմունքը, և հակամայա խեղդել յուր զայրույթը։

II

Մի երեկո Գողթունին սովորականից շատ ավելի վաղ էր վերադարձել տուն, ու վեր բարձրանալով՝ ուղղակի սրահ մտավ, ուր դառավ աղչկանը գաշնակին պռաշ նստած, որի վերա Բեթհովենի եղբրերգական և յուր մորը կենդանության ժամանակ նորա սիրըն-տիր մի հատվածն էր նվազում։ Տեսնելով հոր մտնելը, լկարողացավ զսպել հակամայա մի սարսուռ, որն որ իսկույն տեղի տվավ երկյուղի, նշմարելով հորը երեսին վերա մի Ժպիտ, այն աղետալի և շար ծիծաղը, որ չէր կարող առանց սոսկումի տեսնել։ Այսուհանդերձ առանց այլայլելու դիմաւորեց հորը, մատուցանելով ձակատը հայրական համբուրին, և կրկին նստեց յուր առաջին տեղը։

Խնամակալուհին նստած մի անկյունում, լոկկ թեյ կը խմեր։ Գողթունի դիտով ողջունեց նորան, և մի քանի տարտամ հարցեր անելուց հետո, մտադրադ վերադարձավ. ու կանգնելով խնամա-կալուհու առաջ, մեղմ ձայնով ասաց.

— Խնդրեմ, հրամայեցե՞ք՝ որ վերադարձիս ցեխերը մաքրեն։

Հետո սպասեցեք ինձ վարի սենյակում, ես կիջնեմ շուտով: Զեղ հետ առանձին խոսելիք ունիմ:

Սուրա միայն պատրվակներ էին նորան այնտեղից հեռացնելու համար, որն որ թեյի բաժակը ձեռքին, դեռ շաղարտած և առանց պատասխանելու՝ հեռացավ Գողթունու քամակիցը, կասկածոտ մի հայացք ուղղելով:

Գողթունի մի բազկաթուղ գլորեց դաշնակի աթոռակին մոտ, որի վերա նստած էր Երանուհին. և թավ ձեռքովը աղչեա փափուկ բազումը շոշափելով, սկսեց ուշադրությամբ նորա աչացը մեջ նայել. հաղաց, ժպտեց և հետո այսպես բաց արավ խոսակցությունը.

— Դարձյա՞լ երկյուղ եմ ազդում քեզ, որ շնա ուզում գլուխդ բորձրացնել և ուղիղ երեսս նայել. չպետք է մարդկանց դասել զահավիժաբար. երբ որ մարդուս հոգին հուզված է հոգսերով, ինչպե՞ս կուզես որ երեսը ուրախություն ցուանա. իրենց ներքին զգացումը արտաբուսաւ չհայտնելու հատկության մեջ կանայք են միայն ընդունակ... Արտաքին դաժան կերպարանքս չէ կարող երբե՞ք հաստատել որ անզույժ լինիմ, կամ լավ ես տեսած, աղքականս օգուտը չմտածեմ, չձանաչեմ իմ հայրական պարտականությունս. ընդհակառակն խիստ լավ գիտեմ, որ արգեն վաղուց ժամանակ է խորհել ճո ապագայի մասին... դիտեմ, նվ լավ նկատած եմ այս կյանքին քո հասակիդ պահանջմանց բուրրովին անհամաձայն լինելը. և վերջապես մի՞թե ես չեմ ցանկար քո երջանկությունը... ի՞նչ ես կարծում... չէ՞ որ այդ իմ հայրական պարտականությունն է... ուստի...

Ճակատը սկսավ ջգիւլ, կարծես լավ շարադրելու համար տանիքը. և փոքր ինչ լուռ մնալուց հետո՞ շարունակեց.

— Նա այդ մասին միշտ հոգատար էի, միշտ խորհում էի... սպասելով մի հարմար և վայելուչ առթի... Նվ ահա այդ առթիւն էլ ներկայացավ...

Երանուհի թեպետ նախադուշակած էր հորը գիտավորությունը, բայց խարում էր տակավին ինքն իրան, չուզեհալով հավատք ընծայել այդ ստուգության, որ իրեն համար շատ դառն էր: Նա աչքերը մեծ մեծ բանալով, անձկությամբ նայում էր հորը երեսին, որն որ տեսնելով աղքական վարմունքը, շարունակեց կրկին մի փազաբուշ ձայնով, որ հարկ եղած տեսն գիտեր ճարտարությամբ դորձ ածել.

— Հիշո՞ւմ ես, Երանուհի, սորանից մի քանի շաբաթ առաջ այդիում քեզ հետ ժանոթացող երիտասարդ գինվորականը, վերջա-

պես Զարեհ իշխանը, որ վաղուց քեզ նշմարած էր և համեստ դիտավորությամբ ուղում էր հետդ. ծանոթանալ, որին դու շատ սառն կերպով ընդունեցար. մինչև անգամ անցյալ երեկո նորա մեզ մոտ հղած ժամանակը սենեկիցդ շուղեցիր դուրս դալ, այդ բանը ինձ շատ նեղացրեցի։ Ես քեզ ոչինչ չեմ ասել մինչև այժմ. սակայն կարծեմ, որ դու այդպես վարվելով հորդ նախ պատված կը լինիս. հետո այն անձին, որ բարձր դիրք ունի ընկերության մեջ և ազդեցութիւն, առանց հաշվելու յուր երեք միլիոնի արժողությամբ փողերն ու կայքերը, պետք է նույնպես ի նկատի ունենալ, որ շատ լավ ընդունված է մեծ գրախ պալատում և բոլորից հարգված... Ես կարծեմ, որ մեզ պատիվ պետք է համարինք այսպիսի անձանց ծանոթութիւնը...

Հայրը այս վերջին խոսքերը արտասանելով՝ ծանր կերպով ձեռքերը կը շփեր ու Երանուհու երեսը կը նայեր, որն որ շղային մի բնիկ դողով ստք ելավ. ձեռքը մեքենայաբար դաշնակի մատնատեղաց վերա դնելով, որոնք մեռելային զանգակի նման հնչեցին այդ սղառնալից լուսթյան մեջ, հետո հորը ազալագին նայվածքը մը տալով՝ ասաց.

— Հայր, առաջին անգամն է, որ այսպես երկար խոսում ես ինձ հետ՝ առանց բացարձակ միտքդ հայտնելու. դու ինձ երկյուղ ես պատճառում. դո՛ւնյա...

Իսկ Գողթունի մի քմեխաղով պատասխանեց ազնվա այս խոսքերին. ձեռքիցը բռնելով նորից յուր տեղը նստեցուց, հարելով.

— Երեսխալական զգացմունքներդ մեկդի. թող և նիստ այստեղ. դեռ խոսքս չեմ վերջացրել և դու շտապելու ոչինչ պատճառ չունիս. լսի՛ր... — Ու ցուցամատովը Երանուհու ծնոտը զոշափեց, ստիպելով որ դուրսը քիչ բարձրացնեն, և ապա շարունակեց.

— Այսօր, ինչպես շատ օրեր, հանդիպեցա կրկին Զարեհ իշխանին. նա համարձակ հայտնեց ինձ քո վերա զգացած սերն ու հարգանքը, և աղբյուսագին խնդրեց իմ հավանութիւնը քեզ իրեն հարսնացնելու համար... Ես անշուշտ շատ ուրախ էի նորա առաջարկութիւնիցը և պատրաստ էի նաև տալ լիովին իմ հավանութիւնը... սակայն նախապես ուղեցի քեզ հայտնել այս ուրախադիթ լուրը, որպեսզի այսուհետև սառն չվարվիս նորա հետ, դու ես տաս քո հավանութիւնը, ընդունիս նորա ալցելութիւնները, սրով հետև մտադիր եմ շտապել հարսանիքը... Սա մի անսպասելի բա՛խտ է, որ ձեռքից բաց թողնելը կատարյալ հիմարութիւն կը լինի։

Անրացատրելի ներքին ալլալուքամբ լսեց Երանուհի այս սոսկալի հայտարարութիւնը, ու մօտը կանգնած խորհում էր մտարեւելով յուր մօր կրած տառապանքները հորը ձեռքից... Նա տրդեն զգլած ու սարսափած էր ամուսնական վիճակից և շատ ցավալի դադափար էր կազմել այդ մասին:

Մանավանդ յուր թշվառ մօր մահը այնպիսի մի լայն վերք բացավ յուր սրտում, այնպիսի մի սուղով պատեց, որ երկար ժամանակ դժվար պիտի լիներ մերկացնել այդ սիրտը սուգից՝ կրկին մի նոր սիրով կամ զգացմամբ պատելու համար: Իսկ եթե երեք ժամանակը շնչեր այդ սուգն ու ցավը, եթե այդ արդար և անաշու հոգին սիրեր մեկին՝ ընտրելով յուր կենաց ընկեր, անշուշտ նա չպիտի որոներ նորանում ո՛չ հարստութիւն, ո՛չ անուն և ո՛չ արտաքին ձևեր, այլ անձնվեր և աննյութ բարեկամութեան կապը պիտի լիներ յուր առաքինահայտ սիրո շղթան:

Գուցե այս կուսական անմեղ հասակի պահանջները կամ երեւակայութիւնը անիրագործելի համարվին իրականութեան մեջ, քայց նա առաջիմ այդ անգամ որոնելու ո՛չ տրամադրութիւն ունի և ո՛չ կամք: Ո՛ւր մնաց լինել ամուսին մի որեւէ անծանոթի... մի մարդու, որին հազիվ երկու կամ երեք անգամ հանդիպած ու հետը խոսած է, մի երիտասարդ իշխանի՝ զեռ կյանքի անփորձ և անտեղյակ.— նրա միայն վարդապետն կողմերը տեսած է՛ի շնորհս յուր հարստութեան: Ի՛նչ ընկեր կարող է լինել Երանուհուն զվարճութեամբ հափշտակված մի անձ՝ պլոդ և կանացի, յուր զինվորականի աշրական համազգեստին մեջ՝ յուզուած մազերով, սրածայր բեխերով և ոտիցը խթանի բոժոժներով, որ քայլած ու խոնարհած ատեն կոշիկները միմյանց կը խփեն, մետաղի հնչումներ հանելով: Որո սպիտակ ձեռնոցները ավելի դուրս կը ցայտեցնեն երեսի թուխ գույնը, գուցե թեթևամտութիւն. երկուտանի և շարժուն մի պաճուճապատանք, որի մեջ ո՛վ գիտե, կարող է թերեւ զանալի մի աղնիվ սիրտ, և կամ զանազան ունակութիւններ ու ակտեր են ծածկված, վատ դաստիարակութեան կամ բնույթի հետեանք:

Մորը մահիցն հետո մի տարին հազիվ լրացած, հանել իսկույն սգո սե զգեստները՝ հագնելու համար հարսանիքի կուսափալլ սպիտակ հանդերձանքն, գերեզմանատան մեջ պարահանդես տարքի... սրտագին արցունքները կեղծ ծիծաղի փոխարկել... դարհուրելի՝ էր... Մեքենայաբար ոտքի կանգնեց Երանուհի, զնաց շտապ միջին սեղանի մոտ, ու ջուր լցնելով բաժակում՝ խմեց մի քանի կաթիլ. հետո բարակ թաշկինակը շրթունքների վերա սեղ-

մած, մյուս ձեռքը սեղանին հենելով, մտածկոտ ու ջվարած կանգնեմ, երբ հայրը նույնպես կանգնելով, մտածեցավ ու հարցրուց.

— Ի՞նչ ես խորհում, ինչո՞ւ չես պատասխանում հարցիս...

— Պատասխանես համառոտ և կարծեմ շատ էլ բնական է. հայրս Եթե ասելու լինիմ, որ չեմ կարող ընդունել այդ առաջարկությունը, ոչ ոք ինձ չէ կարող մեղադրել, մանավանդ դու, հայր իմ. որովհետև դու ինքդ ասացիր որ իմ եղանակությունը կը ցանկանաս. և հենց ես այդ խոսքին վերա հիմնվելով, մերժում եմ համարեակ. զի եթե հավանություն ասեմ նորա կիևը դառնալ, որին ոչ կը ճանաչեմ և ոչ կարող եմ զգալ փոխադարձաբար սեր կամ համակրություն, դժբախտ պիտի լինեմ— Ձի կարողացավ շարունակել, և շվարած՝ հորը երեսը կը նայեր, որ ուզել էր մի քանի անգամ ընդմիջել յուր աղչկան, Նորա կնճռոտ դեմքի գունատությունը ցույց էր տալիս մի մտաւուտ փոթորիկ. բխերի միջից ֆշալով շունչ փչեց, և ինքն իրան դեռ զսպելով, մտածեցավ ընտանեբար, ու Նրանուհու զգեստիցը կտիված սև ժապավեններից մի-նը մատերին մեջ բռնած՝ խոսելով ասաց.

— Այլ եթե այդ խնամությունը ես ինձ, իմ նոյատեանների համար անհրաժեշտ համարեի, մեկ խոսքով մի բախտավորություն, այն ժամանակ չէի՞ր կամենալ արդյոք մեկդի թողնել այդ երեսկայական ցնորքները և հորդ լավությունը միայն աչքի առաչ ունենալ...

— Քո լավությունը, հայր... բացառանչեց Նրանուհի ընդմիջելով հորը. ուրեմն քո լավությունը ուզում ես ապահովել, հիմնել աղչկանդ դժբախտության մեջ. ո՞հ, չէ՛, անկարելի է, որ դու այդ բանին հավանություն տաս: Դուքն հարստության հրապույրը մի ըտպն գրաված լինի քո սիրտը, սակայն խորհիր մի անգամ, որ այդ բանը ուրիշ մի արդյունք չունի ինձ համար, բայց միայն դառնացնել իմ գրեթե բանտարկյալի վիճակս, դուրկ ամեն իմ տուրիքս ունեցող աղչկանց անմեղ հաճութներից. անմայր, տխուր, լքյալ, միշտ անգամ չի վայելելով քո խանդաղատանքը, աշխատում եմ լցնել իմ մենարանի առանձնությունը մորս քաղցր հիշատակով, որ միակ սփոփանքս ու սրբազան պարագմունքս է: Դու ուզում ես նորանի՞ց էլ զրկել ինձ. ուզում ես այս սուրբ հիշատակով տոչորոզ ու շնչող սրտին մեջ մի օտարի դեմ հակամայս տանելություն սերմանել, որի անշուշտ գերին կամ վերջ ի վերջո զոհը կարող եմ դառնալ: Ո՛չ, հայր իմ, ո՛չ, աստված չի ներեր այդ

բանը, չի թողներ որ վաղամեռիկ մոր գերեզմանը նորա աղջկանը հարստնայաց պսակին սեղան և զոհի բազին զարձնեն։

Արցունքները խցկեցին ձայնը կոկորդում, և սկսեց հեծկլտալ մինչդեռ հայրը՝ երկու ձեռքերը քամակին վերա ծալած, կատաղի ուղքերը գետին սևեռելով, աչ ու ձախ ման կու գար սրահին մեջ, Հանկարծ երկու երեք անգամ կեղծ հազաց, իբրև թե մի վայրույթի ազազակ խեղդել ուղենար կուրծքին մեջ. մտանցավ աղջկան, կանգնեց մոտը, ու աչ ռաթը մեքենայաբար դողացնելով ցաւկոտ հեզնությամբ ասաց.

— Ա՛յսպես ուրեմն հա՛... բացագանչեց։ Ա՛յս է իմ այսքան տարվա քեզ ամաժ դաստիարակութեանս պտուղը. դպրոցում ասացած ուսումներդ հորդ կամքը քեզ բռնաբարե՛լ սովորեցրին, նորա դառն և լիրբ պատասխաննե՛ր տալ, ընդդիմանա՛լ։

Այստեղ նկատելով Երանուհու համակամայս ցաւալի մի շարժումը, ձայնը մեղմեց, և համուզողական կերպով բռնեց շեշտելով, շարունակեց.

— Հասկացի՛ր զոնյա մի անգամ ընգմիշտ, որ ես ոչ ոքի շարիք չեմ կամենար, ուր մեաց իմ աղջկանս. սակայն չեմ էլ թույլ տար, որ այլք նույնը ցանկանան ինձ համար, մանավանդ երբ ձեռնարկած գործիս մեջ նյութական շահերս լինին ինձ շարժառիթ. այն ատեն վա՛յ նորան, որ կը հանդանի խոլընդտան կանգնել իմ ճանապարհի վերա... Անկասկած ես տեսրդել կը փրկեմ և հառաչ կը գնամ... ո՛վ որ լինի, կտալին ձիրանները, մինչև անգամ օձին թունավոր ակռան կարող եմ խելել, եթե ինձ վնասել ուղենան... հէ՛ հէ՛... — Երանուհի դուրսը կը շարժեր, միշտ մերժողական կերպով։ Գողթունի այս տեսնելով, մռնչեց.

— Մայրդ էլ համառ էր քեզ նման, բայց վերջապէս լռեց...

Այս վերջին բռնեցը՝ զայրագին հեզնությամբ արտասանված, շարաշար վիրավորեցին համբերատար աղջկան, այնպէս որ քիչ մեաց նվաղյալ գետին ինկնար։ Սակայն բոլոր ուժը քաղելով յուր որդիական սիրուն մեջ, ազնիվ խրոխտությամբ բարձրացուց գլուխը. և բողբոջանաց հստակ մի ձայնով, որ հատուկ է ընդհանրապէս հրկար ժամանակ ընկճյալ և բռնաբարյալ անձանց, որոնք ի վերջո իրավամբ կ'ապստամբին, դռնեց.

— Լսե՛, հա՛յր, և հիշի՛ր միանգամայն, որ դու պարտական ես հարգել իմ մոր հիշատակը, այդ տառապալալ կնոջ, որի ամբողջ կյանքը արցունք, ողբ ու կոծ էր քո պատճառով... նա այժմ աստուծո՛ւ է պատկանում. անմահութեան ամար դարձած՝ ազատված

է աշխարհից, և ոչ ոք իրավունք չունի նախատել մեռյալին օսկերտիքը: Մատաբերի՛ր հայր, որ մի աստված կա երկնքում, որ չի ներեր քնալ առ ինքն փոխադրված հոգւոց հիշատակին եղած նախատինքը և ոչ անմիոթիմար որբին արցունքը... Պատրաստ եմ ամեն բան տանել, ամեն բանի ներողամիտ լինել, սակայն...

Գեռ խոսքը չէր ավարտած, մինչ հայրը կատաղի գալով՝ դեմը արձանացալով. ձեռքի բուռը օդին մեջ բարձրացնելով, ուզում էր գուցե հարվածել յուր զովակին, երբ հանկարծ դաան կողքից խեղդով մի ճիչ ստիպեց նորան գլուխը դարձնել: Նա սեռալով պտտալով խնամակալուհուն՝ շվարած և դունատ, որ շտապեր գրկացը մեջ առնել արտասովթոր Երանուհուն, և կցկտուր ձայնով մրմնջեր. Տեր աստված, դո՛ւ ողորմիր. հետո աղային դառնալով կ'ասեր.

— Գոնյա փոքր ինչ գութ ունեցեք, մեղք է ձեր աղչկան. վերջապես մտածեցեք, տանը ծառայք կարող են լսել այս աղմուկը, հետո ձեր պատիվը...

Գողթունի ուշադրություն անգամ չդարձնելով նորա խոսքերին, մոտեցալ բազկաթուփն մեջ հեծնծող աղչկանը. և հագլիվ հազ բարկությունը զսպելով, արտասանեց խորխտաբար.

— Լսի՛ր, Երանուհի. արցունքներ ու ողբերգական կերպերն բոլորովին անանգի են և չեն կարող գրգել իմ դիտավորությունը. ասածս ասած է:— Հետո դառնալով խնամակալուհուն, որ ձեռքերը միմյանց կցած, աջ ու ձախ գլուխը տատաներ, հրամայական ձայնով ասաց.

— Ահա հրապարակալ նորա առաջ ճեղ ևս ասում եմ. աշխատի՛ր համոզել սորան, թե՛ կենդանիք չեն կարող մեռյալներին զոհել իրենց շահերը... Կենդանի մնացողներին ապրուստ և մի դիրք հարկավոր է ունենալ ընկերության մեջ: Մեռյալների հետ գործ չունիմ, այլ կենդանիներից կը սպասեմ ապագա. ջանա՛ սորան հասկացնել այս: Եթե այսուհետև կրկին հանդգնի մերժել իմ առաջարկությունները, վիճել ինձ հետ, այն ժամանակ կարող եմ ենթադրել, որ դու ես գրգռում նորան ինձ դեմ, և հետո... Ուստի իմացի՛ր, որ աղչիկս իշխանուհի պիտի լինի, այդ վճռած է. եթե մինչև անգամ բոլոր ունեցածս նորա օֆիս պահանջեն, պատրաստ եմ տալուս Հետո դառնալով Երանուհուն.

— Է՛հ, բավական են հառաչանք և արտասուք, կանացի սկարության ախտանիշներ, սրունք կարող են ծիծաղի փոխարկվիլ հարսանյաց հետևյալ օրը...

Խեղճ Երանուհի խոսելու անկարող, հեծկլտալով, ձեռքերը

մերժողական նշանով օդի մեջ կը տարտաբերեր... Հայրն այս տեղ-
նելով, հարձակվեց, և կոպտարար մի կողմ հրելով խնամակալու-
հուն, որ ուղում էր արգելիչ, ուժգին բռնեց աղչկան բազկիցը ու
ցնցելով բարձրացուց նորան. հետո խուլ բարկությամբ և կերկե-
րյալ ձայնով հրամայեց.

— Կորի՛ր սենյակդ, գնա՛... հրամամ մինչև վաղը միտքդ կը
փոխվի— Հետո համրաքայլ մոտեցավ սեղանին, առավ ճրագը,
և առանց իսկ նայելու աղչկա վերա, հայհույանք մրմուռով անհե-
տացավ միջին դռնից:

Նրանուհի առանց մի բառ արտասանելու դրեց յուր վշտերով
հուզյալ գլուխը պառավ ընկերուհուն կուրծքին վերա, և երկուսն
էլ արտասովին:

Սենյակը լուսավորված էր աղոտ մի կանթիղով միայն, որն
որ վառած էին անկյունում զնանդված սկեպաւս ջրշանակով Աստ-
վածամոր պատկերի առաջ. որի միայն աչքերը լուսավորվելով,
մթության մեջ կերևեր գթալից հայացքը, որ կը տարածեր այդ տա-
ռապալալ խմբակին վերա, իրրև պատասխան և քաշալիւր նոցա
աղերսանց հայացքին:

III

Այն երեկոյից սկսյալ զգալի մի փոփոխութիւն երևեց Նրա-
նուհու վարմունքի և բնավորության մեջ. տարտամ և անհաստատ
էր նայվածքը, խոսքերը մեղմ և սառն, գլխակոր, կարծես բոլորո-
վին պատրաստ՝ զալիք և ներկա թշավառությանց անձնվեր մի ող-
ջակեզ դառնալ:

Մանավանդ երկրորդ օրվա հորը և իր մեջ տեղի ունեցած բա-
նակցութիւնից հետո՝ նա բոլորովին կորցրուց յուր հաստատամը-
տութիւնը:

Գողթունի առավոտյան կանուխ մտնելով յուր աղչկան սենյա-
կը, աշխատել էր քաղցրորեն համոզել նորան, ասելով.

— Ես մտադիր չեմ բռնաբարել քեզ, աղչիկս, քա՛վ լիցի. սա-
կայն խորհիր մի անգամ, որ ամբողջ կյանքումս աշխատել եմ՝
մեծամեծ դժվարությանց հաղթելով, ունենալ մի դիրք, մի փոքր
ինչք ու հարստութիւն, և մինչև այժմ ստիպված եմ տակավին
դուխ խոնարհեցնել գոռոզ հարուստների առաջ. Այն գործարանը,
որ բաց արի, վնասից ավելի ոչինչ չէ տվել ինձ. դեռ չը կարողա-
ցա նորա պատճառով արած ծախքերս ծածկել... Եվ հիմակ դո՛ւ

ես իմ միակ հույսս. եթե դու ի սեր քո հորդ՝ վերջապես նորան ամոթից ազատելու համար՝ հաճություն տաս Զարեհ իշխանի կինը դառնալ, մի խոսքով, եթե մի իշխան փեսա ունենամ, որի շնորհիվ կարող լինիմ ծանոթություններ հաստատել և մի կերպով ազատվիլ իմ պարտքերից, այն տոնն հուսամ՝ ինձ բավական կը լինի գործարանիս բերած շահը հանգիստ ապրելու համար... Եթե ոչ, կարելի է որ ընկնեմ հետին աղքատության մեջ, և կամ այս անելանելի դրությունից ազատվելու համար կարելի է որ...— Նա շարժարտեց խոսքը, տեսնելով Երանուհու երկչուղալի հայացքը.— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, աղջիկս, եթե մի ցածության ընդունակ լինեիր... այն տոնն... Այսուհանդերձ, կարծեմ, քեզ հաճելի չէ քո սրտի ազատությունը վայելելու համար տեսնել հորդ բանտում կամ լքավորության մեջ... Դիցուք թե չես սիրում իշխանին. բայց խորհի՛ր, որ նա միակ մարդն է, որին կարող ենք ապավինել, միակ ապաստանելու տախտակը այս փոթորկալից դրություն մեջ:

Գողթունի փոքր ինչ սպասեց և ապա հարեց.

— Միթե քեզ համար պարծանաց առիթ չէ՞, աղջիկս, երբ հաղթելով քո հակակրությունն ի սեր քո հոր փրկության, մի փոքր զոհողություն անես, նորա ազատարարը դառնաս, ամուսնանալով Զարեհ իշխանի հետ, որ դուցե այնքան հակակրելի և վատ չէ, որքան որ դու կարծում ես...— Հետո սննեկին մեջ մի շրջան անելով, հարեց կեղծավորաբար.— Մի՛ կարծիր, որ ես չեմ գնահատում այդ սուրբ հարգանքը, որ սրտումդ տածում ես մորդ հիշատակին համար. բայց ես էլ, իբրև հայր, գոնյա կիսով չափ իրավունք չունի՞մ քո ծնողը կռվելու, քո կարեկցության արժանանալու:

Եվ նկատելով Երանուհու լուրջությունը, որ կարող էր իբրև հավանություն մեկնել, ձայնն ու կերպը փոխելով, ժամացույցը հանեց ու նայելով ասաց.— Օ՛, արդեն ժամը տառն է, ինձ հարկավոր է շտապել երթալ գործատուն... Հա՛, լավ միտքս եկավ. կը հաճի՞ս այս երեկո Մուշտալիդի այդին երթալ.— Երանուհի հազիվ նշմարելի կերպով գլուխը ծռեց. Գողթունուն այդքան էլ բավական էր, որ գլխարկը առնելով ասաց. Այսպես ուրեմն երեկոյան ժամը 5-ին երեքս միասին կերթանք. Ծա կուգամ ձեզ առնելու ծոռություն, աղջիկս:

Երանուհի ոչ մի բառ չարտասանեց. Նա այժմ գտնվում էր մի տաղանդի դրություն մեջ, խորհելու և որոշելու անկարող, դժբախտ ճակատադրին անձնատուր եղած, նման մի երեսալի, որի ձեռքիցը բռնած ման են ածում փողոցների մեջ, և որի շուրջը բարձած աղ-

մուկն ու գտնված առարկաները կարող են միայն ապշեցնելով թմրեցնել նորան:

Նրեկոյին հայր և աղջիկ՝ խնամակալուհուն հետ մի շքեղ կառ-
քի մեջ նստած, գնացին Մուշտայիդ: Գնալ ու գալը դրեթի 30
վայրկյանի ճանապարհ՝ կառքերու խումն բաղմոթյան և փոշու
մեջ, հրապուրիչ մի շրջադայություն չէր անշուշտ Նրանուհու հա-
մար: Սակայն հորը կամացը դեմ չի վարվելով՝ ստիպված էր բազ-
մության երևիլ, այդ ուրախ և ժպտերես ու նորելով հանգերձնե-
րով պճնյալ տիկնանց շարքում յուր սղա՛վորի պարզ սև ղխար-
կովն ու զգեստովը հակապատկեր հանգիստանալ: Կառքերի կակուղ
բարձերին վերա թեք ընկած անձինքների ոմանց քաղաքավարական
ողջույնը նա ստիպված էր փոխադարձաբար ընդունել, մինչև ան-
դամ ժպտել հակամաշտ, ներքին վիշտը արտաքուստ չի հայտնել:
Մանավանդ երբ պարտիզի ծառուղիներին մեջ կառքերը կը սկսին
համրաքայլ շրջադայել, այնտեղ բոլորը մոտից միմյանց հագո-
տը և երեսը կը զննեն, այդ առաջնույն քննությունը անշուշտ ավե-
լի կանանց սեռին կը վերաբերի:

Իսկ երիտասարդք, սպայք և մեծատանց որդիք, ոմանք հեծ-
յալք, այլք կառքերի մեջ, աչքերով տիկնանց կուտնեն. և մի բոսի
զբոսարանի դռանն առաջ կանգնելով, զարեջրով կամ որևիցե մի
ըմպելիքով կը մեղմեն իրենց ծարավը՝ առանց մի բոսի նստելու:
Եստ քիչերը բարձրանան զբոսարանի սանդուղներից, ուր տեղից կը
լավին առանձին սենյակների մեջ Կախեթի գինարբությամբ զվար-
թացած մի քանի խառնակաց օտարուհիների ծիծաղին քրքիլը ու
հստակ ելեէջները, և կամ սրտաբաց թամադայի և սեղանակցաց
գինեհոտ շրթանց պաշտինների շփոփուցը: Այս ներքին վիճակը բո-
լորովին չի համապատասխաներ արտաքինին. դուրսը հաղիմ թե
լեւելի են կառաց անիվների աղմուկը, մոտակա գործարանի շոգ-
վույն միակերպ ֆշֆշալը և գազոտ պտղաշրերի խցանին պայ-
թյունը:

Պարտիզում ամենքը լուրջ են և զգաստ, ուր միմյանց տես-
նելու համար մաքուր օդ ծծելը առիթ առնելով, այնտեղ են եկած
այլ գեղեցիկ տիկնայք՝ երիտասարդներին զմայլեցնելու:

Գողթունի կառքին մեջ նստած՝ անուշ ժպիտով և հովանա-
վոր նայվածքով երկու կողման ողջունողներին վայելուչ կերպով կը
պտտասխաներ:

Մին քանիսը մատնանիչ կանեին նորան, անվանելով բարե-
բար աղան. ուրիշներն՝ հավատք ընծայելով նորա մասին տարած-

ված բարի լուրերին, պատկառանք կընդունեին նորա ողջույնը։ Կային, որ չէին համակրում նորան, կասկածում էին ևս, սակայն թվով քիչ, չէին կարող ազդեցություն ունենալ ընդհանուրին վերա։

Այնտեղ Գողթունի բոլորովին ուրիշ մարդ էր պատկերանում. ոչ խոտոռնայվածքն ունեւր և ոչ այդ անգութ ծիծաղը. մանավանդ այն երեկոյին սովորականից ավելի վստահեցուցիչ էր յուր դեմքի արտահայտութիւնը։ Երանուհուհեա ունեցած խոսակցութիւնը մի ամբիշ հույս էր տված յուր սրտին։ Եվ անկասկած, եթէ իշխանը մի լավ բռնվելու յուր ճանկում, կամ լավ ևս ասել՝ աղջկանը սիրով, այն ժամանակ մի քանի հարյուր հազարներ ստանալու հույս կար իրեն համար։ Անշուշտ, եթէ իշխանը խելակորույս կերպով սիրեր Երանուհուն, միթէ կարո՞ղ էր ի բաց թողնել յուր սիրելիւնը հորը օգնելու առիթը՝ մի գումարի փոխադարձութիւնամբ, որ քաղ-դատելով յուր հարստութիւն՝ քառորդ մասն տնգամ չէր համարվել։

Հետո գուցէ կարողանա մի օր հոգաբարձու դառնալ քաղաքային բանկի մէջ. ո՞վ գիտե... այդ ապագան է, որին քիչ առ քիչ կարող է տիրանալ. հույս ունի յուր քնիկ ճարպիկութիւնն նորագոյտ միջոցներին վերա, մնացաւ ինքն իրեն կ'երթաւ Եվ մի անգամ որ աղջկանը տեղավորեւ, այնուհետև ո՞վ կարող է նորան մեղադրել, եթէ յուր ամուսնույն մահից հետո ամուսին առնեւ այն կնոջ, որին հետ արդեն վաղուց ծանոթ էր, որի համար զգար գուցէ անսանձելի և մարմնական մի կիրք, որն որ ստեպ հագնեալով, կարծես ավելի սաստիկ կը ստիպեր նորան՝ կնութիւն առնել այդ վատթար և անզգամ արարածին. մի ուրիշ մայր տալ յուր աղջկան, որին աղախինը անգամ արժանի չէր լինել։

Այդ կինը գրեթէ ոչինչ շունչնալով, համարյա մի ժամանակ նորա հետ Տիգրիս եկած, անկասկած չէր կարող Գողթունուն շահասիրութիւնից շղդել այս միութիւնը կատարել. անշուշտ ունեւր մի ուրիշ գորավոր պատճառ... Սակայն ինչ որ էլ լինի, ամենից առաջ հարկավոր էր փող ճարել, հարստանալ. և այդ միմիայն կարելի էր Երանուհուն իշխանի վերա ազդած սիրույն շնորհիւ։ Այո՛, յուր աղջկան զահարութիւնամբ, որին պիտի ծախեր կամքին հակառակ, անարգաբար յուր ընչասիրութիւնը հագնեցնելու և զանազան ամոթալից նպատակներին ծառայելու դիտավորութիւնամբ։ Պիտի ծախեր այնպես, ինչպես հասարակաց տների մէջ ծախում են կանանց, սա տարբերութիւնամբ, որ նոքա ծախվում են իրենց տնտեսի հաճութիւնամբը շատ մարդկանց և քիչ փողով, իսկ Գող-

թունի ծախում էր յուր աղչկան առանց յուր հաճությանը մի մարդու՝ շատ փողով, Սոսկալի և արյունազանց նախատինքը, որ երբեմն շահասեր մեղք անում են իրենց անմեղ զավակացը, և այսպես սովորինում են դժբախտ գերդաստանների և քանդում են տները։

Երկձի կառքը՝ շարունակելով յուր պատույթը՝ հետևում էր մյուս կառաց, երբ խնամակալուհին մեղմով դրդեց Երանուհու թե՛ ցույց տալու համար երեսուն քաջ հեռավորությամբ իշխան Զարեհին, որ մի սպիտակ ձիու վերա հեծյալ՝ հեռվից նորանց նշմարելով, փութանակի հառաչ կը գար Գողթունի ևս խնկույն նշմարելով, հրամայեց կառապանին՝ որ կանգնի. և կիսով չափ տեղիցը բարձրանալով, փեղույրը բացավ ու հարգանք ողջունեց, իշխանը աճապարեց պատասխանել Գողթունու ողջունին, զինվորական գտակը ձեռքում բռնած՝ աչ ալսին մոտ. մի քանի քաղաքավարական խոսքեր արտասանեց, որոց Երանուհի պատասխաններ մի մունք ժպիտով։

Հետո իշխանը առաջարկեց մի փոքր ման գալ պարտիզի մեջ. առաջարկություն, որ շատ սիրով ընդունվեցավ Գողթունուց, իշխանը ձեռք կարկռեց օրիորդին և յուր խնամակալուհուն՝ կառքից իջեցնելու համար, և մտան պարտիզի միջին հրապարակը՝ գոռոտարանին հանգեալ շրջապատված խիտ ծառուղիներով, իշխանը քայլում էր երանուհու մոտից, առանց երկար մամանակ մի բառ կարողանալ արտասանելու. Բայց նայելով նորա դեմքի գունատության և շրթանցը գողգողալուն, կարելի էր եզրակացնել՝ որ սրտումը ուներ մի որևէ զորավոր շարժառիթ այնպես այլայլելու մի բուռն պատճառ, որին գմբար է խնկույն սեր տնվանել. կարող էին տրփանք լինել։

Երբեմն օրիորդի կողմը դառնալով, տեսնում է նորա ծանրաբարո ու լուրջ կերպը, և չէ համարձակվում մի բառ արտասանել. թերևս չէր էլ ուզում խանգարել նորա մտածությունը... Այսուհանգերձ երջանիկ էր այն բուպին, գտնվելով Երանուհու կողքին, շնչելով նորա հետ միևնույն առողջարար և մաքուր սլուքը, ուր խառնվում էին շրջակա ծառերի անուշահոտ բույրը, Այո՛, սիրում էր իշխանը, սիրում էր... Սակայն ի՞նչ տեսակ սիրով. նորա կանացի նյութական ձիրքերի՝ցը գրավված, թե հոգեկան ազնիվ հատկություններիցը, որոց՝ պեսք է ասած՝ իշխանը չէր կարող դեռ տեղյակ լինել։

Գողթունի այդ տարտամ զրույթունից իշխանին հանելու նպատակավ ասաց.

— Վաղո՞ւց է որ այստեղ չեք եկած, իշխան:

— Այո, պատասխանեց իշխանը, մանավանդ որ այս վերջին շաբթու մեջ շարունակ անձրևների պատճառով կրուժուկ անգամ երթալը գրեթե մի հրապույր շունկու:

— Ե՛րբ պիտի փոխադրվին ձմեռային կլուբի մեջ:

— Կարծեմ երեք օրից, պատասխանեց իշխանը. հետո գիմելով Երանուհուն. Այլ դուք, օրիորդ, գրեթե բոլորովին տանից դուրս չեք գալիս. հավանականաբար ձեզ չեն հրապուրում բոլոր այս դրոսանաց տեղերը:

— Ո՛չ, ասաց Երանուհին, այդ գրեթե սովորությունից կախումն ունի. ես վաղուց տանը նստելու ավելի վարժված եմ:

Իշխան Զարեհ յուր բարձր հասակը օրիորդին կողմը խոնարհեցնելով, կաղամախի ծառի նման, որ յուր մոտը ծաղկած տկար բուսիկը կամենար ճմլել յուր ծանրության տակ, ասաց ժպտալով.

— Ներեցեք ինձ ասել, օրիորդ, որ դուք փոքր ինչ անձնասեր եք այդ մասին. սրովհետև պետք է ի նկատի ունենաք ուրիշներին, խորհելով որ եթե դուք չեք ցանկաներ նոցա տեսնել, կան անձինք՝ որք իրենց բախտավորություն կը համարին տեսնել ձեզ, խոսել ձեզ հետ և... — Չկարողանալով հաշտություն մղարտել յուր սիրահարի ձառը, շփոթված երեխայի պես Երանուհուն կընայեր Սորա համար շատ ծանր էր լսել այնպիսի մի բարբառ առաջին անգամ, և այն այդ անձից, որի համար ոչ սեր կարող էր զգալ և ոչ համակրություն: Սակայն յուր կանացի հպարտությունն էլ չէր թույլ տար չը պատասխանել, որովհետև կանացի նրբամտությամբ հասկանում էր, որ յուր լուծությունը իշխանը ըստ յուր քմաց և հաճույից կարող է մեկնել. ուստի այդ բանի առաջն առնելու համար պատասխանեց.

— Ես շատ ջնորհակալ եմ այն անձինքներից, միանգամայն և կը ցավիմ նոցա վերա, որոնք կարողանում են հաճույք զգալ տեսնելով մի անձի, որ գրեթե անզգա և անտարբեր է ամեն բանի...

Այս վերջին երեք բառերը դիտավորությամբ շեշտելով արտասանեց, որ շատ մխիթարիչ և քաջալերական չէին իշխանի համար: Բայց խնամակալուհին, որ բնիկ մի հակակրություն կը զգար դիտականների դեմ, սրտից ուրախ էր, թեպետ տեսնում էր իշխանի շփոթությունը, գունատ պատկերը, և ինքն իրան խորհրդածելով կասեր. Գուցե և սիրում է, բայց ի՞նչ օգուտ, եթե Երանուհին չէ սիրում նորան... հետևաբար ո՞վ կարող է հաստատել, որ նորա այժմյան սերը պիտի տա Երանուհուն երջանկություն և հան-

դիտաւ. քիչ սիրահարներ կան, որոնք չ'ամուսնացած, պատրաստ են կյանքերնին դռնէլ իրենց պաշտամանց առարկային, և մեկ քանի ամսից հետո հենց իսկ իրենց սիրո առարկան կը դռնն իրենց կենաց հաճոյիցը, կամ ուրիշ կանանց սիրոյն... Սիրում է, էհ... ի՜նչ արած, կը սիրե ու կը դադրի...

Գողթունի էլ լատ էր յուր լրտեսի ականջովը Երանուհու խոսքերը. և հանկարծ զայրուլիքը զգալով ու շարունակամբ հազալով, ձայն տվաւ իշխանին.

— Եթե կը կամենաք, նստինք փոքր ինչ այս սեղանին մօտ, ասաց նա ու դառնալով հեռվից նշան արաւ ծառային, որ ամբողջ ըրերի Իշխանը կանգ առաւ, և խթանները միմյանց խփելով, զլուսը ծոցի՛ն նշան խոնարհ համանության, խնամակալութիւն Երանուհու աջ կողմը նստեց նստարանի վերա. մինչդեռ իշխանն ու Գողթունի ամբողջ առած, նոցա դեմը բաղմեցան:

Նստած խոսում էին անկարեւոր և օտար նյութերի վերա. ընտանեկան նրկուլթ կլուգում, թատրոն, Դոմայի կարգադրությունք, Երբ նոքա խոսեին, մի վրացի մուրացիկ կի՛ն՝ կարկտա՜ներով ծածկալ, կեղտաւ մի զգեստ հազած, գրկում մի նրեխա, խիտ և խիւղ մազերիցը սքողալ սև աչքերովը՝ ցաւագին նայելով, մոտեցաւ ակումբին ողորմություն խնդրելու Երանուհի այս նկատելով, իսկույն խնդրեց խնամակալութեան փողի քսակը, և մի հինգ ուսրիանոց ամառելով ու կարմրելով՝ մատուց մուրացկուհուն: Երբ այս վերջինը երեսը խաշակնքելով՝ շնորհակալության աղոթք և օրհնենք կը փսփսար, իշխանը ժպտալով և զգացված, քաղաքավարի ընտանությամբ ասաց Երանուհուն.

— Ո՛րքան բարի և ողորմասիրտ եք, օրիորդ... — Ու հետո Գողթունուն դառնալով հարեց.

— Զեմ զնորմանար օրիորդի առատածեռն բարերությանը. նա դորանով բացատրում է ում դուտորը լինելը:

Գողթունի ուսերը բարձրացնելով, զլուսը խոնարհեցուց, և ձեռքերը բաց արաւ, իբրև թե ասել կամենար մի կեղծ համեստությամբ, թէ ի՜նչ մեծ բան, մեր ամենիս պարտքն է այնպես վարվել, ես անարժան եմ ձեր գովեստին:

Թեպետ մի որևէ մուրացկան աղքատի հինգ ուսրի ողորմություն տալը սովորություն չէ եղած, և գուցե շուայլ ցուցամուտություն դատեին տեսողները, բայց ով որ լավ ճանաչեր Երանուհուն և նորա բնիկ ողորմած սիրտը, իսկույն կըմբռներ, որ նա հինգ ուսրին շնորհեց ոչ միայն մուրացկանին, այլ մի թշվառ մոր,

հիշելով յուր դժբախտ հանգուցյալ մորը, որ իրոք նորանից շատ ավելի թշվառագույն էր բոլորովին մի տարբեր վիճակի մեջ, Ծվ այդ շնչին ողորմությամբ, կարծես, ուզում էր բողոքել մարց թշվառության դեմ, մի շնչին հարգանք ևս մատուցանելով յուր սիրելի մորը հիշատակին։ Իսկ մարդիկ, այդ բարի վարմունքը (բարերար աղա) հորիցը ժառանգած համարեցին։

Սեպտեմբերի վերջերում երեկոները շատ ցուրտ կը լինին։ Ցերեկը քաղաքի մեջ տիրած բարեխառն և դաղջ օդը՝ արևու մարմանելուց հետո՝ տեղի կը առ շրջակա լեռներից իջնող սառնություն, ուստի յուրաքանչյուր ոք կը փութա տուն վերադառնալ բաց տխորժակով, ուր տաք թնջը կը սպասեւ։

Գողթունի յուր ընտանիքով նույնպես պատրաստվեցավ վերադառնալ տուն, կրկին և կրկին խնդրելով իշխանից, որ իրենց պատվեւ յուր այցելությամբ։ Իշխանը լսելով Գողթունուն, տեսնում էր նաև Երանուհու երեսին անտարբեր սառնությունը։ Տխուր քաղաքավարությամբ շնորհակալ եղավ, խոստանալով որ տաշին առթիվ կը փութա օգտվիլ այդ հրավերից, և կու գա անձամբ մատուցանել յուր հարգանքն ու համակրությունը։ Այս խոսքերը արտասանեց շեշտելով և վարանմամբ՝ կրկին Երանուհու երեսը նայելով, որ զգալի կերպով և ծանրությամբ խոնարհեցնում էր։ Իշխանը մի երկու վնասյալ քայլեր անելուց հետո՝ թույլ կերպով գլուխը ծռեց, առանց այս անգամ խթանները միմյանց խփելու։

Նվ երբ Գողթունի ցած ձայնով կը հայտնեւ Երանուհուն յուր դժգոհությունը իշխանին արած սառն ընդունելության մասին, արդեն նա յուր սպիտակ ձիուն վերա շտապով հեռացել էր այն տեղից։

IV.

Այդ երեկոն Երանուհուն համար շատ հուզյալ և տխուր անցավ, ինչպես շատ անգամ։ Հայրը տանից դուրս էր գնացել ըստ սովորության, թեյ խմելուց հետո. իսկ նա մնալով առանձին յուր խնամակալուհու հետ, չէր կարողանում մինչև իսկ լսել նորա միակերպ, այլ բարի սրտից բխած մխիթարական խոսքերը, որ սովորություն ուներ մի ձայնի վերա արտասանել։ Գիշեր բարի մաղթելով նորան, գնաց ու սենյակը առանձնացավ. և անկողին մըտնելով, առավ յուր պաշտելի հեղինակին՝ Շեքսպիրի մի հատորը և սկսավ կարգալի Դիավածով բացել էր այն էջերը, այն հրաշալի

տեսարանը, ուր Հիր թագավորը ճանաչում է վերջապես յուր արևելի և անձնվեր դստեր՝ Կորդելիային, և գնահատելով նորա որդիական սերը, օրհնում է նորան և լավիս Հրաշալի ողբերգության այդ պատկերը միշտ խորին և բուռն տպավորություն թողած էր նորա վերաւ Բայց այս անգամ անհուն և տարօրինակ հոգեկան հուզմանց մեջ գտնվելով, ավելի ուժեղ զգաց այդ տպավորությունը, արևելի համբոսակիչ և վառ գույներով հանդիսացան յուր երևակայության առաջ՝ համակրելի և հայրասեր դիցազնուհուն զոհարերությունքն, զրկանքն և հոգսերը։ Նա Կորդելիային ներկայացնում էր յուր հոգվույն սառն լուսեղեն շրջանակի մեջ բոլորված մի պսակի, որն որ կազմվում էր յուր առաքինական գործերից։ զուցե յուր կամշոտ, կրքոտ և հրամայելու վարժված հորը՝ ալեգորդ թագավորին օրհնությունն էր նորա աղբյուրը։ Ինկած ամենահատին թշվառության մեջ, թափառելով ժաշոտ լերանց և անձալների խորքում, որք զարհուրելի արձագանքներով կրկնում են նորա ողբաձայն աղաղակները ու գանգատանաց հառաչանքները։ յուր գահազուրկ հայրը փոխանակ արքայական ծիրանվոյ՝ վայրի բաղեղներով և եղեղներով է զարդարել յուր նիհար մարմինը ծածկող ցնցուռի կապան։ Արտասովաբան և ցավալի գլուխը՝ փոխանակ իշխանության թագին՝ թառամյալ և զխակոր ծաղիկներով է պսակված։ Նա լույս է փնտրում յուր խավար կենացը մեջ կույր աչքերով և կույր մտքով։ Նորա մոտ յուր ծաղրածուն խելացի է համարվում, նորա չէ կարողանում փրկել յուր հավատարիմ կենտին անձնվեր բարեկամությունը անգամ։ Յուր աղքատից ապերախտությամբ հալածյալ ու շանթահար՝ թափառում է նա ինչպես մի արքայազն Ագասթեր, մինչև որ գտնելով յուր խանդակաթ աղքկան, Կորդելիային, ինկնում է նորա դիրկը, ուր և գտնում է վերջապես յուր ազոտ մտացը նշույլ և մնացյալ ավուրցը համեստ երջանկության մի հույս։ Յուր միակ, անձնվեր աղքկան կողքին հայրն ու թագավորը միանգամայն զարթնում և կանգնում են կրկին նորա մեջ... այլ սովա՞ղ, ամենայն ինչ անշնչանում է մահվան զրկում։ Հոր սպիտակ ալիքը մեռյալ աղքկա մարմնույն պատանք է դառնում, որի վրա և հայրը գտնում է յուր անառնելի ցավոց գերագույն հանդիսան ու անդորրը։

Կորդելիայի մյուս քույրերը կորչում են թշվառացյալ իրենց հոր անեծքից։ Ո՛հ, այդ բոլորը սարսափելի է, քստմնելի, սրտառուչ և ահեղ։

Մակայն ո՛չ. Երանուհին չէ կարող տանել, չէ կարող արժա-

նանալ հորը անեծքին... Նա խորհում էր, որ լիովին տրամադիր է՝ զգալով իրանում բավականի ույժ և անձնվիրություն, մի կոր-դելիա դառնալ յուր հորը համար։ Նա անկասկած կարող է անել այդ բուրբը, ինչ որ արած էր Կորգելիան ի սեր յուր հորը՝ Թագա-վորին։

Ասկայն մի՞թե նորա հայրը կարելի էր բաղդատել Կորգելիայի հորը հետ, մի՞թե նա այնքան թշվառ և կարոտ էր յուր զոհարերու-թյան։ Հետևաբար յուր անելու զոհը ավելի ծանր չէ՞ր, քան այդ արքայազատեր զի հակառակ յուր հավանություն և կամաց՝ պա-հանջում են իրանից ամուսին, բարեկամ և վերջապես կենակից ընտրել այն մարդուն, որին նա չէ սիրում, որի արտասովորից տխուր դեմքիցը պահանջում են միանգամայն զոհունակության մպխա։

Նրկինքը միայն կարող է ծիրանի գոտի ցույց տալ անձրևի կաթիլների միջից։ Նա պատրաստ է տանել ամենայն նեղություն ու վիշտ, բաց՝ ի այդ ամուսնությունից... Բայց այն ժամանակ մտաբերեց Երանուհի յուր հոր խոսքերը, թե այուր բախտը կախ-ված է այս խնամությունից, և թե առանց դորան պիտի ինկնե հե-ղածայր չքավորության մեջ։

Հետո երևակայեց իրեն արդեն ամուսնացած յուր սրտին սի-րելի, բայց աղքատ մի անձի հետ, և նույն միջոցին աշանց առաջ եկավ յուր հայրը, թշվառ, օրեկան հացին կարոտ։ Գուցե այն ժա-մանակ յուր աղջկանը համեստ օգնությունն էլ պիտի մերժեր ար-համարհանող, ողորմություն և նախատինք համարելով իրեն, և պիտի մեռներ քաղցած, մինչև վերջին շունչը անիծելով յուր դա-վակին։

Գորանից հետո պիտի կարողանա՞ր արդյոք երջանիկ լինել, եթե յուր սրտին սիրելվույն մոտ իսկ գանձի...

Ո՛հ, ո՛չ... անհրաժեշտ է, հարկավոր է տեղի տալ անողոր-ճակատագրին, զխակոր և լռելայն հնազանդիլ ծնողի հրամանա-ցը, եթե մինչև անգամ կյանքը զոհել հարկ լինի...

Մի բույե մնաց լուռ և երազացնոր։ Գիրքը հանգչում էր ծըն-կացը վերա, և յուր կուսական անուշահոտ սենյակում տիրած լուսության մեջ որոշ զգում և լսում էր աղնիվ սրտին կանոնավոր, ալլ զորեղ բարախումբ։ Գլուխը արմունկին հենած կը խորհեր. բայց հանկարծ ցնցվելով, երկու ձեռքը ճակատին դրավ և հարցուց ինքն իրեն՝ Թե տարդյոք այդ ծանր զոհողությամբ պիտի կարողա-նա՞ ինքն էլ արժանանալ հայրական օրհնենքներին. արդյոք կարող

պիտի լինի՝ վանել նորա դեմքից այդ տխուր և վայրագ արատահայտութիւնը, որ այնքան սարսափ կազդէր յուր վերաւ:

Նա միայն այս էր սպասում վարձատրութիւն յուր անձնվիրութիւնը. ցանկանում էր տեսնել հորը դո՛հ և ժպտերես. այո՛. վայելել նորա ժպիտը ի գին յուր ազատութեան...

Այլ իսկույն մի տխուր ծիծաղ փայլեց յուր վեհանձն դեմքին վերա, մինչ դեռ շրթունքը մրմնշում էին այս բառերը. «առաքինութիւնը առանց որեւէ վարձատրութեան նկատմանքի կարող է առաքինութիւն կոչվել: Նա պետք է որ յուր մեջը պարունակէ անձնութեանցութեան և անշահասիրութեան, առանց դորան... Անկողնին մոտ վառվող ճրագը արդեն պլպլալով արձակում էր յուր վերջին կայծերը, որ մի վերջին անգամ ևս անգրագարձա՛վ Երանուհու երեսին՝ փայլելով մի դույզ արտասովաց մարգարտի մեջ, և հետո ամեն ինչ ծածկեց մի խորին, լուռ մթութիւն:

Քնած էր Երանուհի անմեղ և տանջալ զոհերի հատուկ քնով, որի քաղցրութիւնը կրկնապատկւում էր յուր դյուցադնական որոշումից, այսինքն հնազանդիլ անտրտւնջ յուր հորը կամաց:

Բայց առավոտուն երբ աչքերը բացւա՛մ, գիշերվան ցնորքների հետ փարատած էին հոգին ճնշող զգացմունքները: Սակայն կրկին իրականութեան մեջ վերադառնալով, զգում էր եթէ ոչ զըզշումն, դռնէ մի ցա՛մ՝ յուր արած որոշման հետեանքը մտածելով. որովհետեւ որքան անձնվեր լինինք, որքան էլ հաստատակամ լինի մեր զոհարարութիւնը, դարձյալ մի բնիկ զգացմանց ձայն կա մեղանում, լիովին մեր անձնական շահերի սեպհական և օրինավոր աղաղակը, որ կը բողբոջէ մեր որոշմանց դեմ: Հոգեկան մեծ ույծ և կորով է հարկավոր լոնցնելու համար այդ ձայնը. և ուր որ նա կլոն, առաքինութիւնը այնտեղ միջոտ կը հաղթանակէ:

Երանուհի ևս այդ ներքին պատերազմով հուզված էր. այլ նա հուսալիր հավատում էր յուր առաքինական ույժին և նահատակի համբերութեանը, միմիայն յուր հոր բարեկամութիւնը ի նկատի ունենալով, որ նույն գիշերը՝ առավոտից մինչև երեք ժամը նստած էր կլորում, մինչև փակման ժամու վերջին զանգակը: Հյուրասիրում էր իշխանին, խոսելով նորա հետ ընտանեկան զանազան դժբերի վրայոք, անվանում էր նրան յուր որդին: Իսկ իշխանը Գողթունու վարմունքից քաշալերյալ և Շամդանի գինուց զվարթացած, խնդրում էր, որ հառաչիկա շաբթուն՝ յուր տոնախմբութեան օրը՝ բարեհաճի երեկոյին իրեն մոտ գալ օրիորդ Երանուհու:

հետ. հրաման ուղեւորվ միանգամայն Գողթունուց, որ թույլ տա իրեն՝ անձամբ զնալ հրավիրել օրիորդին:

Գողթունի շնորհակալ կը լիներ իշխանից բոլոր յուր փափով դիտավորութեան մասին, կրկին խնդրելով որ իրենց մոտ գալու համար երբեք հրամանի կամ թույլտվութեան չսպասե:

Այս սիրալիր խոսքերից հետո իշխանը մի բաժակ առաջարկեց բացակայից կենացը. և Գողթունուն յուր սեպհական կառքին մեջ առնելով, տարավ և յուր տան դռան առաջ իջեցուց:

Լավ զննելով իշխան Զարեհի պատկերը, չէր կարելի հաստատ ասել, որ նա մի անսիրտ և անխելք մարդ լինի. ընդհանրապէս կը վարմանցը մեջ ընդհանրապէս ցույց էր տալիս և բավականին մտաւոր կարողութեան, որ կորցրել էր յուր նախկին ուժը՝ արած քեֆերուն շնորհիւ: Ուսում առած էր Պետերբուրգում. և երկար ժամանակ էլ տարած լինելով այդ խոնավ և սառն կլիմային տակ, ոչ մի կերպով չէր կորցրեր յուր տիղիսեցու եռանդուն արյունը և հակոտակվող ու հլուրասեր բնավորութեանը: Իսկ յուր առած ուսման, կարելի է, մի մասին երեք քառորդը մոռացած լինելու: Երբեմն այնպէս տգետ էր ամենապարզ խնդիրներու մեջ անգամ, որ համարձակ կարել էր եզրակացնել, թե Պետերբուրգում նշան տեսն ալիլի գիշերները պարապեր է ուսմամբ քնույն մեջ, այլ ցերեկին արթնութեան ժամանակ՝ քեֆով. այսուհանդերձ շատ է սիրում մատենադրութեան, զեղարվեստութիւն կը կրթն ճաշակը: Սակայն արդեն երեսունին հասած մի մարդու մոտ, որ քեֆ է սիրում, բնականաբար տկարամասն ուղեղի ընդունակութեանները և կը կորչի հիշողութեանը, հակտի. մտքերուն պէս, որք քիչ առ քիչ սկսած են մորթին վերա լուսանցք բանալ:

Գեղեցիկ սեռին մոլեղնաբար պաշտող և հակամետ, ունեցել է ինքն էլ յուր ժամանակին սիրտ հաղթանակներ ոսկեհեր օտարուհիաց ակումբին մեջ յուր երենոսին նման սեւափայլ մազերի դանդուրներովը.— թեպետ այժմ էլ շարունակում է, ինչպէս մի անհրաժեշտ պետք և ունակութեան, հետեւի կանոնց: Այդ է յուր գըլխավոր տկարութեանն ու պակասութեանը, որի վնասը շատ անգամ միայն ինքն է զգացել.— և այդպիսի մի պատկեր ունեցող անձ ուրիշ կերպ չէր կարող վարվել: Սե ու մեղմահայաց աչքերը մի տեսակ տոփանաց կայծ ունեին. ավելացրեք նոցա վերա մի մեծ քիթ՝ շարժուն ռեզուսցով, նիհար աչտեր և լայն պրկունքներ: Սակայն այդ բոլորը կարող էին և նշանակ լինել մի քաջ ու ազնիւ սրտի:

Բայց ինչպե՞ս ենթադրել, որ այս կովկասցի Դոն-ժուանը, այս մեղրածուծ մեղուն, որ հազարավոր ծաղկանց վերա թռչկոտելով, նոցա բալլն ու քաղցրությունն էր քաղել, նոցանից հեռանալուց հետո հանկարծ պիտի կանգնի և հանդարտի մի պարզ և համեստ ծաղկի հովանույն տակ այնպես՝ իրրու թի ալլես թևեր շունենալով թռչկոտելու Ծվ ո՞վ պիտի կարողանար կտրել նորա թևերը. միթե նա պիտի բավականանար մի ծաղկի մեղրովը։ Ախ՛րհ հողմույն սերը այնքան զորավոր պիտի լիներ, որ հազթեր անասնական զգացմանց։

Ճուր կենաց մեջ տառչին անգամ նա հանդիպեցավ մի աղչկա, որի ազդած սերը չէր նմանում ուրիշ կանանց մոտ զգացածին։ Այն՝ այս առաջին սուրբ սերն էր, որ զգում էր յուր կենացը մեջ Երանուհու համար, առանց անշուշտ հաշվելու այն արփանքը, որ բորբոքվեցավ յուր մեջ՝ քսան տարեկան հասակում, գրեթե անփորձ եղած ժամանակը. տրդանք մի գերմանացի դերասանուհու համար, որո պատճառով քառասուն հազար ռուբլին ադամանդյա բնականների, հանդերձանաց, ոստրենների և Շամպանի գինու փոխարկելուց հետո՝ հեռացավ Պետերբուրգից իր հիշատակ տանելով հետը մի զգված սիրտ, հյուսիսյա մարմին ու դատարկ քսակ, որին հետո լքեցնելը դժվար եղավ. որովհետև հայրը՝ ամեն բանի տեղյակ լինելով, համառոտ կերպով հանդիմանեց որդվույն։ Բայց յուր որոշումը հանդիմանություն պես համառոտ չեղավ դժբախտարար. և նա կը տար յուր որդվույն այնքան գումար, ինչքան որ անհրաժեշտ էր և անվրեպ նորա կարեւոր ծախքերին։ Ամենայն ջանք անհնարին եղան հորը համոզելու, երբ ասեին թե սորանից հետո որդին խրատված է, թե ալլես շպիտի հետևի կանացի պատկերով քսակաց սիրուն տղրուկներին և ալլես Սակայն նա անհաղաղ դեմաց յուր կարծիքի վերա։

Եղմարիտ որ այնքան էլ խիստ վարվել չէր կարելի մի երիտասարդ անձի հետ. սկզբից եթե նորան վարժեցրած լինեին խնայողության և ժուժկալ կյանքի։ Նույնը իրավունք կունենային այժմ էլ պահանջել նորանից։ Դարձյալ ծնողքն են մեղավոր, որք սովորեցնում են իրենց որդիքը մի հեշտ կյանքի, իրենց կրթերն ու ցանկությունները դուրսով հագեցնելու փողի առատությունը։ Իսկ երբ այս կյանքից վնասվում է նոցա առողջությունը, ծնողք զեռ ոչինչ չեն նկատում, ալլ կույր աչքերնին բացվում և սրտերնին զգում է ցավ այն ատեն, երբ քսակնին է վնասվում, երբ հարկ է լինում նյութապես առումել իրենց անփույթ տգիտությունը։

Իշխանի հայրը վախճանեցավ վերջապես (բարերախտաբար գուցե) թողլով յուր որդին ինքնիշխան ժառանգ բոլոր յուր հարըստութիանը։ Սակայն դորանից հետո Զարեհ իշխանը առիթ էլ չունեցավ հիմար ծախքեր անելու Ի սկզբան վայելուչ կերպով տարավ հոր սուգը. և հետո նորա տեղը բռնելով, կարծես ավելի ծանրաբարո դարձավ ու լուրջ, մանավանդ որ նա արդեն հասած էր այն տարիքին, երբ մարդս ավելի մի հավատարիմ և սիրող տիկնոջ բարեկամութիանը կը կարուսի, քան թե գեղապաճույճ օխրուհիո վաղանցուկ և շահանկատ փաղաքշահանցը։

Եվ այդ ընկերը, այդ ամուսինը նա հույս ուներ գանել Երանուհու մեջ, այն վաղուց երազած գաղափարական արարածը, որի սիրովը շանթաճար եղած էր հանկարծ ու հանպատաստից. այժմ ամեն շանթ գործ էր գնում հասնել յուր նպատակին։ Բայց ցեաք է ասել, որ Երանուհի գրեթե առաջին անառիկ կինն էր, որ ստատահում էր նորան կյանքում. սա չէր այն փաղաքուշ սեղեխներից, որոց կարելի է հրապուրել քաղցրահոտ նամակների, ծաղկանց փնջերի անձրևով, ակամակուռ բնծանների աչք և երբեմն առաքինութիւն անգամ շլացնող փայլով։

Սակայն չէր հուսահատվում, մտածելով որ գուցե ժամանակ անցնելուց հետո միաբը փոխե, և բարերախտաբար էլ թուլլատրութիւն ուներ մտնել նոցա տունը, տեսնել նորան մոտից, խոսակցել հետը... Եվ գուցե այսպես շարունակ հաճախելով, կարողանար վարժեցնել օրիորդին յուր ներկայութիւնը՝ առանց հակակրօթիան տանելու... Եվ թերևս ո՛վ գիտե՝ ժամանակով վարժվելով, անհրաժեշտ համարեր իրեն համար՝ այդ ընկերութիւնը յուր տխուր կենացը առանձնութիւնն զվարթացնելու համար... Ալֆրեդ Մյուսսե ասում է, թե կանանց սիրտը մի մայր եկեղեցի է, աստուծո սուրբ տաճարի խորանը հենց իսկ սրտի մեջտեղն է. սակայն ի՞նչքան անթիվ մատուռներ կան յուր շուրջը։ Իշխան Զարեհ բավական կը լինէր մի մատուռով ևս, միայն թե թուլլ տային ընդունին իրեն այդ մայր եկեղեցու մեջ. մատուռից ավագ խորան հասնելու ճանապարհը շատ երկար չէր, այսինքն՝ համակրօթիութից զեպ ի սեր։

Այս խորհրդածութիւնաբ և հույսերից քաշալերյալ, հրամայեց՝ որ կառքի ձիերը լծեն, Հագալ ամենանոր համազգեստը՝ ոսկե ծոպերով դարդարված, ծածկեց ձեռքերը ամենամաքուր սպիտակ ձեռնոցներով, և հայելիի մեջ մի ակնարկ տալուց հետո՝ ինչն իրենից գոհ, զնաց և նստեց յուր երկձի կառքի մեջ։

Գողթունի արգեն հայտնել էր յուր աղչկան՝ իշխանի այն օրե-

ըր իրենց մօտ գալու դիտաւորութիւնը, և խնամակալութիւն մի քանի օրից ի վեր միշտ աշխատում էր կոկիկ և վայելուչ կերպով հազմելի, որոշ լգիտեմնալով իշխանի որ օր գալը, և վախճանալով որ Երանուհի առանձին շինի նորան ընդունելու ժամանակ, կես օրից մի քառորդ ժամ անցած հնչեցին դռան զանգակը, և քիչ հետո իշխան Զարեհի խթանների հնչյունը լսվեց, որ սանդուղներից կը բարձրանար:

Միջին դռնից ներս մտաւ՝ փոքր ինչ դուռնատ, և մի քանի քայլ առաջ գալով՝ խոնարհվեց. և մերձենալով միմյանց, ձեռք տվին, նույնպէս և պառավ խնամակալութեան շնորհ Երանուհու հրաշխանք նստեց սեղանին մօտ բազկաթոռին մէջ. իսկ օրիորդն յուր խնամակալութեան հետ նորա հակառակ կողմը նստեցան: Փոխադարձ քաղաքավարական, բայց անհրաժեշտ խոսքերից հետո՝ երկու վայրկյանի շափ լռեցին. իշխանը արագ շունչ էր առնում՝ սանդուղները բարձրանալուց դադարած և ձեռնոցները հանելով: Խնամակալութիւն ձեռքը բերնին դնելով՝ երեմէն մեղմ կը հազար, երբեմն էլ պարապ շմեւալու, յուր շփոթութիւնը ծածկելու համար զգեստին ծալքերը կուղղեր, բայց Երանուհի աչքերը գետին սեւռած, խոսակցութեան մի հարմար նյութ կը փնտրեր. նույնը անում էր իշխանը, յուր շուրջը պատերին նայելով: Վերջապէս երկշտութեան քողը պատռելով, ինքը իշխանը առաջին անգամ ակնեց խոսել իրենց տան դիրքին, օդի լավութեան մասին: Պատից կախված Ալմազովսկու երկու պատկերաց նկատմամբ դիտողութիւններ արաւ, որոնք բուն իսկականին յուղատիպ օրինակները լինելով, ներկայացնում էին Կոլումբոսի ճանապարհորդութեանց դեպքերը, ասելով թե ինքը տեսած է բուն վարպետինը. երկու հրաշալի նկարներ, որոնք շատ վատ են լինում յուղաներկ տպված, այդ միջոցը գրեթե նվաստացնում է իսկականին արժեքը, և երբեք տպագրութեամբ նոցա ճիշդ գաղափար չէ կարող տալ: Խոսեցան նաև ընտանեկան երեկույթների և զրոստնաց վերաբերյալ հարցեր: Իշխանը մի հարմար միջոց գտնելով, ասաց վերջապէս Երանուհուն երկշտ կերպով, տեսնելով նորա լուրջ և բռնագրոսյալ փայտը.

— Ներեցե՛ք, օրիորդ, իմ համարձակութեան. սակայն ձեր հոր ազնիւ վարմունքը քաջալերեց ինձ այսօր ձեզ մօտ գալու հաճույքը վայելել և միանգամայն հրավիրել ձեզ իմ տոնախմբութեան հառաջիկա ուրրաթ երեկոյին: Եթե ունենամ ձեզ ինձ մօտ տեսնելու պատիւը, երջանկութեան և երախտիքս անսահման պիտի լինին: — Այս խոսքերը նա այնպիսի քաղցրութեամբ արտասանեց՝ զլուրջ

առ ուսին վերա ծնելով, ազաւական կերպով, որ հշմարիտ դժվար էր իսկույն մերժելը՝ Երկու կտեսւց շվարած միմյանց երեսը նա-
լեցան:

Ննամակալուհին, որ յուր համառ ներկայությամբը շատ հա-
ճելի շէր հղած իշխանին, Երանուհու վերա մի վայրկյան նայվածք
ձգելով, յուր միահնչյուն ձայնովը պատասխանեց.

— Գիտե՞ք, իշխան, որ Երանուհին դեռ սուղի մեջ է. և շատ
անհարմար կը լինի, եթե նորան տեսնեն հանկարծ մի տոնախմբու-
թյան մեջ. կարծեմ...

Երանուհի տեսնելով խնամակալուհու տարակուսանքը, հարեց,
անտարակույս որ դորանում ոչ մի մեղադրելի բան չկա. սուղը
մարդուս սրտումը կը լինի և ոչ արտաքին ձեւերով. սակայն ան-
շուշտ ձեզ էլ հայտնի է, որ մարդիկ այնպես շին մեկնենք. մարդիկ
սովոր են արտաքին երեւոյթից դատել տմեն բռն...

Գողթունի՝ որ սրահ մտած արդեն լսած էր այս վերջին խոս-
քերը, բարձրաձայն ու սիրով ողջունեց իշխանին, և ձեռքը նորա
ուսին վերա դնելով՝ դարձավ Երանուհուն ու ասաց գոհունակ ժի-
ծաղով.

— Մի՛ վախեր, աղջի՛կս. մարդիկ կարող են անվայել համա-
րել, երբ տեսնեն սգավորին օտարների տան կամ հասարակաց
դրոսավայրերի մեջ: Սակայն մի եղբոր, մի բարեկամի տան մեջ
քո ներկայութիւնը ոչ ոք իրավունք չունի մեղադրելու, որովհետեւ
ես համատեացած եմ, որ իշխանը մեզ համար մի բարեկամ է... և
մինչև անգամ հույս ունիմ, որ շուտով ինձ որդի էլ լինի...

Երանուհի և մինչև իսկ իշխանը՝ սաստիկ աժաշելով այս
խոսքերից, կարմրեցան. առաջինը շանթահար, իսկ երկրորդը ուրա-
խութիւնից ևս, որն որ զայելով՝ երախտագետ նայեցավ Գողթու-
նուն. հետո օրիորդին դառնալով ասաց.

— Դուք, անկասկած, լիովին իրավունք ունիք վարվելու այն-
պես, ինչպես որ պատշաճ կը դատեք. բայց այսքանս միայն թույլ
տվեք ինձ ասել, որ իմ տոնախմբության երեկոյին ձեր բացակա-
յութիւնը կարող է իմ տունս էլ սգով լցնել, որքան այժմ ձեր
սիրտը: Եվ ի վերջո վախենալով, որ Երանուհի ժամանակ կունե-
նա նորից մի մերժողական պատասխան տալու, իսկույն լու-
թիւնը ընդմիջեց. և դառնալով Գողթունուն՝ խնդրեց նորանից, որ
երեկոյին բարեհաճի գալ կուրս. հետո յուրաքանչյուրին ողջունելով,
ասաց ցտեսութիւն և մեկնեցավ:

Իշխանի մոտ յուր տոնախմբության օրը՝ բացի մի քանի հե-

առավոր աղդականներից ու ծանոթներից, ուրիշ ոչ ոք չպիտի գտնւ-
վիւր։ Իշխանը ցանկանում էր Երանուհուն ծանոթացնել նոցա հետ,
մանավանդ մորաքրոջ հետ, որ մի ղվարթարաւո պառավ էր, որոյես
զի Երանուհու և նորա մեջ սերտ հարաբերութիւն հաստատե, կա-
րողանա ավելի սասկ օրինորդին՝ հետ տեսակցելու առիթներ ունե-
նալ և մի կերպով փութացնել հարսանիքը։

Հայրն էլ եռանդամբ սպասում էր այն օրին, սակայն ար-
տաքուստ շատ լուրջ և ծանր էր բռնում իրեն։ Մինչև սանդուղի
դուռը իշխանին առաջնորդելուց և ուժեղ նորա աչք սեղմելուց
հետո՝ սրա՛ վերադարձով. բոլոր գեմքովն ու ձևերովը գահունա-
կութիւնն էր արտահայտում։ Զեռքերը միմյանց շփելով, մեկ եր-
կու շրջան արով սրահին մեջ. ու աղչկանը մոտ մի բազկաթուի
մեջ ինկնալով, ուրախ ձայնով ասաց.

— Է՛հ, աղջի՛կս, կարծես իշխանը այնքան երկյուղալի մի
երևութ չունի, որքան որ դու կարծում էիր. վատ տղա չէ՛... Ըթի
է, ըթի, ինչպես որ ասում են Տփղիսում։ Սակայն ըթիք ընդհան-
րապես լավ մարդիկ են լինում, միայն հարկավոր է հետեւրին
վարվելու կերպը լավ իմանալ. օրինակ, պետք չէ մերժել յուր հրա-
վերը... հիմարութիւն կը լինի մեր կողմից, եթե...

Երանուհի նայում էր պատուանից դուռ, բոլորովին տարբեր
մտքերով դրադված՝ առանց լսելու հորը խոսքերը, երբ խնամակա-
լուհին ընդմիջեց, ծանուցանելով թե նախաճաշիկը արդեն պատ-
րաստ է։

V

Երանուհին այն փափուկ և երազացնոր տարիքին մեջ որոշեց
վերջապես յուր սրտին սլացմանց և հուսերին փականք դնել. և
ուսքի տակ կոխատելով հոգւոյն բնիկ և իրավացի պահանջները, մի
միայն յուր որդիական պարտքը կատարելու դիտավորութիւմբ իշ-
խան Զարեհի կիւնը դառնալ։ Սակայն վազուց յուր մեջ հուզված
տարբեր և խառն զգացմանց պատերազմիցը սաստիկ վնասված էր
խեղճին առողջութիւնը. յուր գեմքի այդ անուշ և թափանցիկ դաշ-
կութիւնը սկսել էր կանաչ երանդներ գոյացնել երեսի ոսկրոտ
մասերին վերա։ Շարժումը դանդաղ և մեղմ էին, խոսքերը սա-
կավ։

Հենց իսկ իշխանի տոնախմբութեան օրը՝ ի սրամասութիւն յուր
հորը՝ ինքն իրան շատ վատ էր զգում. և շնայելով հորը, մանա-
վանդ իշխանին անդադար թախանձանացը, շկարողացավ անկող-

նից դուրս գալ և գնալ հորը հետ յուր ապագա ամուսնուն տունը:

Այսուհանդերձ հայրը գործնւմ և կարգադրում էր ամեն բան: Այժմ գրեթե վստահ էր աղջկան համանությանը: Սերտ բարեկամացա՞վ իշխանի մորաքրոջ հետ. նա էլ փոխադարձաբար եկա՞վ Երանուհուն այցելելու և երկու անգամ էլ երեկոյան թնի, ուր իշխանը մորաքրոջը տուն վերադարձնելու պատրվակով կգար փոքր ինչ վաղ, ժամերով կը նստեր և կխոսեր. բայց միշտ լուրջ և զգաստ:

Ի վերջ բանի, իշխանի մոցիֆուլ մորաքույրը և Գողթունի այնպես գործը կարգադրեցին, որ վերջապես նշանի մատանիքը օրհնվեցան: Բացի Երանուհուց՝ բոլորը զոհ էին և ուրախ, և հարսանյաց օրը կը շանային փութացնել ընդդէմ Երանուհու պաղատանաց, որ խնդրում էր զոնե դեռ մեկ տարի հետաձգելով հարսանիքը, թույլ տան իրեն երկարել յուր մորը սուգը. սակայն անլսելի նղա՞վ յուր աղաչանաց ձայնը:

Գողթունի հուսալիր և շատ բավական սրտով աղջկան օժիտովը կը պարապելու Երեմն կերթար այդ կնոջ տեսության, որը երեսուն և հինգ տարին անցնելուց հետո՝ ալիտակն ու կարմիրը առատորեն գործ ածելով, կուզեր տասը տարի ավելի պակաս ցույց տալ: Նա խիստ կը վարվեր Գողթունու հետ. բարձրահայաց, քիչ անգամ փայփայող. սակայն կուզեր մի ժամ առաջ դառնալ նորա կինը... Երկուքն էլ միմյանցից ակնարկություններ ունեին, բայց բոլորովին տարբեր տեսակետով: Այդ զոռոզ և խորամանկ մարդը՝ յուր կրիցը և անցնելույն գերի, մի սողացող զնուն կը դառնար այդ գիշատիչ ազատվի ճիրաններին մեջ: Նրբամիտ կինը երևի լավ էր ճանաչում նորան, շատ լավ տեղյակ էր նորա իսկության, քան մի ուրիշը:

Շատ նեղ պարագաներում Գողթունի խորհուրդը կը հարցներ նորանից, մինչև անգամ աղջկանը հարսանյաց կարգադրության մասին... Բայց վերջերումս չէր կարողանում գնալ ստեպ նորա տեսության, սաստիկ զբաղված լինելով ցերեկ ու գիշեր թե տանը մեջ և թե գործարանին վերաբերյալ գործերով: Պետերբուրգից ստացել էին արգեն օժտին վերաբերյալ ամենայն առարկայք: Մոսկվայից՝ մետաքս, թավիշ և ալլն:

Մի շարաթ ժամանակ էր մնացել հարսանյաց: Պատրաստ ապված էին ոսկեգիր հրավիրատոմսերը, որոնց պահարանին վերա Գողթունի հասցեն կը գրեր, նստած գրասենյակում, երբեմն հաշիվները աչքե անցուցանելով: Գիշերվան ժամը տասը լրացել էր,

իսկ նա մտադրադ՝ չէր զգում ժամանակին այնպիս արագ թռչիլը. մանավանդ որ այն օրվան արած զանազան երթևեկությունները դադրած էր, և նստած հանգիստ կը պարսպար:

Գրասենյակում բացի նորանից ոչ ոք չկար, արդեն դրադիրը արձակուրդ առնելով՝ գնացել էր Գորի՝ ծնողացը անսովյալն: Գործարանը, ուր շատ անգամ գիշերներն էլ դործեին, այն օրը փակ էր բոլորովին. և գործավորք ու ծառայք, անշուշտ առիթից օգուտ քաղելով, գնացել էին ոմանք զրոսնելու, այլք տան մեջ՝ եղած պատրաստությունը կ'օգնեին: Գրասենյակի ծառան ուղարկված էր զանազան տեղեր հանձնարարություններով, Գողթունին նորան կը սպասեր, որ տուն վերադառնա:

Սաստիկ էր ցուրտը: Աղան վեր կացավ և մի քանի փայտ ևս նետեց կրակարանին մեջ. հետո կրկին յուր տեղը վերադառնալով, ծրարեց ամբողջ տոմսակները, դրավ մի կողմ. ու մի բոսի գլուխը ձեռացր մեջ առնելով, սկսավ ճակատը շփել, իբրև թե մի ծանր խնդիր կամենար լուծել:

Ոչ մի ձայն չէր լսվում զրջակայքում, բացի պատուհանի կիսաբեկ ապակուց դեռի ընթացքին մեղմ մրմունջը, որ գործարանի և գրասենեկի պարսպաց ստորոտը կողողեր: Գուցե անխոհմտությամբ լինե՞ր նորա կողմից առանձինն մնալ այնտեղ գիշեր տանն իաց գրասենյակում, բայց այդ առաջին անգամը չէր որ պատահում էր: Հետևարար ումի՞ց կարող էր նա երկյուղ ունենալ. ամենից սիրված ու պատված՝ անվանում էին բարերար տեր. ո՞վ կը համարձակեր վնասել նորան: Եթե իսկ դռնվեր մի այնպիսի հանգուցն, նա էլ մի գուղ կարող էր լինել, որին ընդունելու համար միշտ ունե՞ր լիքն և պատրաստ դրասեղանին վրա դրված Սմիթ-Վիսթոնի ընտիր վեցահար աստճանակը:

Տեսնելով որ ծառան դեռ չի երևում, ուզեց կրկին հաշիվներով զրազվել մինչև նորա գալը: Երբ ձեռը երկարեց, որ տետրակը առնե, նույն միջոցին հանկարծ դուռը դրսից բաց արին: Գողթունի աչքերը դարձուց դեպի դռան կողմը. և տեսնելով որ մտնողը մի օտար է, ոտք ելավ և ճրագը ձեռքին նորան մոտեցավ: Նրեսին գուցե իսկույն փոխվեցավ, ոտից ցզուրիս սկսավ դողդողալ. ուզեց խոսիլ, այլ լեզուն չէր կարողանում գլորել բերնին մեջ: Փորձեց երկու քայլ անել, անկարելի եղավ. և հետո ընկրկելով ինկավ մի աթուի վերա, աչքերը ձիգ ներս մտնող սովերին վերա ուղղելով: Սա բարձրահասակ էր և նիհար, մորուքն ու մազերն երկար և սպիտակախառն. մի հին կապյալի մեջ փաթաթված, կանգնել էր մունջ

արձանի նման՝ այնտեղ տիրած կիսասավեր լուսին մեջ. միայն աչքերն էին փայլում հանդարտ, բայց վայրագ ծիծաղով:

Գողթունի հանկարծ ցնցվեց, զարթեցավ երկյուղալի թմրությունիցը, կծկտյալ շրթունքը բացվեցան, և խռպոտ ձայնով ու զարհուրանաց զարմանոք դռեց. Արտա՛շ... Արտա՛շ... — Նա շորս կողմը նայեց, և ինքն իրեն ուժ տալով, վաղեց զրասեղանի մոտ, և դեռ ձեռքը ատրճանակին շէր տարած, երբ Արտաշ կայծակի արագությամբ հարձակվեց, և հափշտակելով ատրճանակը՝ գրպանը դրեց, վաղելով դռան փականքը դրավ, և Գողթունու առաջը կանգնելով, ձեռքերը խաշաձև կուրծքին վերս ծալած՝ դաշն ու հանգարտ ձայնով մոճեց:

— Անդգամ, ճանաչեցի՞ր ինձ վերջապես. ճանաչեցի՞ր նորան, Անդրեաս, որի կյանքը բարուպետ սպանելուց հետո՞ ուղում ես նյութական կյանքն էլ դավաճանել... Չէիք գուշակում իմ դալուստը, այնպես չէ՞... Բայց մոռացար, որ հարսանիք ունիս շուտով, և ես ինքս անձամբ եկել եմ ընդունելու իմ հրավերի տոմսակը քո ձեռքիցը այսպիսի մի անկող հյուր չէիք սպասում, այնպես չէ՞... Հէ՛, հէ՛, հէ՛... Ի՛նչ ես դողում. գուցե կարծում ես, որ քեզ ապանելու՞ համար եկած լինիմ այստեղ... Չէ՛, իմ նպատակս բոլորովին ուրիշ է. ես եկել եմ պարզապես տեսնվելու հետդ: Շատ հեռվից՝ Սիբիրից եմ եկել, կուղեմ բաց անել կույր աչքերդ, որ մի անգամ ես դու քեզ ճանաչես, տեսնես տեցյալդ: Եկել եմ արդար և իրավացի վրեժ լուծելու քեզանից, խոնարհեցնել անդ անխժապարտ դուխդ, որ մինչև այժմ պետք էր որ ջախջախած լիներ շատ անմեղների արյան ծանրությանը տակ, որին տակավին ուղում ե՞լ կանգուն և հպարտ բարձրացնել ուներիդ վերա, նորանոր ոճիրներ նեցուկ առնելով... Պիտի ազատեմ վերջապես մարդկային ընկերությունը քեզ նման մի անդգամ հրեշից, որի՝ զլխավոր դոհերն են. նախ՝ ես. հետո՞ իմ անդամալուծ խեղճ հայրս, որ չկարողանալով տանել իմ դատապարտության լուրը, մեռավ հուսահատ, ինձ անխժելով, երբորդ՝ իմ քույրս՝ կորսված, անհետացած. հետո կինդ: Դո՛ւ, շատերի մահվան և աղետից պատճառ, պետք է որ վերջ դնես քո ոճիրներիդ, պետք է որ տուժես բոլորին և ինձ մասնավանդ սված հարվածներդ...

Գողթունի դիականման և դողողշուն, կատաղաբար ձեռքերը տարավ վզին փողադատը լայնացնելու, որ ավելի ազատ շունչ քաշե, իսկ հետո մոճեց խեղդուկ ձայնով:

— Դու ի՛նչ իրավամբ ինձանից համար և տուգանք ես պա-

հանչում... Ի՞նչ եմ արած քեզ, որ գազանի նման գողտնի հար-
ձակվում ես իմ վերա... Ծիվա՛դ... քո կորստյան պատճառը դու
ինքզ Ես: Ես առաջարկեցի քեզ, ճշմարիտ է... բայց դու ազա՛տ
էիր մերժելու կամ ընդունելու:

— Ազա՛տ էի ես, ազա՛տ էի, բացառանք Արտաշ. և դո՛ւ
ես համարձակվում ասել ինձ այդ բանը, դո՛ւ, անօրն՛ն, որ այդ
արբանյակ կնոջդ ինձ ազդած տափանքովը հաշողեր էիր կաշկան-
դել իմ կամքը և սիրտը: Այո՛, քնզանից դեռ տարիքով փոքր, քա-
ջառոդջ էի, և արյունը հոռւ էր երակացս մեջ. մինչև այն օրը,
որ քեզ հետ ծանոթանալու աղետքը ունեցա, ապրում էի խոթացյալ
հօրս և քրոջս կողքին, պահպանելով նրանց իմ համեստ վաստա-
կովը: Երբանիկ էի՝ սիրված բոլորից, և Պետերբուրգի պես մի քա-
ղաքի մեջ հաշողել էր ինձ լավ ճարտարապետի համբավին արժա-
նանալ. ամենքը հավանում էին շրաներկերի գծադրությանց և
հատակագծերին, գովեստով էին խոսում իմ վերա... Եվ հանկարծ
մի օր դու կարծես դժոխքից վիժեցիր և կանդենցիր իմ հաշողու-
թյան ճանապարհին վերա, ապրիր ինձ այն անարգ կնոջ տունը:

— Ո՛հ, լռե՛, լռե՛, մի՛ տար նորա անունը...

— Ո՛չ, ընդհակառակը, պետք է որ հիշեմ, դու և ես մի անձ
եք կազմում, նորա հետ միասին հրապուրեցիք ինձ... Հրապուրե-
ցիք իմ արհեստավորի անձնավորությունը, գովելով իմ շրաներկ
գծադրությանց նրբութունը. և մինչև անգամ մի երեկո հանդգնե-
ցար ծիծաղելով ասել, որ եթե կեղծ հինգ կամ երեք ուրլիանոց-
ներ հորինել ուղենայի, այնքան պիտի հաշողեր, որ շատ վարժ
աշքերն իսկ չպիտի կարողանային նորան իսկականիցը զանազա-
նել, Միևնույն հեգեական կերպով ասված խոսքերը քանիցս հեղ
կրկնեցիր ինձ պաղ արյամբ, երբ դործակից և արբանյակ այդ
վճուկի սիրովը զրգոյալ՝ ուզում էի վայելել նորան: Մի տափահույզ
անբան էի դարձել, թուր ցանկությունս և նպատակս մի էր, ունե-
նալ այն կնոջ, և այդ բանի միակ միջոցն էր շատ փող ունենալ-
բայց ի՞նչպես, ի՞նչ կերպով և ո՞ւր տեղից ճարեհի: Կուրացյալ և
շվարյալ խորհած ժամանակս՝ դու օգուտ քաղելով իմ սոսկալի
դրությանից, արբածի վիճակիցս, եկար կրկին իրրև շարության
ոգի, օձի նման սկսեցիր ֆշալ ականջիս, համոզելով ինձ՝ որ կեղծ
թղթադրամ շինել մի հանցանք չէ. թե կայսրը փող շատ ունի...
մեղքը աղքատին գողանալը չէ, այլ հարուստինն է: Ես կը խոստո-
վանիմ, թույլ դռնվելով, լսեցի քո աղետաբեր խորհրդին, միչա-
մուս եղա այդ ձեռնարկության: Այն ժամանակ դու ինձ օգնեցիր

կնոջդ փողերով, գործատուան հաստատելով առանձին մի տան մեջ և ամեն զգուշություն ի գործ դնելով, որ չիմացվին քո ինձ հետ ունեցած հարաբերություններդ։ Հետո իմացա նաև, թե ինչո՞ւ իմ նամակացս գրությամբ չէիր պատասխանում, և թե ինչո՞ւ այրում էիր իմ նամակները... Ունեիր նույնպես մարդիկ, որոնք պատրաստի չինված կեղծ թղթադրամները զանազան տեղեր փոփոխում էին իսկականների հետ, որոնց տնտեսւոյ քո մոտդ էիր հավաքում, իբրև ընկեր, հէ՛... Առաջին փորձերը հաջող անցան. և մի քանի անգամ սովոր ինձ իմ անարդ տշխատությանց մի մասը, և արբանյակդ սկսում էր նվազ հակառակիլ ինձ... Մեկ օր էլ հանկարծ շփոտեմ ինչպես, ոստիկանությունը պաշարեց իմ գործատունը, ուր միայն ես կայի պարապած իմ վատթար դրադմունքով, ձեռքերս կապեցին և նետեցին ինձ՝ ի բանտ... Մի ամսի շափ տեւեց դատաստանս. աչն միջոցին մատենցի քեզ դատաւորաց, բայց նոքա ոչ ոք ընթացքին և ոչ մոտդ գտնված թղթերի մի որևէ փաստ կամ մեղսակցական ապացոյց չգտնելով, ազատ թողուցին քեզ։ Այդ վճռով կիներ և արբանյակներիցդ երկուսը փախած, անբռնութեամբ էին։ Բայց այժմ նա այստեղ է գտնվում և մատնված ոստիկանության, որն որ հանկարծուստ կերթա այս գիշեր թղթերը ձերբակալելու և նորան հարցաքննության ենթարկելու։ Անշուշտ, նորանից ինչպես էլ որ լինի, կ'իմանան քո մասին տեղեկություններ, որից դու վախենալով ուղղում էիր ամուսնանալ հետը, ճանկերիդ մեջ առնել ամեն մի բոպե քեզ խայթել սպառնացող թունավոր օձը։ Նվ՛ հեռո՞ւ... հորս իմ վերա կարգացած անեծքին մասամբ դու մատնակից ես. և ահա եկավ այն բոպեն, որ օձը թուչնը թափե, որի միջնորդությամբ սորանից վեց տարի առաջ ինձ այնտեղ ուղարկեցիր։ Հայրս մեռավ։...

Գողթունի ցրտասարսուռ կը գողար, և հազիվ հազ կարողանում էր արտասանել։ Ո՛չ, ո՛չ, նա չի հանդգնիլ տսել այդ բոլորը. անկարելի է այդ, սո՛ւտ է, սո՛ւտ... Այնտեղ գնալուդ պատճառը քո անխահմության հետեանքն է, դու ստում ես։

— Ո՛չ, ո՛չ, ընդհակառակը, ճշմարտություն եմ ասում, այնպես հաստատ, ինչպես իմ վեց տարվա տանջանքս ու տաքնապս։ Այո՛, բանտարկվեցա ես այնտեղ, որի տեսքը ամեն տրդար հոգւո սարսափ ազդե. այնտեղ, ուր փոխանակ սփոփիչ առանձնություն՝ հանկարծ ինկա բնիկ դավաճան ոճրագործների բաղմության մեջ, որք վարվում էին հետս, ինչպես իրենց հավասարի հետ։ Մկրտում չէի կարող զայրույթս սանձել, և ամոթահար՝ արյունս

զլուխս կը բարձրանար. այդ տազնապահույզ կլանքին մեջ հիվանդացա... սակայն աստիճան չկամեցաւ իմ մահը, երկար տեղացապօքինութիւնս: Ամենայն օր կը տեսնեի ինձ շրջապատված եղեռնատիպ պատկերաց ստվերներով, կը լսեի հայհուդութունք աստուծո ղեմ, ամեն ըսկն հիշոցք և աղտեղի խոսքեր... Հոգիս դժկարամ կը հանդուրժեր այս բոլորը, և սիրտս տանջանք կընդունէր յուր մեջ այդ տեղի դարշահոտ և ապականյալ օդը, որ աստիճան էի ջնշել՝ շաղախյալ անխելութ և վրեժխնդիր բողոքանք ընդդէմ մարդկային դատաստանի: Սակայն խեղճ հորս զգոն խրատները իրրև սկզբունք սրտումս արմատացած, (որք առ ժամանակ դրդոտ էին մի մեղսալից շերմի կրակով), հանկարծ երևան ելան, և փոխանակ իմ թշվառ բանտակցաց նմանելու՝ աշխատեցա նորանց համոզել ի բարին, խրատել և մխիթարել. և փոխանակ զզկանքի՝ միմիայն ցավակցութիւն դժացի նոցա վերա... Սակայն մի նպատակ ունեի, մի հույս, այն էր՝ փախչել կալանքից. և հորս գերեզմանին վերա երդվեցա, քեզ գտնելով՝ վրեժս առնել... Հինգ տարիներ անցան, տանջանաց ու անձկութեան հինգ տարիներ, բայց ես հույսս չէի կորուստ... Մի երեկո՝ դաշտային աշխատութիւնը ավարտելուց հետո՝ կալանավորաց խումբը, որ քառասուն հոգով էր բաղկացած, ի բանտ վերադառնային. և զրան մոտ ըստ սովորութեան երբ կրկին համարելով ներս թողնեին մի առ մի, փոխանակ քառասունի գտան միայն երեսուն և ինն հոգի. քառասուներորդը աներևութացել էր: Այն ժամանակ միայն հայտնի եղաւ փախուստս, բայց ես արդեն շատ հեռու էի:

Աստուծո միայն հայտնի է, թէ ինչ քստմեցեցիլ երկուդ, հոգ ու տառապանք եմ կրել, ինչ արգելքների եմ հաղթել, մինչև որ ինձ որոնողների սահմաններից դուրս ելա, նոցա հսկողութիւնից կարողացել եմ ազատել ինձ: Ո՛րքան խորամանկութիւն և զգուշութիւն եմ ի գործ դրել՝ քո մասին տեղեկութիւններ առնելու, միով բանիմ քեզ գտնելու համար... Եվ վերջապես իմացա, որ այդ զիպվածից հետո՝ գուցե ամաչելով կամ արբանեկիդ հնազանդելով, եկել ես այստեղ, քաղաքացի ես դարձել, կնոջդ փողերը լիովին կողոպտելով (որ իբրև օժիտ և աղքկանք պահում էր), հիմնել ես այս դորժատունը, և արտաքին պաշտպանողական ձեւերով ու բարեգործի կեղծ վարմունքով, շատերի առաջ պատիվ և հարգանք ես ունեցել... Ահա մի տարու մոտ է, որ հետևում եմ քեզ քալլ առ քալլ, զխանութի բոլոր վարմունքդ, և հարմար ժամանակի սպասելով, որ հայտնվիմ աշացդ: Այստեղ իմ ուխտս կատա-

րելուց հետո պիտի դնամ Տփղիսից, որպես զի կորած քույրս որո-
նեմ և գտնեմ։ Բայց նախ պետք է, Անդրեաս, որ քեզ հետ վեր-
ջացնեմ հաշիվներս։

Անդրեաս, այսինքն Գողթունին, զարհուրանաք, ակոսները
պինդ սեղմած, մինչև վերջը առանց ջունջը ազատ առնելու, լսում
էր Արտաշի արած պատմութիւնը, որի փրփրած բերանից կայծա-
կի նման ինկնում էին բառերը. դողում էր բոլոր մարմնովը։ Սա-
կայն զգալով յուր մոտալուտ կորուստը, ուզեց մի վերջին փորձ
անել, դիմելով Արտաշի բնական գթասրտութեանը. և մի երկչա-
շան կազկանձող ձայնով և աղաչական հայացքով նայեց Արտա-
շին և ասաց.

— Կարող ես ինձ սպանել, թալանել, պատառ պատառ անել,
կարող ես վերջապես լիովին օգտվիլ առանձին, անք վիճակիցս,
դիշխելա մթութիւնից։ Բայց դու մոռացար, որ ես մի աղջիկ
ունիմ... և դու կորցնելով հորը, կարող ես պատճառ դառնալ աղ-
ջկանը մահվան։ Գիտես, որ նա հիվանդոտ է արդեն, և մի քանի
օրից պետք է հարսանիքը կատարվի։ Արդեն ամենը պատրաստ է.
ի՞նչ պիտի ասեն մարդիկ, եթե նորա և յուր հարսանյաց խորանին
մեջտեղ գտնեն յուր սպանած հոր դիակը... Մտածի՛ր մի անգամ
այն ողորմելի աղջկան վիճակը. ի՞նչպես պիտի կարողանա տանել
այնուհետև այդ ամոթն ու ցավը. ի՞նչպես...

Արտաշի հանկարծական բռնն մի ծիծաղը Անդրեասի կոկոր-
դի մեջ ձայնը կտրկեց։ Արտաշ ուղիղ և ցասկոտ նորա աչաց մեջ
նայելով, մոռնեց.

— Է՛հ, բավական են կեղծավորութիւն և նենգ։ Կարծում ես,
որ ինձ էլ կարելի՞ է խաբել. կարծում ես, շփոտե՛մ, որ աղջիկդ
հակառակ յուր ցանկութեան և կամքին՝ ուղում ես հնազանդեցնել
քո ցած շահերիդ համար, բարի հայր ձևանալով, ինչպես որ միշտ
բարի տեր ես ձեռքել, միամիտներին խաբելու ու բարեգործի դի-
մակին տակ դալի՛ր ռեխդ ծածկելու համար... Կարծում ես, թե ան-
տեղյակ եմ գործերիդ. չգիտե՛մ թե ինչպես տանդ երկու սպասու-
հիները բռնաբարեցիր և երեքը հարսնացուցիր։ Նոցանից մինը
քեզանից մի զավակ ունեցավ, որ իսկույն աներևութացավ... Այդ
քո գործավորներից լսեցի անձամբ, որոց երկուսին դատն էլ
պաշտպանել սվիր քո ծախքով՝ նոցա լուսթիւնը շահելու համար,
որովհետև նոքա կարող էին մի որևէ արատ բերել բարեբար համ-
բավիդ։ Է՛հ, ի՞նչպես է, հավանո՞ւմ ես տեղեկութիւններինս. այժմ
ինձ էլ կարո՞ղ ես խաբել... հիմար կեղծավորութեամբ, աղջկանդ

հետև ժածկվելով՝ նորան պաշտպանել ձեռքնելով... Ո՛չ, ընդհակառակն, քեզ կորցնելով, իմ նպատակն է գոնե անմեղ աղջկանդ փրկել, և քեզ դնել այդ վիճակին մեջ, որ շկարողանաս հասնել նպատակդ իրագործելուն:

— Ահա՛ ուրեմն, գոռաց Անդրեասն՝ երկաթե արկղին բանալին նետելով գրասենյանին վերա. ա՛ռ ահա. սա չէ՞ միթե պահանջածդ. ա՛ռ, գողացի՛ր... բայց լռե՛...

Արտաշ լուրջ բարկությամբ ժպտելով պատասխանեց

— Այդ խոսքը մի ուրիշի բերանից մի արյունազանց նախատինք կարող եմ համարել, այլ քեզանից լսելը շատ բնական է: Բայց հասկացիր զոնե մի անգամ ընգմիշտ, որ իմ նպատակն քո փողերդ կամ հարստությունդ գողանալ չէ:

— Հապա ի՞նչ ուրեմն:

— Ահա այժմ կը տեսնես:

Արտաշ մի շվան առավ, սեղմեց ակռաների մեջ և երկու զորեղ ձեռքերով զսպելով Անդրեասին, որ սաստիկ ճգամը կուզեր դիմադիր լինել, բռնի նստեցուց նորան բազկաթուռի վերա. և այնտեղ նորան այնպես պինդ կաշկանդեց շվանով, որ շկարողանա ջարժել: Հետո առնելով բանալին, բացավ արկղը. և հաճաքելով զանազան ոսկի ու արծաթե իրեղեններ, սկսեց պատուհանից մի առ մի շուրը ձգել նորանց. ոսկի ապարանջանք, դինդեր, բրոշ և ականակուռ զարդեր, գահարեղենք՝ անձրևի պես գետն էին թափվում մինը մյուսի հետևից, մի խուլ ձայն հանելով ու պղպշտիներ կազմելով ջրին մեջ. և զետեղ դարձյալ կը շարունակեր յուր տնտարբեր ընթացքը, իրա պատկանք ստացած պարտատերի նման:

— Սոքա կեռղդ հարստության հետին մնացորդն էին, ասաց Արտաշը, որի մի մասը ուզում էիր անշուշտ աղջկանդ օժիտ տալ. բայց այլևս չկան. թողյալ մեռյալին հարստությունը այժմ նորա հետ թաղվեցավ, անհայտացավ... Այժմ գտնեց ամենակարևորին:

Գողթունի ոչ ձայն ունեք, ոչ էլ շարժվում էր. մի թանձր քող կարծես մթազնել էր յուր մտածելու և դատելու կարողությունը: Աչքերը մեծ մեծ բաց արած, անստույգ հայացքով նայում էր Արտաշի վերա, որ ստվերի նման մուռն ու լուռ մահ գար ու շարժեր. մի ահագին հսկայի ձևերն ու մեծությունը ստանալով, անհողգողգ կերպով քանդում ու կործանում էր Անդրեասի կյանքը, ապաղա հույսերը, ապրումսը, միով բանիվ ամեն բան: Զուրը յուր պաշարը առնելուց հետո՝ կարգը եկած էր կրակին, որ սկսեց կատաղաբար ճարճատելով սպառել ու մոխիր դարձնել հաղարավոր ռուբլի—

ների արժողությամբ թղթագրամներ, պարտամուրհակներ, դաշնագիրք, վիճակախաղության տոմսակներ և մինչև իսկ հրավիրատոմսերը. բոլորը բոլորը կատաղի մոնյումբ ոչնչացնում էր բոցը: Արտաշը կանգնած էր կրակին մոտ, իբրև մի դժոխային պաշտոնյա, մահաժիժաղ երեսով, որի ավելի խուսական երևույթ էր տալիս բոցի անդրադարձումը, որ նա արժարժում էր ի վնաս Անդրեասի, նորա գույքը պաշար տալով յուր ճարակող բոցերին:


Անդրեաս խոկալով և անշարժ տեսնում էր այս բոլորը, ամբողջ արյունը սրտում հալվաքած. գունատ էր, բերանից ժայթքած փրփուրին նման, որ շրթանցը տեկլուծից մինչև սև զգեստի ծալքերին վերա տեղ տեղ սպիտակ բիծեր էր կազմում: Կորսված էր անդարձ և անհույս... Ամբողջ գետը եթե արցունք դառնար յուր ալքերում, չալտի կարողանար ամոքել հուսահատությունն ու կատաղությունը. նույնիսկ այդ մահառիթ բոցերի ջերմությունը կարող չէր ցամաքեցնել յուր արտասուքը. զգում է, որ անհույս կորած է: Աչքի առաջ տեղի ունեցած տեսարանը մի երազ չէր. նա դեռ տեսնում է այրված հարստությունը, սևացած մոխրագեղը. այնտեղ է դեռ զարհուրելին Արտաշ, անողոք վրեժխնդիր, որ ծաղրելով նայում է նորա երեսին: Այլ Անդրեաս չկարողանալով այլևս տանել այդ քստմենելի և կասեցուցիչ հայացքը, բոլոր թոքերի ուժովը սկսեց մոնչել, կերկերյալ և հոգեվարքի ծայնով.

— Ինչո՞ւ համար... ինչո՞ւ համար... — Նվ արտասվաց ահագին մի հեղեղ, կարծես արյան փոխվելով, լքելով էին լայնարաց ալքերին մեջ, կարմրացնելով նորանց, երբ շրթունքները արտասանեին. Անիծյա՛լ... անիծյա՛լ... ո՛հ... ի՛նչ նպատակավ... անօրե՛ն...

— Հա՛, հա՛, հա՛, գոռաց Արտաշ, ի՛նչ նպատակավ... Այն նպատակավ, որ՝ եթե հրաշքով ազատվիս դատապարտությունից, այլևս բարեգործ չձևանաս, այն նպատակավ, որ այսուհետև լիաքես ուրիշներին, ձևանաս կեղծ ազգասեր, խարդախ մարդասեր: Վերջապես այն նպատակավ, որ ապրելով աղքատ և դատապարտված, գոնե մի փոքր ճաշակ կարողանաս առնել այն տագնապահույլ վշտերից, որ այլոց և մանավանդ ինձ պատճառեցիր. չկարողանաս էլ այնուհետև ժառանգություն թողնել աղքկանդ այնպիսի մի հարստություն, որին նա զզվանոք պիտի մերժե, տեղեկանալով նորա աղբյուրը. և չկարողանաս մինչև անգամ կաշառել նորանց, որոնք շոտով գան քեզ ևս ձերբակալելու այն բոսային, երբ ևս այստեղից շատ հեռու կը լինիմ:

Արտաշ մի անբացատրելի կերպով ծիծաղեց, որ նմանում էր պողպատի կամ հախճապակյա մի անոթի վերա քաղած խարտոցի, կամ պողպատի ձայնին: Այդ ծիծաղը արմատից զողացուց Անդրեաս Գողթունու ջզերը, որ մի հետին և գերագույն ուժ տալով ինքն իրեն, թոթովեց յուր բաղկաթուին մեջ, իբրև թե կամենար իրեն կաշկանդող կապերը խզելու, և բազկաթուը հետը քարշ անելով, հարձակվի Արտաշի վերա, հրա հանկարծ հաժախարակչությունը կորցնելով, գետին դնողից մարմնույն և բազկաթուին բոլոր ծանրությամբ: Իսկ Արտաշ՝ հոգեառ հրեշտակի նման հաղթական մի վայրագ ծիծաղ արձակելով, աներևութացավ այնտեղից:

Այս սոսկալի երեկոյից երեք ամիսներ անցան: Մի օր Դավոր-ցովայա փողոցին ճեմելյաց անցքերի մեջ անց ու դարձ անող հետաքրքիր մարդիկ՝ աչքերնին շփելով և ապուշ ու վարմանաց հայացքով՝ տնտան տասը սուսերավոր զինվորաց մեջ շրջապատյալ Գողթունին, այն բարերար աղան, կալանավորի կապան հագած, ռաքերը շղթայակապ՝ հինգ ուրիշ կալանավորաց հետ անցնելը, համարձակ և հաստատ մի հայացք տալով յուր շուրջը: Անզգամությունը դեռ նշմարվում էր այն կարծր, նիհար ու սակորոտ երեսին վերա, ուր յուր վաղամեծիկ ողջկան հիշատակն անգամ չէր կարողացել ցավոց մի հետք դրոշմել, և որի սրուն անգամ պահելու անզգա և անարժան էր:





ԲՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ





ՇԵՐՍՊԻՐԻՆԷՆՈՒՐ
ՀԱՄԼԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ԲՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ով որ կուզե քանազանդին լավ հասկա-
նալ, պէտք է նորա կենաց օրհանճ անուանա-
սիրեն:

ԳՅՈՔԵ,

ԱՅՆ ԲՈՂՈՐ ՀԱՐԳԵԼԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԱՍԻՐ ԱՆՁՈՆՑ՝

Որո՞նք զանազան փաղափներում սիրով և անձնվիրությամբ
նպաստել են իմ թատերական ներկայացմանց հաջողությանը.
նվիրում եմ ներկայս հարգանքով և երախտագետ սրտով

ՀԵՂԻՆԱԿ:



Հ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Գեղագիտությունն (Esthétique) ու բանաստեղծությունը՝ ազնվ-վացնելով մարդու, կրթում են նորա միտքն ու հոգին և բարձ-րացնում են նորան այն աշխարհը, որ մարդս գտնում է միօրի-թյան սրտին, և սնունդ հոգվույն:

Այն ժողովուրդը, որ ի բնե զուրկ է այդ ձերքերից, անմշակ և անմիօրիթար կը մնա՝ չգնահատելով և չօգտվելով այն ամեն հրա-շալիքներից, որ արարելը գրել է ընդհանուր ստեղծագործու-թյան մեջ:

Գեղեցկին ճաշակը՝ նրբացնելով հոգվույն զգացումները, ուղ-ղում է բարձրը և բարոյականացնում է նոցա:

Կյանքի գեղագիտական և բանաստեղծական կողմերը եթե ըն-դունակ լինինք գտնել ու պահպանել, դորանով՝ հավատացնե՞ք, մասամբ կը մեղմացնենք նորա բազմակողմանի հոգսերն ու վըշ-տերը:

Ինքն՝ աստված գրել է մարդկանց մեջ այդ շնորհալի և օգ-տավետ ընդունակությունը. ոմանց նկարչի, այլոց քերթողի և ոմանց երաժշտի տաղանդն ու սրբազան կրակն ու խանդը պարգե-վելով: Կարծես նախախնամ տերը զթալով ողորմելի մարդկության, միով բանիվ շնորհել է նորան՝ նկարչի, քերթող և երաժիշտներ, որպեսզի իրենց կրակովը ոգևորեն կենաց անպտուղ և ցամաք պարտեզը. որ իրենց հոգվո արդյունքովը սուգեն և արդյունավո-րեն նույնպես այլոց հոգիները՝ բանալով նոցա առաջ գեղեցկին, բարվույն և ճշմարտին ճանապարհը:

Այդ տաղանդների նպատակին համար են կառուցված բոլոր ակադեմիայք, դպրոցք, թատրոններ և թանգարաններ, որոց մեջ բազմությունը դիմում է խուռն՝ ակոփվելու, զարգանալու, գեղեց-կին ծարավն բարոյապես հագեցնելու, միանգամայն կրթելով ճա-շակն ու միտքը:

Հայը նույնպէս, մանավանդ այս վերջին տարիներում, հետեւելով լուսավորչաւ ազգաց օրինակին, մի առանձինն և բնիկ համոզմամբ՝ սիրելով զնահաւասում է բանաստեղծութիւնը և մանավանդ թատեր արվեստը: Եվ որ դովելին է՝ մասնավոր համակրությամբ սիրում է Շեքսպիրին, եռանդով ողջունում է նորա երկասիրութեանց ներկայացումները, միմիայն սգեւորվելով թատրոնում, որովհետեւ մեղանում շատ քիչերն են ծանոթ նորա անձնավորութեան և ասպարիզին հանգամանացը հետ:

Տեսնելով Ազգիս այս սերն ու եռանդը՝ առ այն տիղերահռչակ հանճարն, քաշալերվեցաւ. և ուղեւոր նոցա լավ ծանոթացնել Շեքսպիրին, աշխատեցաւ որոշ տեղեկութիւններ հավաքել նորա վրայոք, և հաղորդել Հայ հասարակութեան:

Մանոթացնել նորա կյանքի, և երկասիրութեանց հետ՝ առ այժմ, մասնավորապէս Համլետին¹, որովհետեւ բոլոր յուր թատերգութեանց մեջ ամենագլխավորն և վիճելին է համարված:

Թեպետ բոլոր նորա գործերը մի հաղթական կոթող կազմած են քերթողական ասպարիզին մեջ, որ նոր ժամանակը ըստ յուր հատկութեան չէ կարողանում նորան եւ հեացնել ու քանդել, ընդհակառակն նա միշտ նորանալով՝ երկինք է բարձրանում: 1589-ից մինչև 1887 թ. գրեթե երեք ահագին դարերի շրջաններում աղբիւ են նորա գործերը. և ամեն տեղ, ամեն օր՝ ամենայն մարդկանց թերութեանց և հատկութիւններին հայելի են հղել: Ոչ մի բան չէ կարողացել մթաքնել այդ հայելին. ընդհակառակն միշտ գործածվելով ավելացել է յուր փայլը, ուր խորշումյալ ծերութեւ պատկերից սկսյալ մինչ իսկ մատուղ կուսին ամենանուրբ դիմագծերն անգամ անդրադառնում են բացահայտ, խստաբարո և կամշոտ իւր թագավորից. մինչև իսկ երիտասարդ, մռայլ և մելամաղձ Համլետի հոգվույն տիպարը երևում են նորա մեջ:

Համլետը՝ այն երկդիմի խորիմաստ, և ճակատագրին դժբախտ մի խաղալիք դարձած իշխանը, որի առաջին անգամ ներկայացված օրիցը մինչև այսօր, բոլոր հեղինակաց, ողբերգու դերասանների և քննադատաց, մի հանելուկ է դարձել, ահագին բանակովոց և վեճերի աղբյուր և առիթ:

Ամենքն էլ նորա մասին ավել են իրենց զանազան կարծիքները. դորա պատճառով Գերմանիայում ահագին վեճեր են բաց-

¹ Թարգմանյալ ի Հայ պարոն Սենեքերիմ Աթրուսոց և պարոն Ավետիք Ծղեկյանից:

վել, և հաղարարվոր հատորներ են տպել՝ կուսակցութիւններ և ընկերութիւններ կազմելով:

Պատմութիւնը հաղորդում է, թե Անգլիայում, որ հայրենիքն է Շեքսպիրի, այնքան մեծ չէ եղած գրագիտաց հուշմունքը, որքան Գերմանիայում¹:

Բայց այդ խուռն և բազմագումակ քննադատութեանց աղմուկը հանկարծ խափանվել է Վիլհելմ-Մեսթերի պատգամախոս վարդապետութեան դաշն ձայնիցը, էրվինուսի խոհուն և լուրջ դատադոմբութիւններից. որոց երկուսն էլ մտնելով բանաստեղծի ժամանակակից ջրբանի մեջ, քայլ առ քայլ հետեցին նորան՝ ղնենլով նորակյանքը, գործերն ու կարդացած հեղինակները, և այնպիսով տվին իրենց խելացի վճիռը:

Անգլիայում նույնպէս գտնվեցան լուրջ քննադատներ, որք լոնցրին տղիտաց շաղփաղփանքը: Այն քննադատներն էին. Քուրիշ. տիկ. Ենմսըն, Հենրի Մաուցլի, Հալլամ, Քուլիեր, Մարդալ, Հալիվել և այլք. Բելեկրինո Ռոսսի խալացին. Լեսսինգ, Գյոթե, էրվինուս, էշենբուրգ, Շլեգել, Վիլանդ, Կարլ Էլզե, Վերդեր, Քրեյսիկ, Հերդեր, և այլն գերմանացի գրագետները. ուսաց Բելինսկին. իսկ գաղղիացոց մեջ ամենանշանավորներն են՝ Իպոլիտ Թեն, Վիլլմեն, Գիզո Լիթրե, Ֆրանսուա Հյուգո, Ա. Մեզիեր և Ա. Բյուֆներ:

Ֆրանսուա Հյուգո², որ քսան տարի բնակելով Անգլիայում, հաճախելով փոշոտ գրադարաններ, հին ձեռագիրներից հավաքել է տեհուն տեղեկութիւններ, և թարգմանել է Շեքսպիր ամենայն հավատարմութեամբ, և սաստիկ հետաքրքիր ժանոթութիւններով:

Իսկ Ադեքսանդր Մեզիեր³, որ օտար մատենադրութեան գրութեանց վարպետն է Փարիզի Ակադեմիայում, տարիներով դասախոսութիւն էր կարդում Շեքսպիրի մասին Փարիզի հասարակութեան առաջ, և որոց հետո բոլորն հավաքելով ի լույս ընծայեց:

Ադեքսանդր Բյուֆներ⁴, Կաննի Ակադեմիայի օտար մատենադրութեան դպրութեանց վարպետը, շատ ընդարձակ տեղեկութիւններով հրատարակեց «Համլետ Դանեմարքացին» կոչված գիրքը:

Այս վերոհիշյալ երեք գրագետներն էլ օգտվել են իրենցից

¹ Ueber, *Քննադատական հաադոտութիւնք ի վերա Շեքսպիրի*:

² Fr. Hugo, *Les Deux Hamlet*, Paris, 1865.

³ A. Mézière, *F. Shakespeare ses oeuvres et ses critiques, ouvrages, couronné par l'académie F. Paris 1882.*

⁴ A. Buchner, *Hamlet le Danois*, Paris, 1878.

նախընթաց նշանավոր՝ անգղիացի, գաղղիացի և գերմանացի դրագիտաց խուզարկութիւններիցը՝ քաղելով նոցանից նշմարտանման կարծիքներն ու ծանոթութիւնները՝ հաղորդել են մատենագրական աշխարհին իրենց սեփական կարծյացը հետ:

Եւ էլ քիչ շատ ուսումնասիրած լինելով Ենթալիրը և ճանաչելով նորա գործոց արժեքն ու գեղեցկութիւնը, խոնարհաբար հաղորդում եմ նոցա ընթերցասեր հասարակութեան. իմ կարգին՝ ե՛ս ևս օգտվելով վերոհիշյալ հեղինակաց գրվածներիցր: Իսկ հայտնելու համար իմ առանձին կարծիքը, հատկապէս Համլէթ ողբերգութեան մասին, ինձ զորավիգն և բնաբան եմ դրել Երեւելի հեղինակաց վճիռն ու դատողութիւնքը:

Քիչ ժամանակից կրկին ի լույս կընծայեմ նորանոր հետազոտութիւնք Օթելլոյի¹, Արքա Լիրի², Գրիբոեդովի խելաց վիշտ³, կատակերգութեան, և ընդհանրապէս Թատերական արվեստի վրայոք:

ՊԵՏԲՈՍ Է. ԱԴԱՄՅԱՆ

¹ Քարգմանյալ ի Հայ. պ. Ս. Սուլիսանյանից:

² Քարգմանյալ ի Հայ. պ. Ս. Արծրունուց:

³ Քարգմանյալ ի Հայ. պ. Կ. Տեր-Աստվածատրյանից:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Շեքսպիրը—Մենդլան անդին։—Նորա կյանքն ու դաստիարակությունը։—Աղքատ բանաստեղծ։—Տառապանք յուր ասպարիզի մեջ։—Նոր գիրք։—Լիլի, Մարլով և Բյուրբինճ։—Ջարգացումն հանճարի։—Քատեր ու բեմին գրությունը։—Պաշտպանք և բարեկամք։—Շեքսպիրի պատճառած հեղափոխությունը թատեր արվեստի մեջ։—Ջանազան ժամանակակից մատենագիրք։—Նոցա կարծիքը։—Թշնամիք։—Վոլթերի նամակը առ Լահարի։—Շեքսպիրի առաջին կյանքը։—Յուր Աննա ամուսինը։—Մեր և նախնա։—Մահն ու տապանագիրք։

Պարոն Հալիվելի անգլիացի ճանապարհորդ մատենագրի, Միլլերի, Ֆ. Հյուգոյի և Բյուրնների խոսարկություններից առաջ՝ շէր կարելի որոշ ասել, թե ինչ դաստիարակություն է առած Շեքսպիր, ինչ էին նորա կենաց և քերթողական ասպարեզի մանրամասն հանգամանքները, և թե ինչ վիճակի մեջ էր թատեր արվեստը, երբ առաջին անգամ մտավ նորա մեջ։ Այժմ այդ բոլորը ըստ կարի պարզված են։

Վիլհելմ Շեքսպիր ծնավ Սթրաթֆորթ, Ավոնի վրա, Վաուլիքի կոմսության մեջ, 1564-ին ապրիլի 23-ին։

Նորա ընտանիքը հետին ծայր չքավորության հասած էր 1573-ին, այն աստիճան՝ որ յուր թեմի ժողովրդապետը ստիպվեցավ հարկ չպահանջել նոցանից։ Ինքն իսկ Շեքսպիրը, ըստ Օպրեի կենսագրություն, խնայողությամբ ապրելու համար հարկադրված օգնում էր յուր մաագործ հորը։

Արդեն 1583-ին, տասն և ինն տարեկան հասակում ամուսնացած էր և հայր ընտանյաց. հազիվ կը բավեր յուր վաստակն ու շնչին շահը ընտանյացը ապրուստին, թեպետ մանկությունից երազացնոր և մտածող լինելով՝ սիրում էր ընթերցումը. այդ նորա միակ մխիթարությունն էր, այո՛. բայց գիրք գնելու համար փող

է հարկավոր. սակայն այդ գլխի տրվելիք գումարը պետք կը լիներ երբեմն գործածել տան ծախքերի, Աննային — յուր կնոջ մի նոր զգեստ գնելու, կամ փոքրիկին դայակ վարձելու համար:

Փանիցս անգամ նստել է նա հռաւհաւ յուր տանը սառն կրակարանի մոտ, ծնուաւ ձեռքին մեջ առած, գլխակոր, ինչպես մի արծիւ թևաքեկ, որ չէ կարող սլանալ յուր ընդարձակ եթերաց տարածության մեջ: Փանիցս անգամ խեղդվել են յուր հառաչանքները՝ այն տանը մերկ պատերին մեջ արձագանք չդառնելով. այն աղքատիկ տունը, որ այսօր անդդիացվոց համար թագուհու պալատից կամ Վեամինատրի մայր եկեղեցուց ավելի թանկագին է, ճոխ և պատկառելի: Հալիվել ասում է՝ այն տունը շրջապատված է փառավոր կաղնիներով, թավջանման մարգագետինք տարածվում են նորա շուրջը. և այն լուրջ անդորրութունը, որ տիրում է այնտեղ, գրավում են մարդու՝ պատկառանք ազդելով նորա սրտին, և անդիմապրելի կերպով անշինչ տպավորվում են երևակայության մեջ:

Այդ բոլորը տեսնելով՝ չէ կարելի չհիշել երկյուղած հորդանոք այդ վսեմ հանճարը, որո մտազրադ և վառվռում աչքերը դմալմամբ սեւեռած մնացել են այդ գողար բնության վրա:

Անհնարին է առանց սարսուռի մտնել այն սենյակը, որ թեպետ տխուր և աղքատիկ երևույթ ունի, սակայն ամեն օր լիքն է այցելողներով իբրև մի տաճար ուխտագնացության:

Կան այնանոց զանազան մանր առարկաներ, որք ժամանակավ Շեքսպիրին են պատկանած և որ սաստիկ գրավում և գրգռում են անդդիացվոց հետաքրքրությունը, որոնց մեծ մասը իբրև սիրահար հնութանց, ավելի կը ցանկանային այդ առարկաներից մինն ունենալ, քան թե Շեքսպիրի երկասիրությանը՝ փառավորակազմ մի տպագրությունը և կարդալ նոցա. սակայն այդ տան պատերի մի քարը, մի խիճն անգամ մեծ գին ունի նորա համար՝ որ գիտն թե այնտեղ հանճար է ծնել:

Ամեն քալափոխ, ամեն տեղ Սթրաթֆորթում հիշեցնում են Շեքսպիրը, կարծես նորա շնորհիվը սրբագործված լինի այն երկիրը, ուր այնքան տառապանք և վիշտ կրելով՝ միխթալի է միայն բնության տեսարաններին ներշնչած զմալմամբը և յուր բանաստեղծի աստվածավառ խաղողովը:

Չնայելով յուր աղքատությանը, ասում է պատմագիրը, հաճախում էր մի իտալական դպրոց զանազան հին լեզուների հետ ծանոթանալու համար, և ինչպես որ ինքը խոստովանվում է, աղքատ

տությունից ստիպւած, ուղում էր գրել թատրոնի համար, բայց
ո՛ւմ դիմեր, ի՞նչպէս սկսեիր գործին, ոչ Հոմերոսն էր կարգացել, ո՛չ
Սոփոկլեսը, ո՛չ էսքիլեսը, միայն տեղյակ էր Հերոդոտի, Թուկի-
դիտի և Պլուտարքի:

Այո՛, չունեւ մի դաստիարակ, մի մշակ, որ մի սերմ նետե-
լուր հանճարի պարարտ և ընդարձակ դաշտի վրա, որ անկասկած
մի օր առատ և անմահ հունձք պիտի պարգևեր մարդկության
ապագա սերունդին:

Գովար կլինի այստեղ մի առ մի նկարագրելը, թե ինչ սարսա-
փելի եղաւ այդ մաքառումը հանճարի և կարոտության մեջ:

Այդ բանը մեզ էլ կարող չէ ծանոթ լինել յուր բոլոր պարա-
դաներովը, որոց զաղտնիքն ամփոփւած է համիտենականության
գերեզմանական լուսթյանը մեջ:

Ծննդյան խթման օրն էր երբ Ենքսպիր հենած էր յուր պա-
տուհանին, տեսաւ մի մանրավաճառ, որ զանազան իրեղեններ էր
ժախտւմ. ի միջի այլոց կար մի գիրք ևս. մի գիրք, որ յուր նորու-
թյամբը չէր նմանում մինչև այն ժամանակ Ենքսպիրի կարգացած
գրքանց. այդ Բեյլըֆորիի պատմությանց համաքառուն էր, թարգ-
մանյալ Սաքո Գրամաթիկոսից:

Ենքսպիր չդիմանալով այլևս՝ տվաւ յուր բոլոր ունեցածը և
ղնեց այդ գիրքը և բանալով կարգաց առաջին երեսի վրա այս
վերնագիրը.

Դինչպիսի խորամանկությամբ Ամլեթուս յուր հորը Հորվան-
տիլի սպանությանը վրեժն առաւ, որ սպանւած էր Ֆենկոնից, և
նորանից հետո թագաւորեց Դանեմարքայի վրա: Եվ թե նորա պատ-
մության զանազան պատահարց նկարագիրը:

Դորանից հետո այս գիրքը եղաւ նորա միակ զրոսանքն ու
մտածութիւնը, որնոր շատ անգամ խանգարւում էր գործերի վատ
գրութիւնից, ապրուատի անհրաժեշտ հոգսերից: Պատմութիւնը
կարծում է, որ եթե այդ կենաց գծրախտութիւնները չլինեին,
1578-ին Ենքսպիրը չէր հեռանալ յուր սիրելի ծննդյան տեղիցը և
չէր գրել այն գլուխ գործոց թատրերգութիւնները:

Ենքսպիր սերտ կերպով կապւած էր յուր ծննդյան հողին, այդ
նորա համար երկրիս ամենազոռոր անկյունն էր՝ մի գրախտ. և
յուր նստողական կյանքովը զանազանւում է բոլոր մյուս անգղիա-
ցի բանաստեղծներից: Շառահեր, Սպենսեր ճանապարհորդեցին
միշտ. Միլթոն այցելեց Գաղղիան և Իտալիան և գուցե Հունաստան
էլ կերթար, եթե հեղափոխական լուրերը նորան չհրաժի-

րեին. Բայրն ման է ածում յուր սկեպսիկությունը արեւելքի մեջ. միայն Շեքսպիրն էր, որ չհեռացավ յուր հայրենիքիցը և ծնած տեղից. նորան ծանոթ էր միայն Սթաթֆորթից Լոնդոն տանող ճանապարհը և նորա շրջակայքը. և այդ բնության՝ յուր վառ երեւակայության վրա արած ազդեցությունն անդրադառնում է շատ անգամ յուր թատերերգությանաց մեջ:

Առաջին անգամ երբ Լոնդոն հասավ, արդեն թատերասիրությունը տարածված էր հասարակության մեջ, արդեն Շեքսպիրի արեղակիցն առաջ փայլում էին աստղեր թատերերգության հորիզոնին վրա. կուսակցություններ գոյացած էին, վիճում էին թե ի՞նչ փոփոխություն և ձև պետք է մտցնել թատերերգության արվեստի մեջ:

Շեքսպիր նայում էր այդ բոլորին հեռվից. նա՝ որ կոչված էր այդ մեծ հեղափոխությունը գործելու, մի կողմ առանձնացած յուր չքավոր վիճակի մեջ համեստ՝ տկանատես և լուռ վկա էր այդ բոլոր եղելությանը՝ չգիտենալով բոլորովին թե մի օր ինքը պիտի լուծեր այդ հանելուկը յուր աստվածային հանճարով, որի (ինչպես ամեն հանճարեղ մարդիկ) արժեքը չէր իմանում: Մինչև անգամ ասում են թե յուր ապրուստը ճարելու համար ստիպված էր թատրոնի դռան առաջ ձիապանի պաշտոնը վարել, բայց այդ բանը հաստատապես ստուգված չէ:

Այսուհանդերձ նա շարունակում էր աշխատել գրական փորձեր անել, և վերջիվերջո դիմվածով ծանոթացավ կլասիկական ողբերգությանը կուսակիցների դասին պատկանող երկու նշանավոր անձինքների հետ — Լիլի և Մարլով. այս երկու թատերերգու բանաստեղծները մեծապես նպաստեցին Շեքսպիրի հանճարի զարգանալուն և հետզհետե գտնելով պաշտպաններ և ծանոթանալով Բյուրբեյճի հետ, Լոնդոն զնալուց՝ երկու տարի հետո մտավ նորա խմբի մեջ և սկսավ իբրև դերասան հասույթից մաս առնուլ:

Այն ժամանակները թատրոնի գործն այնքան հաջողակ և արդյունավոր եղավ, որ Բյուրբեյճ Լոնդոնի գլխավոր կամուրջի մոտ հիմնեց յուր Կլոբ անուն թատրոնի սրահը, որովհետև ժողովրդի անհագ թատերասիրությունն այն աստիճանի էր հասել որ մայրաքաղաքում գտնված տաան և մեկ թատրոնները հազիվ բավականացնում էին նորան:

Այն խումբը, որի մեջ մտավ առաջին անգամ Շեքսպիր, ամենանշանավորն էր և այնպես էլ մնաց միշտ, որնոր կազմված էր

սենեկապան լուրդ Լեյլեստերի խմբի դերասաններից՝ և որն հետո
Քաղուհու խումբը կոչվելու փառքին արժանացավ:

Ռիչարդս Բյուրբեյճ՝ Անգլիայի այն հռչակավոր հանճարը, որի
համբավը մանկությունից լսած էր Շեքսպիր, անշուշտ առիթ էր
քաղած նորա տաղանդից, դանադան դուցազոտների տիպեր
ստեղծելու, որոնց այնքան ճշտությամբ և նկարչական կերպով
ներկայացնում էր Բյուրբեյճ. այնուհետև Շեքսպիրի վսեմ հոգին
ինչպես մի աստվածավառ հրարուխ սկսեց դուրս պոռթկալ յուր
հանճարի լավան, որին երևելի անձինք պաշարելով բովանդակե-
ցին իրենց բարձր պաշտպանության շրջանի մեջ և ծաղկեցրին:

1589-ին Շեքսպիր Բյուրբեյճի խմբի առաջին տեղամեր դար-
ձած և փառաց զազաթն հասած էր: Նվ՝ վերջապես այդ խմբով էլ
ներկայացուց յուր գլուխ գործոց Համլետը, որին Բյուրբեյճ իրրե
քաջ նկարիչ և ամենաճարտար մի դերասան լինելով՝ անմահա-
ցուց այդ տիպը, ինչպես բոլոր Շեքսպիրի ստեղծագործությունքը,
որի կյանքի և քերթողական ասպարեզին մեջ օգնականը և նեցուկն
էր, և Շեքսպիրի մահից հետո, երեք տարի միայն ապրելով, վախ-
ճանվեցավ 1619-ին:

Բյուրբեյճի Քատրոնը թեպետ և լավագույնն էր Լոնդոնի մեջ,
բայց և այնպես շատ կոպիտ և աղքատ, քն շնքի և քն բեմական
տեսարանների կողմից. ժողովուրդը, ազնվականն ու ռամիկը
խառնիխառն կլքցվին սրահի մեջ. առար իտայացի երաժիշտ-
ներ մի եղանակ նվագելուց հետո, փող հնչելով կամ մի դրոշակ
պարզելով, անմիջապես սկսվում էր խաղի հառաչարանը. և որով-
հետև բեմը շուներ մի որոշ տեսարան, մի տախտակի կտորի վրա
ծանուցում գրելով կկախին ի դիտություն հասարակության քն
բեմը դորոթյամբ ներկայացնում է այս ինչ պալատը կամ անտա-
ռը, բանտ, դահլիճ, դավիթ և այլն: Վարագույրը դեռ չբացված՝
հասարակ դասակարգի ժողովուրդը սրահի մեջ լիքը՝ զարեշուր
խմելով, ծխելով, կամ թուղթ խաղալով կդրոսնուր, և կամ առաջին
կարգում բազմած ազնվականների հետ կատակներ անելով և սրա-
խոսություններ գլուրելով, որ միշտ կը վերջանար դուրսավառ նյու-
թեր անձրևի պես տեղալով միմյանց վրա:

Այս բոլոր աղմկին վերջ դնելու և հասարակությունը հանդար-
տեցնելու համար խումբը մի ծաղրածու միմոսի բեմ կը հաներ, որ
յուր ծաղրարանությամբ և հապտանքներով զբաղեցնե հասարա-
կության. և այդ միմոսը անշուշտ Բառլըթոնը կը լիներ՝ Անգլիայի
առաջին կատակարան դերասանը, կամ յուր բնկերներից միևը,

որոնք առանձին արտոնություն ունին խաղի մեջ հեղինակի բնագրից դուրս իրենց կողմից հանպատրաստից կատակախոսել, մանավանդ Բաուլըթն, որ թագուհուն էլ սիրելի եղած էր՝ յուր ըստ պատշաճի կատակաբանելովը:

Խաղի վերջումն էլ պետք էր ժողովրդից սիրված մի խեղկատակ՝ թմբուկների աղմկալից թնդյուններով կաջավեր բնմի վրա:

Ողբերգությանց համար սև կտավներով բեմը ծածկում էին, բնմի խորքում էլ մի աստղձ կամ որևէ փայտեղեն մի շննք կառուցանելով, որ տեսարանի բերման համեմատ՝ վանդակի, արտուհանի, դռան, լեռան և կամ մի աշտարակի տեղ էր բնդուովում. խումբը խաղը շսկսած, տեսարանաց բացակայությունը լրացնելու համար կը խնդրեր՝ հասարակությանը, որ երևակայությանը բարեհաճի ենթադրել, թե բնմի վրա կա դաշտ, անտառ, պալատ կամ դահլիճ¹:

Բայց Շեքսպիրի գործոց արժանավորությունը նյութական միջոցների պակասությամբ ոչինչ չէր կորցնում. բնական աստղձներից ոչ մի օգուտ չապասելով միմիայն յուր հանճարից էր ավելացնում տեսարանաց հոգեկան գեղեցկություններ, որոնք զգալի չէին անում բնական զարդերի բացակայությունը:

Աղեքսանդր Միգիեր ասում է, թե եղատ անդամ տեսնելով Comedie française-ի մեջ լուրջ ներկայացումներ, մտածել եմ, թե արդյոք լավագույն չէ՞ր լինիլ հանդիսականաց աչքերը շլացնելով դրաղեցնելու տեղ միտքն ու ուշադրությունը հրապուրելու:

Շեքսպիրի համար նպաստավոր էր մինչև անգամ բնմի աղբատիկ վիճակը՝ յուր գործերովը միայն նորան զարդարելու համար: Նա իբրև մեմբրանտի² ունին հետևող մի մատենագիր, սովորով ծածկում էր յուր գործող անձանց շուրջը, որպեսզի բնմի վրա գլխավոր կետը միայն աչքի զարնե, միայն յուր հանճարի մարգարիտները փայլեն:

Խումբը կազմված էր բանիբուն և շատ քիչ գրագետ երիտասարդներից, բոլորն էլ հոգով միմյանց հետ միացած, եռանդալին և վառվռուն խանդով աշխատում էին իրենց վարդապետի հանճարեղ երկասիրությունը ներկայացնել, որ լայն ճակատը ափին մեջ առած և մյուս ձեռքը գրիչ, յուր ընկերացը եռանդին հյուսվ էր մատակարարում: Բոլորի աչքերը սևեռած նորա գունատ երեսին,

¹ Մեգլեր. Շեքսպիր, յուր գործերն ու քննադատները:

² Հոլանդացի երեկի նկարիչ:

տւր միշտք և արվեստի սրբազան հուրը դրել էին իրենց գրոշմը, քաջալեր և խրախույս էին ղգում իրենց սրտին մեջ:

Լորդ Լեյքեստերից հետո հաջորդաբար պաշտպանեցին խումբը զանազան երևելի անձինք. առաջինը Սեսեքսի կոմսը, երկրորդ՝ Թազուհու սենեկապան լորդ Ռեյկլիֆ և նորա մահից հետո լորդ Հենրի Կոնտսոն:

Այս մերշինս այնքան սիրահար էր Թատեր արվեստին, որ խումբին մեշ դերձակի պաշտոն սկսեց վարել՝ դերասանաց ղգեստները ձևելով և կարելով. և նոցա հետ սկսավ Թափառական ման գալ, երբ խումբը հարկադրված էր հեռանալ Լոնդոնից 1592 թվականին պատահած ժանտախտի պատճառով:

Շեքսպիր շատ ունեցավ պաշտպաններ և բարեկամներ, մասնավոր գոցա շարքում կա մինը, որին անմահացրած է Շեքսպիր յուր քսան և ութը ոտանավոր նվագների մեջ. քննադատներից ոմանք կարծում էին թե այդ անձը Փեմբրուկի կոմսը լինէր, սակայն այլք, որոց թվումն է և Մեդինը, ապացուցանում են թե նա լորդ Սուֆամբրթոնն է, որ բուռն և անկեղծությամբ սիրեց Շեքսպիրին և պաշտպանեց նորան և նույնպես նորա ընկեր Բյուրքինձը: Երբ 1603-ին հալածում էր նոցա Արքայական խորհրդի ատյանը, Սուֆամբրթոն տաաց. «Պաշտպանում եմ ես դոցա այն պատճառով որ մինը Անգլիայի Ռոսցիոսն է, իսկ մյուսը իմ սերտ բարեկամս»:

Եվ ո՞վ կարող էր ղպարծենալ Շեքսպիրի նման մի անձի բարեկամությունը, որ հասարակական կյանքի մեշ աղնիվ էր և բարի, յուր աշխատությանը արդյունքից հուրը պարտքերը վճարեց Աթրաթթորթում, որ գիտեք սիրով վարվել բոլորի հետ, և որ՝ շնայելով յուր համեստության, տիեզերքի ամենամեծ հանճարն էր, որ հակառակ հին Թատերագիտաց, Սոփոկլի և Արիստոդի օրենքներին, ահագին մի հեղափոխություն մտցրուց, անսպասելի մի ուղղություն տալով Թատեր արվեստին:

Նա քանզեց մինչև այն ժամանակ լրջությամբ պահպանված ավանդական սովորությունը, տեղի, ժամանակի և միություն կապը, որ պետք էր անխախտ պահվեր ամեն Թատերգությանց մեջ:

Հնություն փոշին և անհարթ քարերն առնելով, մի նոր տաճար կառույց արվեստին, դիցաբանական արձանները և ումանթիքական կեղծ գյուցազունքը մսից և ոսկրից շինված, իրական մարդիկներ դարձան յուր հանճարի լուսավոր ճառագայթի տակ կերպարանափոխվելով: Եվ այդ կենդանի մարդկության ամբողջը՝

առանց խտրության՝ թագաւորը հովմին, ազնւականը գյուղացուն, հարուստը մուրացկանին, կույսը հոմանուն, քրիստոնեւոյն, կռապաշտության հետ, հին դարը միջինին և նորին հետ խառնելով և Սոփոկլեսի, էսքիլեսի, Հոմերոսի, Վիրգիլիոսի, Օվիդիոսի, Պլուտարքի, Հովինծնթի, Հալլի, Շառլերի, Սաքսո Գրամաթիկոսի, Բելլըֆորեի, Մոնթեյի, Արիստոֆանի, Լուցիանոսի, Ժիրալտո Զինթոյի, Բոքսլլիոյի, Բանտելո Նարոլիտանցիի, Բորտոցի Լուիճիի և Ուրբինոցի Լոլիուսի գործերը կարդալով, հաճաքեց և արավ յուր թատերգությանց հյուսիս և նյութը՝ ներկայացնելով մեղամբողջ մարդկությունը յուր հոգով և սրտի բոլոր դաղտնիքներովը, բոլոր պակասութիւններովն ու բոլոր առավելութիւններովը պատկերացուց թատերական հայելիին մէջ։

Եվ ո՛վ կարող է ըզարմանալ նորա թատերգութիւնները կարդալով, որոց յուրաքանչյուրը գեղեցկին, բարվոյն, նկարչականին և դեղարմատի տաճարին՝ ազամանդյա անխախտ սլունիքը կարող են համարվել, որոց զխաւորներն են. Համլետ, Աքքան Լիր, Մաքբեթ, Օթելլո, Ռոմեո Ժուլիետ, Վենետիկ վաճառականը, Հուլիոս Կեսար և այլն։

Ենթադիր՝ թե յուր ժամանակին, և թե մահից հետո, ունեցաւ թշնամիներ, և յուր գրությանց չհաճանող անձինք, որոնց թվում են՝ մեծն Ֆրեդերիկ, Կոխ, Վոլթեր, Թոմաս Լյուաի և Սեր Ֆրիսո Սիդնիս, Այս վերջինը պաշտպանում էր հին ողբերգութեանի ոճը և հրատարակեց «Բանաստեղծության ջատագով» անուն գրքուկը. որ յուր մահուց ինը տարի հետո լույս տեսաւ։

Իսկ Կոխն Ենթադիրին կոչում էր բեմի խանգարող. Թովմաս Լյուաի ծաղրում էր նորան. իսկ Ենթադիր խայտառակեց Լյուաիին յուր «Զվարթաբարո կանայք Վինտսորի» թատերգության մէջ Շալով տիմարի տիպարը նորա անձնավորության տակ ներկայացնելով։

Բայց ամենից նշանավորը, Վոլթերի կատաղութիւնն է Լը-Սուրենոր անուն համեստ գրագետին դեմ, որ յուր տպարանի մէջ առաջին անգամ թարգմանելով ի լույս ընծայած էր Ենթադիրի գործոց գաղղիներն թարգմանութիւնը 1776-ին։

Վոլթեր ասում է Լահարփին՝ «Ա՛հ, դուք Ենթադիր եք թարգմանում, ուրեմն դուք մի փցում անպիտան եք, առավել քան անպիտան, անմիտ տիմար եք, մի հիմար անասուն եք, դուք Գաղղի»

¹ Frangois Hugo, les Deux Hamlet.

ամօքն ևք, արժանի հասարակության թուքումուրին. ձեզ հարկա-
վար է իշու դղակը դուխնիզ, գուլի նման բանտ ուղարկել, գուցե
և մի հրնշ նքա... Մի ուրիշ տեղ էլ նույնպես. «Եթե դիտնաք ինչ-
պես կատաղած եմ այդ լըթուրննորի դեմ, սարսափելին այն է, որ
թշվառականը մի կուտակցություն ունի Գաղղիո մեջ և ի լրումն
գոթախտությանց, արյունս վրդովվում է, երբ հիշեմ որ ես էի
առաջինը այդ Ենքսպիրի մասին խոսողը, ես էի որ առաջին ան-
գամ Գաղղիայում ցույց տվի այդ մի քանի մարդարիտները, որ
գտել էի նորա գարշահոտ և ընդարձակ աղքատին մեջ, Երբեք չէի
մտածել որ մի օր ակամա ոտնակոխ պիտի տնեմ Ռասինի և Քու-
նելլի պատկները, նոցանով Ենքսպիրի նման մի բարբարոս ծաղ-
րածու նակատը պսակելու համար»¹:

Մինչև անգամ փոք՝ յուր հայրենակիցը, կը բամբասեր նորաւ
Գեորգ ր. թագավորի առաջ ասելով, թե «Ենքսպիր մի շորի է.
մերկ, առանց որևէ բեռի, և լսելով զմայլվում է յուր բոժոմների
հնչունները»:

Անշուշտ կարելի է գուշակել թե որքան Ենքսպիր ազնապ և
փիզտ է կրած. մեկ կողմից հարված, որի պատճառած ցավը շէր
կարող շատ անգամ մեղմացնել յուր բարեկամաց զգվանքն ու
սերը: Յուր ժամանակակից մատենագիրների տված հալածանքը,
ավելացրեք դորա վրա յուր ամուսնական տնային կյանքի մեջ
կրած տառապանքները, կողակցին՝ Աննայի, թեպետ բարի, բայց
նախանձոտ բնավորությանը պատճառով: Բացի յուր առտնին
վշտերից և մատենագրական ասպարեզին մեջ թշնամի մատենա-
գրաց անխիղճ վարմունքից ուրիշ մի բան յուր սիրտը շէր կարող
վշտացնել, որովհետև՝ ինչպես վերն ասացինք, Ենքսպիր շատ
մարդասեր և բարի լինելով, շէր կարող իբրև մարդկային ընկե-
րության անդամ, մի որևէ թշնամի ունենալ: Գրագետ Գեորգ Չափ-
մանը, որ իրեն ժամանակակից լինելով, թարգմանած է նույնպե՛ս
Հոմերի Իլիականը, գրում է Ենքսպիրի մասին, թե «Այս մարդը
յուր համեստութիամբը և պարզասեր վարքովը, կրոնասիրութիամբ

¹ Մի ուրիշ տեղում էլ ծաղրելով ասում է. «Համբնթ խենթ է երկրորդ գործ.
մեջ. իսկ յուր սիրուհին՝ երրորդում: Օֆելիայի հորը սպանում է՝ ամուկ է-
սանելով: Օֆելիան շուրս է տեսվում, և բեմի վրա թաղում են: Համբնթ հիմա
կատակաբանություններ է անում գերեզմանափորների հետ. վերջապես Համբնթ,
նորա մայրը և հորեղբայրը պատրաստվում են գինի խմել վերջի գործողության
մեջ, և հանկարծ կռվելով խզվաղում, սպանում, հոշոտում են միմյանց»:

ու սակավապետ կյանքով ինձ զարմանք պատճառեց, որովհետև այդ հատկությունները շատ հազվագյուտ են քերթողաց մեջ:

Նույնպես և նոր հեղինակներից մի քանիսը, հաստատում են այդ ի միջի այլոց Մեղիեր և Լամբրոզու Այս վերջինը յուր խալերենից ուսերենի թարգմանված «Гениальность и помешательство» անուն գրքի մեջ, երևելի մարդկանց մասին խոսելիս՝ գովում է Շեքսպիրին և հարում է նույնպես թե նա Սոկրատի, Դանթեի, Բայրոնի, Պուշկինի և Մառցլոյի նման ամենադժբախտ մարդն էր ամուսնական կյանքի մեջ:

Զի գիտցվիր որոշ թե ի՞նչ էր այդ տարաբախտ նախանձի սկզբնապատճառը. պատմությունը շատ անհաստատ տեղեկություն է տալիս այդ մասին: Թեև Շեքսպիրի սիրած լինելը հայտնի է լինում յուր երկու հարյուր քառասունի շափ փոքրիկ նվագներիցը, որոնց բոլորն էլ նվիրված են մի կնոջ. բայց ո՞վ էր այդ կինը, ի՞նչ կերպ էր նորա վերաբերությունը այդ կնոջ հետ. այդ մասին որոշ ոչինչ չէ կարելի ասել. միայն փիչ շատ անդալ լինելով Շեքսպիրի անձնավորությանը և նորա հոգեկան տրամադրությանց՝ կարող ենք ենթադրել, թե այդ սերը զաղավարական էր, որովհետև այդ կերպ մարդկանց մեջ հոգեկանը ավելի ուժեղ է մարմնականից, և նորա նման աստվածացյալ քերթողին կարծեմ ներելի է ունենալ յուր խանդը բորբոքող սիրելի մուսան. և երևի Շեքսպիր շատ է օգտվել նորանից, այդ պատճառով դուցե շատ էլ գովում է կանանց:

Ահա թե ի՞նչ է ասում նոցա մասին յուր նվագներից մեկի մեջ, որ զաղդիերենի է թարգմանած Ֆրանսուա Հյուգոյ.

«Կանայք են, որ բխում են Պրոմեթեյան կրակի կայծերը.— կանայք բոլորը գրքեր են.— արվեստք և համալսարաններ են.— նոքա են բոլոր մարդկության սնուցանողները և դաստիարակելով ազնվացնողները.— առանց կնոջ ոչ ոք չէ կարող կատարելագործվել, հիմար են նոքա, որք հրամարվում են կանանցից»:

Այս տողերն ուղղված են յուր բարեկամ Սուրմարթոնին Միստրեն Վանոնի նկատմամբ, որի վրա բուռն սիրահարված էր Սուրմարթոն, և որին Նդիսարեթ Թագուհին արգելած էր ամուսնանալ, որովհետև ինքը Թագուհին էլ չէր կամեցել և չէր կարողացել երբեք ամուսնանալ և դորանով ավելի աշառապես էր վերաբերվում այլոց կուսակրոնությանը:

Այսուհանդերձ բոլոր այս պատճառաբանությունները չէին կարող մեղմացնել Շեքսպիրի կողակցին՝ Աննայի նախանձը, և

վերջապես կյանքը այնքան դառնացավ Շեքսպիրի համար որ յուր նվաղներից մեկի մեջ հողմոց հանելով աղաղակում է. «Բոլորից ձանձրացած բարձրաձայն օգնության եմ գոչում հանգամանքներ մահը, որովհետև և զգվեցաւ տեսնելով մութացկանության մեջ ծըն-ված արժանավոր մարդիկը, և կողոպտյալ քաղցածը՝ որ խեղկատակ է ձևանում. ամենամաքուր հավատքը ցավազին կերպով եղծված. պատիվը ամոթալից կերպով բաժանված՝ և կուսական առաքինու-թյունը կողոպտարար պղծված, և արդարության արժանավորու-թյունը ի զո՛ւր սանակովս եղած և կաղ բռնության տակ զորությունը անդամալույծ դարձած, արվեստը բռնաբարապես կաշկանդ-ված՝ և թեթևամիտ տղիսությունը տաղանդ ձևացած. և դերի դար-ձած բարությունը՝ շարություն տնօրինության ներքևը»:

Անշուշտ նկատեցիք, որ այս խոսքերը որքան նմանություն ունին ժիննել թն լինելը նշանավոր մենախոսության հետ:

Յուր հողմույն դառնությունները և՛ կենացը առաապալից պատկերը միշտ անզրադառնում են յուր բոլոր գործերում՝ մանա-վանդ Համլետի ողբերգության մեջ:

Նորա միակ մխիթարությունն էր հեռանալ երբեմն մայրաքա-ղաքից, ուր զբաղմունք և մշտնի կաշկանդում էին, փախուստ կուտար այնտեղից որ զաւ տեսնէ յուր սիրելի Սթրաթֆորթը և 1616-ին մեռնելուց մի քանի վայրկյան առաջ խնդրեց որ այնտեղ էլ թաղվի. և յուր աջ և ձախ կողմերը թաղվեցան կինը և աղջիկը, մեկը լատիներեն և մյուսը անգլիերեն տապանադրությամբ. իսկ Շեքսպիրի մոխիրները ծածկող քարի վրա քանդակված նշմարվում են այս խոսքերը. «Բարի բարեկամ, ի սերն Հիսուսի, մի՛ խառնիր այստեղ թաղված նշխարներս. օրհնյալ լինի նա, որ պատիվ կու-տա այս քարանց, և անիծյալ նա, որ կը վրդովե իմ ոսկերաց հան-դիսարն»:

Շատ երևելի տեսիլնք, դադտնի թաքնվելով Սթրաթֆորթի եկե-ղեցվույն մեջ ուղեցին ծածկարար բանալ նորա գերեզմանը, որ-պեսզի գոնե մեկ անգամ դիպչեն նորա ոսկերաց, կարողանան շափել և քնել այն դանդը, որ ժամանակավ բարվույն, զեղեցկին և ճշմարտին՝ հանճարն ու չահը պատապարել էր իրեն մեջ:

Բայց տապանադիրը կարդալով, չհամարձակեցան այդ անել, և բավականացան միայն դմալին՝ կարդալով նորա գործերը, մա-նավանդ Համլետը, որո մասին պիտի խոսեմ այժմ, պատմելով նախ Սաքսո Գրամաթիկուսի առասպելական պատմությունը, որից քաղել է Շեքսպիր Համլետի ողբերգության նյութը:

Ինչպես որ վերն ասացի, Համլենթի արկածոց պատմությունը գրված է նախ լատիներեն լեզվով Դանեմարքացի գիտնական Սաքսո Գրամաթիկոսից և որը Բելլեֆորե գաղղիերենի թարգմանեց։ Ահա այս ավանդական պատմությունից քաղեց Շեքսպիր յուր ողբերգության նյութը, որնոր ավելորդ չեմ համարում այժմ հաղորդել ընթերցողացս, համառոտակիով մի քիչ այն տեղերը, որք այնքան պիտանի չեն նպատակին։

«Բորիկ, Դանեմարքայի թագավորը, յուր թշնամիներին հաղթելուց հետո, Յուլանդիայի թագավորությունը հանձնեց երկու քաջ ասպետներին— Ժերվանտիլի որդվոցը, որոց առաջինի անունն էր Հորվանտիլ և երկրորդինը Ֆենկոն։

Հորվանտիլ մեծ հռչակ ունեւ ծովային հելուզակի և փրփրահույզ կռիվների մեջ։

Քուլեր, նորվեգացի թագավորը, վրդովվում էր, լսելով նորա սխրագործությունները, որք գերազանցում էին իրաններից։ Ուստի Քուլեր վճռեց ծովամարտի հրավիրել Հորվանտիլին, պայման դնելով որ հաղթողը պիտի գրավե հաղթյալի բոլոր իշխանությունն ու հարստությունը. և Հորվանտիլ հաղթեց Նորվեգիայի թագավորին. բոլոր թագավորական հարստությունը ավար առնելով վերադարձավ Բորիկ թագավորի մոտ և այդ ավարները նորան ընծայեց։ Բորիկ ուրախանալով նորա անձնվիրությունից կնություն տվավ նորան յուր դուստրն Ժերյուֆ և որոց սիրտ պատուդը եղավ մի որդի, որին անվանեցին Ամլենթ։

Ֆենկոն, Հորվանտիլի եղբայրը նախանձից և փառասիրությանից կուրացյալ, ինքը նահանգին տեր լինելու համար և կամ չգրկվելու համար իրեն պատկանյալ տերությունից, որոշեց սպանել իր եղբորը։

Այսպիսով, Ֆենկոն արբանյակներ գտավ և խորամանկությամբ ու նենգությամբ սպանեց նորան, նախապես անպատվելով այն կնոջ, որ յուր եղբորն էր և յուր հարսը միանգամայն, և գրավեց գահը. և երբ հարցուցին, թե ժինդո՞ւ սպանեց Հորվանտիլին, Ֆենկոն պատասխանելով ասաց. «Ըն ուղեցի պաշտպանել կնոջը՝ Ժերյուֆին, որ յուր հեզ, հլու և խաղաղ բնավորությամբ արժանացել էր յուր ամուսնու ատելությանը միայն և ես սպանեցի եղբորս, որպեսզի ազատեմ այդ անմեղը»։

Այս բոլորին վկա էր Ամլենթ և իրեն կասկածավոր ցույց չտա-

լու համար, սկսած խելակորույս և տխմար ևևանալ: Ամեն օր
կը տեսնենին նորան դեռնի վրա գարշահոս կեղտոտությանց մեջ
թափալիլը, երեսը ցնխով ծածկված և բոլոր յուր անձը այնպես
ալլալոված, որ չէր կարելի կարծել թե մարդ է նա, ալլ մի հրեշ:
Երբեմն ծալապատիկ կնասեր վառարանի մոտ, ևեռքերը մոխրին
մեջ, երբեմն էլ փայտի կտորները սուր կը տաշեր և այրելով
կպնդացներ նոցա ծայրերը:

Երբ նորան կըհարցնենին այդ բոլորի պատճառը, կըպատաս-
խաներ, թե «Սուրբը է պատրաստում յուր հոր մահվան վրեժն առ-
նելու համար»:

Այս պատասխանը ծիծաղով և արհամարհանք կընդունենին.
բայց նա այդ բոլոր փայտերը խնամքով կըպահեր, որոնք վերջա-
պես կըտեսնեն որ պիտի ծառային մի օր յուր նպատակին: Մի
քանի պալատականներ կըկասկածենին, թե այդ բոլորը խորաման-
կություն է և նորան փորձելու համար այս միջոցը խորհնցան.

Նորան հանդիպեցնել մի հազվագույս գեղեցիկ կնոջ, որ կա-
րողանա բորբոքելով գրգռել Համլետի ցանկական տախտերը:

Եթե բնության քարշողութունը կարողացավ ազդել և նա փու-
թաց հագեցնել յուր տախտերը, նշանակում է որ նա խելագար չէ:

Ահա այս փայտերը տաշելու տեղեկությունիցն եմ վերցրել շինել թե լինե-
նել մենախոտության մեջ ևեռք մի դաշույն բռնած՝ թեմ դուրս գալս, որ շո-
տորին տեսականալի է թված: Տրամաբանելով այսպես՝ թե Համլետ տնչուշտ
այդ փայտի կտորանքը, մի գանակով, կամ դաշույնով կտաշեր, և այն Եե-
քնալիլի նկարագրած Համլետը, որի համար կյանքը անտանելի մի բեռ եղած է.
և քանի որ շինել թե լինել մենախոտության միտքը հայտնի անձնասպանության
մի ցանկություն է արտահայտում, ուրեմն թնական չէ՞ միթե, որ այդ անձնասպանու-
թյանց յուր այն դրության մեջ, մի դաշույնի տեսքը հիշեցնեն նորան ազնիվ զորավոր
կերպիվ, միով բանիվ մահ, սպանություն և անձնասպանություն, գործողութունք—
որ դաշույնով կամ գանակով ազնիվ կարող են կատարվել: Ինչպես որ հիշողու-
թյան հաստատ և թնական օրենքով մի բաժակի ներսւյթը հիշեցնում է որևէ հե-
ղուկ՝ շուր կամ գինի, փուռը հաց, գիրքը տառ, ամպն անձրև, ծնունդը սիր,
դադարը գիտի և ալլն, սպանությունն էլ կը հիշեցնեն մեզ հարված կամ զենք
ընդհանրապես, որով Համլետն էլ՝ ինչպես ասում է, կըցանկաւ բայդ բոլորից
մի նաւվածով ազատվել և այն ևեռքի բռնած դաշույնի հարվածովը Համլետի
այդ դաշույնով թեմ դուրս գալը, իմ կարծիքը, միտք ունի և գեղագիտական և.
մինչ իսկ համոզված եմ, որ այդ առարկան մի մեծ կապ ունի շինել թե լինել
մենախոտության մեջ գտնված մտքին՝ և Համլետի հոգեկան վիճակին և դրու-
թյանը հետո նվ խոնարհաբար խորհուրդ կըտամ նոցա, որք պակասաբար են
կարծել այդ բանը, ուշադրությամբ կարգալ Սաքսո Գրամսթիկուտի՝ կամ Բել-
լեֆորեի առասպելը, և չդատած տեղյակ լինել այն պատմաներին, որ մի ող-
բերգու պեսք է յուր աչքի առաջ ունենա՝ մի այնպիսի տիպար ստեղծած ատեն:

Ուստի հրամայեցին նախ որ ձիու վրա նստի, բայց նա նստեց ծուռ, ձիու պուշը իբրև սանձ ձեռքն առնելով:

Բայց Ամլեթի կաթնեղբայրը, որ Հորացիոն է ողբերգության, զգուշացրեց նորան. նա էլ կնոջ մի առանձին տեղ տանելով վայելեց նորա գրկախառնությունը, վստահ լինելով նորա խոստմունքին որ ոչ ոքի շարտի հայտնե իրենց սերը:

Այդ կինը ողբերգության Օֆելիան է:

Երբ հարցուցին իրեն, թե — հասա՞վ յուր նպատակին՝ նա այո՛ պատասխանեց, իսկ կինը՝ ո՛չ. և ավելի վերջնալն հավատացին: Ամլեթ ասում էր որ նա հանգչել է մի ահագին անասունի հողաթափին, աքաղաղի կատարին, և մի առնիթի վրա: Եվ հիրավի կնոջ հետ ճանապարհին զնացած ժամանակը, հավաքել էր այդ առարկաների կտորները, ստախոս շինելու համար: Եվ յուր բարեկամի զգուշացնելու համար գործածած միջոցը հիշելով, բացարձակ և լրբաբար պատմում էր որ մի թռչուն է տեսել հտեիցը մի հարդի շյուղ բարձած՝ և քամակին մի փայտ որ արագ իջնում էր: Բոլորեքյանք ծիծաղեցան այս խոսքին: Սակայն Ֆենկոն հասկանալով որ այդ միջոցներով շարտի կարողանա ճշմարտությունը երևան հանել, ուրիշ մի բան խորհուրդ տվավ նորան յուր խորհրդականը, որ ողբերգության Պոլոնիուսն է կամ Քոռամպիոսը:

Հորգորեց Ֆենկոնին բացակա լինել մի քանի ժամանակ կարևոր գործերի պատրվակով և Ամլեթը փակել յուր մոր հետ մի սենյակի մեջ, ու ինքը խորհրդականն էլ հանձն առավ նոցանից գաղտնի այնտեղ թաք կենալ և լրտեսել: Այս գաղափարը շատ գոհացուցիչ թվեց Ֆենկոնին: Բայց Ամլեթ այս անգամ ևս կարողացավ աղատել յուր անձը խորամանկությամբ, վասնզի կանխածնով որ այնտեղ մեկը պահված լսում է, սկսեց թևերը շարժելով աքաղաղի պես գոշել և անկողնին վրա բարձրանալով պար գալ, և ձեռքերովը փնտրեց ու դտավ մի մարդու մարմին և նորան թաքստից դուրս քաշելն ու սպանելը մեկ արավ: Հետո մարմինը կտր կտոր շարժելով խաշեց ու խոզերին կերակրեց, ապա կրկին վերադառնալով մօրը մօտ սկսավ հանդիմանել նորան. «Լինչո՛ւ համար, ասաց, կեղծ ողբերով ուղում ես ծածկել քո ռճիրդ. դու, որ բնդունեցիր պոռնիկ կանանց նման եղբրական և զարհուրելի ամուսնության հանգույցը, սեռապիղծ եռանդյամբ համբուրելով ամուսնույդ մարդասպանը. դու, որ ամոթալից գովանքներով փայփայում ես նորան, որ զավակիդ հորը խեղդեց. անասունք միայն կարող են այսպես միանալ... և դեռ շատ բաներ. հետո շարու-

նակեց՝ «ի դուր չէ որ ես խնայաբար եմ ձևանում. որովհետեւ նա՝ որ կարողացաւ յուր եղբորը սպանել, չէ՞ կարող միթե սպանել նորա որդուն. բայց իմ հօր վրեժը առնելու հռանդը կենդանի է սրտումս, սակայն շատ նրբություն է հարկավոր. գալով քեզի շի պատկանիլ որ ողորտս իմ հիմարությունս, քանի որ պարտական ես արտասովել քո սեփական հանցանքը»:

Ամլեթ պատուելով յուր մոր սիրտը, լավ և առաքինական զգացմունքներ հանեց նորա միջից, սովորեցուց նորան յուր նախկին սիրող հիշատակները նախամենծար համարել ներկայիս տղութանաց:

Յենկոն վերադառնալով, շատ որոնեց յուր խորհրդականին, բայց Ամլեթ նորան պատասխանեց, որ հարբած լինելով աղբանոցի մեջ ընկել մեռել է և թե խողերը նորան լափել են: Այս պատասխանը շէր կարող վատահեցնել Յենկոնին, որ կասկածոտ նայելով յուր եղբորորդւոյն վրա ուզում էր անհայտացնել նորան, և որին սպանել տալու համար Բրիտանիայի թագավորիցը ուզեց օգտվել:

Անգղիա զնացած ժամանակ Ամլեթ խնդրեց յուր մորիցը, որ խնշույթի քրահի պատերը ծածկե ամուր և պինդ կապներով, որպեսզի մի տարուց հետո այնտեղ կատարեն յուր թաղման հացկերույթը, և ինքը խոստացաւ ճիշդ այն ատեն վերադառնալ: Նորան ընկերակցում էին Յենկոնի թիկնապահներից երկու անձինք, որոնք ըստ ժամանակի սովորության մի տախտակի վրա փորված նամակ էին տանում, որով հրամայում էր Յենկոն սպանել Ամլեթին:

Իսկ Ամլեթ յուր ընկերների քուն հղած ատեն փոխեց հրամանադիրը, հրամայելով որ նոցա դիտատեն. և Յենկոնի կողմից էլ ավելացուց որ թագավորը յուր աղբիկն Ամլեթին տա:

Բրիտանիայի թագավորը շատ սիրով ընդունեց նորան և զատ հափշտակվեցաւ Ամլեթի խելքից. նա այնտեղ զանազան գուշակություններ և խելացի դիտողություններ անելով ու զանազան բաների մասին յուր զատողություններ տալով, և յուր զվարթությամբ այնքան զրավեց թագավորի սերն ու հարգանքը, որ վերջապես աղբիկը կնության պարգև առաւ արքայից: Հետեւյալ օրը նորա երկու ընկերները կախել տվեց, Ամլեթին էլ մի սհադին գեղ ոսկի շնորհելով, որնոր Ամլեթ հալեցուց և երկու դատարկ գավազանների մեջ լցնելով՝ Դանեմարքա վերադարձաւ:

Դարձյալ յուր առջի կեղտոտ շորերը և հիմարի դերը առնե-

լով, հենց իսկ այն երեկոյին հասավ և մտավ սրահը, ուր յուր թաղման հացկերույթն էին անում:

Բոլորը սարսափած ափիւրեքան մնացին, երբ տեսան որ կենդանի է: Եվ երբ հարցուցին, թե ո՛ւր են յուր ընկերները, ոսկովով լիքն երկու դավաղանները ցույց տալով ասաց, «Ահա մինը և ահա մյուսը»: Այն ժամանակ սարսափը ծիծաղի փոխարկվեցաւ, մինչդեռ ինքն Ամլեթի ավելի հուզում էր կոշնականաց ուրախությունը՝ երգելով և անձամբ դինի մատովակելով նորանց:

Բոլորն էլ դինուց հաղթված, երբ սկսան քնել, հանկարծ պատի կտալները վար իջեցնելով նոցա վրա ծածկեց. և կտալների հզերքը միմյանց կապելով կաշկանդեց այն փայտերով, որ մի ժամանակ սրած և պատրաստած էր կրակարանի մոտ, և պալատին կրակ տվեց, և երբ նոքա բոլորն էլ այրվելով փլատակների և մոխրի տակ թաղվում էին, Ամլեթ ուղիղ հորեղբորը ապարանքը դնաց և յուր սուրը, որ արդեն պատյանին մեջ գամված և ամրապնդած էր, կախեց այնտեղ Ֆենկոնի մոտ՝ և փոխարեն նորա սուրը ինքն առաւ, հետո Ֆենկոնին՝ որ քնած էր, զարթեցուց: Ֆենկոն տեսնելով Ամլեթի սպառնալից պատկերը և սուրը ձեռին, հարձակվելով առավ պատից այն սուրը՝ իրենը կարծելով, և երբ նա ճգնում էր հանել պատյանից, Ամլեթ պատեհ առիթ առնելով ահագին և ուժեղ մի հարված իջեցուց շինքին և դետին թափալեց զուկնը: Ֆենկոնի մահը բավականին վրդովեց ժողովրդյան, այդ պատճառով Ամլեթ միջանի օր ոչ ոքի չերևաց. բայց ի վերջո, տեսնելով ժողովրդյան ախուր և խաղաղ դիրքը, բոլորին էլ մի հրապարակի վրա հավաքեց և այնպիսի մի ճառ ասաց, որ ամեն սիրտն հուզվեցաւ և շատերն արտասովեցին և միաբերան Դանեմարքայի թագավոր անվանեցին նորան...:

Ահա այստեղ է վերջանում Բելլըֆորեի պատմությունը և նույնպես Համլեթի ողբերգության նյութը. բայց շատ հետաքրքրելի է լսել Ամլեթի կենաց հետագա հանգամանքները, որոնց մասին գրած է միայն Սաքսո Գրամմաթիկոս, որնոր թարգմանած է գաղղիսերենի Աղեքսանդր Ռյուսնեի և տպված յուր «Համլեթ Դանեմարքացին» անուն գրքի մեջ Փարիզում 1878-ին: Եվ ահա շարունակվում է այսպես.

«Ամլեթ Դանեմարքայում վերջ տալով յուր քաջագործութուններին, երեք նավեր հարուստ պաշարներով բեռնավորված և ընտիր քաջամարտ հետևակներով դնաց Բրիտանիա. և ինքն էլ, որ առաջ սաստիկ աղքատ և զուժ էր հագնված, հետո ընդհակառակն

հարուստ և ճոխ զգեստներով և փարթամությամբ զարդարվեց և յուր վահանին վրա նկարել տվա՛վ՝ բոլոր մինչև այն ատենը յուր կենաց մեջ պատահած արկածները մանրամասն կերպով, որոց վրա քիչ առաջ խոսեցանք։

Բրիտանիայի թագավորը ընդունեց նորան պերճությամբ և շքեղ կերպով, և երբ խնջույքի ժամանակ հարցուց Ամլինթին, թե Յենկոն կենդանի՞ է, Ամլինթ պատասխանեց որ նա մեռա՛վ սրով։ Թագավորը հարցումիորձելով իմացավ վերջուպես, որ Ամլինթն է Յենկոնի մահվան հեղինակը։

Եվ այս լսելով սարսափեցա՛վ, որովհետև մի ժամանակ երգված էր Յենկոնին նորա մահվան վրեժն առնել։

Իրենց մեջ դաշինք էին դրել որ երկուսից սրնոր կենդանի մնա, մյուսի մահվան վրեժն առնել։ Այսպիսով թագավորը զգում էր իրեն երկու սուրբի մեջ, մի կողմից աղչիկն ու փնտան, մյուս կողմից բարեկամին տված ուխտն ու խոստումը, որին չէր կարող դրժել։ Եվ խոստումը հաղթեց ծնողական պարտույց։

Սակայն այդ վճռին կատարումը հյուրասիրության սուրբ դաշինքների դեմ ոճիր համարելով, լավագույն համարեց յուր վրեժ-խնդրության դործիք անել մի օտար ձեռք. ուստի հանձնեց Ամլինթին դնալ իբրև պատգամավոր յուր կողմից Սկովդիայի շքնաղագեղ թաղուհւոյն, որի հետ կը ցանկանար թագավորը իբր թե ամուսնանալ, գուցե առանց Ամլինթի միջնորդության չկարողանար հաջողցնել այդ, որովհետև մինչև այն ատեն մերժել էր բոլոր իրեն ներկայացող փեսացուներին, ոչ թե չհավանելով ամոթխածությամբ, այլ գոռոզ և սեգ լինելով, ասում էր բոլորը, այնպես որ իրեն կնության ուղղոններին շատ անգամ սպանել կոտար։

Ամլինթ հանձն առա՛վ այս վտանգավոր պատգամավորությունը, մասամբ էլ թագավորի իրեն տված հետևակների վրա վստահանալով։

Սկովդիա հասնելով՝ զնաց արքունիքից քիչ հեռու մի մարդագետին գտա՛վ, ուր ձիերին հանգիստ տալու համար հանգչեցան բոլորը, և Ամլինթ յուր շուրջը պահապաններ կանգնեցնելով քնեց մի կարկաշող աղբյուրի մոտ։

Թագուհին իմանալով նորա գալուստը, տասը երիտասարդ լրտեսներ ուղարկեց իմանալու հոմար, թե ո՞վ է այն օտարականը։

Դոցանից մինը, ավելի ճարասլիկ լինելով, խաբեց պահա-

պաններին և այնպիսի զգուշութիւնմբ վեր առաւ քնացող Ամլեթի գլխի տակից այն վահանը, որ ամբողջ յուր կյանքն էր նկարված, որ Ամլեթ չգարթեց քնից և ոչ յուր հետևակները, և լրտեսը տարաւ ներկայացրուց վահանը յուր Տիրուհուն, Բրիտանիայի Թագավորի նամակին հետ՝ որ նույնպես ճարպիկութիւնմբ գողացել էր:

Թագուհին զննելով վահանը և կարգաւով նամակը՝ իմացաւ որ շուտով պիտի տեսնե յուր առաջ այն գլուցազնը, որ ճարտար իմաստութիւնմբ յուր հոր սպանութիւնն վրեժն է առած: Եւ մի ծերունու հետ ամուսնանալու զաղափարից զզված, ավերեց նամակը և նորա տեղ գրեց մի գիր իբր թե Թագավորի կողմից գրված և ստորագրված, որով Թագուհւոյն խնդրում էր կնութիւն յուր նամակաբեր Ամլեթին համար, և կրկին հրամայեց որ նամակըն ու վահանը զգուշութիւնմբ իրենց տեղը վերադարձնեն:

Իսկ Ամլեթ եղած գողութիւնը նկատելով, դիտմամբ քնել ձևացուց, որովհետև և դեռ ուրիշ խորամանկութիւններ էր սպասում նորանից, որ գողացել էր նամակն ու վահանը. և կասկածը ի զուր չէր: Եւ երբ լրտեսը գալիս էր գողացած բաները յուր տեղը դնելու, հանկարծ վեր ցատկեց տեղիցը և շթմաներով կաշկանդեց նորան. հետո յուր ընկերներին զարթեցնելով դնաց Թագուհւոյն ապարանքը և հանուն յուր սպանյալ հորը՝ Հորվանտիլի ողջունելով, նորան, մատուցց նամակները:

Էրմեթրուդա, այսպես էր Թագուհւոն անուանը, գովեց Ամլեթի քաջութիւնը քաղցր խոսքերով, և ասաց, թե Ֆենկոնը արժանի էր այդ պատժին և Ամլեթ սովորական մահկանացուներից ավելի նուրբ գիտակցութիւնմբ հասել է յուր նպատակին ոչ միայն անսպասու հաջողութիւնմբ գլուխ հանելով յուր վրիժառութիւնը մի սեռապիղծ ավաղակից, այլ տիրելով նաև իրավացի փաստերով նորա տերութիւնը, որ բոլորովոր որոգայթներ էր լարած իրեն դէմ: Եւ նա զարմանում էր, որ մի այդպիսի տաղանդի տեր մարդը ի նշլպես էր համաձայնել ամուսնանալ անարգ և անտոհմ անձի հետ, երբ ինքը ծագում էր ամենաբարձր ազգատոհմից, մինչդեռ նորա կողակիցը, որին թեպէս բախտը պատուել է Թագավորական պատիւներով, բայց և այնպես ծնված էր ստրուկներից:

Եւ թե հաւան և իմաստուն մարդը լպնտք է ուղ դարձնե ամուսնութիւնն մեջ արտաքին փայլին և գեղեցկութիւնն, այլ երբ ընտրում է իրեն ամուսին, ուշի ուշով պիտի փնտրե նաև նորա ազնվատոհմ ծագումը, առանց գերի լինելու գեղեցկութիւնն հրա-

այույրներին, որոնք գրգռում և հաղեցնում են միայն մարդկանց հաճույքն ու ցանկութիւնը, և անհայտանալով ի շէր են դառնում ամենադուրին կերպով: Բայց, ավելացրեց նա, կա նաև մի կին, որին կարող ես դու ընտրել քեզ ամուսին, որի ազնիւ սերունդը հավասար է քո սերունդին, որը արժանի է քո գովանացը այնքան յուր բարձր աստիճանովը, որքան և յուր հոյակաւոր արյան ծագումով, որի հավասարը գուցե չիին՝ թե հարստութիւն և թե թագաւորազարմ ծագումի մեջ:

Եվ նա հայտնեց, որ ինք նա թագունի է և արքայազուն, որքան թույլ էր տալիս նորան յուր վիճակը, և թե նա ում որ համարեր արժանավոր մասնակցել յուր անկողնույն, կըլիներ թագաւոր և կըբարձրանար դահի վրա:

Որ նորա կողակցութիւնը մի արքայական գաւազան կարժե և այդպիսի մի նվիր փոքր բան չէ նորա կողմից, որ սովոր է արհամարհանոք պատասխանել նոցա, որք խնդրում են յուր ձեռքը:

Այս կերպով խրախուսեց նորան, որպեսզի յուր վրա դարձնե նորա հաճույց ցանկութիւնը և նախամեծար համարելով ազգատոհմն ու գեղեցկութիւնը, ամուսնանա իրեն հետ:

Այս խոսքերից վերջը ընկավ նա Ամլեթի գրկաց մեջ, որնոր հրապուրված գեղեցիկ հոմանվո խոսքերիցը, պատասխանեց նորա փառաքանքներին, անձնատուր լինելով գրկախառնութիւնցը և խոստովանեց որ համաձայն է նորա բաղձանացն ու կամքին:

Եվ ապա իսկույն խնջույք պատրաստեցին, հրավիրելով բարեկամներն և ժողովի կոչելով գլխավորներին, հարսանիքը կատարեցին:

Հետո անմիջապէս Ամլեթ յուր ամուսնույն և Սկովդիայի մի ընտիր զնգով, որք կարող էին պաշտպանել և ազատել իրենց որդայթներից, վերադարձավ Բրիտանիա:

Թագաւորի դուստրը, որի հետ ամուսնացած էր Ամլեթ, ընդառաջ եկավ և ողբալով Ամլեթի արարմունքը, որ մի սիրունի նախագաս էր համարել իրեն, ասաց, թե անիրավութիւն է յուր նախանձր գրգռելով ոտնակոխ անել տալ իրեն՝ յուր ամուսնական պարտավորութիւնը, և ցույց տվավ որ արդեն յուր զավակին մեջ գտնում էր սիրո գրավականը, և միանգամայն հաստատելու համար Ամլեթի վրա ունեցած համակրութիւնը, ասաց նորան.

Ենթե Ամլեթ ատեց յուր մորը գայթակղեցնողին, ես պիտի սիրեմ իմ ամուսնույն հոմանվոյն: Ոչ մի անձկութիւն և ցանկու-

թյուն չպիտի կարողանան մարել այն եռանդը, որով բորբոքվում եմ քեզ համար։ Ուստի պետք է որ հայտնեմ բոլոր այն դարանները, որ լարվում են քո կենաց դեմ։ Ուրեմն զգուշացիր հորիցս, որովհետև քո ճարտարամատությունը պատգամավորության արդյունքը քեզ սեփականացրիր։

Այսուհանդերձ թագավորը վրա հասավ և Ամլեթը կուրծքին վրա սեղմելով, հրավիրեց նորան մի խնջույքի, ծածկելով յուր դիտավորությունը բարեկամական ցույցերի տակ։ Ամլեթ նույնպես սկսավ կեղծել և զգեստի տակից զրահ հաղնելով և երկու հարյուր ասպետներ հետն առնելով հասավ խնջույքին սրահը, նախամեծար համարելով դիմադրել վտանգը խորամանկությամբ, քան թե ամոթալից կերպով փախչել նորանից. երբ նա մոտեցավ պալատին, թագավորը ձի հեծած հարձակվեցավ և նիզակովը կսպանեց նորան, ի՞նչ շունչնար զրահ հագուստի տակից։

Ամլեթ թեթև վիրավորվելով վերադարձավ այնտեղ, ուր թողած էր Սկոպդիացի երիտասարդ աղնվականները. և էրմեթրուդա թագուհույն լրտեսը, որ վահանն էր գողացել, ազատեց գերությունից, և իր խորամանկությանը ներելու պայմանով՝ հրամայեց որ հանձնառու լինի պատգամավոր գնալ թագավորին։

Սակայն թագավորը ժամանակ չթողնելով վրա հասավ և շարդեց Ամլեթի բանակի մեծագույն մասը։

Հետևյալ օրը ճակատամարտը ավելի զորավոր պիտի լիներ. Ամլեթ հույս չուներ որ կարողանա դիմադրել, ուստի մտածեց ավելացնել յուր զորաց թիվը, ոտի վրա կանգնեցնելով մեռյալները՝ նեցուկ գնելով ցիցեր, ձողեր, միքանիսը մոտակա ժայռերին թեք տալով, շատերին էլ ձիերի վրա սպառազինյալ իրրե թե իրոք պատերազմի պատրաստված լինեին։

Այս հնարքը հաջողություն գտավ, որովհետև այդ քարացյալ դիակների երևույթը իրենց զրահների մեջ, արեգակին տակ փալելով, ահագին մի բանակի երևույթը ունեին։ Այսպիսով մեռյալ զինվորները կենդանյաց տեղն էին բռնում, իրրե թե բանակից ոչ ոք պակասած չլիներ։

Այս երևույթից զարհուրած, փոխանակ ճակատամարտի, փոխուստի դիմեցին բրիտանացիք, վախենալով այդ մեռյալ զինվորների երևույթից, որոնց իրենք իսկ զրկել էին կյանքից։

Թագավորը փախչել ուզելով, հալածվեցավ դանեմարքացիներից և սպանվեցավ։

Ամէլեթ հաղթական և մեծ ավարով բեռանվորված վերադարձավ հայրենիք, Դանեմարքա, յուր երկու ամուսինների հետ ¹։

Այն ժամանակ Բորիկ թագավորը մեռած էր և նորա տեղ թագավորում էր Վիկլեթուս, կողոպտելով Ամէլեթի մորը և տանջելով նորան, ասելով թե Ամէլեթ հափշտակած էր Յուլիանդիայի դահլը։

Ամէլեթ շափազանց սակավապիտ ձեռնալով, յուր ավարի մեծ մասը Վիկլեթուսին ընծայեց. կարծես այդ պարգևից Վիկլեթուսի ոխը մեղմացավ, սակայն այդ ժամանակավոր էր, որովհետև կատաղաբար հարձակվեց Ամէլեթի դեմ, վրեժ անելու պատրաստով, և իր թշնամությունը, որ մինչ այն ատեն ծածուկ մնացել էր, հրապարակ ելավ, և հաղթեց Ամէլեթին։ Կրկին անգամ Վիկլեթուս պատերազմի հրավիրեց նորան, իսկ նա սկսեց տատամսիլ։ Պետք էր փախչել ամոթով, թե ոչ արհամարհել վտանգը. որովհետև դիտեր որ կյանքը վտանգի պիտի ենթարկեր դիմադրելով, կամ փախստականի նման նախատանաց ենթարկվեր՝ եթե փախչել ուզենար. երկար մտածելուց հետո, պատիվն և փառասիրությունը հաղթեցին, որովհետև նախամեծար կըհամարեր փառավոր քաջի մահը՝ աննշան ամոթալի կյանքին. մանավանդ այնքան սիրում էր յուր կնոջ էրմեթրուդային որ նորան որբևայրի թողնելու մտածությունը յուր սեփական մահիցն ավելի մտատանջություն էր պատճառում իրեն, մինչև անգամ պատերազմը լսկսած, նախապես ուղեց մի նոր ամուսին գտնել յուր որբևայրի մնալու կնոջը, բայց էրմեթրուդա վեհանձնարար խոստացավ հետևել իրեն մինչև պատերազմի դաշտը և քացարձակապես ասաց նույնպես, թե ժառելի է այն կինը, որ չէ կամենում մասնակցել յուր ամուսնույն կենացը սպառնացող վտանգին։

Բայց նա յուր գերագույն խոստմանը հավատարիմ չմնաց, վտանգի Ամէլեթ հաղթված և սպանված լինելով Վիկլեթուսից, էրմեթրուդա նորա սիրուհին և ավարը հղավ։

Ահա այսպես բախտի բերմունքը շնչում է կանանց խոստումները. ժամանակիս ընթացքը և ճակատագրին հարվածները կրփոխեն կանանց հոգւոյն հաւատքն ու վստահությունը, որ ավելի

¹ Այստեղ Բյուրներ նկատում է ասելով, թե արդյոք այս զրահավորաւ բանակի նկարագրությունիցը չէ՞ կարելի հետևցնել, թե այնտեղից Մեքսպիր քաղած լինի յուր զրահավոր ուրվականի երևույթը, Համլեթի Հոր պատկերի տակ։ Մինչ արդ նորա մասին ոչ մի բացատրություն տրված չէր, այն պատճառով, որ Բեյլլեֆորտի առասպելն է միայն ժանոթ շատերին. և դորանում չի կո այդ մեռելոց բանակի անցքը, այլ լուկ Սաքսո Գրամաթիկուսի պատմածին մեջ։

սիրո և տոհմանաց են ենթակա։ Որքան կինը սիրե խոստումներ անել, նույնքան արամադիր է լկատարիչ նոցա. բարեկեցիկ վիճակի զանազան հանգամանքները կըզբաղեն նորան և նա միայն կըփնտրե նորութիւն՝ մոռանալով անցյալը։ Դատարկ և զուրկ լինելով խորհրդածութիւնից՝ յուր ատորժակները միայն հագեցնել կըփութայ։

Ահա այս եղով Ամէլեթին կենաց վախճանը, որ կարող էր աստվածոց հալածար փառք ունենալ և մթաղնել Հերքուլեսի քաշութիւնները, եթե բախտը յուր հանճարին հետ միացած, հալածար կերպով նպաստէին իրեն։

ՄԱՍՆ ՆՐՐՈՐԴ

Առասպելի և ողբերգութեան մեջ եղած զանազանութիւնը — Գլոթի կարծիքը — Քննադատը — Խրատական առած — Խնչակսպետք է վարվել Եեքսպիրի հետ — Զանազան հեղինակաց Համլետները — Եեքսպիրի առաջին և երկրորդ Համլետը — Նոցա զանազանութիւնը — Թե որքան Համլետի ողբերգութեան նյութը նմանութիւն ունի Եեքսպիրի ժամանակակից անցքերին և Համլետի բնավորութիւնը Եեքսպիրի հոգեկան արամադրութեան հետ — Աղեքսանդր Մեդիեր և նորա քննադատութիւնը — Համլետ մի գաղափարական անձն չէ ողբերգութեան մեջ — Խնչ տեղեր Համլետի՝ Եեքսպիրի փոխարեն խոսելը հայանի է լինում։

Արդեն հայտնի է ձեզ լիովին Եեքսպիրի ողբերգութիւնը. անկասկած ընթերցողացս շատերը քանիցս անգամ տեսած կըլինին նորա ներկայացումը զանազան տեղեր, տարրեր դերասաններից։ Ուստի այժմ կարելի է, հուսամ, վերիվերո մի բաղդատութիւն անելով՝ գտնել, թե ի՞նչ մեծ և ահագին զանազանութիւն կա Սաքսո Փրամաթիկոսի և Բելլըֆորեի նկարագրած առասպելական Ամլետի և Եեքսպիրի ստեղծած իրական Համլետին մեջ։ Այո՛, զանազանութիւնը մեծ է։

Այդ խորամանկ, վրեժխնդիր, թեպետ ուղղաբարո բայց յուր նպատակին հասնելու համար ամեն տեսակ շնական և բարոյական կեղտոտութեանց մեջ թափալող մի հելուզակի ավատական ժառանգ Ամլետուր, հակապատկերն է՝ խոհուն, փափուկ, վսեմ, ամենայն հոգեկան ազնիւ ձիրքերով զարդարված, բարի սրտով, բարի խորամանակութեամբ, խելացի և ընկերասեր, իբրև մարդ

տարակուսող և յուր պարտկանության առաջ սխալվելուց վախենալով, դողդոջուն և տարտամ, բայց միանգամայն գրավիչ Համլէթն:

Գրամաթիկոսի Ամլեթուսը խորամանկ է և ուսեղ, այլ Շեքսպիրինը շատ խելացի, բայց շատ էլ տկար, մանավանդ, երբ որ վիշտը տիրում է նորան, տկար կազմվածքը շատ անգլէ համապատասխանում և չէ լինում նեցուկ յուր ծանր հոգսերին և մտածողությանցը:

Իբրև մի պարարտ հող-դուրաբեկ ամանի մեջ լքցված, ռորի մեջ, առում է Գլոմբ, փոխանակ անուշահոտ ծաղիկների, կաղնի ևն տնկել որ երբ յուր արմատները տարածվին, ամանը կը խորտակեն:

Եթե Համլէթի հրատարակված օրից ի վեր մինչև այժմ բոլոր մատենագրաց, բանիբուն հետախույզների կարծիքները գրել հարկ լիներ, վերջ չէր ունենար. ավելի գովեցին նորան, քան թե պարսավեցին. բայց ընդհանրապես շատ վիճեցին. սակայն գովեստից և պարսավանաց մեջ պետք է զգուշ լինել, երբ խոսակցության նյութը Շեքսպիրի նման հոգեբան փիլիսոփա մեծ բանաստեղծն է:

Հիշելով այս հնուց մնացած պատմութիւնը¹, թե Վի արեւելքի թագավոր երբ դահր բարձրացաւ, արքունիքի բոլոր բանաստեղծները շափազանցօրէն գովեցին նորան՝ իշխանաց ամենալավն և քաջն անվանելով, որո շնորհիւ ոսկի դար պիտի ծագի թագավորության մեջ:

Երբ հանդեսը վերջացաւ, թագավորը հրամայեց որ բանաստեղծները իրեն առաջ բերեն, որք՝ հակառակ իրենց ակնկալության, շատ սառն ընդունվեցան թագավորից. և երբ ուզում էին նորից պոռոտախոս գովեստներ շալլել, թագավորն իսկույն ընդմիջեց նոցա ասելով՝ «ասացեք տեսնեմ, այդ բոլորին, ինչ որ ասիք իմ նկատմամբ, դուք ինքներդ հավատո՞ւմ եք. եթե իրոք համոզմամբ և սրտանց ասացիք, նշանակում է որ դուք խենթեր եք, և որ անկարելին կարելի եք կարծում: Իսկ եթե այդ ասածներուդ մեջ հավատք չունիք, ուրեմն դուք վտանգավոր գողներ և կատարյալ աղմկիչներ եք: Երբ մողովուրդը զգա, որ ձեր խոստումները չեն իրագործվում, ինձ պատասխանատու պիտի համարի. պիտի տես իմ անձը և պիտի ուրանա իմ իշխանութիւնը, և այդ բոլորի պատճառը դուք պիտի լինիք և ձեր շողորճութ բա-

¹ Ռյուլենք, Համլէթ Գանեմարճացին:

նաստեղծութիւնները. հեռացե՛ք ուրեմն աշփոցս և այլ ևս մի՛ կրկնե՛ք դոքսա՛:

Եթե՛ Ենթապիր էլ՝ Դրամատիկական արվեստի թագավորը, դար և յուր գահը բարձրանար, միթե լալիտի՞ ստիպվիր ասել միևնույնը բոլոր այդ անհաշուական շողոքորթներին, որ ճիգ են թափում՝ հարյուր տարիներից ի վեր, ազավադել յուր գործը զանազան անտեղի և տափարակ կարծիքներով:

Իրոք մի մեծ ծառայութիւն մատուցած չենք լինիլ անգղիացի մեծ բանաստեղծին՝ Ներկայացնելով Նորան մի գերբնական հսկա. այս վարմունքը կրնվազեցնէ յուր ճշմարիտ և արգար արժանավորութիւնը՝ այլանդակելով և եղծելով յուր երկունքը:

Ենթապիրի հետ պետք է վարվիլ շատ խոհեմ, լուրջ և բնական կերպիւմ. պետք է շատ ճանաչել Նորան՝ կարենալ գովելու համար. ինչպես ինքը յուր գործոց բնակութիւնը մեջ մեծ է, նույնքան կրմեծանա նորա արժեքը լափավոր և անկեղծ գովեստով այն ամեն անձանց, որոնք ճանաչել և ուսումնասիրել են յուր կյանքը և յուր գործերը:

Եթե՛ ես էլ համարձակվում եմ իմ հարգելի ընթերցողաց ցույց տալ նորա բոլոր արժանավորութիւնները, այդ անում եմ հավատարիմ աղբյուրներից՝ շատ հմուտ մատենագրաց վկայութիւնը և տված տեղեկութիւնաց վրա հիմնվելով, և մի քիչ էլ իմ փորձառութիւնը. և թող մեղադրելի չհամարվի, եթե ես՝ ողբերգութեան գրաված նորա հրաշալի գործերիցը, փոխանակ մեկ բառի, երկուսը գործածեմ նորա գովեստին և դրվատյացը. ուրեմն շարունակեմ:

Ենթապիրից առաջ Համլետի նման թատերգութիւններ եղել և անհետացել են այժմ: Յրանսուս Հյուպոյի՝ Թովմաս Նասից և Մալոնից բերած վկայութիւններ նայելով, հայտնվում է թե Անգլիայում Համլետից առաջ խաղացվում էր մի ողբերգութիւն «Սպանիական եղերերգ» կամ Ժերոնիմո անունով:

Եվ Մալոն պնդում է, թե այդ ողբերգութիւնն Նյութը բոլորովին նման է Համլետին և որո հեղինակն էր ոչ Ենթապիր, այլ Թովմաս Քիս, որ հետո մոռացութիւն տրվեցավ:

Քուլլիեր, Էրվինուս և Թեն քննադատը ասում են, թե ժամանակակիցք իրենց հիշատկագրութիւնաց մեջ հիշում են այս տեսակ մի թատերգութիւն, որ անշուշտ շարադրված և խաղացված էր Ենթապիրից շատ առաջ, հավանականաբար այդ խաղը հիմնված էր ավանդութիւնն աված տեղեկութիւններ վրա, որ պետք է տպւնված լինի 1587-ին:

Իսկ մեր մեծ բանաստեղծը անկասկած օգտված կլինի թե ավանգուսթյանից և թե այդ նախընթաց ողբերգութիւնից:

Նույնպէս անդդիացի գրագիտաց՝ Լոնի, Հենդլովի և Նասի հաստատելովը հայտնի եղավ, որ կա մի նախընթաց Համլէթ 1596-ին տպւած, և այդ Թովմաս Քիտինն է: Սակայն շատ կարեւոր է գիտենալը, որ Ենթապիր երկու անգամ գրած է Համլէթը՝ վանազան փոփոխութիւններով. առաջինը սկսել և վերջացրել է ցտան և մեկ տարեկան եղած ատեն, իսկ երկրորդ Համլէթը երեսուն և վեց տարւա հասակում. տասն և հինգ տարի մտածել և սրբապրել է նորան և վերջնական կերպով ի լույս է ընծայել 1604-ին:

Երկրորդ Համլէթը, նույնպէս և առաջինը, Քիտից գրականապէս գոգացած չէ Ենթապիր, այլ յուր հանճարեղ մտաց արդյունքն է, որ մատուցել է գրականութիւն: Յրանսուա Հյուզո ասում է, թե ընդ հասկանալու համար երկրորդ Համլէթը, առաջինին պետք է տեղյակ լինելու:

Այսանդ անհրաժեշտ հարկավոր կըլինի հազարդել ընթերցողացս, թե ի՞նչ զանազանութիւն է գրել Ենթապիր յուր առաջին և երկրորդ Համլէթի մեջ, որ այն ժամանակից ի վեր ամեն տեղ տպւած, ամեն լեզուների թարգմանւած և ներկայացւած է:

Նախ և առաջ՝ առաջին Համլէթի մեջ գործող անձանց անունները միևնույնը չեն:

Փոխանակ Կլոդիուսի միայն կոչւում է թագավոր Դանեմարցայի. Լահրոը՝ Լեարդ. Պոլոնիուսի փոխարեն՝ Քոռամպիս. Վոլթեմանի տեղ՝ Վոլթիմաու, Ռոզենկրանցը՝ Ռոզենկրաֆթ. Գիլդենշթերնի տեղ՝ Գիլդերսթոն, և Օդրիֆի փոխարեն մի որևէ ազնւական և այլն: Գործողութիւնն անցնում է միևնույն տեղը, բայց Ենթապիր երկու դիսավոր փոփոխութիւններ է արած:

Առաջինը, նախընթաց Համլէթի մեջ, Համլէթի Օֆելիային պատահելը Ռոզենկրանցի և Գիլդենշթերնի հետ ունեցած տեսակցութիւնիցն առաջ է, իսկ երկրորդին մեջ հետո. և այդ շատ իրավացի է:

Որովհետեւ թագավորը ուզում է իմանալ Ռոզենկրանցի և Գիլդենշթերնի միջոցով թե արդո՞ք Համլէթի խնթութիւնը իսկակա՞ն է, ինչպէս որ Պոլոնիուսը հաստատում էր. բայց Համլէթի Օֆելիայի հետ խոսելուց հետո՝ թագավորը կիմանար թե սերը չէ պատճառ նորա խնթութիւնը, ուստի դորանից հետո այդ լրտեսութիւնը ավելորդ կլիներ:

Երկրորդ ամենակարևոր փոփոխութիւնը, որ աչքի է զարնում,

այն է՝ որ նախընթաց Համլենթի մեջ թագուհի Գերթրուտան տեղյակ չէ յուր ամուսնույն ոճրագործությանը. և երբ Համլենթ դորանում նորան ամբաստանում է, նա ըողոքելով ամբաստանության դեմ, միանում է յուր որդւոյն և օգնում է նորան վրեժ առնել թագաւորից. և այսպեսով քաջում է նա յուր հանցանքը:

Իսկ երկրորդ Համլենթի մեջ, Գերթրուտա թագուհին բոլորովին տարբեր մի դեր է խաղում:

Նա Կլոդիուսի արբանյակն է, անհողողդ և անղեղչ է յուր հանցանքի մեջ:

Նույնպես առաջին Համլենթի մեջ համառոտւած է բեմի վրա ներկայացման տեսարանը և Ռոդենկրանցի, Գիլդենշթեյնի և Համլենթի մեջ եղած տեսակցութիւնը:

Ոչ մի խաղի ներկայացում այնպիսի հեղափոխութիւն չէ պատճառել Եվրոպայում, ինչպես Համլենթինը: Նա այնքան հուզեց Անգլիան, որքան Փոռնեյլի Սիտը՝ Գաղղիան. բայց տասնևիննորորդ դարուս գրագիտաց լավ հայտնի է, թե որքան մեծ է տարբերութիւնը այդ երկու ողբերգութիւնաց:

Համլենթի՝ գրեթե դժմարաթափանցելի, խռոն, այսուհանդերձ տիեզերական մարդկային տիպարը չէ կարելի բաղդատել Սիտի՝ սիրահար, եռանդուն, ցեղասեր և վրիժառու բնավորութիւնը հետ:

Մինչև անգամ Շեքսպիրի Համլենթից հետո, Համլենթներ գրվեցան, որոնց մինը գրած է Ժան Ֆրանսուա Դյուաի, տասնութերորդ դարում սկիզբներին. մի ուրիշ Համլենթ ևս Յիլյասթերս անվամբ տասնևյոթ դարում սկզբին, աշխատակցութեամբ Ֆլեգերի և Բոմոնի. իսկ Միշլել Փառե և Ժյուլ Պարպիե հորինեցին Ամպրուսադ Թոմաշի նվագերգութիւն համար Համլենթի մի (լիբրետտո):

Նոքա այնքան ընդունելութիւն չգտան հասարակութիւնից, որովհետև Շեքսպիրի Համլենթը կարծես ծածկում և մթաղնում էր այդ Համլենթներին յուր սգավորի սև վերարկով Ժալի:

Ագամ էոլեոս Ելեգեր գերմանացի գրագետը, որ ծնած է 1779-ին և մեռած 1850-ին, գրած ունի նույնպես մի Համլենթ, հետևելով և շատ քիչ փոփոխութիւն մտցնելով Սաքսո Դրամաթիկուսի առասպելին:

Նորա Համլենթը չէ մեռնում, այլ վերջի գործողութիւնը մեջ ամուսնանում է յուր սիրուհի Զիկրիտի հետ, որ վիշապահաղթ Զիկֆրիտի ցեղին պատկանող դուցազնուհի էր և նորա հետ բարձրանում է գահի վրա, իբր հաղթող և փառավորյալ իշխան:

Այս Համլենթն էլ մյուսների պես մոռացութիւն տրված է թե-

պէս, սակայն նոր մատենագիրներից շատերը, որոնց թվումն է Բյուխներ, համաձայն են այդ վերջաբանին, ցայտօմ են Շեքսպիրի ողբերգութիւնն ալգպես տխուր վերջանալուն, թէ ինչո՞ւ Շեքսպիր հետեւելով թատեր հին ավանդութեանց, ալգպիսի մի ցալալի վախճան է աալիս յուր գլուցաղնին՝ Համլետի կենացը. բայց իմ խոնարհ կարծիք, Շեքսպիր չէր կարող ալապես վարվել. ոչ թէ յուր ժամանակի ժողովրդաւոր հասկացողութեան և կամ հաշակին հետեւելուն համար միայն, որ անպատճառ կը պահանջեր՝ ողբերգութեան վախճանը լինի մահ, խոխողումն և ավերած, ալնպես որ գործող անձինք բոլորն էլ մեռած փալնն բնմի վրա:

Ձէ, Շեքսպիրի Համլետ ողբերգութեան դրած վերջաբանը ունի յուր բարոյական, հոգեբանական ամենակարեւոր շարժառիթը. Ֆրանսուա Լյուգո նույնպես հաստատում է, որ այդ վախճանը անխուսափելի, անհրաժեշտ և հարկաւոր էր:

Եթէ բանաստեղծը ստիպված լինելով շուտ վերջացնել յուր ողբերգութիւնը, ի՞նչ բան կարգելու նորան հետեւել Գրամաթիկոսի առաստեղեկան ավանդութեանը, ուր Ամլետա, սպանելով եղբայրասպան բռնավորին, թագաւորեր նորա տեղ, Շեքսպիր չուզեց ալգպիսի հասարակ և պարզ կերպով վերջացնել. հավատացեք, որ երկար խորհրդածելուց և ամենակարեւոր պատճառներից որդյալ ալգպես վարվեցաւ, և այդ պատճառներից գլխաւորը, իմ կարծիք, խաղի բարոյական համասարակըղոթիւնը պահպանելու համար էր, որնոր բռն կերպով խանգարված է Պոլոնիոսի մահվամբը: Ինչ էլ որ լինի, հաստատ է, որ հեղինակը շատ երկար մտածել է դրա վրա, և մենք ալժմ գիտենք որ Շեքսպիրի համար Համլետը եղած է այն, ինչ որ եղաւ Ֆաուստը Գլոթեի համար, դոցա կենաց գլխաւոր պարապմունքը և հոգար:

Միայն Բեյլըֆորեի առասպելին հետ բաղդատելով Շեքսպիրի թատերգութիւնը, կարելի է հուշակել Շեքսպիրի հանճարը:

Համլետը, ինչպես որ շատերը կարծում են, մի վիպասանական կամ գաղտնիարական էակ չէ. ընդհակառակն նա մեղ ժամանակակից մտածող մարդու տիպարն է, որին հեղինակը դրել է մի գլուցաղնական դարու մեջ. մինչև անգամ շատերի և մասամբ իմ կարծիք, Շեքսպիր բնականից առած լինի յուր վախելազեղ, նուրբ և աղնվական Համլետի տիպարը:

Կարլ Զիլպերշլակի¹ գերմանական Շեքսպիրի ընկերութեան

¹ Բյուխներ, Համլետ Գանեմարացին:

տարեգրութեան մեջ՝ ասում է Կարլ Էլզե, թե Շեքսպիրի ժամանակ
ևս կային Կլոդիուսի, Գերթրուտայի, Համլետի համանման տիպար-
ներ, որոնց մեջ անդի ունեցած արկածներն և ոճիրները նման են
Բելլեֆոնտի պատմածին»:

Օրինակ բերենք նախ՝ Մարի Ստյուարտը, և նորա ամուսնույն
սպանութեան պատմութիւնն ու յուր ամուսնանալը մարդասպան
կոմս Բոտոլեյի հետ. նմանապես ինը տարի հետո Շեսքսպիր կոմսի
թունավորվելով հանկարծամահ լինելը Դուրլինում, և նորա որդե-
կաւորի կնոջ ամուսնանալը կոմս Լեյլեստերի՝ յուր վաղեմի և կաս-
կածելի ծանոթի հետ: Հայտնի բան է որ սպանված Շեսքսպիր որդի
երիտասարդ կոմսը՝ որ նշանավոր եղած է յուր եղբրական մահո-
ւր, նման վիճակ ունի Համլետին, և շատ հավանական է, որ Շեքս-
պիր Համլետը շարագրած ատեն նորան աչքի առաջ ունենար:

Այստեղ պիտի հայտնեմ Աղեքսանդր Մեդիկերի կարծիքը նույն-
պես Համլետի մասին, որին մասամբ համաձայն եմ:

Նորա Շեքսպիր և յուր գործերն ու քննադատները՝ կոչված
գիրքը, որ պատկերված է Գաղղիայի Ակադեմիայից, իմ կարգացած-
ների մեջ ամենանոր և ամենաընտիր գովածքն է Շեքսպիրի մա-
սին, որ տպված է սորանից հինգ տարի առաջ, 1882-ին: Այնտեղ
Համլետի վարմունքը ցույց է տալիս իրականութեան տեսակետով:

Համլետ, ասում է, պատկանում է մարդկութեան այն դասա-
կարգին, որոց մեկամաղձոտ խառնվածքը և մտաց նուրբ թափան-
ցողութիւնը ավելի ընդունակ, ավելի զգայուն են անում նոցա՝
մարդկային ցավոցը և վշտաց, քան թե մեզ շնորհյալ բնութեան
բարյացը:

Այս վիպասանական դուշադրունքը շատ վաղ են զգում կյան-
քի նշանակութիւնը, վհատութեամբ և արհամարհանաց երգիծանե-
քով նայում են նորա վրա, մինչև անգամ դեռ թշուառութեան մեջ
փորձառու չեղած:

Տալիս են աշխարհք ամեն տեսակ վիշտ կրելու տրամադրու-
թեամբ, առանց ունենալու այդ վշտերն ու ցավերը ընկճելու ուժը:
Գերմանացիք բաղդատում են Համլետը Գյոթեի Վերթերին.
հիրավի, շատ բնավորութեան հատկանիշներով նման են միմյանց.
երկուսն էլ մոտ միևնույն փափուկ և հիվանդոտ զգայնութիւնը,
նույն տխրութիւնն ու գոռոզութիւնը, փիլիսոփայական խորհրդա-
ծութեանց միևնույն ընդունակութիւնը, բայց երկուսն էլ շարա-
գանց շատ են քննում իրենց սեփական անձնավորութիւնը, սաս-
տիկ շատ են զննում մարդկութեանն ու աշխարհը, նորա վրա կա-

րևոր մի դեր կարենալ խաղալու համար, որնոր կվայելիր մարդկության:

«Մարդիկ ծնած են գործելու համար. դրեք այս փափուկ տարածքները մի սարսափելի վտանգի դեմ, շին կարող քաղությամբ դիմադրել, կորանալով կընկճվին հանգամանաց դառն բռնին տակը»:

Այս ասած խոսքերը հիշեցնում են ինձ Գյոթեի գլուխարկն ամանը, որին նմանեցնում է Համլետը:

Եվ իրոք տեսնում եք, թե որքան նմանություն կա Գյոթեի՝ Համլետի մասին տված բանաստեղծական բացատրությանը և Մեզլերի հոգեբանական ֆենադալոգիայնը մեջ:

Այո՞, Համլետ մաքառելու համար ծնած չէ, կաղնին կարող է փշրել նուրբ ամանը, նա ծնած է միայն խոկմանց և մտառանջության համար:

Վերթեր բավական ուժ չունի հրաժարվել յուր սիրելի Շարլոտից և ոչ բավականին թեթևամտություն պարտադանցությամբ առևանգել նորան Ալբերտից:

Նմանապես Համլետը, այնքան անտարբեր չէ մոռանալու համար թե պարտական է յուր հոր վրեժը առնելու և ոչ այնքան հանդուգն յուր պարտքը կատարելու համար:

Նոցա երկուսին էլ մահվան պատճառը մասնավոր հանգամանքները չեն, այլ նոցա կազմվածքն ու խառնուրդը, որ մեկին անձնասպանության է դրդում և մյուսին վաղուց փափագելի մի մահվան:

Վերթեր անձնասպան է լինում, սիրելով Շարլոտին, բայց այդ սերը միայն յուր հուսահատության պատրվակն է. Շարլոտին եթե ճանաչած անգամ չլիներ, գարծյալ անձնասպանությամբ պիտի վերջացներ յուր կյանքը:

Նույնպես և Համլետ, եթե անսած չլինելու ուրվականին զարհուրելի տեսիլքը, ոչ ավելի երջանիկ պիտի լիներ, և ոչ ավելի խաղաղ:

Այդ երևույթը չպիտի հաներ նորա սրտից երջանկագույն և լուսավոր մի այլ աշխարհ սլանալու ցանկությունը՝ թողլով այս ողորմելի երկիրը, որո մասին առաջին գործողության երկրորդ անսարանին մեջ դեռ ուրվականն էլ չտեսած, գոյում է դառնությամբ. «Ով Աստված իմ, Աստված իմ, որքա՞ն ծանրաբեռն, մաշած, ստորին և անպտուղ է թվում ինձ այս աշխարհի բոլոր ուրա-

խոսքը լսողները: Զգլած եմ կյանքից, ա՜հ, զգլած. դա վատ խոսեր արտադրող մի պարտեզ է, հունտերով խեղդված:

Եստե՛րը զարմացած են, թե ինչո՞ւ Ենքսպիր յուր դուցազնին հատկացուցել է տկար և սառած սող մի բնավորութիւն, բայց ընդհակառակն այդ մինչև անգամ հիանալի է:

Նա՛ որ ընդհանրապես հանդիսացել է մարդկային կրից գերի եղած հերոսներ, Համլետի մեջ ցույց է տալիս մարդկային մի նոր տիպար. և ինչպէս զարմանալի ճարտարությամբ նորա վիճակը դնում է համապատասխան յուր բնավորության և բնավորութիւնը վիճակին, և ի՞նչ հանճարեղ կերպով միացնում է ողբերգության անցքին հետ:

Այո՛, Ենքսպիրի Համլետը գաղափարական անձնավորութիւն չէ, ինչպէս որ ներկայացնում է մեզ Հենրի Մաուցլի՝. Ենքսպիր որքան մեծ է իրրև քանաստեղծ, նույնքան հավասար մեծ է իրրև փիլիսոփա հոգեբան. եթե նորա ներկայացրած անձանց բնավորութիւնները մեզ անհասկանալի թվին, այդ չէ նշանակում որ դուք անբնական են, այլ այդ ապացուցանում է մեր տգիտութիւնը, որ նորանց քննել չսկսած, տալիս ենք մեր վճիռը. մի՛թե չկան ստեղծագործության մեջ այնպիսի արարածներ, որոնք իրենց տարօրինակ ձգտումներովը, գաղափարներովն ու զգացումներովը, գուցե և Համլետի նման հոգեկան տազնապից առաջ եկած անսովոր վարմուճքովը մարդկանց կարճամիտ դատողությանն առջև եղական համարվին, մինչև անգամ վիպասանական կամ գաղափարական:

Բայց ոչ. մի հանճարի տաքն և հինգ տարվա աշխատանքը՝ պետք է խոստովանվել, որ չէր կարող անբնական մի տիպար ընծայել աշխարհին: Եթե շատ տեղեր անբացատրելի են կարծում Համլետի մեջ, որոնք իրավամբ տեղի են տված անհամար բանակոփմանի վիճաբանությանց և խոկմանց, պատճառը այն է, որ Ենքսպիր Համլետի մարդը ներկայացնելու համար դիմած է ոչ թե Գրամմատիկոսի առասպելական պատմության, որո միայն՝ իմ կարծիքը, կմախքն է առել, այլ քաղել է յուր ժամանակակից քաղաքական անցքերիցը, յուր սեփական փորձառութիւնից և անձից. այնպէս որ Յանսսի նման երկու երեսանի մի անձնավորութիւն է Համլետ, որի դիմագծերը լավ տեսնելու համար, պետք է նախ դիմակաները հանել այդ երեսներից, այլապէս ասած՝ քննել հինն ու

1 Հենրի Մաուցլի. Անգ. քննադատ. ուստերն թարգմ. 1875:

ները, առասպելականն ու պատմականը, հոգեկանն ու նյութականը, և հետո մի վճիռ տալ

Այս կետի վրա նույնպես շատ է վիճված, թե արդյո՞ք Համլետը Շեքսպիրի նախադասած բնավորությունն է, թե արդյո՞ք այդ յուր պատկե՛րն, յուր գաղափա՛րն է։ Տարակույս չկա, որ Շեքսպիր ջատ է դրած իրենից Համլետի դերի մեջ. շատ հատկություններ, որ իրեն էին պատկանում, շատ խռաքեր, որ Շեքսպիրի վշտաց արձագանքները կարող են համարվիլ, արտասանվում են Համլետի բերանով։ Այստեղ իբրև օրինակ առաջ կը բերեմ ձերնեւ թե չլինել մենախոսությունը¹, որի մեջ մի կետ ցույց է տալիս Շեքսպիրի սեփական մտածությունը, այլ ոչ Համլետինը։

Երբ ասում է՝ «Ո՞վ կուզեր տանել այս ծանր բեռները, տքալ և քրտնել տազնապահույզ կյանքի տակ, եթե մահից հետո մի որևիցե բանի երկյուղը, այն անքննելի աշխարհին սարսափը՝ որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել, չվրդովեր մեր կամքը», և այլն, և այլն։

Այստեղ ուշադրություն դարձնելով պիտի տեսնենք որ Համլետը յուր կարծիքը չէ ասում, որովհետև խոսում է մի անքննելի աշխարհի մասին, որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել. սակայն Համլետ՝ առավել քան բոլորեքյանքն, լավ տեղեկություն ունի այդ անքննելի աշխարհի մասին, որտեղից մի վերադարձող կա նորա համար, և այդ մի հասարակ ճանապարհորդ չէ, այլ յուր հայրը։

Ուրեմն այդ բանը Համլետի համար հակասություն է, ուստի հաստատ կարող ենք ասել որ Շեքսպիր այդ մենախոսությունը դրած ժամանակ սաստիկ վրդովմունքից կարող էր յուր ցավոց արձագանքը յուր դուցազնի բերանովը արտահայտել, և մեկ անգամ որ իր կողմիցը խոսեցրել է յուր դուցազնը, ինչո՞ւ համար չենթադրել թե ողբերգության ընթացքում զանազան տեսարանների մեջ Համլետ խոսում է Շեքսպիրի կողմից. օրինակ, այն դասը, որ երիտասարդ իշխանը տալիս է էլսնեոր հասած աստանդական գերասանաց՝ խոսելով նոցա հետ թատերական արվեստին վրա շատ հմուտ կերպով։ Օրինակի համար, դարձյալ Շեքսպիրն է խոսողը Համլետի բերանով Պոլոնիոսի հետ, երբ որ նախատում է մանավանդ նորան։ Որովհետև պատմության ավանդությամբ, երբ Շեքսպիր դերասան էր, Անգլիայի առաջին նախարարը՝ լորդ Բյուրլենը

¹ Համլետ. գործ. երրորդ. տեսարան առաջին։

մի շրջաբերական հանեց բոլոր դերասանների դեմ, և նոցա պատ-
ժեց՝ Թափառական և բախտախնդիր արիւկաներ անվանելով: Ենքա-
պիր վրեժ է առնում Բյուրեյնից Պոլոնիուսի պատկերին և բնա-
վորութիւն տակ նորան ներկայացնելով. և այլ շատ հաստատ և
ճշմարիտ է...: Եւորդ Բյուրեյն մի կրթողական գիրք հրատարակեց
յուր որդւոյն՝ Բոզեր Սեսիլի նվիրած, որ հետո կոմս Սալիսբու-
րի նշանով երբ այն գիրքը կարգաց, կրտսանեք թե Բյուրեյնի՝ յուր
որդուն տված խրատները, բառ առ բառ ճիշդ և նման են Պոլո-
նիուսի՝ յուր որդւոյն Լահրտի տված խրատներին:

ԵՄԻՔԵ այդ Թատրոնի ծեր Քշնամվոյն՝ Բյուրեյն-Պոլոնիու-
սին ուղղված շէն Համլետի այս խոսքերը, երբ կասեք դերասանաց,
թե ընտրա համար մերկասրուն աղջկանց կաքավը, կամ մի աղ-
տեղի պատմութիւն է հարկավոր, եթե ոչ քուն կըլինին:

Եվ դեռ սուրա նման շատ օրինակներ, որք ապացուցանում
են, թե Ենքապիր յուր Համլետ ողորդութիւն մեջ դրել է ոչ թե
միայն վիպասանականը իրականութիւն հետ խառնած բարոյական
մի կապ, այլ գլխավոր դերերը յուր ժամանակակից անձանց և
պատահարաց, մանաւանդ յուր սեփական անձին ցաւոցն և փոր-
ձառութիւնց տիպարովն ու զրոշմովն է կեցել:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

Համլետի տարիքն ու կազմվածքը— Յրանկ Մարգալ, Վիլհելմ
Մեսթեր— Ռոսսիի նամակը— Թե արդոք Համլետի խելագարու-
թիւնն իրական է, թե ոչ— Տուրգենևի կարծիքը՝ Համլետի և Դոն
Քիխոտի մասին— Հավասար ու սեր Համլետի— Քին՝ Համլետի դե-
րում— Քաջութիւն և խորամանկութիւն Համլետի— Վատահու-
թիւն և վարանումն— Լյուդվիկ Բեռնե, Ջրպարտութիւն և գո-
վեստ— Համլետ խտտասիրտ չէ— Հանգամանքների բերմունքը—
Մարդ՝ յուր պարտականութիւնն առաջ— Վիճակաց միանմանու-
թիւն և վրեժ— Հանճարեղ վերջաբան— Բարոյական հովասա-
րակշռութիւն և հորդոր:

Ետ հեղինակ քննադատներ, ուզել են որոշ իմանալ Համլե-
թի տարիքը. ի միշի ալլոց պ. Միքսո, և անգլիացի նշանավոր
մատենագիր Յրանկ Մարգալ, որ մի քննադատութիւն գրեց Ենքա-

պիրի մասին, որնոր տպւմած է 1875 թվականին, և որից Բյուլեներ շատ օգտւած է յուր նոր քննադատութիւնը գրելու ատեն:

Մարգալի կարծիքն այս է. «Եթե Համլեթ երեսուն տարեկան լինի, այնքան չափաճաս մի մարդու մայրը, շէր կարող այնպիսի մի բռն տախանաց կիրք տածելու չափ՝ զգայուն լինել, որ մինչև տեղամ յուր ամուսնույն սպանչին կողակիցը դառնալու սեռապղծութիւնը հանձնառու լինի: Սակայն Համլեթ չէ կարող այնքան երիտասարդ լինել, քանի որ քսան և երեք տարի դեանի տակ թաղւած դանդին տիրող՝ Յորիքին հանաչում է, և դանդի միմիայն երեսույթը իսկույն հիշեցնում է նորան Յորիքի երգերն ու ծաղրաբան սրախոսութիւնները, որոց մասին խոսում է Համլեթ՝ բացատրելով յուր միակ բարեկամ Հորացիոյին: Ուրեմն այս փաստի վրա հիմնվելով՝ ինչպե՞ս կարելի է որ քսան, և կամ ըստ Դաուտենի և Տուրգենևի, տասն և յոթը տարեկան, գրեթե մի երեխա Համլեթը հիշե և հանաչի յուր ծննդից մի քանի տարի առաջ թաղւած Յորիքը...»:

Ուստի պետք է որ Համլեթ առնվազն քսան և ութը կամ երեսուն տարեկան լինի անպատճառ: Իսկ Մարգալ հերքում է այս փաստը, ասելով՝ թե ռայդ ոչ մի նշանակութիւն չունի. դրանով միայն կարելի է ապացուցանել Ենքսպիրի անհոգութիւնը, որով վերաբերվում էր յուր աշխատասիրութիւնց մանր պարագաների հետ: Ընտո հարում է, թե Ենքսպիր շատ բախտավոր էր յուր շահերի մեջ, այսուհանդերձ սաստիկ էլ աշխատասեր. բայց որքան որ պարտաւում էր յուր ողբերգութիւնները շարագրելով, նույնքան էլ ուշադիր և հոգատար էր լինում հասույթների դրամարկդին. այնպես որ մահիցը մի քանի տարի առաջ յուր հարստութիւն բերած տարեկան եկամուտը հասնում էր մինչև հազար կամ երկու հազար ստերլինգ ոսկով, որ կանե հարյուր, կամ երկու հարյուր քսան և հինգ հազար ֆրանկ: Եւ յուր կյանքի վերջի տարիներում Սթրաթֆորթ գնաց, և առանձնացավ այնտեղ յուր ընտանյանց գրկում, հովաքած դափնյացը վրա հանգչելու, հանգիստ ու փառավորյալ ապրելով յուր հարստութիւն եկամուտներովը¹:

«Թերևս շահու սերը մերթ ընդ մերթ արգելք էր դնում նորան՝ ամելի լավ և ուշադրութիւնս արագրելու յուր երկասիրութիւնքը:

¹ Բայց այդ գումարի քանակութիւնն անհավատարի է թվում միջանիսին. ընայելով որ այդ բոնը ստուգում է դարուս մի նոր շնագետ՝ Ենքսպիրի մասնակից մնացած մի քանի հին մուհակներն ու թղթերը հետազոտելով:

Դորանից է որ գուցե սպրդած լինին դոցա մեջ անհոգությամբ կամ մոռացությամբ՝ մի քանի անխնամ թողված կետեր:

Այս բոլոր՝ Մարգարի աված բացատրությունները ինձ շնն կարող երբեք համոզել. Համլեթի տարիքը չէր կարող ամենեին կարևորութիւն չունենալ Եփսայիւրի համար, և ծանրակշիռ կերպիւ չլքաղեցնէր նորա միտքը տասն և հինգամյա խոկմանց և սրբագրությանց ընթացքում: Թերևս յուր խանդի եռանդյան առկ միայն հափշտակված, ցամաք և նյութական կետերն անխնամ թողած լինի յուր ուրիշ աշխատությանցը մեջ, որոց մեկ կամ երկուսը աճապարանք և սակավ ժամանակի մեջ է հեղինակել, բայց ոչ Համլեթը:

Եվ վերջապէս անտեղի կըլինի ենթադրելը, թե այնքան նուրբ, այնքան իմաստնալից և խորագնին կերպիւ մարդկային հոգին անդամաղննող հանճարը, յուր խաղերի ամենակարևոր և ամենաբարձր դուցազնին, որո հետ դրեթի հոգւով և մտոք շաղկիւ և ապրել է, մոռանա՝ մի պատշաճ տարիք հասկացնել:

Մարգար, որ խորհուրդ կըտա եղիւ Լոնդոնի դերասանաց՝ Համլեթի գերում ըստ կարի մատաղ և երիտասարդ երևալ, չէ՞ր իմանում արդյոք, որ Եփսայիւր երբ Սթարթֆորթից Լոնդոն եկաւ, Բյուրբեյճ արդեն խմբապետ էր Լոնդոնում, և ներկայացնում էր յուր խմբով՝ «Սև եղբարք»՝ կոչված մի մեծատառնի սրահում, և միայն (ինչպես որ սկզբներում հիշեցինք) երկու տարի Լոնդոնում թշվառ և թափառ տատանելուց հետո մտաւ Եփսայիւր Բյուրբեյճի խմբին մեջ: Սա ինքս համոզված եմ և պարագաներն էլ ցույց են տալիս, որ Բյուրբեյճ տարիքով մեծ էր Եփսայիւրից, և մարմնով էլ մեծդի էր և գեր. և մանաւանդ. նորա դուցազունքը տաղանդով և մեծ հաջողությամբ ներկայացնող միակ ողբերգուն Բյուրբեյճն էր: Ուստի ի՞նչպես կարելի է ենթադրել, որ Եփսայիւրի նման բժախնդիր և արվեստին հմուտ մի հեղինակ, Բյուրբեյճի նման մեծդի և գեր մարդու տասն և յոթը կամ ցտան տարեկան պատանւո մի դերը հանձնէ. որի մինչև անգամ (ինչպես ասում են) ոչ թե անհոգությամբ, այլ միմիայն հանդիսականաց առաջ գիրութիւնն անմեղադրելի հանդիսացնելու համար՝ Համլեթի մենամարտության տեսարանին մեջ՝ յուր մօրը թաղուհւոյն խոսեցնում է, որ մի թաշկինակ առաջարկելով Համլեթին ասում է՝ «գեր է և շնչաու-

1 Անգլ. (Blackfriars):

2 Համլեթ. գործող. հինգերորդ. տեսարան երկրորդ:

Բյուռնը կարճ ու քրտնոտ է։ Այս խոսքերից շատերը հետևեցնում են, թե Համլետը գեր պիտի լինի. բայց սխալ է այդ — Միթե Համլետին նման հոգեպես տանջվող մի անձն կարո՞ղ էր գեր լինել. մտատանջությամբ չարչարվող մարդկանց գեր և պարարտ լինելը բացառություն է. և բացառությունն ընդունելի չէ գեղարվեստի մեջ. գեղարվեստական միջոցով պետք է միայն ներկայացնել այն, ինչ որ բոլորին դուրըմբռնելի և հասկանալի է, բնական օրինաց վրա հիմնվելով՝ գեղագիտական և քերթողական կերպով ներկայացնել բնականը, հասարակն ազնվացնել, իրականը գեղեցկացնել, ամենայն բան մարմնավորել՝ միշտ օգտվելով թե գեղեցկից, և թե ճշմարտից։ Ալեքսանդր Դյումայի օրդին գեղարվեստի բնության է գնում այս խոսքը. *Le beau dans le vrai, et le vrai dans le beau*—գեղեցիկն ճշմարտին, և ճշմարտն գեղեցիկն մեջ. և որքա՛ն իրավացի է այդ... և որքա՛ն նույնպես անարդար է կարծել, թե Շեքսպիրի վերին աստիճան զարգացյալ գեղագիտական ճաշակը մոլորվի դարանում, և մի բացառություն դնե այն անձնավորության մեջ, որով ուզում է մարդկությունը պատկերացնել. Եվ շատ կոշտ երևույթ ունի տեսնել մի Համլետ՝ նուրբ, փափուկ, մտածկոտ, և խոթացյալ, հանկարծ մի լայն, և մտոտ ու ճարպոտ մարմնո մեջ։

Ինչ կասեինք, եթե գիտեսեր և որկրամուլ փիլիսոփա Ֆալսթաֆը գար մեր առաջ և՛ լինել թե լինել՝ մենախոսությունը արտասաներ։ Ֆալսթաֆ ապրում է զվարթարար փիլիսոփայական անհոգությամբ, հետևաբար գեր է. Համլետ՝ որ մտածում և տանջվում է, պետք է բնական բերմամբ նիհար լինի։ Շեքսպիր յուր Հուլիոս Կեսար ողբերգության մեջ Կասիուսի տիպարը ներկայացրած է նիհար և վատուժ, որի համար Կեսար ինքն ասում է. «Կանացի և սաստիկ նիհար երևույթ ունի, երևի շատ է մտածում և այլև։ Եվ այս պարզ ու բնական է։

Համլետ մի երեխա չէ, և ոչ էլ գեր¹. և եթե Բյուրբեյն նորան մի պատանի ներկայացնել ուզելով տարիքը փոխեր, դարձյալ դժվար թե հաջողվեր, որովհետև Շեքսպիրի ժամանակ ներկեր և զանազան քիմիական բաղադրություններն ու կեղծամաներ գործածելու և դոցանով տարիքն անգամ փոխելու արվեստը շատ թերի

¹ Շեքսպիրի դարուն բժշկականությունն այն աստիճան ժողկած չէր. ուստի գրագետք էլ չէին կարող այնպիսի մի բացառական նուրբ կապ դնել մի դուրսագլխի բնավորության և կաղվածքի մեջ։

էր. ինչպէս բեմական տեսարանք). նույնպէս և կեղծամենք շկային անգլիական բեմի վրա¹, դոցա միայն տասն և յոթներորդ դարու վերջերին սկսան դործածել, և այն էլ կանայք միայն²:

Դիցուք թե Համլետ գեր է մինչև ուրվականի երևալը, բայց դորանից հետո այնքան երկար ժամանակ տանջվելով և մտածելով մինչև վերջի գործողութիւնը եթե շնիհարանա, շատ անբնական և տեճշմարտանման կըլինի. ի վերջ բանի Համլետի գեր կոչվելը միմիայն Շեքսպիրի ներողամտութիւն արդյունքն է, ինչպէս որ քիչ առաջ բացատրեցի:

Դառնանք կրկին տարիքի խնդրին. իմ կարծիք, ավելի ճշմարտանման և հավանական կըլինի եզրակացնել, թե Համլետի մայրը տարեց կին է, որնոր՝ կամ մարդասպանից երկյուղ կրելով, և կամ ծեր ամուսնիցը ձանձրանալով, վաժաշոտ բորբոքմամբ նեղութեմ լինի Կլոդիուսի դիրկը: Այն տեսակ մի կիրք, մարդս ամեն տարեքի մեջ կարող է զգալ. մանավանդ կանայք մեծով մասամբ, երբ անցնում է այդ սիրո բանաստեղծական ոսկեդարը, ուր սիրվում էին և սիրում արտով միայն, ուր պըրանոք (avec coquetterie) կարող էին շատերի սիրտն ու միտքը մոլորեցնել: Սակայն երբ երազի պէս ցնդում են ցնորք, և փարատվում են մինչև անգամ հոգեկան հաճոյից պատրանքը, այն ժամանակ գոնյա մարմինը՝ անցելույն հիշատակովը զրգոված հաճոյից սնունդ է պահանջում, և կինը դեռ լիշած ծերութիւն խաբխու պանդուխտից, ուզում է վերջին անգամ սնուցանել նորան: Մանավանդ Հյուսիսային, կամ Սքանդինավիան ցուրտ կլիմաների տակ կանայք ուշ են զարգանում. և երբեմն տարեց կանանց համար սերը դառնում է մի որեւիցե մարմնական գրգիռ, կամ մի պատրվակ՝ այս կամ այն նպատակին ձեռնհաս լինելու համար, այն տարիքի մեջ, որ կոչվում է ընդհանրապէս երկրորդ երիտասարդութիւն:

Ինչո՞ւ չենթադրել, թե Կլոդիուս ամուսնացած լինի տարեց կնոջ հետ, նորա դադոնապահութիւնը ապահով լինելու, և Գեր-

¹ Մեքին, Շեքսպիր և յուր ըննադատները:

² Մինչև անգամ սորանից միջանի տարի առաջ պարեն Հալիվելի աշխատութեամբ լույս տեսած Շեքսպիրի թատերգութիւնաց անգլիերեն հատորին մեջ գտնված երկնչի դերասանաց պատկերները՝ Շեքսպիրի դուցազանց դերերի տարազում (costume) այնքան աշխտակ են և տեճշմարտանման, որ մարդու զարմանք է բերում և գրեթե ապացուցանում է ծայրահեղ տղիտութիւն, կամ լսփաղանց անհոգութիւն տարազուց և գեմքի փոփոխութեանց մասին: Գորանից կտրելի է հետեցնել, թե ինչ պիտի լիներ Շեքսպիրի ժամանակ:

թուստս ընդունած լինի նորա առաջարկությունը, եղեռնագործից վախենալուն, և դուցե մի վաճաշոտ կրքով մոլորված նորա կողմ-
կիցը դառնալու համար, որպեսզի կյանքն էլ ապահովե, և կրկին
թագավորն նորա հետ՝ վայելելով նորա պիղծ գրկախառնությանքը.
մանավանդ այն դարում՝ ուր տիրում էր անբարոյականությունը,
այդ զարմանալի չէ:

Այս բոլորն զգալու և ի գործ դնելու համար հարկավոր չէ որ
թագուհին երիտասարդ լինի, ընդհակառակն այսպիսի մի վար-
մունք կարելի է սպասել մի տարիքն առած թագուհուց, որին ինքն
Համլեթ հանդիմանելով ասում է՝ պատկերաց բազմաաման տեսա-
բանին մեջ, «Ո՛հ, դու ըն՝ս կարող այդ սեր անվանել, որովհետև
քո տարիքի մեջ՝ սաստկաբորբոք արյունն անգամ սառում և հան-
դարտվում է, ու միայն ողջախոհության ծայինն է լսումս:

Այժմ թող հետևեցնելով դատեն ընթերցողներս, թե մի կին ի՞նչ
տարիք պիտի ունենա, երբ նորանում արգեն սառում և հան-
դարտվում է սաստկաբորբոք արյունն անգամ՝ և թե ի՞նչ տարիք
ունեցող կինը կըլսե ողջախոհության... Այս խոսքերից բացար-
ձակապես կարող ենք հետևեցնել, թե Համլեթի մայրը տարից է,
և Կլոդիուսի եղբայրասպանության շարժառիթը սերը չէ, այլ մի-
միայն ընչաքաղցությունն, և նախանձոտ փառասիրությունը:

Ենթադիր որ շատ անգամ պատկերանում է յուր Համլեթի անձ-
նավորության քողին տակ, շէր զիշանիլ նույնպես մի պատանվո
րերանով՝ այդ իմաստալից խոսքերն առել. նա՝ որ տասնևհինգ
տարի սրբագրել է շարունակ Համլեթը, և էրվինուսի տառածին պես՝
ձգտել է միշտ կենդանապես մարմնացնել մի որևիցե բարոյական
գաղափար՝ հույժ կարևոր հանդիսացնելով նորան: Համլեթն էլ
մարդկության կենդանի և մարմնացյալ գաղափարն է՝ յուր բոլոր
թիրությունք և հատկություններով, նորա առհնապահույդ ձախա-
տազիրը՝ ըմբռնելի է մտածող մարդկության համար: Համլեթ ինչ-
պես շատ մարդիկ, մարմնով հիվանդուտ, բայց խելքով ուժեղ է,
բնդմնավոր և խոհեմ. դուցե և այդ խոհեմությունն է պատճառ յուր
անորոշ բնավորության, և ոչ երկշատությունը:

Այլ եթե նա խոհեմությամբ և միայն սխալվելուց վախենալով
չէ կարող վերջնական կերպիվ մի սրտում տալ յուր անելու գոր-
ծին, և զանգաղանում է կատարել յուր հոր ուրվականի պատվե-
րը, այդ մի երեխայական բնավորության արդյունքը չէ, այլ մա-

¹ Համլեթ. գործող. երրորդ, տեսարան երրորդ:

սամբ յուր խառնվածքին, մասամբ՝ էլ լուրջ և արդարասիր հոգով տարգառեցն է:

Եվ միթե քիչ կան աշխարհիս վրա Համլեթներ, որք տատամսում և վարանում են իրենց պարտականության առաջ, նորա շարժել հիվանդաւ, զգուշ և յազմակողմանի խորհրդածող չլինելով՝ դարձյալ սարսափում են նորանից. և եթե դիպվածով կատարում են իրենց պարտքը, դուրս համար նորա առաքինի են կոչվում: Եվ այդ շարժք է մեզ դարձացնե, որովհետեւ պարտականատար մարդիկ շատ քիչ կան աշխարհումս, իսկ առաքինիք՝ գրեթե բոլորովին բացակա են. և այդ է պատճառը, որ պարտահատույց մարդը առաքինի է համարվում:

Ասկայն Համլեթ ի բնե առաքինի ծնած է, ընդունակ ամեն տեսակ բարի և վեհանձն գործերի, գոնյա Գլոբին էլ՝ յուր Վիլհելմ Մեսթերի բերանով այդպես է վկայում նորա մասին: Ուստի լավագույն է, որ այստեղ խոսեցնենք Վիլհելմ Մեսթեր, և մի վայրկյան տեղի տանք հանճարեղ հսկային դատողությանը:

«Որքան որ հառաջ էի տանում Համլեթն ռառմնասիրելու աշխատութիւնս, նույնքան ինձ դժվար էր լինում՝ նորա ամբողջության մասին մի որոշ դադափար կազմել. զանազան մանկածապաւ շրջաններում մոլորվեցա՝ իզուր երկար թափառելով: Ի վերջո, նպատակիս մի նոր ճանապարհով հասնելու հույսն հղացավ սրտիս մէջ:

«Եվ սկսա որոնել Համլեթի բնավորության գլխավոր հատկանիշները, որպեսզի կարողանամ զննել նորան այնպես, ինչպես որ էր յուր մահիցն առաջ. աշխատեցա լավ զանազանել և ըմբռնել այն հանգամանքները, որք կախումն շունչին այդ տարաբախտ արկածից, և ընդհանրապես նորա հետեւանքներիցը, և գուշակել միանգամայն, թե ի՞նչպիսի երիտասարդ կըզոյանար Համլեթից, եթե այն տեսակ մի աղետք տեղի չունենար:

«Անտարակույս՝ խանդակաթ և ազնվական ցողունի վերա հենած այս արքայական ծաղիկը կըմեծանար անխուսափ՝ յուր վեհափառ հոր ազդեցության ներքեւ Արդարադատ բարոյականության դադափարը՝ յուր իշխանական բարձրության դադափարին հետ միացած, և ազնվատոհմ ծագման զնորհիվ ազնվացյալ բարձունք զգացումը՝ հանկարծ զարգացան նորա մէջ: Իշխանության համար ծնած՝ իշխան էր, և կըցանկար թագավորել, որպեսզի բարյաց բարութիւնը դիմ խոշորդոտներ չլինին: Արտաքուստ վայելչագեղ, բնիկ ազնվարարո, և ի սրտե հեղահամբույր, երիտասարդութիւն

մի գերբնութի օրինակ, որ յուր տերութեան ուրախութիւնը պիտի լինէր:

Այն սերը՝ որ աածուծ էր Օֆելիայի համար, առանց բուռն կրքի, մի գաղտնի նախազգացումն էր ամենաթաղկո վայելքների Ասպետական մարդուց եռանդը հասուկ չէր յուր բնավորութեան. հարկավոր էր որ ուրիշների հատկացած գովեստից կամ քաշի տեղանակողութիւնիցը դրդովեր յուր եռանդն ու խանդը: Անխառն և մաքուր զգացմամբ շուտ կընկատեր արդարակորով մարդուն, և դիտեր գնահատել այն խաղաղ մտերմութիւնը, որով անկեղծ հոգին հրճվանոք է ապաստանում մի բարեկամ սրտի մէջ. մինչև մի որոշ աստիճան սովորած էր պատվել՝ ինչ որ բարի է, և ինչ որ գեղեցիկ է հանդիսանում արվեստից և դիտութեանց մէջ: Հասարակն և ռամկականը կըտաղտկացնէին նորան, և եթէ երբեք տոնութիւնն արմատանար յուր հոգի մէջ, արժամարճելու համար կըլինէր բոլոր այդ կեղծ և փոփոխամիտ արարածները, որք սողում են արքունիքում, և հեղձորեն նրանց ծաղրելու հաճույքը վայելելու հանգարտ խառնվածք ունիւր և անկեղծ ու աղատ վարմունք: Ոչ բարեկամ ծուլութեան, և ոչ ստատիկ գործունայ՝ պաշտախն մէջ. Համալսարանի սովորական դասերը կըշարունակէր: Զվարթարար լեզվով, քան թէ սրտով. լավ և մարդահաճ էր ընկերութեան մէջ, և զաղտնապահ, առանց թեպետ միանալու նոցա հետ, որք ի շարն են գործածում արդարութեան, ճշմարտութեան և բարի վայելչութեան զգացումը, նույնպէս և կարող էր մոռանալ և անհիշաւարութեամբ ներել նախապիտքը:

«Հիմա երևակայեցեք դուք այս իշխանը այն վիճակի մէջ, ինչպէս որ ձեզ նկարագրեցի, որի հայրը մեռնում է հանկարծ: Չնայելով որ ամբարտաւանութեան, կամ միապետութեան կրքով թելադրված չէր, այսուհանդերձ արքայուրդի մնալով՝ կարող էր բավականութիւն գտնելու Բայց հիմա տեսալասելի կերպով ստիպված է այքի առաջ ունենալ այն զանազանութիւնը, որ կա հպատակի և մի վեհապետի մէջ: Թեպետ թաղը ժառանգական չէր, սակայն եթէ հայրը կենդանի մնալով՝ երկար ժամանակ զահակալէր, այն ատեն անշուշտ նորա միակ որդուն ինքնասիրութիւնը և ապագայում յուր հորը հաջորդելու հույսը կարող էր հաստատվիլ և զորավիգն ունենալ: Դորա փոխարեն՝ շնայելով Կլոդիուսի փառավոր խոստումներին, զգում է իրեն մերժված յուր հորեղբորիցը, հավանականաբար ընդմիշտ: Սով նա մնում է հուսաքանդ՝ շնորհանկլալ, օտար մինչև անգամ այն ասպարիզի մէջ, որնոր ի մանուկ տիոց

իրքն յուր ժառանգական կալվածն էր նկատում։ Այստեղ բնավորութիւնն էլ յուր առաջին տխրութիւնն է զգնում, զգալով որ մի հասարակ սեպուհից էլ ստոր է կանգնել։ Ինքն իրեն ծառա է կարծում բոլորին։ Եվ յուր հեղահամբույր, դուրամատչելի և պաշտպանողական վարմունքին վերջ տալով, պատվանկյալ և ուրիշին կարոտ է մնում՝ իրքն մի թյուր երազ հիշելով յուր անցյալ վիճակը։ Ի զուր հորեքայրը ճիգ է դնում միտքարել նորան, ցույց տալ յուր գրութիւնը մի ուրիշ տեսակետով. բայց նա չէ կարողանում շղթալ յուր ոշնշութիւն իրականութիւնը։

Շնորհորդ հարմածից նա վերափոխվում է ի սրտե, ավելի խոր է նվաստանում. և այդ հարմածը յուր մոր ամուսնանալն է։ Այդ համատարիմ և խանդակաթ որդին, յուր հոր մեռած ատեն խորհում էր, որ դեռ մի մայր ունի, կըհաւար ապրել նորա ընկերութեամբ, և մեծարել անհայտացած գլուցազնին ստվերը. բայց մորն էլ է կորցնում՝ մահից ավելի դառն մի պատրվակով։ Այդ բարեխնամ ծնողի պատկերը՝ որ սիրում են որդիք, այլևս գոյութիւն չունի. անօգուտ է ուրեմն դիմել մեռելոց, և ապարդյուն է ջահ պատել կենդանիներից. մայրն էլ մի կի՛ն է, և կոշտն են ունի՝ դուրաբեկութիւն։

Ահա այն պահուն, առաջին անգամ իրեն որք է զգում. և չկա այլևս կյանքի մեջ մի երջանկութիւն, որ կարողանա յուր կորուստը լիացնել. ի բնե տխուր և մտածկոտ լինելով, տխրութիւնն ու մտածութիւնը ծանրաբեռն մի ստիպմունք են դառնում իրեն համար։

Շնրեակայեցեք՝ այս երիտասարդը, այս իշխանաց որդին, որ ապրում է ձեր առաջ, ներկայացրեք ձեզ նորա գրութիւնը և լավ դիտեցեք նորան, երբ իմանում է յուր հոր ստվերի հայտնվելը։ Մտանցեք նորան և տեսեք այդ մռայլ գիշերվան մեջ, երբ պատկառելի ստվերը երևում է յուր ալաց, ջարժվում և տեղափոխվում է հսկայական ցալներով։ Մի զարհուրանաց սարսուռ է սլանում նորա անդամների մեջ, խոսում է խորհրդավոր ուրվականի հետ, և տեսնելով որ իրեն գլխով նշան է անում՝ հետևում և լսում է նորան. և այն հաւրկու ձայնը, որ յուր հորեղբորն է ամբաստանում, որոտում է յուր ականջների մեջ, վրեժխնդրութեան հրավեր է կարգում՝ կրկնելով նորան այս սրտապատառ խնդիրքը. «Հիշի՛ր ինձ»։

Ե՛վ երբ ստվերը ցնգում է, ի՛նչ է մնում մեր առաջ. մի վրեժխնդրութեան ծառայի դուցա՞ղն, թե՞ մի օրինավոր իշխան, որ իրան երջանիկ է զգում բռնավորից վրեժ առնելու կոշված լինելուն։

համար... Ո՛ր Շիրթն ու հանկարծահայտ գույժը կասեցրին լքյալ նրխաասարդին, որ խիստ և դառն է նայում իրեն ժպտող սինլքոր-նեքին. երզվում է ըմբռանալ այդ ուրվականը, և ի լրումն այդ բո-լորին՝ ձայնում է այս նշանավոր բացադանշությունը. «Աշխարհս տղավաղել է. ո՛վ անեծք, փոխանակ հո՛ւ նորան բարեկարգելու... երանի բոլորովին ծնած չլինեի»:

Ե՛ւմ կործոյք, ահա այս խոսքերի մեջ է պարունակվում Համ-լիթի ամբողջ վարձուների բանալին: Ինձ համար ակներև հայտնի է, որ Ենքսպիր ուղեց մեզ ցույց տալ, մի ահագին ձնոնարկու-թյամբ և պարտքով ծանրաբեռնյալ հոգի, որին նա չէ կարող կա-տարել: Կարծում եմ որ այս միտքը, սկզբից մինչև վերջը տիրում է ողբերգության մեջ»¹:

Ով այս գեղեցիկ հատվածը վերջացնում է Գյոթն՝ կաղնույն և դուրաբեկ ամանին հիանալի նմանողությամբ, որ գրությունս սկզբներում հիշած եմ տրգեն:

Չնայելով այդ բացադանշության, Համլիթ դարձյալ յուր բնիկ անձնվիրությամբ դոհում է իրեն տարաբախտ ճակատագրին բեր-մանցը. յուր հոր վրեժն առնելու, և եղնոնագործին պատմելու հա-մար՝ առաքինական համբերությամբ տանում է ամեն վիշտ ու տա-ռապանք, փրկխոսիայական խորհրդածությամբ քննում և շափում է աշխարհը և նորա մեջ կատարելու գործը: Որդիական սիրով տո-լորված, և յուր բոլոր հույսերիցը հանկարծ և անսպասելի կերպով զրկված իշխանը զրկում է նույնպես յուր անձը ամեն հաճույքնե-րից և վայելքներից: Մարդկային և առնական հպարտությունը ոտ-նակոխ անելով, տխմար և խելագար է ձևանում՝ ենթակա լինելով անարժան անձանց ծաղրին և լրանսների հսկողությանը:

Կարճ դատողության տեղ մարդիկ նորան խելապա-հն կարծում, և նա կարողանում է աշուուրը կերպով ազատել յուր անձը հորեղբոր որոգայթներից, որոց կարելի է լարեր իրեն դեմ, եթե միայն հաստատ գիտնար բանի էությունը: Բայց խելագարու-թյունը նորա կենաց պահապան զրահն է լինում. այն անգին կենաց պատսպարանը, որ լիովին մի հոր սպանության վրեժն առնելու համար պիտի գործածվի. նա այլևս ինքն իրեն չէ պատկանում, այլ անողոր ճակատագրին ավար դարձած՝ նորա փշոտ ճիրաննե-րի մեջ լսում է անընդհատ ահավոր ուրվականին տեղատնայի պատվերը, որ առաջնորդում է յուր խոսքերն ու գործերը:

¹ Քաղյալ Ֆրանսուա Հյուգոյի դադիերեն Քարգմանությունից:

Ախալ է նույնպէս մի քանի մատենագրաց՝ Համլէթն իսկապէս խելագար կարծելը։ Նա ունի անյալիսի հուշալ ընդհանր, որ վշտից, կամ արտաքին առարկաների, կամ անձանց ներկայութեանից շփոթ է զգում, բայց այդ տեսողական չէ լինում։

Օրինակի համար՝ ուրվականի հետ խոսելուց և նորա պատկերը յուր պնակի վրա արձանագրելուց հետո՝ մենում են Հորացիո և Մարցիլը, և նոցա խնդրած ատեն, որ յուր սրի վրա գաղտնապահութիւն երդվեն, հանկարծ լսում է ուրվականի ստորերկրյա ևայնը, որ հրամայում է՝ «երդվեցե՛ք»։ Այդ ևայնից քաջալերվում և միանգամայն այլայլում է Համլէթը։ Արդեն ուրվականի երևույթը չղային ուժեղ ցնցմամբ այդպէս պատկերացած էր յուր հիշողական երևակայութեանը վրա, որ այդ ձայնից էլ կրկին հուզվելով՝ հայլիացմամբ անդրադառնում է ուրվականի պատկերը օդի մէջ, ամեն տեղ կարծում է նորան տեսնել, և ասում է յուր ընկերաց. *Hic et ubique* — «Ա՛ստ և ամեն տեղ»։ Վերեմն փոխենք տեղերս»։

Ահա միայն այն պահուն մի քանի վայրկյան շփոթվում է նա, բայց միտքը միշտ նախապատրաստ և նուրբ է մնում։ Եվ իսկույն խորամանկութեամբ խելագար ձևանալու մտադրութիւնը հայտնում է Հորացիո և Մարցիլը ընկերներին, խնդրելով նոցանից՝ որ ձեռքով, կամ երկզիմի խոսքերով չհայտնեն որ իրենք արդեն տեղյակ են այդ բանին։

Վիկտոր Հյուգո միայն՝ դարուս երևելի հանճարը, շատ երևակայալ և քերթողական տեսակետով է քննում Համլէթը, ասելով միանգամայն, որ նա վերացալ և առանձնացալ մի արարած է։

Սակայն այդ հասկութիւններն էլ շատ անգամ խելագարութիւնից կարող են դուրսնալ, մինչդեռ Համլէթ խելագար չլինելուն համոզված ևս։ Բայց ավելի հետաքրքիր կլինի ընթերցողացս, կարդալ հռչակավոր ողբերգու գերասան Ռոսսիի նամակը², որ ուղղված է Դելլի Տեիկերուֆ անգղիական լրագրին՝ ի պատասխան մի քանի դատաքննաց, որք մեղադրում էին Ռոսսիին՝ Համլէթի խելագարութիւնը չափազանց իրական ներկայացնելուն համար։

Ե՛նձ մեղադրում են, ասելով՝ թե Համլէթին սկզբից մինչև վերջը մի ճշմարիտ խելագարի տիպար եմ տվել, և փոխանակ Հյուսիսային ցուրտ կլիմայի տակ ծնած մտածող և մաղձոտ մի անձի՝ պատկերացրել եմ նորան իսրև մի զգայուն և կրակոտ Արևելցու տիպար։

¹ Համլէթ. գործ. առաջին, տեսիլ հինգերորդ։

² Բյուխներ, Համլէթ Դանեմարքացին—Hamlet le Danois։

«Այդ քննադատությունն ինձ շատ դարձանք պատճառեց. մասնավանդ որ՝ ըստ իմ կարծյաց, Համլետն ոչ մի կերպով չէ կարող խելագար համարվիլ. մինչ իսկ խելագարությունն էլ կեղծելիս՝ ակներև հայտնի է կեղծիքը. յուր նորամտությունը արդենք է այդ բանին, որնոր շատ անգամ զգալի է լինում խորիմաստ խոսքերով, որ Պոլոնիոսն անգամ, որնոր համոզված է Համլետի խելագարությանը, ապշեցնում են։ Եվ վերջապես Պոլոնիոսն մի մուկի հետ շփոթելով, ապանում է. սակայն շնայելով այդ հեղեղագործության, թագավորը կրկին չէ համատուժ Համլետի խելագարությանը։

«Գալով կլիմայի խնդրին, և նորա՝ Համլետի քնավորության ազդելով ներգործելը, ինձ համար միշտ աննշան, և անկարևոր է համարված։ Իմ դատողությամբ, Համլետ՝ մարդկային մի ընդհանուր ախպար է, որո մեջ, բնիկ և կամ հետաստաց խառնվածքի միջոցով, հառաչ է դալիս մի շփոթություն, մասամբ խորհրդածությանց և բանականության, և մասամբ էլ յուր անէին կամաց, և արտաքին պարտույց դործադրության մեջ։ Այսպիսի մի մաղասային խառնվածք ունենալով, հետ է մղում ջղոտ և զգայուն հոգվո խանդը, որն որ տարակույս է արտադրում. և մինչ իսկ վարանումն և հուսահատություն, որ կուլ է տալիս յուր սյամբ ալիքների տակ՝ սիրո բացահայտ և կորովի սկզբունքն անգամ։

«Դարձյալ կասեմ, որ այս տեսակ մի խառնվածք ամեն կլիմայի տակ կարող է գոյություն ունենալ։ Որոշակի կերպով ոչ Սքանդինավական է, և ոչ Իտալական, և այլն, և այլն։

Դարձյալ Բյուխներ ասում է, թե «Սալվինիի՝ երևելի իտալացի ողբերգուին պատկերացրած Համլետը, մի կատաղաբարո մարդ է և հատկապես թշնամի ամեն տեսակ ժողորածությանց, որով ավելի նմանում է առասպելի մեջ նկարագրված՝ վրիժառու և անողոքելի դատավոր իշխան Ամլետին։

«Այդ ձևով Համլետն ներկայացնելը, կասկածելի է անում նորա կեղծյալ խելագարությունը, որնոր անհրաժեշտ է»։

Այլևս հարկ չկա դիմել Մարգարի, Բյորնի¹ և Մաուցլիի² առաջ բերած փաստերին, քանի որ ուշադրությամբ կարդալով Համլետը, հայտնի կըտեսնենք, որ Շեքսպիրն էլ նորան խելագար չէ հանդիսացրած։

¹ Լյուդվիկ Բյորն, Գերմ. գրագետ, քննադատությունք, Թարգմ. Ռուսերեն 1869-ին։

² Անգլիացի քննադատ։

Սակայն ըստ Մատցլիի և Մեդլերի, երբեք չէ կարելի հերքել, որ Համլեթ հիվանդոտ չի նի. այո՛, ունի նա էլ յուր հիվանդոտութիւնը, բայց այդ ախտից չէ վնասվում նորա անողջամտութիւնը, չէ մթազնում խելքը: Այդ լուկ միանալով յուր աղետալի ճակատագրին, դառնությամբ լքցնում է նորա կյանքը:

Սժ շատ իրավացի է գերմանացիոց գտած համապատկեր նմանութիւնը՝ Գյոթեի Վերթերին և Ենթապիլիի Համլեթին մեջ, որոց կարծյացը Մեդլեր լիովին համաձայն է:

Ամեն մարդ և ամեն առարկա ունի յուր համապատկերն ու հակապատկերը. ամեն բաների մեջ կարելի է բաղդատութիւն մտցնել, բայց դորա համար հարկ չկա, և մինչև անգամ կարծեմ անտեղի կրլինի, երկու կողմանց միույն՝ լավ հատկութիւնները չգնահատելը: Տարօրինակ է անշուշտ եթե մինը Եիմպանզն կամ Գորիլլո կապիկներին, ուսն ու քաշութիւնը գովելիս, նոցա մեջ անհավատալի լավ հատկութիւններ գտնե, և դոցա դուրս ցայտեցնելու համար՝ բազդասն նորանց պատերազմական մի երիվարի հետ, և պախարակելով ուրանա նորա տիրասեր և սանձահար հլութիւնը, և կամ մի վիրավոր եղջերուի հետ բաղդատելով, մեղադրե նորա սարսափն ու շփոթութիւնը:

Այսպէս էին մտածում Տուրգենևի հոգվածը կարգալիս, Ջերվանտեսի Դոն Քիխոտին և Համլեթի մասին¹, Այդ երկու զգալապէս տարբեր անձանց մեջ չէ կարելի մի որևէ նմանութիւն մտցնել, և մանավանդ բոլորովին անտեղի է պակասավոր և ստոր գտնել Համլեթի քնավորութիւնը՝ համեմատելով Դոն Քիխոթին:

Համլեթ հալածված է ճակատագրի հարվածներից, ու շոշափելի և դառն իրականութիւնից. իսկ Դոն Քիխոթ բլուր ցնորքներից, և խոլական բանգագուշանքներից, որք եթե ունին իրենց խարուսիկ և զավեշտական երևույթի տակ մի բարոյական հիմնավոր ձգտումն, դարձյալ չէ կարող հավասարել և նմանիլ Համլեթի իսկական վշտերի կնդծ խելագարութիւն ծածկույթին տակ քողարկված՝ սոսկալի հոգեկան պատերազմին, և ամենաբարձր հանճարեղ և բարոյական մտքի հետ:

Համլեթի խելագարութիւն մեջ խելք ու վիշտ կա. իսկ Դոն Քիխոթի խելքի մեջ՝ խելագարութիւն և ցնորք:

Դոն Քիխոթ թշնամիներ երևակայելով բորբոքվում է պատերազմական եռանդյամբ՝ անգիտակցաբար, Հոռոմի սագի նման,

¹ Гамлет и Дон Кихот. Москва, 1874

որ թշնամյաց ստվերները տեսնելով երկյուլից սկսավ դռնի, և դիպվածով քաղաքն ազատվեց։ Եվ հռովմայեցիք պատվելով փառավորեցին ազատիչ սաղին հիշատակը։

Համլենթ խելացի դատողությամբ տեսնում է վատեզը, զգում է դարհուրելի ճակատագրին իսկությունը, և ի սեր յուր հոր՝ անձնվիրաբար նետվում է նորա ժանյաց մեջ։ Խնչպես մի հավատարիմ շուն, որ դիտակցաբար պցում է իրեն տիրոջը ետևից ծովի ալյացը մեջ, որպեսզի նորան ազատե, և լիարողանալով հասնել յուր նպատակին, մաքառելով վտանգին դեմ խեղդվում է։

Ուրեմն եթե պատվում են երկշուտ սաղին՝ դիպվածական և անգետ մի ծառայությունը, արդյոք ի՞նչ պետք է ասել հավատարիմ շան դիտակցաբար գործած անվեհեր և տիրասեր անձնազոհության համար։

Նույնպես Դոն Փիխոթի երևակայալ Դուլսինեն ժիծաղ է շարժում, իսկ Համլենթի իսկական Օֆելիան սիրտ և արցունք։

Միով բանիմ այս հակապատկերը դնելով, դարձյալ կասեմ՝ չենք կարող Համլենթը բնավորությամբ Դոն Փիխոթից անհամեմատ բարձր չդասել, Համլենթի մեջ խոհուն մարդը՝ նախամեծար չհամարել Դոն Փիխոթի գրեթե խելագար անձնավորության, և կարծել Տուրգենևի հետ, թե Համլենթ Դոն Փիխոթի նման հավատք, կամ սեր չունի։ Որովհետև նա ասում է, թե Դոն-Փիխոթ հավատք ունի, և յուր անձը բոլոր ուժով մի գաղափարական էակի (ideal) է նվիրած, որո համար պատրաստ է զոհել յուր կյանքը, որին նա զնահատում և խնայում է այնքան, որքան որ հարկավոր կլինի իրեն, նորանով մարմնացնել յուր սիրո գաղափարը և այլն և այլն։

Բայց ի՞նչպիսի սեր և հավատք է այն։

Անշուշտ կարդացած եք Ջերմանդեսի Դոն Փիխոթը, և լավ նկատած եք որ իբրև ճարտար մի երկասիրութուն, ունի յուր արժանավորությունը, Շեքսպիր անգամ յուր կենաց վերջի տարիներում երբ առանձնացած էր Սթրաթֆորթ, կարգալավ Ջերմանդեսի Դոն Փիխոթը, ասած է. «Երանի այն երկրին, որ այսպիսի մի տաղանդ է արտադրել։ Այո՛, ինչպես որ ասում է հաղթահանճար վարպետը, այդ մի տաղանդավոր գործ է, որի նպատակն է ծաղրել և պախարակել հանդիսացնել այն ժամանակի ասպետաց եղծումները։

Այսուհանդերձ, անընդունելի է Տուրգենևի կարծիքը ինձ համար ընձ կարող համակարծիք լինել՝ Մուխ և Ուստրդաց օրագիր վիպասանությանց հեղինակին դատողությանցը։— Եվ ինչո՞ւ հա-

մար, ինչով կարելի է հաստատել Համլեթի անհավատությունը, մինչդեռ նորա յուրաքանչյուր խոսքերն ու գործերը հակառակն են ապացուցանում: Նորա սրտի մեջ հաստատ արմատացած են հավատ բոլոր սկզբունքները, որք շատ անգամ մինչև մոլեռանդության են հասնում, նա հավատում է ազնիվ մարդկանց ազնվության, նախախնամության, մահից հետո հոգի տանմանության, և նորա պատժույն ու վարձատրությանը: Միթե հավատքը չէ՞ որ տան է տալիս նորան, թե ռաւանց նախախնամության կամքին մի ճնշողակ անգամ չէ կարող ընկնել¹: Եվ հավատալով կրկին աղոթքի ներգործության, քաղավորին ազոթած ատեն չէ սպանում՝ վախենալով որ նա երկինք կերթա աղոթքի միջոցով, և յուր վրեժխնդրությունը թերի կըլինի: Ամենապատեհ առիթն անգամ ի բաց մերժելով, ստնակոխ է անում, և դժուար է յուր վրեժը հավատո սկզբունքներին: Միթե նույնպես սիրելով չէ՞ որ հավատում է յուր միակ և սիրելի բարեկամ Հորացիոյին, որին՝ յուր հուշյալ դրությանը մեջ դիմելով, ասում է. «Հորացիո, բոլոր այն մարդկանց մեջ, որոց հետ հարաբերություն եմ ունեցել, դու գերազույնն ես»².

Նա հավատք ունի. և սերն է նորա հավատքին հիմունքը, այն աստիճան որ յուր հորը վրա ունեցած սիրուցը ստիպյալ, հավատում է ուրվականին անգամ. և եթե պատահում է, որ տարակուսի, տանջվում է դորանից և ճղնում է փարատել տարակուսը՝ միանգամայն յուր նպատակին դիմելով:

Սիրում է նույնպես յուր մորը. սիրում է Օֆելիային, Գլոբի նկարագրած սիրով՝ խորհրդավոր, բուռն և հոգեպես. նորա սիրույն չէ կարող հավասարիլ քառասուն հազար եղբարց համագումար սերը: Բայց կարծես յուր սիրտը ճվլվում է հորը գերեզմանին մարմարիոնե կապարիչին տակ: Էլսնեորի բարձրավանդակին ցուրտ և կծու զեփյուռը, կարծես մի փոթորիկ է հարուցանում նորա սրտի մեջ որանդից՝ իբր թե վանելով ուզում է սառեցնել սերը, բայց նա մաքառում է նորա դեմ, մանավանդ ստիպված լինելով՝ խեղդել սիրո ոգրոց աղաղակը:

Իսկ Դոն Քիխոթի Դյուլսինեն միայն երևակայության կամ հիվանդոտ ուղեղի երազ է, որի սիրույն արժանավոր լինելու համար կարգալով ասպետաց քաջագործությունները, և բորբոքվելով, ինքն էլ նիզակն ի ձեռին զնում է ի խնդիր բախտին, արկածապատեհ

¹ Համլեթ, գործող. վերջ. տեսարան վերջին:

² Համլեթ, գործող. երրորդ. տեսարան երկրորդ:

լինելու (s'aventurer). քամու շաղաքները ասպետաց պատերազմական բանակների տեղ ընդունելով՝ հարձակվում է նոցա վրա, և սափրելի թասը Մամբրինի սաղավարտը կտրծելով՝ հագնում է գլխին, և դեռ սորա նման խեղկատակությունները, որ ծիծաղ կարող են շարժել:

Ամեն զոացմունք, ամեն գործ մի ընդհանուր սահման և շահ ունի, և ինչ որ անսովոր է, բնական չէ կարող համարվիլ. և եթե հանդիպինք Դոն Քիխոթի նման մի մարդու, կամ կրծիծաղենք, և կամ եթե փող ունի՝ խորհուրդ կուտանք, որ ուղիղ Փարիզ բռնկապետ Եարգուլի մաս զնա բռնկվելու համար:

Այսուհանդերձ, ընդունում եմ որ Սպանիացի Ջերվանասին մի այս տեսակ դուցազն էր հարկավոր՝ յուր դադափարն ու բարոյական ուղղությունը լավ պատկերացնելու համար: Այսինքն Դոն Քիխոթի պատկերի տակ ծածկված ցույց առաւ յուր ժամանակի թերութիւնը: Իսկ Համլետի պատկերի տակ հանդիսանում է ամբողջ մարդկությունը՝ յուր ամեն կողմերով:

Արեմն անօգուտ է ավելի իբրև մարդ դառնել Դոն Քիխոթին, ու գտնելով նորան՝ պակասամոր զտնել Համլետը—եւ ի՞նչ հարկ կա ասելը նույնպես թե Համլետ անձնասեր է. թե նա միայն յուր եսն է մտածում, որ այդ եսը թանկագին է իրեն համար. թե նա լոկ յուր անձը ստեղծագործության կեդրոնն է համարում և մեծդի նմանությունն բերելով ասել, թե մեծին Աղեքսանդրի նախադիմումն վրա նստած՝ իրեն համար ստեղծված և իրավունքը համարելով՝ ծծում է նորա արյունը:

Բացի Տուրգենևից, բոլոր մնացյալ երևելի հեղինակները՝ Գյոթեից սկսյալ մինչև Մեդիեր, և Բյուֆոնի հակառակը դատելով, վկայում են որ նա ոչ թե անձնասեր, այլ մարդասեր և անձնվեր էր, և յուր այդ տարաբախտ վիճակին մեջ խեղճ իշխանը, ոչ թե ստեղծագործության մեջ մի որոշ կեդրոն ունենալն կարողանում էր զգալ, այլ մինչև անգամ մի ապահով և հաստատ տեղ չունելու յուր ծնողացը արքունաց մեջ¹, ուր միմիայն յուր անձը նվիրած էր հանդուցյալ հորը պատվերին: Չնայելով այս ճշմարտությանը, Տուրգենևն ասում է.

«Он постоянно занят не своей обязанностью»:

¹ Համլետ եթե լիներ անձնասեր, չպիտի տներ երկրորդ գործողության մեջ Ռոզենկրանցի և Գիլդենշտերնի հետ խոսելիս, թե ինքը փառասեր զամ անձնասեր չէ. և մի ընկույզի կեզևի մեջ ամփոփվելով, անհուն տարածության իշխան և տեր կըհամարեր յուր անձը, եթե չար երազներ չունենար:

«Ուրեմն ո՞ւմ պարտականութիւնն էր յուր սպանված հոր վրեժն առնելը. և միթե Համլէթ շարունակ դորանով զրադված չէ՞, և եթէ երբեմն մի օտար նյութի վրա է խոստում, դորա շարժառիթը կրկին յուր վրեժխնդրութիւնը նպատակին համար չէ՞...»

Անտարակույս, որովհետեւ հակառակ ամենայն եսական զգացմանց՝ շնչում է յուր սրտից և մտքից մինչև իսկ անցելույն հիշատակները, արհամարհում է աշխարհն, ասում է մարդկանց, նախատում է Օֆելիային անգամ, լռեցնել կարծելով յուր սրտի սերը, որպէսզի բոլոր յուր հիշողութիւն զորութիւնը կարողանա հիշել և զգալ ուրվականին պատկերը, և մի նոր Ծնահակի նման յուր հոր դերեղմանաքարի վրա ողջակեզ է պառնում, մինչդեռ ազատարար ոչխարը չէ կախվում կաղնիժ ճյուղերից:

Ահ ուրիշ պատճառ ես կա՝ Օֆելիայի և նորա մեշ տիրած ստանութիւն, որ հոգեբանորեն հեշտիվ կարելի է բացատրել, ահա՛վասիկ.

Աշխարհումս մի մարդու ամենասիրելի և ամենամերձ անձը մայրն է. մայրն է նորա կենաց արդյուրը, և այդ արդյուրի ապաստան և ամպշան՝ մօրը խանդակաթ գիրկն է, մանավանդ Համլէթի նման զգայուն, խելացի և ազնվաբարո մի արարածի համար. բայց երբ տեսնում է որ այդ թանկագին մայրը օտարացել է իրենից, երբ այդ գիրկը, ուր ապաստանում էր, ջվայտ պղծութիւնաց ճահիճ է դարձել. և այդ մայրական սիրտը, որ միայն սեր և խանդադատանք պիտի կրեր իրեն համար, բաբախում է իղճատանշ, ուխտադրութ և արքայական լինելով հորեղբորը, այլևս գորանից հետո ի՞նչ հարմարմունք և վստահութիւն կարող է զգալ յուր մօր համար, և ի՞նչպէս այնուհետեւ սիրե նորա սեռին պատկանող արարածները, ի՞նչ կերպիվ հաճատա կանանց դուրսարեկութիւնը, մանավանդ Օֆելիային. որովհետեւ նա էլ կին է, նա ևս կարող է ուխտադրութ և ներողամտ լինել եղբւանց, և հետեաբար երդված է յուր հոր սովերին՝ արմատախիլ անել յուր սրտից բոլոր կողմնակի զգացումները, նմանապէս և սերը: Բայց կարողանո՞ւմ է հնչողիլ. թեպետ և արատքուտ խիստ և կոպիտ է վարվում Օֆելիայի հետ, և մինչ իսկ նորան խորհուրդ է տալիս մենաստանի մեշ առանձնանալ, երկյուղ կրելով գուցե, որ նա էլ մօրը նման շլինի, կամ անանելով Օֆելիային ամեն օր, շմոռանա յուր պարտքը, սիրուց հաղթված:

Սակայն դարձյալ բնութիւնը հաղթանակում է, և Օֆելիայի փակյալ դագաղի միայն երևույթը պատառում է յուր սիրտը, որ-

տեղից դուրս է ժալթրում այնքան ժամանակ այնտեղ ամփոփված սիրո անզուսպ տղադակը:

Ֆրանսուա Հյուգո պատմում է, թե ինչպես էր խաղում երեւի դերասան Քինը այն տեսարանի մեջ, ուր Օֆելիան մենաստան է ուղարկում, և թե որքան հակառակ է այդ կերպ ձևացնելը Համլետի բնավորության:

«Երևի այն խոտութիւնը՝ որով վարվում էր Համլետը Օֆելիայի հետ, ամբողջ այդ տեսարանի ընթացքում՝ շատ ծանր տպավորութիւն էր տնում անգլիացի հանդիսակաց վրա: Այդ տպավորութիւնը մեղմացնելու համար Քին փոխեց մի երեկո յուր խաղալու կերպը: Մալիւր կուսաստան¹ բառերը արտասանելուց հետո բեմից դուրս դնաց, բայց տեսնելով որ հասարակութիւնը չի ծափահարում, կրկին վերադարձավ, և Օֆելիայի ձեռքը բռնելով համբուրեց, և հեռացավ բեմից՝ սաստիկ ծափահարութիւնաց որոտման մեջ, որովհետեւ հանդիսականք հավանեցան Համլետի այս գովանաց անսպասելի վերադարձին: Այդ երեկոյից հետո Քին միշտ միևնույն կերպով կը հեռանար Օֆելիայից՝ անընդհատ ծափահարութիւններ ընդունելով: Ժամանակակից անգլիացի քննադատք արդարացի գտան երեւի ողբերգութիւն այս հնարքը: Սակայն մեր խոնարհ կարծիք, այդ աղավաղութիւնը մի ծանր հակասութիւն է, և բոլորովին հակառակ ոչ միայն բնագրին, այլ մտնավանդ Շեքսպիրի դաղափարին: Հետո վերջացնում է այսպես.

«Համլետի առ Օֆելիա ուղղած կշտամբանքին այնպիսի խանդակաթ մեծարանոք վերջ տալը մի մեծ հակասութիւն է, որ ոչ մի փաստով չէ կարող արդարանալ. այն տեսակ մի վերջարան ոչ միայն փշաջնում է բոլոր այդ տեսարանը, այլ լիովին ուշիւ է դարձնում:

Համլետ այլապես չէ կարող վարվել Օֆելիայի հետ, և ճշմարիտ՝ Քինի այդ վարմունքը սաստիկ հակասական է:

Բայց Տուրգենև շարունակում է յուր հետադոտութիւնը ասելով, թե նա մի կատարյալ երեխա է, խաղում է երեխայաբար, գործում և խոսում է նույնպես:

Սակայն մենք որքան կարելի էր տրամաբանորեն հաստատեցինք, որ Համլետը երեխա չէ: Եւ ըստ Տուրգենևի, ամենևին երեխայական մի կատակ չէ Պոլոնիուսի հետ ունեցած այն խոսակցութիւնը՝ ներկայացման տեսարանից հետո, երբ Պոլոնիուս դա-

¹ Համլետ, գործող. երրորդ. տես. երկրորդ:

լիս է հրավիրել նորան թագուհու կողմից, ասելով՝ «Տե՛ր իմ, թագուհին կըփափագի ձեզ հետ խոսիլ, և այս բոլորիս»¹։

Համլետը լսելով այս հրավերը՝ իբր թե ծիծաղելու համար, ցույց է տալիս Պոլոնիոսին երկնքի ամպը. ասում է, թե դա մի ուշտ է, աթիս, կամ կեսու Պոլոնիոսն էլ այդ ծաղրաբանությունը՝ հավանություն պատասխաններ է տալիս։

Բայց ոչ, այդ հարցուփորձն անելով, Համլետը չէ ուղում ծիծաղել նորա վրա, այլ բոլորովին խորագետ նրամտություններ ցանկանում է յուր կասկածն ստուգել, և իմանալ, թե արդյոք թագավորը առ ինքն ի՞նչ տրամադրության մեջ է գտնվում ներկայացումից հետո, թե արդյոք առաջվան պես պատված և հարգված է արքայաց մեջ իբրև արքայորդի, թե՛ մի դավադրություն, կամ մատնության որոգայթ կա ծածկված Պոլոնիոսի հրավերին տակ։

Որովհետև եթե նորան նկատում են իբրև մի վտանգավոր անձն, ոչինչ բան չարգելելու եղբայրասպան եղևնագործին, իրենից էլ ազատվիլ մի նոր ոճրագործությանմբ. և այդ եթե վճռված է, ալևա Պոլոնիոսն էլ կըղազրի իրեն հետ հարգանք վարվելուց։ Եվ այդ բանը միմիայն Պոլոնիոսից կարող է իմանալ, թագավորի գաղտնապահ խորհրդական աչ բազուկիցը։ Ուստի՝ Համլետը յուր բնիկ խորամանկությամբ ուժգնակի և հանկարծ շեղվելով խոսակցության նյութից, հարցուփորձ է անում նորան, մի որևէ ամպի մասին, և տեսնելով Պոլոնիոսի անփոփոխ շողորրթությամբ անձնահաճ և խոնարհ պատասխանելու ձևը, ասում է. «Ուրեմն կերթամ մորս տեսությունն։ Ահա այդ ժուրեմնա բառը վկայում է ասածին ճշմարտությունը»։

Համլետը յուրաքանչյուր քայլափոխին երկյուղ ունի որ շտապեն իրեն¹, և ուղում է ապահովացնել յուր կյանքը, որնոր այնպիսի մի մեծ գործի է նվիրած, որին զուգու հանելու համար նախ կենաց հենարանն է հարկավոր։ Հետևաբար, ինչպես որ առաջ ներն ասացի, հավատացող և մինչև անգամ մոլեռանդն լինելով, չէ ուղում յուր հորը պես դավաճանությամբ սպանվիլ, և առանց պատրաստության չվիլ հանդերձալ աշխարհը։ Որքան կրոնի սկզբանց (որ մեր մոր կաթի հետ ծծած ենք) հիմունքը անխախտ են, նույնքան և Համլետը արդարացի է ալդպես վարվելով։

Նորա այդ ընթացքին, այդ զգուշ վարմունքին պատճառը երկյուղը չէ. նա ևս ունի յուր քաջությունը, հակառակ Տուրգենևի

¹ Համլետ, գործող. երրորդ. տես. երկրորդ։

կարծյաց. նա էլ յուր ժամանակի մի Իդալգոն¹ է, վարժ սուր զոր-
ժաձեւում, և ի հարկին մինչ իսկ հանդուգն քանց Դոն Քիխոտ, որ
փոխանակ յուր մտացը խոյական երևույթներին վրա հարձակե-
լու, գնում է սուաներամերկ մի ահարկու ստվերի քամակիցը,
հարձակվում է քաշարար անկատարի անողոք հարվածների դեմ, և
վհատում է. միայն այն ժամանակ, երբ խոշորդատներ են հանդի-
պում, որք արգելում են իրեն՝ հակառակ բոլոր յուր զգույշ միջոց-
ներին, առնել յուր վրեժը:

Նշանավոր մատենագիրք մատնացույց են անում նորան իբրև
մի քաջի, և նմանեցնում են Սոփոկլի և էսքիլի՝ Մեքսիկն, և Փու-
ենյի Սիտին, և այլն:

Չնայելով, յուր հոգեկան բոլոր հատկութանցը, ստիպվում է
գողարկել նոցա խելագարի կեղծյալ երևույթին տակ, և յուր բնիկ
բարեարտությամբ խնայում է յուր մորը, Սուրը՝ ամպի խոսքերին,
քան թե գործերին մեջ դնելով: Այսուհանդերձ զգույշ լինելով ոճ-
բագործութունից, որպեսզի չսխալվի, դարձյալ առիթը բաց չէ
թողնում ձեռքից, երբ հաստատ հավատում է, որ պիտի կարողա-
նա վերջապես սպանել շարագործին: Եվ մորը հետ խոսած ատեն,
երբ լսում է վարագույրի ետևից, օգնութուն կոչող ձայնը՝ հան-
կարժ մոկ տեսնել է ձևացնում, որպեսզի մայրը վրդովվելով
իրեն շարգելե, և վարագույրի ետև ծածկված անձը՝ երկյուղ կրե-
լով, լի փախչի, և շարժանկեւով մուկն հալածել՝ հասնում է վա-
րագույրին, և այնտեղ թաք կեցողին սպանում է սրի հարվածով:

Նա այդ անում է, ոչ թե յուր անձը պաշտպանելու համար,
ինչպես որ մի քանի քննադատք կարծում են, այլ ընդհակառակն
հաստատ համոզված լինելով, որ թագավորն է այնտեղ պահված,
որին սպանել էր պարտական: Սակայն երբ վարագույրը բարձ-
րացնելով, տեսնում է հանկարծ Պոլոնիուաի անշունչ դիակը, խեղ-
ճալով բացտկանչում է ցավագին. «Ավա՛ղ, ես քեզ ուրիշի տեղ
ընդունեցի, որ քեզանից առավել կարևոր էր ինձ համար»:

Կրկին անգամ օգտվում է առիթից վերջին գործողության մեջ
և թունավոր սրով թագավորին վրա հարձակվելով՝ սպանում է նո-
րան: Ոչ թե ինքն իրանից դուրս գալով, կամ գրգռված դրուժյան
մեջ, ինչպես ասում է Բյոռնեն, այլ բոլորովին լուրջ դատողությամբ,
և համոզված լինելով, որ այս անգամ հարվածն՝ անվրեպ կլինի:

¹ Սպանացի քաջ ազնվական:

² Համլետ, գործող, երրորդ, տես. վերջին:

և վայրենի խնդությամբ գոչում է, իմանալով մահամերձ կանխելը, որ սուրբ թունավորված է¹։ Քրոն, ուրեմն, կատարի՞ր պաշտոնդ»։

Չորս նշանավոր տեղեր կան ողբերգության ընթացքին մեջ. ուր սրտառու աղաղակով պալթում է Համլետի տաղնապանուհի Հոգին։ Այդ աղաղակը յուր բազմատեսակ ցավոց և հուզմանց արձագանքն է։

Առաջինը՝ երբ ուրվականը տեսնելուց հետո, հուսահատարար ժրտանի ծնած շիհնիս բացականչելը։

Նրկորդ՝ ներկայացումից հետո վերջապես եղևնադործը երևան հանելով, քսոմնեցուցիչ ծիծաղին աղաղակը։

Նրորդ՝ Օֆելիայի գերեզմանին մոտ սիրո արտասովալի և սրտապատառ գոչումը։

Չորրորդ՝ այն վայրենի և կատաղի ուրախության քրքիչը՝ թագավորն սպանած ատեն։

Տուրգենև հակառակ այս կարծյաց խոսելով, ուրանալով Համլետի լավ հատկությունները, երևի ուզել է մի սրտառուություն անել։ Այսուհանդերձ շատ ժամանակակից խոհան անձինք, չեն հավանում նորա քննությանը, նույնպես և կուզվիլ Ռյորենի, որի քննադատական հոդվածները թարգմանած է ուսանողն Պետրոս Վելյերսդ։ Դոցա մեջ Ռյորեն ունի մի հոդված Համլետի մասին, որով փոխանակ լավ հատկության՝ կարծես կուսակցությամբ, աշխատում է միայն թերություններ տեսնել Համլետի բնավորության մեջ։

Բայց ինչո՞ւ ստորացնել այդ բազմակողմանի և վսեմ բնավորությունը, որ Շեքսպիրի նման մի հանճար՝ իրանից և յուր ժամանակակից անցքերից և անձերի բնավորությունիցը օգտվելով քերթողապես և գեղադիտաբար հյուսել և տիեզերական մի մարդկային տիպար է դուրս բերել։ Եվ որին մի ուրիշ հուսկավոր հանճար՝ Գյոթեն քննում է հագերանորեն, և զմայլելով ներբողյան է կարդում։

Խոստովանինք նույնպես, թե մարդկանց համար ավելի հեշտ է իրենց նմանյացը վատ կողմերը գտնելն ու պախարակելը, քան թե լավերը փնտռելով՝ գնահատելն ու գովելը։ Հակակրոնական ու համակրոններ թնայեա միմյանցից տարբեր և հակառակ զգացմունքներ են, բայց ոչ խելքից կախումն ունին, և ոչ սրտից, այլ

¹ Համլետ, գործող. վերջ. տես. վերջ։

